ԱԲԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

# Այսպես եղավ...

Նկարիչ՝
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ընդայած հորիզոնում աստիճանաբար ուրվագծվում են գործարանների միօրինակ տանիքներն ու հսկա ծխնելույզները, բայց լույսը դեռ վերջնականապես չի բացվել:

Ես կամաց քայլում եմ կրպակի պատուհանը վստահ, որ առաջին հաճախորդն եմ: Մինչ քնաթաթախ վաճառողուհին կսրորի աչքերը, մյուս մայթից, զրեթե վազելով, փողոցն է անցնում ծկան մռութով մի տղամարդ եւ անտղասելի ձեռքը դնում ուսիս:

- Մի ծտամիր,- ասում է,- ես հինգ հազար ունեմ, նույնիսկ՝ վեց, եթե այդքան էլ դու ավելացնես՝ մի կարգին շիշ կառնենք:

Ձկան աչքերն ինձ են նայում մքնշաղի ակվարիումից:

- Ուզում էի զինի առնել, բայց սիրտս վկայում էր, որ մի ընկեր կգտնեմ: Այսօր Ռուսաստանի անկախության օրն է,- ձա համառորեն ձեռքս է խոթում հինգ հազարանոցը,- այսպիսի օրը «ծիծս» խմիչքով է պետք սկսել:

- Լավ,- ասում եմ,- ես հյուրասիրում եմ:

Նա մի պահ ցցնում է ու ոտքից գլուխ չափում ինձ՝ բաց ու խուփ անելով բերանը:

- Ո՞նց թե, հյուրասիրում ես,- ձա փողը դնում է գրպանը եւ տարակուսանքով դուրս գալիս իր ակվարիումից:- Դու կարծես չես էլ խմի ինձ հետ : Չէ, հաստատ չես խմի: Լսիր, դու կարգին տղա ես:

Ես գնում եմ իմ մի տուփ սիգարետը, որի համար էլ դուրս եմ եկել, ու մի շիշ էժան օղի: Օղին մեկնում եմ հարեւանցիին ու արագ քայլում տուն:

- Դու հարյուր տոկոսով կարգին տղա ես,- գոռում է հետե-

ւիցս ձուկը եւ «կարգին» շիշը գրկած, կրկին մտնում իր ակվարիումը՝ պոչն ասֆալտին թրմփացնելով:

«Կարգին տղա»... Ես բարձրաձայն ծիծաղում եմ: Առավոտյան ժամը վեցին ուրիշ ո՞ւմ կարելի է հանդիպել առեւտրի կրպակի մոտ: Նայում եմ ցեխոտ կոշիկներիս եւ հիշում, որ գիշերը քայլել եմ անձրեւի տակ: Ագահորեն բացում եմ ծխախոտատուփը:

Ռուսաստանի անկախության օրը: Իմ հայրենիքում հիմա արեւը հասած թութ է:

Համարյա երեք ամիս է, ինչ այստեղ եմ, մինչդեռ ինքնաթիռ նստելիս չէի էլ համարձակվի մտածել, որ երեք օրից ավել կմնամ, թեպետ պիտի կռահեի՝ հրաշալի գիտենալով, թե ուր եմ գնում եւ ինչի համար: Ինչեւէ:

Այս քաղաքն ինձ դիմավորեց սառնամանիքով ու բռունցքներով: Օդանավակայանից դեռ չիջած՝ կատաղի հաչոցով դեմս ելավ մի նոր ցկնած շուն՝ ցանցառ պտուկներն ասֆալտին փռած: Իսկ ծանրոցների ստանալու բաժնում, երբ բոլորն արդեն վերցրել էին իրենց իրերն ու գնացել, ես երկար սպասում էի իմ վերջին պայուսակին, որը համառորեն չէր գալիս: Ավելի ճիշտ՝ դա պայուսակ չէր, այլ մի հսկա պարկ, ամենապակասը՝ յոթանասուն կիլոգրամ քաշով, եւ, ինչպես հետո պարզվեց, բեռնակիրները դիտմամբ այն չէին բերում, որ ինձանից փող պոկեն: Բայց չպոկեցին. փոխարենը նախշեցին շրթունքս:

Պարկի ու իմ մյուս կապոցների մեջ բանվորական ձեռնոցներ էին: Ես դրանք բերում էի այստեղ վաճառելու:

Սակայն մաքսատանը պարզվեց, որ ձեռնոցների հետ փաստաթուղթ է հարկավոր, «որեւէ փաստաթուղթ», որն ան-



հողորդ պահանջում էր գիրուկ «մաքսունին», եւ որը ես չունեի: Երկար վեճերն ու բանակցությունները արդյունք չտվին, իմ ձեռնոցները բռնագրավեցին, եւ ես մնացի ձեռնունայն բացարձակապես օտար այս քաղաքում՝ գրպանումս միայն մի քանի օրվա փող: Հետո դեմքերն այնքան արագ հաջորդեցին իրար, որ հիմա հերթականությունը ստույգ չեմ հիշում:

Կիսաբաց պատուհանից հաճելի քամի է փչում՝ իմ վարձած տան միակ սենյակը լցնելով ամռան առավոտվա հաճելի զովությամբ:

Ես սեղանի գզրոցից հանում եմ պայմանագիրը եւ նորից կարդում: Հարյուրերորդ անգամ, գուցե եւ ավելի: Հետո բարձրաձայն ծիծաղում:

««Արեւածագ» ՍՊԸ-ն եւ «Տանգազավերանորոգում» ձեռնարկությունը կնքում են հետեւյալ պայմանագիրը առ այն, որ առաջինը պարտավորվում է մեկ ամսվա ընթացքում ներմուծել հարյուր տոննա իզոլյացիոն նյութեր՝ մեկ տոննան տասնմեկ միլիոն ռուբլի արժողությամբ, իսկ երկրորդը պարտավորվում է դրանց փոխարեն տալ ավտոմեքենաներ...» Ապա այլ ձեւակերպումներ, ստորագրություններ, կնիքներ: Եթե այս գործարքը ստացվի, ես շահում եմ համարյա երկու հարյուր միլիոն ռուբլի: Ինչպե՞ս չծիծաղեմ:

Ինձ համար սուրճ եմ պատրաստում ու նստում տան միակ բազկաթոռին, որի պաստառը պատռված է, եւ բազկատեղերը՝ ջարդված: Իսկ բազմոցին, համայն Ռուսիո օրենքով, դեռ քնած է գիշերվա գեղեցկուհին:

Շատ զգույշ՝ այնպես, որ չարթնանա, ծածկում եմ նրա ուսերը: Ես մի քանի անգամ լսել եմ, թե ինչպես է երգում քնի մեջ, բայց հիմա լուռ է, նույնիսկ շնչառությունը հազիվ է

լվում: Եւ մտածում եմ՝ ո՞վ նկարեց այս քնած, այս չքնաղ կիսադեմը ճմռթված ու կեղտոտ սավանին: Ու հանկարծ հասկանում, թե ինչ ընդհանուր բան ունեին երկու եւ մյուս Մարիամները:

Մի նոր սիգարետ եմ վառում՝ բացելով նոթատետրս:

Բեռնակիրների հարվածներից շրթունքս պատռվել էր, եւ ցավը մռմռացնում էր վերքը: Ափսոսում էի ավտոբուսի: Բոլորովին չէի ուզում մտածել վիճակիս մասին: Վաղուց արդեն սովորել էի անհաջողություններին եւ ինձ առանձնապես դժբախտ չէի զգում: Ինչպես ամեն մի անհաջողությունից հետո, հիմա էլ որոշել էի մի լավ խմել եւ առավոտյան միայն մտածել՝ ինչ անել: Այսինքն՝ պետք է ընդամենը գտնել ընկերոջս, որն ապրում էր մոտ հարյուր կիլոմետր հեռու՝ մի ուրիշ քաղաքի անհայտության մեջ: Մտածելու այլ բան չունեի:

Պարզվեց՝ քնել եմ: Արթնացա վարորդի ձայնից, որը համոզված էր, որ տեղ ենք հասել, եւ հարկավոր է իջնել: Պարզվեց նաեւ, որ քաղաքի կենտրոնում ենք՝ երկաթուղային կայարանի մոտ:

Գիշեր էր, եւ սառնամանիքն ավելի էր սաստկացել: Մեծ քաղաքի փողոցները լիքն էին ավտոմեքենաներով, ծխով, լույսերով, անհանգստությամբ ու անորոշությամբ: Այնպիսի տպավորություն էր, կարծես ընդամենը դեկորացիա է սառը, օտար, կեղծ: Իսկ ներկայացումն արդեն ավարտվել է:

Կայարանում ես ոչ մի կերպ չկարողացա տաքսի գտնել եւ ստիպված էի դուրս գալ պողոտա ու պատահական մեքենա կանգնեցնել:

Դա երկար տեւեց: Ես վերջնականապես սառել էի արդեն,





երբ մի երկրռնանի կարմիր «Պեժո» արգելակեց կողքիս:

- Դու ուզում ես այստեղ մեքենա՞ կանգնեցնել, այստեղ կանգառն արգելված է :

- Իսկապե՞ս,- անկեղծորեն զարմացա ես: Բայց մի՞թե ես դա չգիտեի: Մի պահ թվաց՝ ամերիկյան ֆիլմում եմ: Խոշոր, մուգ ակնոցներով այս երիտասարդն ինձ հանդիպել է իր Հոլիվուդի մասույցներում:

- Ո՞ւր ես գնում:

- Ինձ որեւէ հյուրանոց է պետք:

- Նստի՛ր:

Ես ճամպրուկս խոթեցի ներս ու տեղավորվեցի հետեւի նստատեղին: Երիտասարդի կողքին մի աղջիկ էր նստած: Ֆիլմը շարունակվում էր, ավելի ճիշտ՝ նոր էր սկսվում:

- Գնացքո՞վ ես եկել,- հարցրեց երիտասարդը:

- Ոչ,- ասացի ,- ինքնաթիռով:

Հետո աղջիկը միացրեց նվագարկիչը, եւ մենք այլեւս չխոսեցինք:

Դիմացից եկող մեքենաների կուրացնող լուսարձակները եւ փողոցների ամբողջ երկայնքով շարված եռագլուխ լապտերներն ինձ ապարդյուն ինչ-որ բան էին ուզում հասկացնել: Լույսերի շարքերի արանքում երբեմն-երբեմն աղոտ առկայծում էին խոշոր հայտարարություններ: Հետո, ինչպես կինոյում է հասկացվում լինում, աղջիկն անփույթ մի շարժումով արձակեց մազերի ջրվեժը, ապա մեքենան արգելակեց, ու հայտարարությունները ձուլվեցին լուսային ազդագրերին՝ «Հյուրանոց», «Ռեստորան», «Կազինո»...

Երիտասարդն իջեցրեց նվագարկիչի ձայնը եւ շրջվեց իմ կողմը.

- Սա քաղաքի լավագույն հյուրանոցներից է:

Ես մտովի ծիծաղեցի. ինձ միայն այդ հյուրանոցն էր պակաս: Բայց ոչինչ չասացի եւ մի քթքաղրամ մեկնեցի

նրան:

Նա հետ հրեց ձեռքս:

- Ոչ, եղբա՛յր, մենք լավության կարգով... Ես այդպես չեմ փող աշխատում:

Սցենարում դա կար, այնպես որ ես անակնկալի չեկա: Փողն առանց շտապելու տեղավորեցի դրամապանակիս մեջ ու հանկարծ հիշեցի իմքնասպանման լողի նկարը, որն օդանավում էի նկեր ստացել կողքիս նստած ծերունուց՝ նրան զարմացնում՝ պարտքեր ստացել կողքիս նստած ծերունուց՝ նրան զար-

Ձեռքի վրա տասնհինգ կաթ, կանգնեցա ու շտապեցի պատասխանել մի ջանասիրաբար ու աշխատասեր կարդալով մի...

ջուր հյուրասիրելու ի պատասխան: Նկարի վրա դաշտկեր-ված էր ոսկի բաբախումը կամ առեղծվածը և անգլերենով գրված՝ «Կյանքը սիրտն է»: Ի՞նչն է մտահոգում բժշկին-ին... Օդանավում ես երկար մտածեցի այդ մասին, և ինչ էր մնում՝ անհերքելի մի պատճառաբանություն վերապահելու ծերունու նկերը: Բայց դա չարեցի ենթագիտակցորեն, զուցե հենց այս պահի համար:

Այն վերցրեց աղջիկը և հանդուգն, արհամարհական, խորամանկ մի հայացք նկերեց փոխարենը:

- Կյանքը սի՞րտն է,- հարցրեց նա ու ծիծաղեց, կարծես չգիտեր, որ այդպես է:

Հետո մենք հրաժեշտ տվեցինք իրար: «Պեժոն» շարժվեց, և լուսային ազդագրերի հետևից կրկին հայտնվեցին հարցականները:

Որոշեցի համենայնդեպս մտնել հյուրանոց ու իմանալ գները:

Պարզվեց, որ ունեցածս փողը բավական է այստեղ մի քանի օր մնալու համար: Սակայն ես մտադիր չէի այդքան մնալ: Վերցրի համարի բանալին ու բարձրացա երրորդ հարկ:

Այս շտալությունը, սակայն, նախատեսված չէր: Ես եկել էի դրամ վաստակելու, ոչ թե շտալելու: Սկիզբն, անշուշտ, խոստումնալից չէր: Բայց հուսահատական էլ չէր, թեև բո-



նազրավել էին աղրանքս և դարտադրել այս շենքի հյուրանոցը:

Դեռ չէի հասցրել հանել վերարկուս, երբ դուռը թակեցին: Սպասուհի համազգեստով մի դասահի էր:

- Գիշերվա համար ընկերուհի պետք չէ՞,- հարցրեց նա:

Անշուշտ, կարելի էր շարունակել շտալելը: Մանավանդ, որ դրանից սկիզբն ավելի խոստումնալից կամ հուսահատական չէր դառնա: Բայց դեռ ճանապարհին ես սովորել էի կոնյակի միշտակի վրա: Այնպես որ, սպիդված էի մերժել սպասուհին:

- Ոչ, եղբա՛յր, ավելի լավ է, ինձ ասա, թե գիշերային սրճարանը որտեղ է:

- Ինչո՞ւ չէ,- ժպտաց նա,- պետք է հյուրանոցից դուրս գալ և մտնել կողքի մուտքով: Գուցե այնուամենայնիվ վերցնե՞ս աղջկան, տասնյոթ տարեկան է, ավելի լավին չես գտնի:

Ես ձեռքս դրեցի նրա ուսին.

- Պետք է ընտրել երկու հաճույքներից մեկը: Հիմա ինձ պետք է լավ խմել, եթե հետս աղջիկ լինի, չեմ կարող դա անել ուզածիս պես, հասկանո՞ւմ ես:

- Հասկանում եմ,- ասաց նա,- բայց մեկը մյուսին չէր խանգարի:

- Դե լավ,- ասացի,- գնա և բարևիր աղջկան...

Ֆիլմը շարունակվում է... Եւ սակայն ինչ-որ բան այն չէ: Ես հասկանում եմ, որ բացատրության կարիք կա, որքան էլ դա ինձ համար տհաճ լինի: Ասում եմ ամեն տեսակի բացատրություն: Իմ կարծիքով, դա դեմ է արժանապատվությանը, ու թերևս այդ պատճառով էլ միշտ դրա կարիքը զգացվում է: Հասարակությանը դուր է գալիս, երբ դու հազար կտոր ես

դառնում՝ բացատրելու մի բան, որը նա վաղուց արդեն հասկացել է: Հետո արդեն դա ինքնաբերաբար է լինում... Եւ հավանաբար այդ է պատճառը, որ մետրոյում կամ մարզադաշտում, հանդիպելով մի ծանոթի, սկսում ենք բացատրել, թե ինչու կամ ինչպես ենք հայտնվել այստեղ:

Այս դեպքում, իհարկե, դա սցենարիստի մեղքն է: Եւ, որպեսզի հանդիսատեսը չթողնի դահլիճը, ես ստիպված եմ մի փոքրիկ բացատրություն տալ՝ օգտվելով նոթատետրիցս, քանի դեռ աղջիկը քնած է:

Նոթատետրիս ամսաթվերը որոշակի ոչինչ չեն ասում: Այնտեղ, ուր իմ շալակին կտեսնեք բանվորական ձեռնոցների կապոցներ, ես հստակ նպատակ ունեմ եւ շատ լավ գիտեմ, թե ինչ եմ շալակել: Այդ ձեռնոցները ստույգ գին ունեն, եւ ես առեւտրական եմ: Այնտեղ, ուր ձեզ կթվա, թե ես արեւելյան գոհարներ եմ տանում ռուս գեղեցկուհիներին, դուք գործ ունեք բանաստեղծի հետ, որն ինքն էլ չգիտի, թե ինչ է կորցրել եւ ինչ է փնտրում այս տխուր ձյուների մեջ: Արդեն ասացի՝ իմ նոթատետրի ամսաթվերը բանաստեղծություններ են, որոշակի ոչինչ չասող բանաստեղծություններ՝ գրված կիսահարբած կամ կիսարթմնի վիճակում: Երբ քնած գեղեցկուհին հանկարծ բացում է աչքերը... Նրան նախ պետք է իմանալ երկու բան՝ վայրը եւ ժամանակը: Նա պետք է հարցնի՝ որտեղ է ինքը, եւ որ թվականն է, ամիսը կամ, առնվազն, ժամը: Մինչդեռ նա սուրճ է խնդրում:

Անկողնում կատվի պես կուչ եկած, քնած աղջիկը շարժվում է, եւ ծածկոցը կրկին բացում է նրա ուսերը: Ես փորձում եմ ու վերստին չեմ կարողանում հասկանալ, թե ինչու է նա հիմա պառկած իմ փոքրիկ բազմոց-մահճակալին եւ,







առհասարակ, ինչ է անում այս խղճուկ սենյակում:

Իմ վարձած տան այս միակ սենյակում միակ ուշագրավ բանը պատից կախված նկարն է, որի վրա պատկերված են վայրի կակաչներով մի հսկայական դաշտ, մի արեւ եւ հեռվում՝ կապույտ մի զանգված, որը տակտոր է հիշեցնում:

Ընդհանրապես, ցանկացած տակտոր պետք է որ փչացնի այն տեսարանը, ուր ծաղիկներ կան, սակայն, ինձ թվում է, որ իմ սենյակի պատից կախված նկարում ամենակարեւորը հենց այդ տակտորն է: Հաճույքով մի զույգ ձեռնոց կնվիրեի տակտորիստին: Ես մի անգամ արդեն պատից իջեցրել եմ նկարը՝ մանրազնին ուսումնասիրության նպատակով, բայց հանդիպելով ոչ մեծ մի սարդի՝ ժամանակավորապես հետաձգել եմ ուսումնասիրությունս: Հիմա ճիշտ ժամանակն է դրանով զբաղվելու:

Սարդը հեռացել է պաստառի իր անկյունից: Գուցե՝ ընդմիշտ: Կակաչների դաշտում հիմա վազում է հերարձակ մի աղջիկ, ու հեռու հորիզոնում հրդեհվում է մի արեւ:

Ես տեղն եմ կախում նկարը: Հերարձակ աղջիկը դեռ քնած է իմ բազմոցին՝ ձեռնոցների վաճառականի ու բանաստեղծի արանքում: Երկու ձեռք քնքշորեն շոյում են ուսերին հանգչող նրա վարսերը, երկու հայացք պարանոցի ու կիսաբաց կրծքերի ծաղկանոցում փորձում են բռնել միեւնույն թիթեռին... Վաղուց արդեն լույսը բացվել է:

Կիսաբաց պատուհանից թեթեւ քամի է փչում: Բազկաթոռն անաղմուկ մոտեցնում եմ պատուհանին ու վերջնականապես ձուլվում նորաստեղծիս էջերին:

Հյուրանոցի գիշերային ակումբի կանգնաթոռներից մեկին նստած՝ ես նայում էի ցուցափեղկում անտարբեր շարված բազմաթիվ խմիչքների շշերին եւ նրանց առանից հայելու մեջ տեսնում իմ արտացոլանքը։ Կոնյակի բաժակս երեք շրջանակ էր թողել մարմարե սեղանին։ Դրանք ինձ հիշեցնում էին դպրոցի ձանձրալի դասերի ժամանակ կարկինով նկարած ծաղիկներ՝ երբեմն դասագրքերի կազմերին, երբեմն տետրերի, նայած ձանձրույթի աստիճանին։

Ես դատարկեցի բաժակս ու բարմենին խնդրեցի նորից լցնել այն. արդեն երրորդ բաժակն էր։ Բարմենը շոկոլադ առաջարկեց, բայց ես մերժեցի։ Նրա ոտքերի շուրջ պոչը տնկած պտտվում էր մի նարնջագույն կատու։ Սրահում լռություն էր։ Միայն դաշնամուրի ձայնն էր լսվում, անընդհատ կրկնվող մի մեղեդի, որը, թվում էր, թե ինչ-որ մեկից ազատություն էր աղերսում։

Ուսիս զգացի մեկի ձեռքը եւ առանց շրջվելու հայելու մեջ տեսա ինձ այստեղ բերած երիտասարդի դեմքը։ Նա առանց ակնոցների էր ու վստահություն էր ներշնչում։

- Քունդ չի՞ տանում։ Մենք քեզ իջեցնելուց հետո մի տեղ մտանք ու որոշեցինք գալ այստեղ։ Ես քեզ չէի նկատել, Վիկան տեսավ։ Չե՞ս նստի մեզ հետ։

Ես շրջվեցի եւ տեսա անկյունի մի սեղանի մոտ ինձ ձեռքով անող Վիկային։

Եթե չշրջվեի, ավելի հեշտ կլիներ մերժելը, մանավանդ, որ ուզում էի մենակ մնալ։

Մենք ծանոթացանք. տղայի անունն Իլյա էր, չգիտեմ ինչու՝ ինձ թվաց, որ նա Վիկայի իմպրեսարիոն է։ Ավտոմեքենայի մեջ ես տեսել էի միայն աղջկա կիսադեմը։ Սա ինձ կսպանի՝ մտածեցի ու սեղմեցի ինձ մեկնած ձեռքը։

- Ողջույն,- ասաց նա, եւ նրա ձայնը, թվաց, հնչեց դաշնամուրից՝ որպես ազատություն աղերսող մեղեդու վերջին



ակորդ։- Խմո՞ւմ ես։

- Այո,- ասացի ես ու աչքով արի ձեռնոցների վաճառականին։

Մինչեւ նրանց սեղանին մոտենալը հասցրել էի շամպայն պատվիրել։ Մատուցողը բյուրեղապակյա երկարոտն բաժակներ էլ բերեց, եւ նրա «հատուկ ձեզ համար»-ը, կարծում եմ, մի քիչ մեղմեց վաճառականի զայրույթը։

Մենք չխկացրինք բաժակները, եւ նա ականջիս ինչ-որ բան ասաց։

Սրահի կիսամութի մեջ ես աչքի տակով նայում էի աղջկան. նա գլուխը հենել էր աթոռի բարձր թիկնակին եւ բաժակն անընդհատ պահում էր շրթունքների մոտ։ Իսկ իմպրեսարիոն խմում էր էշի պես։ Հետո, իրար հերթ չտալով, խմիչքներ էր, որ պատվիրում էինք։ Թվում էր՝ մրցում ենք, թե ով շատ կխմի։ Բայց այդպես չէր. պարզապես ինձ խմել էր պետք։ Նրան՝ թերեւս, նույնպես։ Իսկ Վիկան մեզ ներշնչում էր ու քաջալերում։

Կոնֆերանսյեն ինչ-որ բան հայտարարեց, եւ բեմում սկսեցին պարել։ Քրիզանթեմներով պարն էր. երկու շիկահեր գեղեցկուհիներ իրար էին փոխանցում ծաղիկն ու պտտվում իրար շուրջ։ Ընդհանուր առմամբ, նրանք լավ էին պարում, եւ ուրիշ դեպքում ես կշրջեի աթոռս բեմի ուղղությամբ, կխմեի ու կդիտեի պարը։ Բայց հիմա ինձ մի այլ պար էր կլանել։ Ես խմում էի ու վայելում բաժակ առ բաժակ ինձանից հեռացող վաճառականի պարտությունը։ Անշուշտ, դա իմ հաղթանակը չէր, այլ՝ նրա պարտությունը, որը նա տարավ արժանապատվությամբ՝ դրեց դրամապանակը, հագավ կեպին եւ լուռ բարձրացավ հյուրանոցի իր համարը։

Հերթն իմպրեսարիոյինն էր։ Իլյան ննջում էր՝ գլուխը ձեռքերի մեջ առած։ Ու չնայած խմելու մեր մրցակցությունն ավարտվել էր, ես աննկատ լցրեցի միայն իմ բաժակը։

- Կարծես շատ խմեցի,- կմկմաց Իլյան ու անսպասելի ոտքի կանգնեց,- դու մնա Վիկայի հետ, ես մի քիչ մաքուր օդ շնչեմ...

- Գուցե քեզ հե՞տ գամ,- հարցրի ես:

Նա ձեռքը դրեց ուսիս ու բացասաբար շարժեց գլուխը:

Դատարկեցի բաժակս՝ զարմացած Վիկայի անտարբերությունից:

- Ինչո՞ւ ես դու այդքան շատ խմում ,- հարցրեց նա,- չե՞ս վախենում նրա օրն ընկնել:

- Ոչ, երբ խմում ես խմելու համար, երբեք չես հարբում:

- Իսկ դու ինչո՞ւ ես խմում խմելու համար:

Ես նայեցի պարահարթակի կողմը: Այնտեղ, դանդաղ երաժշտության տակ, անտարբեր հանվում էր մի աղջիկ: «Իսկ ի՞նչ կլինի, եթե ես կորցնեմ քեզ»,- ասում էր երգը:

Վիկան բաժակով տկտկացրեց սեղանին, և ես ուշքի եկա. նրա հարցին չէի պատասխանել: Բայց հո չէ՞ի պատմելու ձեռնոցների պատմությունը:

- Դա ժամանակավոր բան է,- ասացի:

- Դա չտեսություն է, տղայամտություն, դավաճանություն,- ասաց վաճառականը, որն աննկատ վերադարձել ու պառկել էր բեմահարթակին դարսված բանվորական ձեռնոցների իր կապոցներին:

Ես կանչեցի մատուցողին ու, ի հեճուկս վաճառականի, «Տիկ-տակ» կոկտեյլ պատվիրեցի: Բայց պարզվեց, որ այստեղ նման բան չեն մատուցում: Եվ չէին էլ կարող մատուցել, որովհետև, ճիշտն ասած, այդպիսի կոկտեյլ գոյություն չունի: Այն իմ խմած երևակայության արդյունքն է, երբ միտքս կամ ստամոքսս թարմանալ են ուզում:

- Իսկ դա ի՞նչ է,- հարցրեց Վիկան, մինչ մատուցողը կանգնել ու մեղավոր նայում էր մեզ:

Ես վեր կացա ու անցա կանգնասեղանի հետևը: Խնդրե-







ցի կոնյակ, սուրճ, պաղպաղակ ու էլի մի քանի բաներ, այդ ամենը խառնեցի իրար, լցրեցի կոկտեյլի բաժակների մեջ և դրանցից մեկը մեկնեցի բարմենին, որը ծարունակում էր զարմացած ինձ նայել:

-Երբեք դեռ չէ կորցնել հումորի զգացումը,- ասացի:

Վիկային դուր եկավ կոկտեյլը, և նա խմեց Իլյայի բաժինն էլ:

Երբ վերջինս եկավ, կարծես իրեն ավելի լավ էր զգում, բայց ես, ամեն դեպքում, նրա համար էլ մի բաժակ «Տիկ-սակ» պատրաստեցի: Չգիտեմ՝ բարմենի արածից ինչ էր սպաց-վել. Իլյան այն միանգամից դատարկեց ու ոչինչ չասաց:

Քիչ հետո Վիկան նկատել տվեց, որ տուն գնալու ժամանակն է, և ես վեր կացա, որ նրանց ճանապարհեմ:

Դրսում առաջվա դես ցուրտ էր: Մեքենաները դանդաղ սահում էին սառած փողոցով, իսկ հազվադեպ անցորդնե-րը մի խեք հայացք էին նետում կրակոս ազդագրերի կողմն ու անցնում գնում:

Հրաժեշտ տալիս՝ Իլյան հանեց իր այցետոմսը.

- Անդայման կզանգահարես կամ կհանդիպես:

Ես սեղմեցի նրա ձեռքը: Երբ նա նստում էր մեքենան, մի պահ մենակ մնացի Վիկայի հետ: Բացեցի դուռը, որ նա նստի, բայց աղջիկն անսպասելի հետ դարձավ իմ կողմը և հարցրեց.

- Դու ինձ կճանապարհե՞ս:

- Ի՞նչ...

Հետո, ճիշտն ասած, չհասկացա, թե ինչ տեղի ունեցավ: Իլյան իջավ մեքենայից, նստեց, հետո կրկին իջավ ու նստեց, մի անցորդ սայթաքեց սառույցի վրա, ավելացրեք հոհռաց, «Պեժոն» ծածկվեց, և ես վերջնականապես մենակ մնացի Վիկայի հետ՝ սաշտած, սառած, մեռած...

Բայց ինչ-որ բան այն չէր: Դովագն անհամոզիչ էր թվում: Մի տեսակ անհարմարության զգացում ունեի, գուցե և մեղավորության: Կարելի էր կարծել, որ նախապես պայմանավորվել էինք Իլյային «գրել»: Համենայնդեպս, նա հրաժարվում ունենալ կարծել: Քանի որ նա ուներ այդպես մտածելու, թեև դա բավարար պատճառ չէր ռազմաբարբոռ լինելու: Ինչևէ, ես ինձ հաղթանակած չէի զգում և էպիզոդիկ թվացող իմ դերը խաղում էի անբռնազբոսիկ, առանց որևէ նմանակումների: Մտածում էի, որ ...

- Տե՛ս, հանկարծ չսայթաքես,- վերջապես խոսեց նա,- եթե դու սայթաքես, մենք երկուսս էլ կորած ենք. նայի՛ր, ես բարձրակրունկներով եմ:

Եվ հանկարծ ես անդրադարձա, որ ուշադրություն չեմ դարձրել, թե ինչպես է նա հագնված: Հիմա էկրանին աղջկա ոտքերն են՝ նորաձև բարձրակրունկ կոշիկներով: Հետո օպերատորական վերրիկ մի հարված, և մնացածը կերևա մայթերին, փողոցի թիկունքը լուսավոր ջրափոսի հայելում: Աղջիկը, թվում էր, փայլում է ալիքների վրայով:

- Բայց դու կոշիկներով կսառչես,- ասացի ես,- հիմա սաքսի կկանգնեցնեմ:

- Ես արդեն սառել եմ, բայց տաքսի պետք չէ, ուզում եմ քայլել,- նա մի պահ լռեց, հետո շարունակեց,- միայն թե դու մի բան խոսի՛ր, թե չէ ինչքա՞ն կարելի է այդպես լռել:

Նա ծոպսաց, և ես փողոցի մի լապտերի լույսի տակ տեսա նրա ժպիտը:



Հետո նա ասաց.

- Պատմի՛ր ինձ քո մասին:

- Իմ մասի՞ն,- ես ծիծաղեցի,- պատմեմ իմ մասի՞ն, երբ մենք քայլում ենք սառած ասֆալտի վրայով, և դու այդ պարահանդեսային կոշիկներով ես: Դու անդայման կընկնես:

Վիկան նույնպես ծիծաղեց, և ինձ թվաց, թե ավելի ամուր սեղմեց թևս:

- Լավ, պետք չէ պատմել,- ասաց նա,- դու պարզապես խոսի՛ր: Խոսի՛ր, և ես կհասկանամ՝ ում հետ եմ քայլում, ինչ է նա մտածում, ինչու է ուրախ կամ տխուր, ինչ է երազում, ինչ է սիրում ու ցանկանում: Ինչի մասին էլ դու խոսես, խոսում ես քո մասին:

- Նույնիսկ ծառերի՞...

- Նույնիսկ ծառերի:

Ես մոտեցա մի կրպակի ու ինձ համար զարեջուր գնեցի: Կում էի անում շշից ու մտածում՝ ինչու խսկապես չսկսել ծառերից:

Հասկապես հաճելի էին այն պահերը, երբ մենք անցնում էինք հենց սառույցի վրայով: Այդ ժամանակ աղջիկը ամբողջ հովվում էր ինձ, և ես հաճույքից ճնվում էի:

Հետո բառերը սկսեցին իրենք իրենց թափվել, և ես մոռացա ծառերը:

- Մենք թափառում ենք հենց այնպես ու մեզ հետ տանում այն ամենը, ինչ ունենք: Իսկ մեր ունեցածը միայն հիշողություն է կամ հիշողություններ: Թափառելիս մենք գտնում ու կորցնում ենք բաներ, որոնք հետո էլի պիտի գտնենք ու կորցնենք: Դա երբեմն տխրեցնում է մեզ, երբեմն՝ ուրախացնում, սակայն տխուր, թե ուրախ, մենք շարունակում ենք ընթանալ մեր ճանապարհով՝ գտնելով ու կորցնելով, կորցնելով ու գտնելով: Կարծես գտնում ենք կորցնելու համար և կորցնում

ենք, որտեղից նորից գտնենք: Իսկ ի՞նչ է մնում մեզ հավերժական այդ ճամփորդությունից: Թերեւս միայն հիշողություններ, որոնք ո՛չ ավելացնում են, ո՛չ էլ պակասեցնում մեր զրույցների պարունակությունը: Դրանք պարզապես լցնում են մեր բաժակները, եւ մենք սկսում ենք խմել: Խմում ենք ու մեր սրտերը դատարկում սպիտակ թղթերին՝ դարձյալ ու դարձյալ կորցնելով: Եւ այդ գիտակցությունը դառնում է մեր մյուս առաջին բաժակը: Այդպես կարելի է անընդհատ մեռնել:

Բայց մեզ համար հեշտ է ծիծաղելը, հեշտ է կենսուրախ երեւալը եւ հեշտ է քթներս չկախելը, որովհետեւ մենք շատ հաճախ ենք տխուր լինում:

Տխրությունը մեր ամենահավատարիմ ուղեկիցն է: Այն չպետք է բաժանվի մեզանից, որովհետեւ հակառակ դեպքում մենք կխենթանանք ուրախությունից: Սակայն, հավասարապես մենք իրավունք չունենք ուրախ չերեւալու, քանի որ այդ դեպքում տխրությունը կխեղդի մեզ:

Մենք տարօրինակ մարդիկ ենք:

Մեզ հիմնականում չեն հասկանում, բայց մենք դա սրտներիս մոտ չենք ընդունում, որովհետեւ, բոլոր դեպքերում, այնպես ենք անում, որ ուրիշները մեզ հետ հաշվի նստեն: Մենք ամենեւին էլ խելագարներ չենք եւ չափազանց բարձր ենք գնահատում մեր արժանապատվությունը: Միայն երբեմն մեզ թվում է, թե պատրաստ ենք զոհաբերել այն, երբ ծնկի ենք գալիս Վեներայի աղբյուրի առջեւ: Բայց դա միայն թվում է: Մեր աղերսանքը սոսկ վերաբերմունք է, եւ դժվար է ասել՝ իրականում մենք աղերսո՞ւմ ենք, թե՞ հրամայում:

Ուզում էի շարունակել, բայց մի պահ թվաց՝ աղջիկն ինձ չի լսում: Ես մի շնչով դատարկեցի գարեջրի շիշը եւ այն նետեցի աղբամանը:

- Եթե կարողանայինք այսպես հեշտությամբ ազատվել մեր



հիշողություններից,- ասացի ես՝ իբրեւ վերջաբան:

- Եւ լա՛վ է, որ չենք կարողանում,- ասաց աղջիկը ճիշտ ժամանակին՝ ազատելով ինձ մի խոստովանությունից, որն արդեն լեզվիս ծայրին էր:

Նույնն էր, եթե ասեր՝ այլեւս մի՛ խոսիր: Եւ խոսելու բան էլ չունեի:

- Ես երբեք ոչ ոքի չեմ բերում այստեղ,- ասաց Վիկան՝ վառելով արվեստանոցի լույսերը,- ես այստեղ նկարում եմ ու միաժամանակ ապրում, կամ հակառակը:

Ինձ թվաց, թե ընկել եմ շատ հարազատ մի տեղ: Յուղաներկի թարմ հոտը վկայում էր, որ մի քանի ժամ առաջ այստեղ նկարել են, իսկ մոլբերտի վրա դրված նկարը, ինձ թվաց, մեզ հետ բերեցինք դրսից:

- Քեզ ազատ զգա եւ ուշադրություն մի՛ դարձրու նկարներին, դրանք երբեմն գժվեցնում են,- շարունակեց Վիկան,- դու էլի որեւէ բան կխմե՞ս:

- Իհարկե,- ես առանց վերարկուս հանելու շրջում էի սրահում ու դիտում նկարները,- եթե թույլ կտաս, ես այսուհանդերձ ուշադրություն կդարձնեմ նկարներին:

Վիկան ժպտաց, ոչինչ չասաց ու բարձրացավ վերնահարկ:

Նրա նկարներն ինձ ապշեցրին: Ես հանդիպել էի չքնաղ պարուհիների ու երգչուհիների, որոնք հրաշալի էին կատարում իրենց պարերն ու երգերը, բայց երբեք չէի մտածի, որ մի գեղեցկուհի կարող է այսպես նկարել:

Ես հաճախ եմ լինում իմ ծանոթ նկարիչների արվեստանոցներում, որտեղ, չգիտեմ ինչու, հիշում եմ իմ կորցրած սերերը: Դժվար է բացատրել...

Ինձ հետաքրքրում են արվեստանոցի անկյուններում պահված գործերը՝ անավարտ դիմանկարներ, գծանկարներ, չստացված նատյուրմորտներ, որոնք նկարիչն ավելի շատ իրենից է թաքցնում: Բայց միեւնույն է, մի օր նա դրանց վրայից փչելու է փոշին, եւ նրա մեծամտությունը հեկեկալու է զղջումի ու կորստի ցավից: Այն, ինչ ցուցադրվում է, նրա հոգեւոր տիրապետության մի մասն է միայն, եւ ոչ միշտ՝ լավագույնը:

Ի՞նչ են ասում պատերից կախված այս նկարները: Ես դեռ վերարկուս չեմ հանել եւ հազիվ թե կարողանամ պատասխանել այդպիսի լուրջ մի հարցի: Միայն կարող եմ ասել, որ շարժում կա այս նկարներում: Մի աղավնի՝ թռիչքի պահին, ժայռից ցած գլորվող հսկա մի քար, պտտվող մի պարուհի, որոտացող մի կայծակ, տրոփող մի սիրտ:

Ամեն ինչ հարաբերական է: Հնարավոր է, որ ես հիմա տեսնում եմ գլուխգործոցներ, եւ հնարավոր է, որ հիմա իմ վերարկուի մեջ բոլորովին ուրիշ մարդ է: Դժվար չէ բացառել ո՛չ մեկը, եւ ո՛չ էլ մյուսը: Մի՞թե կարելի է ձանձրույթից, հիասթափությունից ու հուսալքությունից գլուխգործոցներ ծեփել: Կամ մի՞թե հնարավոր է երկաթյա ճաղերով կամ թանձր ու մութ վարագույրներով բուժել սիրուց հիվանդացած դեռատի աղջկան: Եթե կարող են հարաբերական լինել անգամ երկաթյա ճաղերը, ապա կարո՞ղ է հարաբերական լինել սերը: Բայց, այսպես, թե այնպես, հիվանդությունը դրանից չի բուժվում: Ուրեմն ո՞րն է ճշմարտությունը:

Ճշմարտությունը ինձ արդեն ծանոթ այս բուրմունքն է, արձակ այս վարսերը ու ասես սպիտակ ծաղկաթերթիկներից այս շրջազգեստը՝ ոսկեվարսանդ կոճակներով, որոնք երբեք չեն կոճկվում կամ արձակվում, ինչպես օպերայում, ինչպես Շեհերազադեի հեքիաթներում... Վիկան սեղանին դրեց մատուցարանը:







- Դու կհանե՞ս վերարկուդ:

Ես մոտեցա սեղանին ու մատուցարանի վրայից բարձրացրի կիսատ շիշը: Կամդարի էր՝ թույլ, ազնիվ, հեշտագին... Լցրեցի բաժակներն ու մեկը մեկնեցի աղջկան.

- Ես պետք է գնամ, Վի՛կա: Դու հրաշալի ես նկարում եւ, առհասարակ, երազանքների աղջիկ ես,- ես դատարկեցի բաժակս,- երազանքների աղջիկ ես, հենց դրա համար էլ պետք է գնամ:

Նա ծիծաղեց՝ բարձր ու սրտանց:

- Դու չափազանց ազնիվ ես, ինչո՞ւ ես դու այդքան ազնիվ. իհարկե, դու պետք է գնաս, միայն թե նախ պետք է ասես՝ ով ես դու՝ բանաստե՞ղծ, երաժի՞շտ, թե՞ ինչ:

- Ե՞ս,- հիմա իմ ծիծաղելու հերթն էր, եւ ես նույնպես ծիծաղեցի բարձր ու սրտանց:- Ես դատարկ փիլիսոփա եմ ու անհաջողակ առեւտրական:

Հյուրանոցի իմ համարում ես նախ հաշվեցի փողերս: Չափազանց քիչ բան էր մնացել՝ չնայած Իլյան համարյա թույլ չէր տալիս, որ ես ծախսեի: Ահավոր թանկ էր այդ գիշերային ակումբը:

Հետո քնեցի մի երեք ժամ ու արթնացա ժամը ութին: Դուրս եկա հյուրանոցից, մի ծաղկի խանութ գտա ու դրամապանակս դատարկեցի՝ սպիտակ վարդերի հսկա մի փունջ գնելով: Սպիտակ, ավելի քան սպիտակ վարդերը պատասխան էին Վիկայի հարցին: Ո՞վ եմ ես: Սպիտակ թուղթ: Խզբզի՛ր վրաս քո գլուխգործոցները: Ծաղկեփունջը թողեցի արվեստանոցի դռան առջեւ:

Հետո վերադարձա հյուրանոց, վերցրի ճամպրուկս, հանձնեցի սենյակս ու գնացի ավտոկայան:

Մի ամբողջ տարի Կոսին չէի տեսել: Մենք նրան համալսարանում այդպես էինք ասում: Կոսն իմ ընկերն է: Երբ նա այստեղ էր գալիս, ե՛ս պետք է ճանապարհեի, բայց չստացվեց, և մենք նույնիսկ իրար հրաժեշտ չտվեցինք: Հետո երկար ժամանակ նրանից ոչ մի լուր չունեի: Նա նույնիսկ ծնողներին չէր զանգում, և միայն եկող-գնացողներից էինք իմանում, որ դեռ «շրջանառության» մեջ է և հույս ունի դիմանալ մինչև հաջորդ հեղաշրջումը: Մոտավորապես գիտեինք, թե ինչով է զբաղվում այստեղ, և երբ ես չարաբաստիկ այդ ձեռնոցները բերում էի, հույս ունեի, որ դրանք պետք է դրամի վերածվեին հենց նրա ջանքերով ու ճարպկությամբ:

Կոսի գործի էությունը շատ պարզ էր, և միևնույն ժամանակ, ինչպես ամեն մի պարզ բան, մի քիչ խճճահարույց: Բայց այս դեպքում կարելի է դրան չանդրադառնալ: Մարդկությունը դեռևս հույս ունի, որ վերջիվերջո ըստ արժանվույն կգնահատվի քրտնաթոր աշխատանքը՝ արհամարհելով քրտնահոսից ծամածռվող մռութները: Չեմ կարող ասել, թե այդ մասին ինչ պատկերացում ունի Կոսը, բայց, որ լավագույնս տեղյակ է գործարանների մատակարարման և սպառման համակարգի բացերին, կարող եմ վստահեցնել՝ նկատի ունենալով ապրանքափոխանակության մեջ նրա հաջողությունները:

Նա աշխատում է գործարանների փոխտնօրենների կամ մատակարարման բաժինների պետերի հետ: Իմանում է, թե ինչ ապրանք է անհրաժեշտ գործարանին, ճարում, բերում է, երբեմն հանձնում կանխիկ փողով, երբեմն՝ փոխում գործարանի արտադրանքի հետ: Կարող է հարց առաջանալ. իսկ ինչու այդ նույն բանը չի կարող անել ինքը՝ գործարանը: Անշուշտ, կարող է, եթե խոսքը գործարանի մասին է: Բայց գործարանը տնօրինում են մարդիկ, ովքեր պատրաստվում են իրենց հոգիները ծախել սեփականաշնորհման դևին: Գործարանի փոխտնօրենը, իհարկե, ինքն էլ կարող է պետք եղած ապրանքը ճարել, լինի դա բանվորական արտահագուստ, խողովակ, ներկ, թե մետաղ, բայց նրան ավելի ձեռնտու է այդ ամենը վերցնել Կոսից, որովհետև Կոսը յուրաքանչյուր հասի, մետրի կամ կիլոգրամի մեջ, կախված ապրանքից, փոխտնօրենին որոշակի գումար է թողնում: Ենթադրենք, թե պետք է գնել բանվորական բրեզենտե ձեռնոց. փոխտնօրենը փաստաթղթերի մեջ նշում է, որ մեկ զույգի համար վճարել է տասը հազար ռուբլի, բայց Կոսից գնում է ութ հազարով: Շահում է ինքը, շահում է Կոսը, իսկ արանքում գործարանի հերն է անիծվում, և, քանի որ գործարանի հերն առանց այդ էլ անիծված է, եթե չասենք, որ գործարանը երբեք էլ հեր չի ունեցել, փոխտնօրենը մտածում է, որ իր խղճի դեմ որևէ բան չի անում: Իսկ Կոսն ինքը առավել ևս իր խղճին դեմ ոչինչ չի անում: Գործարանը, որի հերն անիծվում է, իրենը չէ, ու հետո էլ նրա արածի մեջ ոչ մի անօրինական բան չկա: Նա ներկայացնում է «Արևածագ» ՍՊԸ-ն, որի նախագահն է, և որն իրենից բացի ուրիշ մեկը չունի էլ, այդ ընկերության անունից հինգ հազարով ձեռնոց է գնում, ութով՝ հանձնում գործարանին: Նա կանոնավոր կերպով մուծում է հարկերը, և նրան չեն հետաքրքրում գործարանի փոխտնօրենի խնդիրները:

Քաղաքը, որտեղ հաստատվել էր ընկերս, գտնվում էր այն քաղաքի հարևանությամբ, որտեղից ես դատարկ դրամապանակով գնում էի նրան ապավինելու:

սիրել նույնիսկ երկաթե անվերջության վրա կանգնած՝ մահացու կայծակի տակ: Երջանկությունն այնքան անորսալ է, որ կարող է վրա հասնել այն պահին, երբ դաsրաս ես ենք, որ կարող է վրա հասնել այն պահին, երբ դադարում ես հեզ նույնիսկ անորունից ցած նետել: Մի քար դոկվել է ժայռերից ու գահավիժում է ցած: Շարժումը կյանք է, և ամենահարաստ շարժումը սրտի բաբախումն է, չնայած այն նույնպես մի օր դադարելու է: Բայց ինչ փույթ...

Ես ուշքի եկա իրարանցումից: Ռաշան էր վերադարձել հինգ գեղեցկուհիների հետ: Մասուցողները ևս մի սեղան միացրին մերին ու նոր շշեր բերեցին: Աղջիկներն իրենք ընտրություն արին, և յուրաքանչյուրը նստեց մեզանից մեկի կողքին: Ինձ բաժին ընկավ շիկահեր ու կարդուսաչյա մի Ռոզինին, որը ամերիկահիսպանական ֆիլմի ռեժիսորին կարող էր նա, որը ամերիկահիսպանական ֆիլմի ռեժիսորին կարող էր համոզել, որ կնոջ սերկությունը ոչ մի կապ չունի հագուստի հետ:

Նա ներկայացավ ու բռնեց ձեռքս.

- Ինչքա՞ն տխուր ես դու:

Կոտը հայերեն մի նոր երգ դասվիրեց, և բոլորը սկսեցին պարել: Ես պարելու տրամադրություն չունեի, և ինձ չհաջողվեց համոզել: Սակայն ես էլ իմ հերթին չկարողացա Ռոզինային համոզել, որ միանա պարողներին:

-Ինչո՞ւ ես դու այդքան տխուր,- կրկին հարցրեց նա:

- Տխուր չեմ, Ռոզի՛նա, տխուր չեմ:

Հայացքս էլի ընկել էր դեղին վարդերին: Աղջկա ներկայությունը հաճելի չէր, բայց ափսոսում էի ցույց չտալ:

Երբ պարողները վերադարձան, Ռաշան առաջարկեց բոլորով գնալ իր ամառանոցը: Ես Կոտի ականջին շշնջացի, որ «զվարճալու» ժամանակն է: Նա համաձայնվեց, միայն թե ոչ մի կերպ չկարողացա համոզել, որ աղջիկներին թողնենք:

Ինքս նստեցի մեքենայի ղեկին և քշեցի Կոտի վարձած բնակարանը: Հետո նրան ասացի, որ գնում եմ աղջկա մոտ, և նա ինձ հավաստաց ու հանգիստ թողեց:

- Ու՞ր ենք գնալու,- հարցրեց Ռոզինան, երբ արդեն դուրս էինք եկել շենքի բակից:

- Դու չե՞ս ուզում տուն գնալ:

- Տո՞ւն,- զարմացավ նա...

Գիշեր էր արդեն, և ես հենց այնպես քշում էի մեքենան դատարկ փողոցներով: Դրանցից մի քանիսն արդեն այնքան լավ էի ուսումնասիրել, որ ինձ թվում էր՝ ամենևին էլ օտար քաղաքում չեմ: Կոտի բազմաթիվ ձայներիզների մեջ գտել էի Ռեյ Չարլզի հին երգերը, որոնք սիրում էի լսել մանավանդ մեքենա վարելիս: Խմածությունս լրիվ անցել էր, և ոչ մի կերպ չէի կարողանում ինձ համոզել, որ տրամադրությունս լավ է:

Կանգնել էի կարմիր լույսի տակ, երբ ինչ-որ մեկը բացեց կողքիս դուռը և գլուխը ներս խոթեց:

- Նավասի՛, Կոմսոմոլսկ չե՞ս տանի:

Տարիքով մարդ էր, նորմալ հագուկապով և, ինչպես երևում էր, մի քիչ կոնծած:

- Չէ, նավասե՛ս, չեմ կարող:

Նա հառաչեց և ցույց տվեց ձեռքի վանդակը:

- Ես ինձ համար չեմ ասում, այլ սրա, տե՛ս, արդեն սառել է խեղճը:

Մեծ, երկնագույն թութակ էր՝ դոշը ճաղերից դուրս, ծմռթված փետուրներով, ասես մի կերպ խցկել էին փոքրիկ վանդակը:

- Լավ,- ասացի,- միայն թե նախապես կասես՝ ոնց գնանք, քաղաքին ծանոթ չեմ:

Նա նստեց կողքիս և վանդակը դրեց գիրկը:

- Այս թռչունը ծնված օրից ինձ հետ է, այնքան ենք իրար սովորել, որ մեռնելու իրավունք չունենք: Բայց կմեռնենք: Կմեռնենք, եւ դա չէ կարեւորը: Մի Սերաֆիմ ավել, մի Սերաֆիմ պակաս, աշխարհում ոչինչ չի փոխվի: Միայն այս խեղճը մենակ կմնա:

Նա որոշ ժամանակ լռեց ու հետո այլեւս չհամբերեց:

- Երբ ապրում էի Կոմսոմոլսկում, մի հարեւանուհի ունեի: Ուսուցչուհի էր: Թագուհի կին էր: Միշտ ինձ ժպտում էր, մի քանի անգամ էլ թեյ է հյուրասիրել: Մի թութակ ուներ, այն ժամանակ սա դեռ չկար: Հիմա նրա թութակը մեռած կլինի, եւ եթե ինքը ուսուցչուհին չի մեռել, մտածում եմ, որ կհամաձայնի սրան վերցնել, որովհետեւ սիրտս վատ բան է գուշակում:

Ես խղճացի նրան:

- Այդպես մի՛ ասա, Սերաֆի՛մ, դու դեռ Նոյից էլ երկար կապրես: Բայց արի՛ քեզ հետ տանեմ տուն. իմ ուսուցչուհին քնած կլինի, արդեն ժամը մեկն է:

Ծերուկը տարուբերեց գլուխը.

- Ո՛չ, նավաստի՛, դու լավ նավաստի ես, բայց այդ ուսուցչուհուն չես ճանաչում: Նա ուրախ կլինի ինձ տեսնել. միայն թե մեռած չլինի խեղճը:

Երբ տեղ հասանք, Սերաֆիմը վերարկուի ծոցագրպանից մի գրիչ հանեց եւ մեկնեց ինձ.

- Գիտեմ, որ փող չես վերցնի, ասենք՝ չունեմ էլ, որ տամ, բայց սա վերցրո՛ւ, լավ գրիչ է,-նա մի երկար հոգոց հանեց,- հին, բարի ժամանակներում եմ գնել, երբ աշխատանք ունեի, աշխատավարձ, ամեն առավոտ սափրվում էի ու փոխում վերնաշապիկս: Մի խոսքով, երբ նորմալ մարդ էի:

Նա գրկեց վանդակն ու իջավ՝ գրիչը թողնելով ձեռքիս: Նայեցի՝ արծաթագույն «Փարքեր» էր՝ ծերուկի լավ ժամանակների հիշատակը:



Երբ վերադառնում էի, մի երիտասարդ զույգի վերցրի, որ գտնեմ ճանապարհը: Իջնելիս նրանք ինձ փող էին ուզում տալ, բայց ես ասացի.

-Միայն գրիչ, ես միայն գրիչ եմ վերցնում:

Առավոտյան Կոտն ինքն ինձ արթնացրեց: Քնել էի մեքենայում՝ շենքի մուտքի մոտ: Մենք բարձրացանք վերեւ, եւ Կոտի Ռոզինան մեզ համար սուրճ պատրաստեց: Նա փորձեց հետաքրքրվել, թե որտեղ է իր ընկերուհին, բայց ես կարճ կապեցի՝ ասելով, որ լուսադեմին նրան տուն եմ տարել:

Հետո անցա ամենագլխավորին. դեռ գիշերը, քաղաքում թափառելիս, որոշել էի իմ անելիքը: Այն շատ պարզ էր: Ուզում էի վերադառնալ այնտեղ, որտեղից եկել էի եւ անել նույն գործը, ինչ Կոտն անում էր այստեղ: Այդ քաղաքը եռակի մեծ էր, եւ, տրամաբանական է, այնտեղ ավելի մեծ հնարավորություններ պետք է լինեին: Ինչպես ասում են՝ գործելու ավելի լայն դաշտ: Ավելի փորձված ու փողի համը տեսած ղեկավար աշխատողներ: Ու դեռեւս չքառամած վարդեր...

Կոտին այս ամենը բացատրելիս՝ ես վարդերի մասին լռեցի: Նա սկզբում ոչ մի կերպ չէր ուզում համաձայնել եւ պնդում էր, որ ես մնամ իր հետ. Բայց, ի վերջո, տեղի տվեց:

Ավտոկայանի ճանապարհին նա ինձ երկար-բարակ բացատրեց գործի բնույթը, իսկ մեկնման պատրաստ ավտոբուսի մոտ փող տվեց եւ մի ցուցակ:

- Այստեղ այն ապրանքների անուններն են, որոնք ես կարող եմ ճարել. եթե սրանցից որեւէ մեկը քեզանից ուզեն, անմիջապես կզանգահարես ինձ: Ցանկացած քանակությամբ: Աշխատի՛ր՝ նշված գների սահմաններում: Անպայ-

մաճ նրանց մի բա՛ն խոսացիր: Եթե կզգաս, որ զործարքի hոտ է գալիս, հրավիրի՛ր ռեստորան կամ նման մի տեղ: Փողի մասին չմտածես, մի քնակարա՛ն վարձիր, եւ ինձ անմիջապես տեղեկացրո՛ւ: Ես կհանդիպեմ: Եթե մնայիր ինձ հետ, միասին ավելի լավ կլինեիր, բայց թող քո ուզածը լինի:

Մենք հրաժեշտ տվեցինք, եւ ես բարձրացա ավտոբուս: Տեղավորվեցի հետնամասի դասարկ նստատեղերից մեկին եւ նույնիսկ չհասցրեցի ընկերոջս տված փողը: Նա հրաշալի ճանաչում էր ինձ, եւ հնարավոր չէր, որ ինչ տված լիներ:

Հետո ավտոբուսի պատուհանից սկսեց երեւալ, թե ինչպես է լայն խճուղուց այն կողմ անծայրածիր հորիզոնում, տիրաբար սփռվել Ռուսաստան աշխարհը: Իսկ որտե՞ղ է իմ հայրենիքը ճակատագրորեն: Հեռու, մոտիկ, արեւավառ, արեւահամ, եռազնեռում, արյունի... Համենայնդեպս, ի՛մ հայրենիքը:

Այս ի՞նչ անվերջ Ռուսաստան է: Ոչ մի բարձունք, ոչ մի բլուր, սար, ժայռ... Ես ընդամենը ուզում եմ գտնել դարզ ու հասարակ սողը: Գիտեմ, որ դա անհնարժելի բանն է: Ինքնաարդարացո՞ւմ, թե՞ ահազանգ: Թե՞ երկուսը միասին: Սարսափելին այն չէ, որ այստեղ քեզ չեն սիրում: Մի՞թե կա մի տեղ, ուր մեզ սիրում են: Սարսափելին այն է, որ դու դրան վարժվում ես: Եւ Իսրայել Օրուց մինչեւ հիմա: Իսկ սողը գտել են ուրիշները՝ ո՛չ ինքնաարդարացում, ո՛չ ինքնախաբեություն, եւ ո՛չ էլ, առավել եւս, սքափեցում: Կամ ունի՞ արդյոք մեր օրհներգի «բռվար, աստղը» ձյունե այս անապատի հետ: Այս անծիր տափաստանների ու անտառների հետ: Պարզվում է՝ ունի: Ու ոչ միայն այս, այլեւ աշխարհի բոլոր անապատների, անտառների, տափաստանների, գետերի ու ծովերի հետ: Եթե չունի, ապա ո՞ւր եմ ես գնում եւ ինչո՞ւ:





Տանտիրուհին ինձ հանձնեց վարձածս բնակարանի բանալիները եւ թողեց իր հեռախոսահամարը, որ անհրաժեշտության դեպքում զանգեմ։

Փոքր, մեկսենյականոց բնակարան՝ քաղաքի ծայրամասում, արդյունաբերական շրջանից ոչ շատ հեռու։ Թեկուզ մի քանի ամսով, բայց սա հիմա իմ տունն է։ Իմ տունը՝ Ռուսաստանի մեծ քաղաքներից մեկում։ Մի պատուհան, մի դուռ, մի կիսադատարկ գրապահարան, մի բազմոց-մահճակալ, մի բազկաթոռ, մի հեռուստացույց եւ մի բնանկար, որը տեղափոխեցի պատուհանի դիմացի պատին։

Բայց ի՞նչ եմ անում ես այստեղ։ Ինչո՞վ եմ զբաղված, ինչո՞ւ եմ եկել։ Ինչո՞ւ եմ հեռացել տնից ու հայրենիքից։

Լուրջ հարցերը երբեք լուրջ պատասխան չեն ունենում։ Հավանաբար այդ պատճառով է, որ հաճախ լռությունը դառնում է զավեշտ։ Համենայնդեպս, մինչեւ իմ բազմոց-մահճակալին փռվելը հանգցնում եմ լույսը։ Մթի մեջ փիլիսոփայական փորհարուքը իսկույնեւեթ հանդարտվում է։ Չկա հարց, չկա եւ պատասխան։ Լույսը կբացվի, բարին էլ՝ հետը։ Բայցեւայնպես, ես այստեղ եմ հարկադրաբար։ Բայցեւայնպես, ինձ շատ փող է պետք։

Մի երգ կա՝ «Ներքեւ, ներքեւ գետի եզրով, ներքեւ մինչեւ վերջը...» Գետի վերջը ծովն է՝ մեր երազանքների ծովը, ուր ալիքները ծառս են լինում կատաղած նժույգի պես, իսկ ափին ավազը վառվում է, ինչպես հալած մազութը, եւ փայլում, ինչպես ոսկին։

Իմ հարեւան Վիտալի Մախինովիչն արդեն սովորություն էր դարձրել՝ երեկոները գալ շախմատ խաղալու: Յոթանասունն անց, ալեհեր, հաճելի արտաքինով բարեկամս ժամանակին տեղի ռադիոյում ու հեռուստատեսությունում սպորտային մեկնաբան էր աշխատել:

Մեր ծանոթությունը չափազանց ծիծաղելի ստացվեց: Երկրորդ օրն էր, որ տեղափոխվել էի վարձածս բնակարանը: Հեռուստացույցով ֆուտբոլ էր, խաղում էին «Նանտը» եւ Մոսկվայի «Սպարտակը»: Ես միշտ սիրել եմ ֆրանսիական ֆուտբոլը, եւ բնականաբար աջակցում էի «Նանտին» ու զոլերի ժամանակ ոգեւորությունից աղմկում: «Սպարտակը» պարտվեց, եւ խաղն ավարտվելուց մի քանի րոպե անց դուռը թակեցին. բացեցի՝ Վիտալի Մախինովիչն էր: Թվում էր՝ հարմար հայրիկյանք է փնտրում...

- Դու ինչո՞ւ էիր ուրախանում, երբ այդ շան որդիք գոլ էին խփում...

Ես արդուշ կտրած նրան էի նայում՝ չիմանալով ինչ ասել:

-Դու ինչո՞ւ չէիր ուզում, որ «Սպարտակը» հաղթի...

Հետո հանդարտվեց, երբ իմացավ, որ ռուս չեմ: Այդպես ծանոթացանք:

Սկսեցինք երեկոները շախմատ խաղալ: Արդեն երրորդ անգամն էր, որ Վիտալի Մախինովիչը գալիս էր ինձ մոտ: Ընդհանրապես շատախոս էր, բայց երբ նստում էր շախմատի առջեւ, լռում էր եւ ամբողջովին տարվում խաղով: Ես զարմանում էի դրա վրա, նա հանգիստ կերպով խմում էր եւ հիշում էր ամեն քայլը: Չափազանց զավեշտալի էր...

խաղը: Ես նկատել էի, որ նա պարտված երբեք տուն չէր գնում, խաղում էր այնքան, մինչեւ հաղթեր: Ու ասիմված, երբ հոգնած էի լինում կամ գործ էի ունենում, դիտմամբ պարտվում էի:

Այս անգամ Վիտալի Մախինովիչն ինքն էր զարմացնում բերել: Երբ նստեց իր տեղը՝ միակ բազկաթոռի վրա, եւ շարեցինք խաղաքարերը, զգացի, որ այնքան էլ տրամադրված չեմ: Սկսեցի իրար հետեւից պարտվել: Միշտ ուրիշ տեղ էր:

Ցերեկը հանդիպել էի մի մեծ գործարանի փոխտնօրենի հետ ու պարզել, որ գործարանին մեծ քանակությամբ ներկ է հարկավոր: Պայմանավորվել էինք հաջորդ առավոտյան նորից հանդիպել: Հասցրել էի նաեւ զանգահարել Կոտին եւ իմանալ, որ նա այդ ապրանքից կարող է ճարել նվազագույն գնով: Ինձ մնում էր միայն հաջորդ օրը փոխտնօրենին համոզել՝ ավելի բարձր գնով վերցնել ապրանքը:

- Շախ,- ասաց Վիտալի Մախինովիչը,- եւ մատ:

Ծերուկը շիամաձայնվեց մնալ եւ ընթրել հետս: Ես հավ ու կարտոֆիլ տապակեցի եւ սկսեցի ճոխ սեղան դնել: Ունեի նաեւ խաղամական սեւ ձիթապտուղ, հորած կանաչ դանիր, խոզի աղխոտած ֆիլե եւ թթու դրած սունկ: Այդ ամենը շարեցի սեղանին եւ սառնարանից հանեցի «Վողկայի» շիշը: Բայց երբ նստեցի սեղանի առջեւ, զգացի, որ ախորժակ ամենեւին չունեմ: Հավից մի կտոր պոկեցի, բայց չկերա: Ափսեն դեն հրեցի ու սկսեցի խմել: Խմում էի եւ արանքում միմի ձիթապտուղ ծամում: Օղին սովորականից հեշտ էր կուլ գնում: Հետո սկսեցի հիշել սիրելի մարդկանց ու խմել նրանց կենացները:

Դրսում ձյուն էր գալիս, եւ ես չգիտեի, որ դա այդ տարվա

վերջին՝ մարտյան ձյունն էր: Սենյակի վարագույրները բաց էին, եւ պարզ երեւում էր, թե ինչպես էին փաթիլները պարում լապտերի լույսի մեջ ու անհետանում: Հեռվում պաղ ու մաշված լուսինը, ինչպես մի դատարկ մակույկ, օրորվում էր ամպե ալիքների վրա: Իմպրեսիոնիստներից ծանոթ այս բնապատկերը դեռ որքա՞ն կմնար պատուհանի շրջանակում:

Լապտերի լույսը թեթեւ լուսավորում էր նաեւ մայթեզրի հսկա ծառը, որին մի ագռավ էր թառել: Կամ գուցե կաչաղակ: Եւ կամ քամու նվերը ծառին՝ Վիտալի Մաքսիմովիչի՝ նախորդ օրը լվացքի պարանից անհետացած սեւ բումբարը:

Հիմա՝ այս պահին, մետրոյի «Կրյուգինո» կայարանին է մոտենում հերթական գնացքը: Ձյան փաթիլները, լապտերի աղոտացող լույսից կառչած, դեռ մնում են բնապատկերում: Թվում է՝ լապտերի հաշվին սլացող գնացքն ուր որ է կպատռի կտավն ու կհայտնվի սենյակումս:

Ես բաժակս թարմացրի եւ տեսա, որ շիշը գրեթե դատարկվել է: Ի՞նչն է ինձ ստիպում կուլ տալ այս թույնը: Ասենք՝ ես անհանգստանալու բան չունեմ, որովհետեւ գիտեմ, որ միշտ էլ կարող եմ սեղմել հակառակ կոճակը, քանի որ ո՛չ ինձ չափազանց բարձր եմ գնահատում, ո՛չ էլ արհամարհում այնքան, որ չտեսնեմ շաբաթվա առաջին եւ վերջին օրերի միջեւ այն վիհը, որի վրայով մազե մի կամուրջ է մեզ տանում դեպի հաջորդ կամուրջը: Պետք է միշտ զգոն լինել, զզվելիության աստիճանի զգոն, եթե չես ուզում խեղդվել որեւէ միզափոսում: Գուցե ուրիշները խմում են՝ չդիմանալով լարվածությա՞նը կամ պարզապես զզվանքի՞ց: Չգիտեմ, թույլ տվեք խմել մի բաժակ եւս:



Երբ Վիկան բացեց արվեստանոցի դուռը եւ ինձ տեսավ շեմին կանգնած, թվաց, թե բոլորովին չզարմացավ: Հագին ջինսե կիսաթեւ վերնաշապիկ էր՝ ամբողջովին յուղաներկի մեջ կորած: Ձեռքերը նույնպես ներկոտ էին: Նա արմունկով մի կողմ տարավ դեմքին կախված ծամերի փունջը եւ ճանապարհ տվեց ինձ:

Մուտքի կիսախավարից հետո արվեստանոցն ինձ ավելի, քան լուսավոր թվաց: Մոլբերտի վրա նոր-նոր սկսված մի նկար էր՝ վազող աղջկա ուրվապատկերով, եւ դեռ պարզ չէր, թե ուր էր տանելու նրան վրձինը:

Ես սեղանին դրեցի ստվարաթղթե տուփը, որի մեջ մի կերպ տեղավորել էի ճանապարհին գնած նվերս: Վիկան նայեց տուփին, հետո՝ ինձ: Մենք դեռ ոչ մի բառ չէինք փոխանակել:

- Այդտեղ տո՞րթ է,- հարցրեց նա:

- Ոչ, դու տո՞րթ ես ուզում:

- Մի քիչ: Պարզապես մտածեցի, որ տուփի մեջ տորթ է, իսկ ի՞նչ է այնտեղ:

- Ձի,- ասացի ես ու մի սիգարետ վառեցի:

Վիկան տուփից հանեց սեւ բաշով, մինչեւ սմբակները հասնող անխնա սեւ պոչով հրաշալի ձիուկը՝ իմ Քուռկիկ Ջալալին՝ բուծված Սարատովի պլաստմասե իրերի գործարանի ձիաբուծարանում: Ես այն գնել էի ճանապարհին, մի ծեր կնոջից, որը մի ամբողջ տարի թոշակ չէր ստացել: «Ես դաշնամուր էլ ունեմ, նկարի մի հին շրջանակ, շատ մեծ ծովախխունջ, այն ամուսինս էր բերել Կուբայից, նա վատ է տեսնում, բայց, փառք Աստծո, ամեն ինչ տեղն է»,- ասել էր նա: «Եւ այդ բոլորը վաճառվո՞ւմ է»,- հարցրել էի ես: «Ես կարող եմ վազել, խխունջը բերել»,- հուզվել էր պառավը: Բայց ես գերադասել էի ձիուկին՝ նկատի ունենալով Վիկայի հատուկ վերաբերմունքը ձիերի նկատմամբ: «Ամեն մարդու հնարավորություն է տրվում կյանքում գոնե մեկ անգամ ձի

լինելու»,- ասել էի ես ծեր կնոջը՝ ձիուկի համար պահանջվածից չորս անգամ ավել վճարելով: Ավելի ճիշտ՝ ասել էր խմածս վերջին բաժակը, իսկ ես՝ միայն վճարել:

- Սա ի՞նչ է,- հարցրեց Վիկան:

Ես գլխով արի:

- Հագնվի՛ր, գնանք մի տեղ: Գնանք տորթ ուտելու:

- Լավ,- ասաց նա ու աստիճաններով վերեւ բարձրացավ:

Արվեստանոցի մի անկյունում՝ հսկա կավե ծաղկամանի մեջ, դրված էին իմ նվիրած վարդերը: Իսկ վարդերի վերեւում՝ մի նկարի վրա, կտավի եւ շրջանակի արանքում, խցկված էր իմ երկտողը՝ Կարմիր խաչի պատվիրանով...

Նկարում կանգնած դիրիժորը ինձ չափից ավելի բարձրահասակ էր թվում եւ դեռ հասակ նետելու տեղ ուներ մինչեւ փայտիկի հաջորդ սլացքը, ինչը դատելով ասես խորը շունչ քաշել պատրաստվող թավջութակահարի դժգոհ դեմքից, չէր սպառնում նկարի շրջանակին: Հնչում էր երաժշտության վերջին ակորդը:

- Դու կօգնե՞ս ինձ՝ մուշտակս հագնել,- լսեցի Վիկայի ձայնը:

- Իհարկե,- մեքենայորեն պատասխանեցի ես՝ չհասկանալով, թե ինչու պետք է օգնեմ հագնելու, երբ կարծես թե հակառակը պիտի անեի:

Համենայնդեպս, բռնեցի մուշտակը, եւ նա քնքշորեն սահեց մուշտակի մեջ, ինչպես սարյակը՝ ռունենու փետուրներից հյուսած իր բույնը:

Երբ մենք դուրս էինք եկել փողոց, նա հարցրեց.

-Դու սիրո՞ւմ ես ջազ:

-Սիրում եմ,- ասացի ես ազնվորեն, թեեւ նույնը պետք է լիներ պատասխանը, եթե հարցը վերաբերեր Շումանի երաժշտությանը, որից գաղափար իսկ չունեմ:

- Ուրեմն ես հիմա քեզ մի տեղ կտանեմ: Այնտեղ իսկական նեգրական ջազ են նվագում, եւ դաշնակահարն էլ սեւամորթ է: Միայն թե, իմացի՛ր, ես եմ քեզ այնտեղ հրավիրում:



Ես սկզբում չհասկացա, թե նա ինչ նկատի ուներ, մինչեւ որ չշարունակեց:

- Երեկ հոնորար եմ ստացել եւ հիմա շատ փող ունեմ:

Ես ծիծաղեցի. ինչպես երեւում է, նա չէր մոռացել ինքնակենսագրական իմ հոգեփսխումը եւ դատարկ գրպաններով ասպետների տոհմից իմ ապօրինի սերման կողմնակից էր:

- Ի՞նչ հոնորար,- հարցրի:

- Այնպես, ես երբեմն նկարում եմ մի ֆրանսիական ամսագրի համար:

- Հրաշալի է,- ասացի,- միայն թե բանն այն է, որ ես էլ եմ երեկ հոնորար ստացել. ես երբեմն անեկդոտներ եմ գրում մի գերմանական թերթի համար: Իսկ գերմանական մարկը ֆրանկից ավելի կայուն փող է: Ուրեմն հասկանում ես, թե ինչ է ստացվում:

Ջազ ակումբը նավահանգստում էր՝ մի ոչ մեծ, սպիտակ շոգենավի վրա, որն իր փոխակերպված երկրորդ կյանքն էր ապրում, ինչպես ռազմադաշտից վերադարձած զինվորը հարեւան այրու ծոցում՝ հարբած, անհոգ, բայց միշտ պատրաստ:

Շեփորի ձայնը լսվում էր դեռ ափից՝ նավ չբարձրացած: «Ներքեւ, ներքեւ գետի եզրով...» Մինչդեռ գետը սառած էր, եւ մարտյան վերջին ձյունն իրար էր ձուլել ցամաքն ու ջուրը, եւ միայն նավերի շարքից կարելի էր հասկանալ՝ կանգնած ես գետի ափի՞ն, թե՞ գետի սառույցներին:

Ես ինձ համար կոնյակ պատվիրեցի ու մի սիգար: Վիկան ասաց, որ հաճույքով մի փոքր կամպարի կխմի եւ ուրիշ ո-

չինչ:

Շեփորին փոխարինել էր սաքսոֆոնը, որից ծավալվում էր անառիկ ուրախությունը՝ զրնգացող, մերթ ճչացող ու մերթ էլ մանկան ծվլոցի պես: Սեւամորթ դաշնակահարը, թերեւս, այդ պահին ոչ մի ուրիշ բանի մասին չէր մտածում եւ այնքան եռանդով էր նվագում, որ թվում էր՝ ուր որ է, փշրելու է իր սեւ ոսկորները:

Հիշեցի, որ Վիկային սուրճ էի խոստացել: Ինքս մոտեցա մատուցողին եւ մի ամբողջական, ոչ մեծ սուրճ պատվիրեցի: Բայց խնդրեցի՝ նախ էլի խմիչք բերել:

Ես հենց այնպես չէի խմում: Եթե չխմեի կամ քիչ խմեի, ժամերով կնստեի եւ ոչ մի բառ չէի ասի: Իսկ ես չէի ուզում, որ Վիկան ձանձրանա, չնայած այնքան էլ վստահ չէի, որ խոսելու բան կա:

Մատուցողը նախ բերեց սուրճը, որը շատ ջանասիրաբար էր զարդարված եւ ինձ բոլորովին դուր չեկավ:

- Ոչինչ, մենք հոգով մանուկներ ենք,- չգիտեմ՝ ինչու ասացի ես մատուցողին:

Եւ, չգիտեմ՝ ինչու, մատուցողը շնորհակալություն հայտնեց, եւ, չգիտեմ՝ ինչու, Վիկան ասաց.

- Մի բանաստեղծությո՛ւն կարդա քո գրածներից:

- Ես բանաստեղծ չեմ, Վիկա: Եւ կյանքումս միայն մի անգամ եմ բանաստեղծություն գրել, երբ դպրոցում սիրահարվել էի ճապոնուհու աչքերով մի աղջկա: Ինչո՞ւ ես կարծում, թե ես բանաստեղծ եմ:

- Բանաստեղծ ես,- ասաց նա,- եւ ես համոզված եմ:

Դիմացի սեղանի մոտ նստած մի ճաղատ մարդ փորձում էր համբուրել կողքի կնոջ շուրթերը, բայց վերջինս անընդհատ շարժում էր գլուխը, եւ ճաղատի համբույրը օճառաջրի պղպջակի պես պայթում էր օդում: Կինը խոսում էր նույն սեղանի մոտ նստած մի ուրիշ տղամարդու հետ, որը լուռ խեցգետին



էր մաքրում:

Ուզում էի շամպայն պատվիրել սուրճի հետ, բայց Վիկան չթողեց: Հասկանում էի, որ նա չի ուզում՝ փող ծախսեմ, եւ ինձ լավ չէի զգում: Մտածում էի, թե ով գիտի՝ ինչ փողեր է ծախսել Իլյան, իսկ ես չեմ կարող: Ես, ճիշտն ասած, մի քիչ մեղքի զգացումով էի հիշում Իլյային: Ինձ թվում էր, որ նա կարգին տղա էր, ու շատ բաներ չէի կարողանում հասկանալ եւ, ընդհանրապես, չէի ուզում մտածել այդ մասին:

Դիմացի սեղանի մոտ նստած ճաղատ տղամարդը մենակ էր մնացել: Կինը պարում էր այն մյուսի հետ, որը մինչ այդ խեցգետին էր մաքրում: Ճաղատը խմում էր ու աչքի տակով հետեւում նրանց: Ամեն ինչից երեւում էր, որ եռանկյունին քանդվելու վրա է, եւ ճաղատը, բաժակ բաժակի հետեւից կուլ տալով, փորձում էր հետաձգել անդառնալի կորուստը:

Կինոնկարը երբեք չի տեսնում ճշմարտությունը: Անշուշտ, մոնտաժը նրա համար է, որպեսզի փարատվեն կասկածները: Եւ իհարկե, ժապավենի գերածախսը չէ միակ պատճառը, որ երբեմն նույնիսկ հաջողված ֆիլմերում ավելի շատ կեղծիք կա, քան ճշմարտություն:

Եթե մոնտաժը հպանցիկ ակնարկների թշնամին է, ապա ինչո՞ւ գրեթե միշտ բուն ասելիքը ճաղատ է առանց այդ ակնարկների: Կարելի էր չնկատել ճաղատի թախիծը, սակայն չեմ կարծում, որ հակիրճության գայլիկոնը սպառնալից չէր կախվի հենց բուն նյութի գլխին: Ուրեմն գայլիկոնին կտրելու մի բան տալու համար՝ իբրեւ թե հանուն ֆիլմի, ես ստիպված եմ նորից անդրադառնալ եռանկյունուն, քանի դեռ Վիկան իր մտքերի հետ է, եւ սեւամորթ դաշնակահարն իր սեւ ոսկորներն ամբողջովին չի փշրել՝ զարնելով ռուսական մետաֆիզիկայի սառցաբեկորներին:

Ինչեւէ, ոչ մի ռոմանտիզմ: Չոր, կոպիտ թվաբանություն՝ անշուշտ, ենթադրական:

Պահածոների գործարանի քարտուղարուհուն ճաղատն այստեղ էր բերել ուղիղ գործարանից: Մյուսը, որն ամենայն հավանականությամբ ճաղատի ենթական էր, լուռ հետեւել էր նրանց` մտքով իսկ չանցկացնելով, որ մի այնպիսի տեղ են գնում, ուր նույնիսկ տապակած ձուկ չի լինելու: Ի՞նչ իմանար, որ վարչական մի պարզ ձեւակերպումով կարող էր այսքան թանկ նստել շեֆի վրա: Եւ մինչ ինքը զբաղված էր խեցգետին մաքրելով, վոդկայի երրորդ, թե չորրորդ բաժակից հետո քարտուղարուհու ոտքը նախ թեթեւ կպավ իր սրունքին, հետո թեթեւ գալարվեց ազդրերն ի վեր ու վերջապես մխրճվեց այնտեղ, ուր վաղուց սկզբունքային հարցեր չէին առաջանում: Չի կարելի ասել, որ դա նրան վախեցրեց, բայց ակնհայտորեն գոհ էլ չէր եւ մի տեսակ վարանումով ընդունեց քարտուղարուհու պարելու առաջարկը: Մի խոսքով, շուտով նրան սպասվում էր կամավոր դիմում գրելու կամ շատ ավելի լուրջ մի այլ առաջարկ:

- Իսկ մենք չե՞նք պարելու,- հարցրեց Վիկան,- թվում է՝ դու այդպես լուռ կարող ես նստել ու մնալ մի հարյուր տարի:

- Ինչո՞ւ հարյուր:

- Որովհետեւ ես չեմ ուզում, որ դու սֆինքս դառնաս, ժպտացող սֆինքս:

Առավոտյան ինձ արթնացրեց զարթուցիչի դաժան զնգոցը: Ժամը ութն էր, եւ ես լավ չքնելուց ու նախորդ օրվա խմածությունից մի քիչ շշմած էի:

Լվացվեցի ու սկսեցի հագնվել:

«Արդշին» գործարանի փոխտնօրենի ընդունարանում ստիպված եղա մի քսան րոպե սպասել: Նստել ու անկախ ինձնից նայում էի հաստլիկ քարտուղարուհուն: Նա ինչ-որ



թղթեր էր լրացնում ու երբեմն կում անում թեյի բաժակից: Փոքրիկ ընդունարանում կիտրոնի բուրմունք էր տարածվել:

Ես փորձեցի կռահել, թե ինչպիսին կլինի փոխտնօրենը: Դատելով քարտուղարուհուց՝ նա կամ ծերունի էր, կամ, Աստված մի արասցե, առանձնապես վտանգավոր մի սուֆիստ, որի գիտակցված կոմպրոմիսը եթե միայն քարտուղարուհով ավարտվեր, կարելի էր մի կերպ հանդուրժել, բայց ես դրանում այնքան էլ վստահ չէի, ուստի պետք է խոստովանեմ, ինչպիսի հատուցում կլիներ այդ սուֆիստին, եթե հիմա, առանց թույլտվության, ներխուժեի ու ասեի՝ ես կինոյից եմ:

Փոխտնօրենը հսկա չափերի մի ծերունի էր, խոշոր, շիկահեր գորիլլա՝ փքված այտերով: Բարեւելիս նա ոտքի կանգնեց, եւ ինձ թվաց, թե առջեւումս զգեստապահարան է:

- Վիկտոր Լվովիչ,- ներկայացավ նա,- մի քիչ հեռո՛ւ նստեք, ես հարբուխ ունեմ:

Ես նստեցի մի քիչ հեռու: Նա ինձ այնպես էր նայում, կարծես դիմացը Գորգոնի գլուխն էր:

- Ես ներկայացնում եմ «Արեւածագ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը,- ասացի ես՝ սկսելու համար ավելի հարմար ձեւ չգտնելով:

Փոխտնօրենը շարունակում էր ինձ նայել նույն «հափշտակությամբ»:

- Վիկտոր Լվովիչ, այն ներկերը, որոնք որ ձեզ հարկավոր են, մենք կարող ենք ճարել,- շարունակեցի ես:

- Լավ,- վերջապես բարեհաճեց խոսել նա՝ վեր կենալով ու դեպի պատուհանը քայլելով,-դուք տեղյակ եք, երիտասա՛րդ, որ մենք ներկերի դիմաց կարող ենք տալ միայն մեր արտադրանքը. գործարանը փող չունի:

Ես գրպանիցս հանեցի ծխախոտի տուփը եւ հայացքով ծխելու թույլտվություն խնդրեցի: Նա գլխով հասկացրեց, որ կարող եմ ծխել եւ աղմուկով մաքրեց քիթը:

- Շատ հազվադեպ գործարաններ հիմա փող ունեն,- ասացի ես,- ամենուրեք նույն պրոբլեմներն են: Բայց մեզ համար, անշուշտ, գերադասելի է ապրանքի դիմաց կանխիկ փող ստանալ, որովհետև մենք ինքներս այն գնում ենք կանխիկ փողով:

- Հասկանում եմ, երիտասարդ, բայց ես արդեն ասացի, որ գործարանը փող չունի,- նա թեթև հառաչեց,- այո, հիմա մեզ օդի նման ներկ է անհրաժեշտ: Եթե չճարենք, մեր արտադրանքը չենք կարող իրացնել. բայց փող, ցավոք, չունենք:

Ես հասկացա, որ նա ճիշտ է ասում և խոսակցությունն այդ ուղղությամբ այլևս չշարունակեցի:

- Լավ, իսկ ի՞նչ եք առաջարկում ներկերի փոխարեն:

- Հացաթխման փուռ,- փոխտնօրենը կրկին մաքրեց քիթը:

Ես ծիծաղեցի:

- Իզուր եք ծիծաղում,- նա նստեց իր տեղը,- հիմա շատերն են հացի գործ անում, փռերի պահանջարկը մեծ է, և եթե դուք մի քիչ էժան վաճառեք՝ ուզողներ կգտնվեն:

Ես փոխտնօրենին ասացի, որ եթե նույնիսկ մենք փռի համար գնորդ ճարենք, արդեն ներկերը չենք կարող գործարանին տալ նույն պայմանով: Նա ծուռ նայեց ինձ.

- Դա արդեն առանձին խոսակցություն է:

Ես փորձեցի արագ կողմնորոշվել: Ըստ Կոտի՝ ներկերը կարող էինք վերցնել մեկ տոննան տասնյոթ միլիոնով: Եթե կանխիկ փող տային, կասեի՝ քսան միլիոն: Ապրանքափոխանակության դեպքում ամեն ինչ փոխվում էր: Նախ պետք էր իմանալ փռի գինը, ապա՝ թե ինչքանով կարող ենք մենք այն իրացնել ու, ըստ այդմ, կողմնորոշվել: Զգում էի, որ այս փքված գորիլլայի հետ դժվար է լինելու, մեր ապրանքի գինը մինչև չիմանա, իրենը չի ասի:

Այդպես էլ եղավ, նա հարցրեց, թե ինչ արժեն ներկերը:

- Սակայն, Վիկտոր Լվովիչ, նախ ինձ անհրաժեշտ է իմանալ, թե ի՞նչ արժե ձեր փուռը:

- Երիտասարդ, պետք է ասեմ, որ մենք շուկայում չենք և սեխ չենք փոխանակում ինչ-որ կարտոֆիլի հետ: Սա գործարան է, սա մանր առևտրական խաղերի տեղ չէ,- նա գնալով ավելի էր լրջանում:- Ես, ի տարբերություն ձեզ, այս գործարքից ոչ մի կոպեկ գրպանս չեմ դնում: Իմ ուզածն այն է, որ գործարանը ոտքի կանգնի: Այնպես որ, ես ձեր հետ առևտուր չեմ անի. կասեմ որոշակի և վերջնական թվեր: Մեզ հարկավոր է յոթ տոննա ներկ՝ երկնագույն կամ բաց կանաչ: Ես հրաշալի գիտեմ այդ ներկերի գները շուկայում. մեկ տոննան արժե մոտ քսան միլիոն:

- Բայց...- Ես ուզում էի նրան ընդհատել, սակայն փոխտնօրենը բարձրացրեց ձեռքն ու շարունակեց:

- Ես գիտեմ, դուք ինչ եք ասելու և նախօրոք համաձայն եմ: Իհարկե դա կանխիկ վճարման դեպքում : Այդ իսկ պատճառով, մենք էլ կիջեցնենք մեր ապրանքի գինը...

Նա ասաց, որ իրենք վաճառում են փռերը հարյուր հիսուն միլիոնով, սակայն այս պարագայում պատրաստ են փոխանակել մեկ հատը յոթ տոննա ներկի հետ:

Ես ժամանակ խնդրեցի մտածելու համար և պայմանավորվեցի ներկայանալ հաջորդ օրը: Շտապում էի, որովհետև վախենում էի, թե ծերուկը մի ուրիշ խորամանկություն կանի և ինձ փաստի առաջ կկանգնեցնի:

Նա վեր կացավ և ճանապարհեց ինձ մինչև դուռը:

Փոխտնօրենը որոշակիորեն ինձ դուր եկավ: Մտածում էր գործարանը ոտքի կանգնեցնելու մասին: Իսկ եթե կարողանար կանխիկ գումար հայթայթել, ես նրան մի տոննայի մեջ մեկ կամ մեկ ու կես միլիոն կառաջարկեի, և նա կարգին

փող կաշխատեր: Ես այդ մասին չխոսեցի, որովհետեւ համոզված էի, որ նա չէր համաձայնվելու: Ավելին՝ կարող էր վռնդել ինձ:

Ուրեմն ի՞նչ է ստացվում: Ստացվում է, որ մենք հարյուր քսան միլիոնով գնում ենք հարյուր հիսուն միլիոն արժողությամբ ապրանք: Բայց հարց է՝ հետո կկարողանանք այն վաճառել: Եւ, եթե՝ այո, ապա՝ ինչքանով: Հարկավոր էր պարզել: Մի փոստատուն մտա ու այնտեղից զանգահարեցի Կոտին: Բայց նրան չկարողացա գտնել: Դուրս եկա ու սկսեցի քայլել մանկական այգում:

Գարունը կարծես ուզում էր ինչ-որ բան ասել: Չէ՞ որ մարտի վերջն էր արդեն: Բայց թռչունները դեռ լուռ էին, թեեւ ծառերի բներն ազատվել էին ձյունե բնտակապերից, եւ արահետների տրորված սառույցն այլեւս սառույց չէր, ու մի տաք քամի էր փարվում դեմքիս: Պետք էր շտապ թերթեր գնել: Գուցե հնարավոր լիներ ինչ-որ բաներ քաղել գովազդներից ու հայտարարություններից: Այստեղ նույնը չէ, ինչ որ իմ հայրենիքում: Այստեղ, եթե կորել է ինչ-որ մեկի անձնագիրը կամ ամուսնության վկայականը, ուրեմն՝ իրոք կորել է: Եթե ինչ-որ մեկը փափուկ կահույք է վաճառում, ուրեմն՝ կահույքը փափուկ է ուղղակի իմաստով: Ի՞նչ իմանաս, գուցե հացաթխման փուռ գնող էլ գտնվի. մեծ քաղաք է, հացի կարիք ունի, բուլկու-մուլկու... Ալյումինի, ձեռնոցների, էլեկտրաջեռուցիչների, դեռեւս չհայտնագործված կանացի ներդիրների կարիք ունի: Տեսնես ինչու այդ ուղղությամբ Կոտը ոչինչ չի մտածել: Իսկ գուցե նույնիսկ փորձ էլ է արել, պարզապես ամաչում է խոստովանել: Բայց ինչի հետ կարելի է փոխանակել կանացի ներդիրները, որոնք կնոջ երջանկության երաշխիքն են, եթե հավատանք գովազդներին: Մի՞թե այս քաղաքում հնարավոր է գտնել համապատասխան մի բան՝ փոխանակելու՝ երջանկության երաշխիքով:



Մի կրպակում թերթերը սպառվել էին: Մյուսը կողպված էր: Վերջապես մթերային խանութից մի քանի գովազդային հին թերթեր ձեռք գցեցի ու գնացի տուն: Մանրակրկիտ ուսումնասիրեցի դրանք, բայց ինձ անհրաժեշտ որեւէ բան այդպես էլ չիմացա: Հետո էլի զանգեցի Կոտին եւ վերջապես բռնացրի: Երբ ամեն ինչ պատմեցի, ասաց, որ լավ չեմ կարողացել խոսել փոխտնօրենի հետ. կարգին համոզելու դեպքում նա փող կտար: Հետո վստահեցրեց, որ կհետաքրքրվի հացաթխման փռի հաշվով եւ երեկոյան կզանգահարի:

Վիտալի Մաքսիմովիչի տիկինն այնքան եռանդով էր մաքրում սեղանը, որ նրա խոշոր կրծքերը ցնցվում էին առնվազն յոթ բալանոց երկրաշարժի ուժգնությամբ: Նախկին սպորտային մեկնաբանն ինձ հրավիրել էր ճաշի, եւ ես ոչ մի կերպ չէի կարողացել մերժել: Հիմա նա անկյունում նստած թերթ էր կարդում եւ նույնիսկ ուշադրություն չէր դարձնում վրաս: Մինչդեռ նրա թմբլիկ կինն աշխուժորեն խոսեցնում էր ինձ:

- Վիտալի Մաքսիմովիչն ասում է, որ դու էլ ես լրագրող: Ես քեզ խորհուրդ եմ տալիս, փոխել մասնագիտությունդ, քանի դեռ ուշ չէ, հետո ուզենաս էլ՝ չես կարող:

Ես զարմացած նայեցի նրան: Տիկինը շարունակեց.

- Այո՛, այո՛, փոխել: Այդ մասնագիտությունը տարիների ընթացքում բթացնում է մարդուն: Ո՞վ կարող է ասել, որ իմ ամուսնու գլխում հիմա խելք է մնացել: Ոչ ոք:

Նախկին սպորտային մեկնաբանն ականջների տակից խեթ նայեց կնոջը, բայց դրանից ցնցումները չմեղմացան, ընդհակառակը՝ ավելի ուժգնացան՝ սպառնալով ջարդուփշուր անել սեղանի վրայի բյուրեղապակյա ծաղկամանը:

- Առավոտից իրիկուն կամ թերթ է կարդում, կամ մեմուարներ է գրում: Ինչի՞ համար, ո՞ւմ համար: Ո՞ւմ են պետք նրա մեմուարները: Ո՞վ է դրանք կարդալու: Գրելիս էլ ծխում է, ինչպես շոգեքարշը, եւ դա այն դեպքում, երբ նրա սիրտը հիվանդ է: Փոխի՛ր մասնագիտությունդ, քանի դեռ շուտ է:

Նրա ասածի մեջ չարության ոչ մի նշույլ չկար, եւ ես ժպտում էի: Վիտալի Մաքսիմովիչն աչքով էր անում ինձ, բայց ոչ մի բառ չէր ասում:

Ճաշն իսկական ռուսական սալյանկա էր՝ թթվասերով ու սեւ պղպեղով: Կային նաեւ սալաթներ, իսկ երկրորդը կոտլետ էր: Հարեւանուհիս ինձ ստիպելով էր ուտեցնում: Ես մի կերպ հրաժարվեցի երկրորդ աման ճաշից, բայց փոխարենը ստիպված եղա չորս հատ կոտլետ ուտել: Լավ է գոնե, որ Վիտալի Մաքսիմովիչն անընդհատ օղի էր լցնում բաժակներս...

Ճաշից հետո սուրճի սեղանի առջեւ, նա սկսեց պատմել կենտրոնական հեռուստատեսությամբ իր վարած ռեպորտաժների մասին: Տիկինը բոլորովին հանդարտվել էր, թեեւ առիթը բաց չէր թողնում խայթելու:

- Երբ հեռուստացույցով լսում էի ձայնը, սիրտս կտոր-կտոր էր լինում, կարծես են աշխարհից խոսեր: Բա էն կիեւցի ջհուդը. Վիտկան գիշեր-ցերեկ քարշ էր գալիս մարզադաշտերում, նրան էին Մոսկվա ուղարկում ստաժիրովկայի: Տունն էլ մեզնից շուտ ստացավ, գլխավոր էլ դարձավ... Օ, ո՜նց եմ ատում էդ ֆուտբոլը, էդ հոկեյը, էդ սպորտ կոչվածը:

- Վերջացրո՛ւ,- այլեւս չհամբերեց Վիտալի Մաքսիմովիչը:

Տիկինը մի պահ լռեց, ապա դիմեց ինձ.

- Դու է՞լ ես ռեպորտաժներ անում:

- Ոչ,- ասացի,- ես հիմա ավելի շատ փորձում եմ աջակցել հացամթերքների արտադրությանը:







Երեկոյան Կոսը զանգեց եւ ասաց, որ փողի համար գնորդ է ճարել, որը վճարում է հարյուր խաան միլիոն: Սակայն այդպես մենք ոչինչ չենք շահում, եւ հարկավոր է փոխնորդին համոզել, որ նա ադրանքի հետ առնվազն խաան միլիոն փող տա:

Բայց ես ավելի լավ ելք էի գտել: Մտածում էի Վիկտոր Լվովիչին ասել, որ մենք ունենք ընդամենը վեց, եւ ոչ թե յոթ տոննա ներկ: Նա փող չէր վճարում, եւ բնական է, որ չէր կարող փոխից մի հասված մոկել ու մնացածը տալ: Մի խոսքով՝ հույս ունեի, որ կստացվի: Այդպես էլ ասացի Կոտին, միայն թե նա տարակուսանք հայտնեց: Մնում էր սպասել վաղվան:

Երբ դուրս եկա մաքուր օդ շնչելու, մութ էր արդեն: Նստեցի շենքի մուտքի մոտ դրված նստարանին, որ ցերեկները սովորաբար հավաքվում էին պառավները, իսկ գիշերը՝ պատանիները:

Նախորդ օրը չափից դուրս շատ էի խմել եւ հիմա չէի հիշում, թե ինչ հիմարություններ էի դուրս տվել Վիկայի մոտ: Նույնիսկ չէի հիշում, տան ճանապարհելուց հետո նրա հետ որեւէ բան պայմանավորվե՞լ էի կամ որեւէ բան խոսացե՞լ էի արդյոք: Մի գլուխ խոսում էի, ինչ-որ պատմություններ էի պատմում, ինչ-որ դեպքեր, տեսություններ, զգացմունքներ... Նիցշեի հերոսը, որն ասում է՝ սա ինձ դուր է գալիս, հետեւաբար իմն է, Ֆելինիի «Կազանովան», որն այդպես էլ չտեսա, Լոտրեկի՝ հետոյքն ամբողջ աշխարհին ուղղած լվացարարուհին, հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարը... Մի խոսքով՝ այն, ինչ մնացել էր գլխումս կոնյակի, գարեջրի ու շամպայնի հրավառությունից հետո:

Ահավոր ուզում էի դուրս գալ փողոց, մի տաքսի կանգնեցնել ու գնալ նրա մոտ, բայց չէի համարձակվում:

Ինչ-որ մեկը մոտեցավ եւ ծխախոտ խնդրեց: Ես նրան մեկնեցի տուփը: Նա մի հատ վերցրեց ու նստեց կողքիս: Ուզում

էր խոսակցությունն սկսել, բայց ես ասացի, որ մրսում եմ ու վեր կացա: Գնացի տուն և զանգահարեցի Վիկային:

Դեռ երբեք հեռախոսով չէի լսել նրա ձայնը:

- Գլուխդ չի ցավո՞ւմ,- հարցրեց նա:

- Բոլորովին, որովհետև հիմա ինձ թվում է, թե գլուխ չունեմ:

Վիկան ծիծաղեց:

- Ուրեմն դու կգա՞ս:

- Անմիջապես:

- Իլյան այստեղ է, նա քեզ բարևում է:

Կախեցի լսափողը, ու ինձ թվաց, որ ինչ-որ մեկը հետևից մի ծանր բանով հարվածեց գլխիս:

Բարև, Իլյա: Ճիշտն ասած, ես քո մասին մոռացել էի: Բայց դու կաս և դեռ մի բան էլ ավել. դու «այստեղ ես»: Ես, իհարկե, ոչինչ չեմ կարող ասել: Նախ, որովհետև դա քո իրավունքն է, որովհետև դեռևս պարզ չեն իմ իրավունքները, և որովհետև, ամեն ինչից անկախ, դու ինձ դուր ես գալիս, և վերջապես, ո՞վ եմ ես: Ի՞նչ կարող եմ ես Վիկային տալ: Ի՞նչ ունեմ: Ես չգիտեմ, թե ով է Վիկան, չգիտեմ, թե որտեղից նա հայտնվեց, բայց նախևառաջ չգիտեմ ավելի կարևոր մի բան՝ չգիտեմ, թե ինչ եմ ուզում ինքս:

Սակայն մի բան գիտեմ հաստատ: Այն, որ այնուամենայնիվ հիմա գալու եմ: Քանի որ չեմ կարողանում հասկանալ, թե ինչու չպիտի պայքարեմ այն բանի համար, ինչին այս պահին գուցե աշխարհում ամեն ինչից ավելի եմ ձգտում:



Ես ծաղիկներ չգնեցի, որովհետև անկեղծորեն չէի ուզում, որ Իլյան իրեն վատ զգա: Մի մեծ անանաս ձեռքիս թակեցի արվեստանոցի դուռը:

Վիկան ոտքերը կիպ գրկող ջինսե շալվար էր հագել ու նախշազարդ սվիտեր՝ բարձր օձիքով:

- Արի դուրս գնանք զբոսնելու, լա՞վ,- նա նայեց աչքերիս,- դրսում գարնան բուրմունք է տարածվել, տե՛ս, ես բացել եմ պատուհանները:

Իսկապես, դեռ տաքսի կանգնեցնելիս նկատել էի, որ հալոցք է սկսվել, և ցուրտը ամբողջովին կոտրվել է: Այնքան ակնթարթային ու անսպասելի էր դա եղել, որ ես նույնիսկ չէի մտածել, որ դեռ երեկ ձյուն էր գալիս:

- Իհարկե, դուրս կգանք,- ասացի,- իսկ որտե՞ղ է Իլյան:

- Իլյա՞ն,- նա այնպես զարմացավ, կարծես ես հարցրել էի, թե որտեղ է Վլադիմիր Վոլֆովիչ Ժիրինովսկին,- նա գնաց: Դու որտեղից ես այսքան մեծ անանաս ճարել:

- Մի խանութից, անունը չեմ հիշում,- ասացի ես ու հանկարծ, չգիտեմ ինչու, հարցրի,- Վիկա, դու ինչո՞ւ ես այդպես վերաբերվում Իլյային:

Նա ծիծաղեց:

- Ես նրան շատ լավ եմ վերաբերվում, պարզապես մի քիչ զայրացա, որ նա եկել էր այստեղ: Ես երբեք ոչ ոքի այստեղ չեմ բերում: Սա իմ ամրոցն է:

- Իսկ ե՞ս:

- Իսկ դո՞ւ,- Վիկան կրկին նայեց աչքերիս,- հաշվիր, որ դու մի թռչուն ես, աղավնի կամ նման մի բան, որին հաջողվել է բաց թողնված պատուհանից ներս մտնել: Դու սովորել ես ճանապարհն ու անընդհատ թռչում, գալիս ես:

Փոքրիկ սեղանին դրված էր իմ նվիրած ձիուկը, իսկ նրա կողքին՝ մի չբացված «Ռեմի Մարտին»՝ իմ ամենասիրած կոնյակը:

Աղավնի, որ ներս է մտել բաց թողնված պատուհանից: Ես ավելի շուտ մի սողես եմ, որը ներս է սողոսկել անտղի քարե-րի արանքից:

Տանիքներից ու ջրհորդաններից կախված սառցե սրերը դռկվում ու մխրճվում էին պատերի տակ կիտված ձյուների մեջ:

Մենք քայլում էինք զեսափինյա փողոցով, ասես զարնանը ընդառաջ, ու թվում էր, թե ինձ ուրիշ ոչինչ պետք չէ... Միայն թե զեսը դեռևս սառած էր, և ես չգիտեի, զեսն ի վար ենք գնում, թե՞ զեսն ի վեր:

Այս փողոցում էին զտնվում լավագույն արձարաններն ու ռեստորանները: Դրանք բաց էին ու լուսավոր: Մուտքերի մոտ կանգնած շվեյցարները՝ աշխույժ ու ժպտադեմ, թերևս, ի-րենք էլ էին զգացել զարնան բուրմունքը: Այդ բուրմունքը զգացել էին նաև փողոցի ամբողջ երկայնքով, աճեն քայլա-փոխին շարված մարմնավաճառները: Նրանք, կարծես, ան-վրդովմանի ոչ ենսնրով չէին համախոչ փնտրում. զար-նան առաջին ակնթարթները, թերևս, ազդում էին նրանց հոգիների վրա: Անսուն հարբեցողներ զրեթե չէին հանդի-պում, նրանք երևի հիմա մի տեղ խմում էին զարնան կենա-ցը, եթե, առհասարակ, կենացներ խմում են:

Գարունը մեր սղասումների մայրամուտն է. երբ այն զա-լիս է, մեզ թվում է, թե մենք միայն նրան էինք սպասում այս-քան երկար:

Մենք հեռվել էինք մայթեզրի ձողերին ու նայում էինք հե-ռուները:

- Քո հայրենիքում զետեր կա՞ն,- անսպասելի հարցրեց Վի-կան,- ինչո՞ւ ես դու խուսափում պատմել քո հայրենիքի մա-



սին:

- Չեմ խուսափում, պարզապես չգիտեմ ինչ պատմել,- ան-կեղծորեն ասացի ես՝ հույս ունենալով դրանով փակել թե-ման:

Բայց Վիկան բառ առ բառ կրկնեց հարցը՝ ոչ այն է՝ պա-հանջելով, ոչ այն է՝ խնդրելով ուրիշ մի պատասխան, որը նա արդեն բանաձևել էր գեղարվեստական կամ, ինչպես ինքը կասեր, բանաստեղծական իմ պատասխանից՝ հանդեպ մարդ արարածը և առհասարակ՝ վկցերոդ օրվա ա-րարչագործությունը, որը, վերջին հաշվով, շարունակու-թյունն է առաջին և մնացած օրերի: Այսինքն՝ երկնակա-պույտ ջրերի, երկնածիգ լեռների ու զմրուխտ անտառների ցի-րակալի աշխարհագրական պատկերացումները դեռ սահ-մանափակված են ծաղող ու մայր մտնող արևով: Դեռ աշ-խարհագրությունը չի արքազնացել, դեռ մարդու միակ դա-սագիրքը արևն է: Այլ խոսքով, ողջ աշխարհն իմ հայրենիքն է, որովհետև ես աշխարհը տեսնում եմ մինչև մայրամուտ: Ո-րովհետև մայրամուտն էլ Արարիչն իմ կողի ոսկորից ընեց, ինչպես կնոջը, և մենք երկուսս էլ առայժմ մերկ ենք, զեղե-ցիկ ու աստվածային:

- Իմ հայրենիքը դու ես,- ասացի ես վերջապես:

Վիկան բաց թողեց թևս ու իր վճիտ աչքերը վրաս հառեց զարմանքով ու հիացումով:

- Ինչ սարօրինակ է, ես ուրիշ պատասխան չէի սպասում,- ասաց նա ու շարունակեց մի պահ սեղմելուց հետո,- Կարե-լոր չէ, թե այն որքանով է անկեղծ: Ու կարևոր չէ, որ դու այդ ի՛նձ ես ասում, հասկանո՞ւմ ես... Կա կամ կլինի մեկը, որին դու նկաշի ունես: Դա է կարևորը:

- Ոչ, Վիկա, երբ ես դա ասացի, մտքումս «Երգ երգոցն» էր:

- Առավել ևս,- ասաց նա և քնքշորեն շրթունքներիս դրեց ցուցամատը՝ հասկացնելով լռել:

«Արչին» գործարանի փոխտնօրենին դիտմամբ ներկայացա ճաշից քիչ առաջ: Նա հրաշալի տրամադրություն ուներ, և ինձ թվաց հիմա կասի, որ ներկն արդեն ծախել է:

Ծերուկը ցավեցնելու աստիճան ուժեղ սեղմեց ձեռքս ու հարցրեց.

- Դե ինչ, երիտասա՛րդ, ուրախացնելո՞ւ եք գործարանի ղեկավարությանը, թե՞ ոչ:

Նա այնքան անկեղծորեն դա ասաց, որ քիչ էր մնում՝ իրոք ուրախացնեի՝ հրաժարվելով նախօրոք ընտրածս տակտիկայից: Մի կերպ ինձ տիրապետեցի ու նստելով դիմացի բազմոցին՝ ասացի:

- Կարծում եմ, որ ամեն ինչ լավ է լինելու, Վիկտոր Լվովիչ, միայն թե վերջնական պատասխանը կարող եմ տալ ժամը երկուսին,- ապա՝ մի փոքր ընդմիջումից հետո, ծխախոտ առաջարկեցի ծերուկին, բայց նա մերժեց:- Բանն այն է,- շարունակեցի ես,- որ մի թեթև հարց է առաջացել՝ կապված ներկերի փաթեթի հետ: Երեկ դրանց մի մասը վաճառել ենք, և ես հիմա ճիշտ չգիտեմ, թե որքան է մնացել:

Փոխտնօրենը, չթաքցնելով անհանգստությունը, վեր կացավ ու սկսեց քայլել սենյակում: Հետո կանգ առավ և հարցրեց.

- Այսինքն, հնարավոր է, որ յոթ տոննայից պակա՞ս մնացած լինի:

- Հիմա ես չեմ կարող վստահորեն ասել...

Ծերուկը քթի տակ ինչ-որ բան փնթփնթաց, և ինձ թվաց, թե ես լսեցի «գոնե հինգ տոննա» բառերը:

Եվ մինչ նա իր վիթխարի մարմինը նորից կտեղավորեր փոխտնօրենի բարձր աթոռին, ես միամիտ հետաքրքրասիրությամբ հարցրի , թե նա որտեղ սովորություն ունի ճաշելու:

- Իսկ ինչո՞ւ է դա ձեզ հետաքրքրում,- կասկածամտորեն նետեց նա:



- Ես ուզում էի ձեզ առաջարկել, որ միասին ճաշենք,- մի քիչ անտարբեր ասացի ես,- պարզապես ժամանակ չկորցնելու առումով: Ժամը երկուսին ես պետք է զանգահարեմ և իմանամ պատասխանը, եթե մենք միասին լինենք, դուք էլ անմիջապես կտեղեկանաք:

- Լավ, երիտասարդ,- ասաց նա,- ուրիշ դեպքում ես թերևս չհամաձայնվեի, սովորություն ունեմ տանը ճաշելու, բայց շաբաթ օրը թոռանս հարսանիքն է, և կինս այսօր զբաղված է:

Առավոտյան երկար փնտրելուց հետո, գտել էի մի հարմար տեղ, ուր ծերուկը հազիվ թե եղած լիներ: Այն բոլորովին վերջերս էր բացվել և կոչվում էր «Գերասիմի մոտ»:

Դա մի ռեստորան էր ինչ-որ շենքի երկրորդ հարկում: Սրահում գրեթե ամեն ինչ մուգ կարմիր էր՝ պատերի պաստառները, բեմահարթակը, հատակի սալիկները, նույնիսկ մատուցողների տարազները: Միայն առաստաղը և սփռոցներն էին ճերմակ:

Վիկտոր Լվովիչը զբաղված էր իր բաժին կամբալայով, և թվում էր, թե համեղ ձուկը նրան մոռացնել է տվել ներկերն էլ, գործարանն էլ, թոռան հարսանիքն էլ: Երբեմն միայն նա գլուխը բարձրացնում էր ափսեից և կում անում գինու բաժակից: Նրա ահռելի ծնոտը ոչ մի վայրկյան չէր դադարում շարժվելուց, իսկ այտերն ավելի էին կարմրել:

- Վի՛կտոր Լվովիչ, դուք վաղո՞ւց եք աշխատում գործարանում,- հարցրի ես՝ մի բան հարցրած լինելու համար:

Նա պատասխանեց՝ չդադարեցնելով ծամելը.

- Ես սկսել եմ այնտեղ աշխատել քառասունինից տարի առաջ, սակայն տասը տարի հետո անցել եմ ուրիշ աշխատան-

ֆի՝ կուսակցության մարզային կոմիտեում, եւ վերադարձել եմ միայն իննսունին թվականին, - նա կուլ տվեց էլի մի պատառ ու հարցրեց,- իսկ դուք վաղո՞ւց եք զբաղվում այս կարգի գործերով:

- Ոչ, ոչ շատ վաղուց:

Նա հառաչեց ու մինչեւ վերջ դատարկեց բաժակը:

- Կոմունիստների իշխանության տարիների գործարանը դեսության ամենաամուր հիմքերից մեկն էր, իսկ գիտե՞ք, թե հիմա ինչն է դարձել այդպիսի հիմք,- նա մատով ցույց տվեց ինձ,- դուք, ձեր նմանները, առեւտուրը, կոմերցիան: Միայն թե դա հիմք չէ, այլ ավազ, խաբեություն:

Ես անվրդով լցրեցի ծերունի բաժակը եւ մատուցողին նշան տվեցի, որ շիշը դատարկվել է:

- Ո՞ւր եք գնում այսպես,- շարունակեց նա զայրալից մի շեշտով, որն իմ հարցի պատասխանն էր:

Եւ ինձ թվաց, թե ում որ է, բաժակը փշրվելու է նրա զորիլայի թաթերում:

- Որքան հարաբերական է ճշմարտությունը,- ասացի ես՝ ավելի շատ ինքս ինձ համար, բոլորովին չկիրառվելով ծերունի վերջին խոսքերից:

Նույնիսկ այն դեպքում, եթե «ավազն ու խաբեությունն» ինձ էին վերաբերվում, առավ ոչ ավելի, քան Հուլիոս Երկրորդ Պապի մեղքերը հոգեւոր սեմինարիայի սանին: Ես ուսանում էի մի կրոն, որը դարտադրում էր կյանքը: Եւ մնացածները, որոնք ինձ հետ համեմատած փիլիսոփաներ են, ընդամենը իրավիճակի զոհերն են եւ ոչ ավելին: Ամեն ինչ վաճառվում է: Հույսը, սերը, գիտակցությունը, գաղափարը, ընդունակությունը, փորձը, տաղանդը, սկզբունքը, կենսագրությունը...

Չե՞մ վիրավորի արդյոք այս հարգարժան մարդուն, եթե հարցնեմ, թե ինչ է նա արել այդքան երկար տարիներ կուսակ-



ցության մարզային կոմիտեում: Եւ առհասարակ, ի՞նչ են արել այդ կոմիտեները յոթանասուն տարիների ընթացքում: Պետությո՞ւն են ստեղծել, ստրուկնե՞ր են դաստիարակել ու աճեցրել, գործարաններ ու ատոմակայաննե՞ր են կառուցել, տիեզե՞րք են նվաճել: Այո՛, սակայն որտե՞ղ է հիմա այդ դեսությունը, որտե՞ղ են դաստիարակված ու աճեցված այդ ստրուկների բանկլազին հիշողությունները, որտե՞ղ են ռազմական եւ ինդուստրիալ դինոզավրերը, որոնք սարսափեցնում էին Արեւմուտքը, ու՞ր է գլորվում փոքրկված Ռուսաստանը:

Ես խնայում եմ ծերունու հայրենասիրական զգացմունքը: Հսկա մեքենան հիմա չի աշխատում, եւ զուցե միայն միլիոնավոր անհետ, անկարեւոր դետալներ շարունակում են շարժվել: Հնարավոր է, որ հիմա իմ առջեւ մի այդպիսի դետալ է՝ կիսաքանդված մեսադ, բանվորագյուղացիական արժեքի մնացորդ, որն առայժմ չեն հասցրել գողանալ կամ վաճառել:

Նա չի հավատում, որ գործարանն այլեւս դեսության հիմքը չէ, բայց նա հավատում է հիմքի սկզբունքին: Նա սկզբունքի հետեւորդ է, եւ հենց այդ դատճառով չի կարող հասկանալ կամ ընդունել բոլոր տեսակի բարեփոխում կոչվածները:

- Դուք ուզում եք ասել, որ ես այլեւս ոչ ոքի դետք չե՞մ,- հանկարծ ասաց ծերունին՝ կկոցելով աչքերը:

- Մի՞թե ես այդպիսի բան ասացի, Վի՛կտոր Լվովիչ,- զարմացա ես:

- Դուք ասացիք՝ ճշմարտությունը հարաբերական է, ես դա չեմ հասկանում, իմ ճշմարտությունը հարաբերական չէ:

Մոտեցավ մատուցողը եւ սեղանին դրեց ծխլյենով մետաղյա թասերը:

- Կարո՞ղ եմ զանգահարել,- հարցրի ես:

- Իհարկե,- ասաց մատուցողը,- ես ձեզ կուղեկցեմ:

- Հիմա չէ, Ֆիչ հետո:

Ծերուկը նախկին եռանդով հիմա էլ սկսեց ուտել սունկը և կարծես թե մոռացավ իր ճամարտությունը:

Տաս րոպեից ես վեր կացա, ներողություն խնդրեցի և գնացի զանգելու: Նախասրահում վերցրի հեռախոսը, ձեւացրի, թե զանգում եմ և մի քանի րոպեից վերադարձա սեղանի մոտ:

- Վի՛կտոր Լվովիչ, ինձ ասացին, որ մնացել է ընդամենը վեց տոննա բաց կանաչ ներկ,- նա ուզում էր ինչ-որ բան ասել, բայց ես անմիջապես շարունակեցի,- ես ուզում եմ ձեզ անկեղծորեն ասել, որ ձեր հացաթխման փոխ մեր նարած գնորդը վճարում է ընդամենը հարյուր խան միլիոն, և մենք ինչ-որ մեծ զումար չենք շահում, այնպես որ, եթե նույնիսկ դուք չհամաձայնվեք վեց տոննային, մենք շատ էլ բան չենք կորցնում:

Եթե նույնիսկ ասեի, թե ներկերը ոչ թե վեց, այլ հինգ տոննա են, նա, միևնույնն է, համաձայնվելու էր: Պարզապես, սա առաջին զործարքն էր, և ես չուզեցի ագահություն անել:

Սուրճը խմելուց հետո մենք վերադարձանք զործարան և դայմանագիր կնքեցինք: Ես պարտավորվեցի չորս օրվա ընթացքում տեղ հասցնել ներկերը ու նաև հաջողացրի, որ փոխադրումը լինի զործարանի հաշվին:







Ձյունը վաղուց արդեն հալվել էր, եւ սկսվել էր անձրեւների շրջանը: Մի քանի օր անդադար անձրեւներ էին տեղում, եւ քաղաքը մի տեսակ լռել էր:

Իմ հարեւան Վիտալի Մաքսիմովիչն ասում էր, որ ապրիլին միշտ էլ պարտադիր մի քանի օր անձրեւ է գալիս: Նա ասում էր, որ քաղաքի կենտրոնական մարզադաշտը դիտմամբ մինչ այդ չեն պատրաստում եւ սպասում են անձրեւների վերջանալուն:

Ես ինձ համար մի երկար, վանդակավոր անձրեւանոց էի գնել, եւ հիմա մենք Վիկայի հետ դրա տակ պատսպարված շրջում էինք կենտրոնական զբոսայգում:

- Ինձ միշտ թվում էր, որ անձրեւը հաճելի է, երբ նայում ես պատուհանից,- ասաց Վիկան,- բայց պարզվում է, որ այսպես էլ է հաճելի:

- Հաճելի է, երբ պաշտպանվա՞ծ ես,- հարցրի:

- Ես դա նկատի չունեմ, պարզապես, երբ նայում ես պատուհանից, անձրեւը միայն անձրեւ չէ:

- Դու երեւի դա ավելի լավ կնկարես, քան կբացատրես:

Հետո անձրեւը սաստկացավ, եւ արդեն անհնար էր զբոսնելը:

Մենք որոշեցինք գնալ Վիկայի մոտ եւ թուղթ խաղալ: Նա ասում էր, որ հրաշալի պոկեր է խաղում:

Ես այնքան էի ոգեւորվել խաղով, որ նույնիսկ չէի խմում: Վիկան իսկապես լավ էր խաղում եւ հաճախ այնպիսի բլեֆներ էր անում, որ ապշել կարելի էր:

Ես դուզա էի բաժանել, երբ զանգեց հեռախոսը: Վիկան երկար-բարակ խոսեց ինչ-որ մեկի հետ եւ վերադարձավ շատ ուրախ ու ոգեւորված:

- Իմ ընկերուհու ծննդյան օրն է այսօր: Ինձ հրավիրեցին ամառանոց:

Ակնհայտորեն դա ինձ դուր չեկավ: Ինձ թվում էր, որ մենք

հավերժորեն այդպես նստելու ենք ու թութ ենք խաղալու: Ես նույնիսկ ինձ մի քիչ վիրավորված զգացի:

- Դե իհարկե,- ասացի,- ես հենց պատրաստվում էի վեր կենալ:

Վիկան ծիծաղեց:

- Ես արդեն ասել եմ, որ մենք միասին ենք գնալու,- նա խորամանկորեն նայեց աչքերիս,- եւ չեմ կարծում, որ դու կմերժես:

Ես հանկարծակիի եկա: Չգիտեի՝ ինչ պատասխանել: Ինչ-որ ամառանոց, անծանոթ մարդիկ, հաճոյախոսություններ, «դուք շատ բարի եք», «հաճելի է լսել», «օ՜, ինչ եք անում»...

- Վի՛կա, ավելի լավ է՝ գնանք նավահանգստի այն սրճարանը կամ որեւէ ուրիշ տեղ...

Նա տարուբերեց գլուխը:

- Ինձ պետք է այնտեղ գնալ:

Ես երեխայի պես քիթս կախեցի ու բացարձակապես չգիտեի, թե ինչ անել: Ինձ թվում էր, որ Վիկան պարզապես ինձ չնեղացնելու համար էր ուզում, որ միասին գնանք: Բայց մի՞թե ես իրավունք ունեի նրա անկեղծությանը կասկածելու: Իհարկե ոչ: Ու պատահական չէ, որ վերջիվերջո բավականին հեշտ համոզվեցի:

Մենք քայլելով գնացինք հրապարակ եւ հինգ րոպե էլ չէինք սպասել, երբ մեզ տանելու եկավ մի երկար, սեւ «Վոլվո»: Վարորդն իջավ մեքենայից ու բացեց հետեւի դուռը: Ես նայեցի նրա համազգեստին եւ անմիջապես հասկացա, թե ինչ կարգի տեղ ենք գնում, չնայած, մինչ այդ Վիկան ինձ երկու խոսքով բացատրել էր:



Աղան, որի ծննդյան օրն էր նշվում, Վիկայի համակուրսեցին էր: Նրանք սովորել էին Մոսկվայում ու կրկին վերադարձել հայրենի քաղաք: Աղան ամուսնացել էր ռուս-ֆրանսիական համատեղ մի ձեռնարկության համանախագահի հետ, որն ընդամենը երկու ամսում կառուցել էր տվել ամառանոցն, ուր գնում էինք ու նվիրել իր գեղեցկուհուն՝ ի հիշատակ իրենց ամուսնության չգիտեմ որերորդ տարեդարձի: «Բրա՛վո, Անտո՛ն»,- ասացի ես գրեթե բարձրաձայն ու այդ պահին հասկացա, թե ով է օգնում Վիկային՝ տպագրվելու ֆրանսիական ամսագրում:

Այդ ամենն ինձ ահավոր նյարդայնացնում էր: Եւ հիմնականում այն, որ ես չէի հասկանում, թե Վիկայի ինչին է պետք այնտեղ գնալը: Բայցեւայնպես, ճանապարհից գնեցի իմ ծաղկեփունջը եւ դրեցի առջեւի նստատեղին:

Շատ էի զղջում, որ Վիկայի մոտ որեւէ բան չէի խմել, հիմա ինձ գոնե ավելի հանգիստ կզգայի:

Ամառանոցն ինձ հենց առաջին հայացքից դուր չեկավ: Բացառապես դեկորատիվ ծառ ու թփերի մեջ, ինչպես ինձ թվաց, անիմաստորեն վեր էր խոյանում հսկա մի աշտարակ: Ամեն ինչ այնքան ճոխ էր ու հարուստ, որ գեղեցկությանը ոչ մի տեղ չէր թողնում:

Վիկան խնդրեց, որ ինքս տամ ծաղիկներն Աղային: Վերջինս երկնագույն երկար զգեստ էր հագել եւ, ըստ երեւույթին, շատ գոհ էր իրենից: Նա այնքան ջերմորեն համբուրեց ինձ, կարծես նրա հարյուր տարվա ծանոթն էի կամ առնվազն համակուրսեցին, որին երկար ժամանակ չէր տեսել: Հետո նա ինձ ծանոթացրեց ամուսնու հետ: Անտոնը թեթեւակի ժպտաց ինձ, ապա անմիջապես մոռացավ գոյությունս ու սկսեց զրուցել Վիկայի հետ:

Ես զգացի, որ հիմա ինձ ծանոթացնելու էին մյուսների հետ էլ եւ, քանի որ ոչ մի նման ցանկություն չունեի, քաշվե-

ցի հյուրասրահի անկյունը, ուր ինձ էին սղասում բազմա-թիվ ու բազմատեսակ ըշեր, որոնց մի մասն ինձ անծանոթ էին, բայց ոչ ավելի, քան այստեղ ներկա զսնվողները:

Շատ լավ հասկանում էի, որ այստեղ հավաքված մարդ-կանց մեջ անդայման կլինեին մեկ-երկուսը, որոնք կարող էին հեսաքայում ինձ օգտակար լինել: Բայց թաքծ ունեի: Նույնիսկ վիրավորական էր այդ մասին մտածելը:

Սեղանի վրա շարված ըշերից ընտրեցի կոնյակը: Վիկան սրահի մյուս ծայրում խոսում էր Աղայի հետ՝ երբեմն-երբեմն հայացքն իմ կողմն ուղղելով:

Երեկոյան զգեստները շողում էին բյուրեղապակյա ջահե-րից թափվող լուսափաթիլներից: Կանայք՝ շամպայնի բա-ժակները ձեռքերին, համոյախոսում էին իրար, ինչպես Ե-կատերինայի ժամանակներում, և թվում էր, թե ուր որ է, սպի-տակ չալմայով պալատական արարը կրացի ճախարահի դուռը և ներս կբողնի Դիդրոյին կամ նրա տեսությունը, որ-տեղի վերջնականապես ձևավորվեց լինի Ռուսիան:

Այս ամենն այնքան խորթ էր ինձ համար, որ եթե չլիներ կողքիս դրված կոնյակի շիշը, չգիտեմ, թե ինչ էի անելու:

Մի ճաղատ տղամարդ նստեց դիմացս և սկսեց ուշադիր ինձ նայել:

- Դուք ի՞նչ եք խմում,- հարցրեց նա:

Ես բարձրացրի կոնյակի շիշը:

- Ես էլ մի բաժակ կխմեմ, իմ անունը Գրիշա է:

Ես սեղմեցի նրա ձեռքը:

- Ձեր տիկինը չափազանց գեղեցիկ է,- ասաց նա,- զգույշ եղեք այս ֆրանսիացիներից:

- Այստեղ ֆրանսիացինե՞ր էլ կան,- ես այնպես զարմացա, կարծես խոսքը մարսեցիների մասին էր:

- Դե իհարկե,- նա դարձեց ձեռքը,- տեսնում եք այն սմո-քինգավորին, նա Ֆրանսիայի դեսպանատան մշակույթի ա-



տաշեն է:

Հիմա նոր սկսեցի ինչ-որ բաներ հասկանալ. դեսպանա-տան ատաշե, Ֆրանսիա, սեւ «Վոլվո», թանկարժեք ոլիջակ-ներ, կիսաբաց կրծքեր ու մարմարյա պարանոցներ...

Իսկ որտե՞ղ է Վիկան, ո՞ւր է նրա վարսերի այն փունջը, որ կախված է դեմքին, ո՞ւր է նրա ճառագայթող ժպիտը:

Իսկ ե՞ս ինչ եմ անում այստեղ: Ես միշտ ավելի հեշտ եմ լե-զու գտել ու ընկերացել վարորդների հետ, քան ինչ-որ ատաշե-ների ու դեսպանագունների, ինձ միշտ ավելի լավ եմ հասկա-ցել մյուսները կամ այն մյուսները, որոնք կորցնելու ոչինչ չունեն այս աշխարհում:

Երեկվա երազանքներն ու այսօրվա իրականությունը: Ես միշտ այդ երազանքները տեսիս մեջ եմ դահել: Բայց իրակա-նությունը հիմա շուրջս է և բոլորովին էլ տրամադրող չէ, եթե չհաշվենք, որ տրամադրում է խմելու:

Ես տեսա, թե ինչպես Վիկային ու Աղային մոտեցավ սմո-քինգավոր ատաշեն:

- Ֆրանսիացիների կենացը, Գրի՛շա,- ասացի:

Գրիշան մեքենայաբար երկարեց բաժակը, հետո անդրա-դարձավ կենացին ու զարմացած ինձ նայեց:

- Ֆրանսիացիները շատ են հոտավետ,- ասաց նա,- խմենք մեր կենացը:

- Մենք Տուլուզ Լոտրեկ չունենք, Գրիշա, եւ ընդհանրապես ո՞վ ենք մենք:

- Մե՞նք,- Գրիշան ուղղվեց բազկաթոռում,- մենք ռուս ազգն ենք, ո՞վ է ֆրանսիացին: Առանց օծանելիքի նրանք կրորբոսնեն, կխեղդեն իրենց հազարամյա մեղքերի մեջ: Ես ոչ մի Տուլուզ չեմ ճանաչում, ֆրանսիացիները հոտավետ ազգ են, իսկ մենք ռուսներ ենք:

Նա հատկապես շեշտեց վերջին բառը:

- Անձամբ ես ռուս չեմ, եղբայր,- ասացի,- բայց եթե այդ-

ֆան ուզում ես, թող ֆո աասծը լինի. խմենք մեր կենացը:
- Դու հրեա՞ ես,- հարցրեց Գրիշան:
- Ոչ, ես հայ եմ, խմենք մեր կենացը,- ասացի ու մինչեւ վերջ դատարկեցի բաժակը:

Գրիշան ինձ առաջարկեց բարձրանալ վերեւ ու բիլիարդ խաղալ, բայց ես մերժեցի: Չգիտեմ՝ Վիկան դեռեւս հիշո՞ւմ էր իմ ներկայության մասին, թե՞ ոչ, բայց, բոլոր դեպքերում, չէի ուզում նրան մենակ թողնել...
Գրիշան երեւի ուրիշ խաղընկեր ճարեց, գնաց բիլիարդ խաղալու, եւ ես կրկին մնացի մենակ:
Սակայն ոչ երկար. տուսով ինձ մոտեցավ Աղան:
Ես վեր կացա տեղիցս:
- Զանձրանո՞ւմ եք,- հարցրեց նա,- դուք ինչո՞ւ այդքան հեռու քաշվեցիք:
- Ես ինձ հրաշալի եմ զգում, շնորհակալ եմ,- ժպտացի ես:
Աղան նստեց դիմացի բազկաթոռին:
- Վիկան հիմա խոսում է դարոն Լեմժինի հետ. նա ամուսնու ընկերն է, աշխատում է Մոսկվայում Ֆրանսիայի դեսպանատանը. զբաղվում է մշակույթի հարցերով: Նա ուզում է մոս ժամանակներս Վիկայի անհատական ցուցահանդեսը կազմակերպել Փարիզում: Ձեզ դո՞ւր են գալիս Վիկայի նկարները:
Ես գլխով արեցի:
- Դուք ներկա՞ էիք, երբ Վիկան ցուցադրվում էր Մոսկվայի նկարչի տանը:
- Ոչ,- ասացի,- այդ ժամանակ մենք դեռ ծանոթ չէինք:
Աղան տարուբերեց գլուխը.
- Ափսոս, դա փայլուն ցուցահանդես էր: Վիկան ինձ ո-



չինչ չղասնեց ձեր մասին. դուք երկա՞ր եք մնալու մեր ֆաղաքում:
Ես ինքս էլ չգիտեմ:
- Դուք երեւի բիզնեսով եք զբաղվում:
- Մոտավորապես:
Ես շատ էի ուզում, որ Աղան ինձ հանգիստ թողնի ու գնա, բայց նա համառորեն շարունակում էր ինձ հարցեր տալ:
- Իմ ամուսինն այստեղ մեծ կապեր ունի, գուցե նա կարող է ձեզ օգտակա՞ր լինել:
- Երեւի դրա կարիքը չկա, բայց ամեն դեպքում շնորհակալ եմ: Դուք որեւէ բան կխմե՞ք:
Նա գույց տվեց լիկյորի շիշն ու ասաց.
- Դուք շատ նման եք իրար, Վիկան եւ դուք:
Ես չհասցրի որեւէ բան ասել, որովհետեւ սրահում հանկարծ սկսեցին նվագել չգիտես որտեղից հայտնված չութակահարները:
Արդյո՞ք այդպես էլ դեսք է լիներ: Ուրեմն՝ ջութակ: Ուժեղացրին սրահի լուսավորությունը, եւ հայացքս, անկախ ինձնից, կորավ ջահերի բյուրեղադակյա փայլում: Ինձ թվաց, թե աչքերս շաղվեցին: Անեղամեծ ջահին նստած՝ ճոճվում էր ձեռնոցների վաճառականը՝ գլխին նոր կեդի՝ արհեստական սեւ կատվից: «Ջութակն, իհարկե, հրաշալի է, բայց դու կուրացել ես, եղբայր»,- ասաց նա ու հռհռաց:
- Հուսով եմ՝ չեք խանդում,- լսեցի Աղայի ձայնը:
Չգիտեմ նրանցից ով էր ավելի անկեղծ, բայց երկուսն էլ տեսել էին այն, ինչը վրիպել էր իմ հայացքից: Տեսել էին, թե ինչպես է Վիկան դարում ասաշեի հետ:
- Չեմ խանդում,- վստահեցրի ես երկուսին էլ:
- Այդ դեպքում ինչո՞ւ ինձ չեք հրավիրում դարելու:
- Սիրով, միայն թե ավելի ուշ, ուզում եմ դուրս գալ մաքուր օդ շնչելու:

Պարող զույգերի մոտով անցնելիս՝ ես փորձեցի Վիկայի կողմը չնայել, բայց չստացվեց, և այնպես եղավ, որ մեր հայացքները հանդիպեցին: Նա ժպտաց ինձ, բայց դա ժպիտ չէր. մի բան էին ասում դողդողացող շրթունքները, մի այլ բան՝ վճիտ աչքերը: Դուրս եկա շենքից՝ նույնիսկ չնկատելով, որ անձրև է գալիս, ու ամենամոտ ծառի տակ գտա մի նստարան:

Կաթիլների կտկտոցը խլացնում էր ներսից եկող ջութակի ձայնը՝ ասես ինձ մխիթարած լինելու համար: Թվում էր, թե ինչ-որ բան ընդհատվել է: Պարզապես ընդհատվել է, և շարունակություն չի ունենա:

- Զգացմունքներին տրվելու փոխարեն կարելի էր...- խոսողը ձեռնոցների վաճառականն էր, որն հիմա էլ եկել, թառել էր առջևի ծառից կախված ճոճքին: Նա չհապաղեց ասել, թե ինչ էր կարելի անել, որովհետև ես վեր թռա տեղիցս, որ բռնեմ նրա օձիքից ու ցած գցեմ ճոճքից: Բայց օձիքի ու ճոճքի փոխարեն հանդիպեցի ծառի հաստ բնին: Այգու խորքից լսվեց նրա հիստերիկ հռհռոցը:

Պետք էր որոշում կայացնել: Ես սկսեցի քայլել թաց արահետով: Անձրևն աստիճանաբար ուժեղանում էր, և կաթիլները այլևս չէին պարում օդում: Բայց դա ինձ քիչ էր հետաքրքրում, որովհետև ինձ թվում էր, թե ամեն ինչ կեղծ, սուտ ու անիրական է՝ քիչ առաջ պարող այդ կաթիլների պես: Այո՛, ամեն ինչ: Ես մի քմծիծաղ նետեցի ճերմակ առանձնատան մարմարյա աստիճանների ի վեր՝ դեպի լուսավոր դահլիճը, ուր ջութակի հնչյունների տակ դեռ պտույտ էր տալիս ֆրանսիացի լաքեյը՝ քնքշորեն գրկած Վիկայի մեջքը: Սակայն ինչ էր լինելու շարունակությունը: Թրջված ու սառած մարմինս ուզում էր թողնել ու փախչել տաք ու ապահով մի տեղ: Բայց մի բան խանգարում էր ոտքս տղամարդավարի գետնին խփելուն:





Եւ հայրս անգամ լավ էր անում:

Ֆրանսիացիներն ակնհայտորեն ցսաղել էին: Դեռ նրանց ժամանակը չէր եկել, և կայսրուհին դեռ հույսը չէր կտրել Ռուսաստանից: Ահա նա իջնում է դղյակի մարմարյա աստիճաններով՝ ասես հառնելով անտեսանելիությունից, հայացքով փնտրելով ֆավորիտին, հավանաբար...

Եւ շարունակությունն այդպես եղավ:

Ես ընկա նստարանին, և Վիկան լուռ նստեց կողքիս ու հոգնած ուսիս դրեց գլուխը: Հետո մենք ուղղակի փախանք՝ նույնիսկ Աղային ոչինչ չասելով:

Ինձ թվաց՝ ես մի վայրկյանում լսեցի: Ձեռնոցների վանդակը վստահաբար ընկել էր ծոծրից:

- Գնանք ինձ մոտ,- առաջարկեցի ես Վիկային ու, դասախանի չսպասելով, վարորդին ցույց տվեցի իմ հասցեն:

- Կուզե՞ս՝ ասեմ, թե քեզ ինչ էր ասում Աղան,- ականջիս շշնջաց Վիկան:

- Ասա՛, բայց ես չեմ հիշում:

- Ուրեմն՝ չեմ ասի:

- Ուրեմն՝ հիշում եմ:

- Ուրեմն՝ «հուսով եմ՝ չէք խանգարում»:

- Ուրեմն՝ նա այդ բոլորին է ասում:

- Հուսով եմ՝ ոչ:

- Հուսով եմ...

- Ուրեմն...

Մինչ ես բանալին էի փնտրում գրպաններումս, նա շրթներկով դռան վրա մի փոքր սիրտ նկարեց:

- Ինչո՞ւ մեկը,- ասացի ես, և մենք զրկախառնված ներս մտանք:

Լույսը չկառեցի: Այդպես գրկախառնված, դաստիարակս խփվելով, տրորելով փետուրները, շշնելով աթոռը, սեղանի լաթեր, ծաղկամանը վերջապես հասանք բազմոցին:

Հետո ձեռքս փնտրեց ու գտավ շրջված լուսամփոփի կոճակը: Եւ մի այլ ձեռք սեղմեց դեմքի ճկազարկիչը:

Լապտերն արդեն լուսավորեց Վիկայի մարմինը: Վիկան այն սպել էր ինձ: Եւ ես երջանիկ էի, որովհետեւ դրանից ավելի ոչ ոք ինձ էր սպել իր սիրտը:

«Ես ադրում եմ երազների մեջ»,- երգեց ճկազարկիչը:

Դրսում թեթեւ քամին խառնում էր անձրեւի կաթիլների կչկչոցի համաչափությունը ու սենյակ էր բերում նոր ծլած կանաչի բույրունքը:

Ես հենվել էի բաց լուսամուտի զոգին ու ծխում էի: Կաթիլներն երբեմն զարկվում էին դեմքիս՝ հաճելի մի սթափեցմամբ ավելի ամուր կառչել տալու զիշերվա իմ երջանկությանը, որը դեռ թեւածում էր սենյակում, դեռ կար եւ կարող էր լինել:

Հեռվում մի տեղ արդեն հնչեց անցնող զնացքի անիվների ձայնը: Երկաթուղային կայարանի բարձրախոսն ինչ-որ բան ասաց: Ամպերը զոռացին, եւ ինչ հետո անձրեւն ուժեղացավ: Մոտակայքում, հավանաբար անձրեւի հարվածներից, միացավ ինչ-որ ավտոմեքենայի ազդանշանը:

Ես արբվում էի լռությունից հետո, իսկ Վիկան խոհանոցում սուրճ էր եփում, երբ դուռն ուժգին բախեցին: Վիսալի Մաքսիմովիչի կինն էր: Նա լաց էր լինում եւ դողում էր ամբողջ մարմնով:

- Ամուսինս ուշացած է եղել... Երեւի, կաթված... Ես չգիտեմ... Ընկել է գետնին...- նա սարսափահար զոռում էր ու ոտքերով ծեծում էր հատակը:

- Ես հիմա,- ասացի,- հանգստացեք, ոչինչ էլ չի պատահի, ես հիմա:

Վիկային ասացի, որ շտապ օգնություն զանգահարի ու արագ հագնվելով՝ վազեցի նրանց բնակարանը:

Ծերունին ընկած էր զետնին: Նրա հագին միջաձևս էր, իսկ հողաթափերից մեկը ոտքից թռել էր, երեւի ընկնելու պահին: Դեմքը ճեփ-ճերմակ էր: Կոպեր եւ ականջը դրեցի կրծքին: Իմ բարեկամի սիրտը բաբախում էր. չափազանց դանդաղ, հազիվ լսելի, բայց բաբախում էր: Մի կերպ նրան բարձրացրի ու պառկեցրի բազմոցին: Տիկինը հենվել էր բաց դռանը եւ չէր համարձակվում ներս մտնել: Նա անձայն հեկեկում էր՝ ձեռքերը վեր պարզած ու աչքերը հառած առաստաղին:

- Նա կենդանի է,- ասացի,- հանգստացե՛ք, հիմա բժիշկները կգան, եւ ամեն ինչ լավ կլինի:

- Կենդանի՞ է,- տիկինը ճեպվեց դեմքի ամուսինն ու ողջակի ընկավ վրան,- խնդրե՞մ կենդանի է, դու ինչպե՞ս իմացար:

- Այդպես չի կարելի,- ասացի ես, նրան մի կողմ տարա ու բացեցի պատուհանը:

Չգիտեի՝ ուրիշ ինչ եմ անում նման դեպքերում: Ամբողջ հույսս շտապ օգնության վրա էր: Մի անգամ էլ հանգստացրի տիկնոջն ու դուրս եկա՝ իմանալու, թե Վիկան կարողացե՞լ է զանգահարել:

- Այո,- ասաց նա,- դու գնա՛ դիմավորելու, իսկ ես կմնամ նրանց մոտ:

- Այստեղ ծխել չի կարելի,- զայրացած ասաց բուժքույրը:

Ես կանգնել էի վերակենդանացման բաժանմունքի փակ դռան մոտ ու սպասում էի բժշկին:

Վիտալի Մախինովիչի կինը, քիչ այն կողմ, հերթապահ բուժքրոջ աթոռին նստած, ավելի ճիշտ փուլ եկած, աղերսագին հայացքն ինձ էր հառել՝ որպես մի փրկչի, որից կախված էր ամուսնու կյանքը: Ծերուկը ննջում էր, եւ մենք չգիտեինք՝ նա կապրի՞, թե՞ ոչ: Նույնիսկ չգիտեինք՝ նա դեռ կենդանի՞ է:

Անզոր ու անօգնական հայացք, որն իր կողերի դուռը խոստանում է հավերժ բաց պահել պատկերիդ ու հիշատակին առջեւ, երախտապարտ հայացք, որը դեռ չվայելած փրկության ուրախությունը՝ իրենին կանխավճար է շնորհակալության ու երախտիքի:

Բայց ինչ կարող էի ես անել, բացի անկեղծորեն ու ամբողջ հոգով իմ բարեկամին փրկություն ցանկանալուց...

«Անկեղծորեն ու ամբողջ հոգով» բառերը, ինձ թվաց, հնչեցին բարձրաձայն, ինչպես աղոթքի տող, ինչպես զանգի ղողանջ, եւ ինձ թվաց՝ լսեցի արձագանքը, որը գալիս էր վերակենդանացման բաժանմունքի փակ դռան հետեւից: Բարեկամիս կինը հանկարծ թռավ աթոռից, ճիշտ ու ճիշտ թռավ աթոռից դեպի փակ դուռը եւ թեւաթափ ընկավ դռանը՝ այլեւս անկարող, անուժ, անկամ... Եւ անմիջապես բացվեց դուռը:

Նախկին սպորտային մեկնաբան Վիտալի Մախինովիչն իր կամքից անկախ էր վախեցրել իր թանկագին, սիրելի, անփոխարինելի կողակցին: Հենց անփոխարինելի՝ մանավանդ այդ տարիքում եւ մանավանդ այդ սրտով, որը վաղուց էր սկսել ճռռալ հին սայլի անիվի պես:

Բժիշկը թեթեւ մի հազով մաքրեց կոկորդը եւ ավելի խորը մի հազով էլ մեզ զգուշացրեց՝ լսելու մեծ ավետիսը:



- Վտանգն անցած է: Վաղը կարող եք նրան տեսնել, իսկ հիմա լավ կանեք, որ տուն գնաք:

Տիկինը երեւի չհավատաց լսածին եւ բժշկին մի անգամ էլ կրկնել տվեց ասածը: Հետո փաթաթվեց ինձ եւ բարձրաձայն լաց եղավ: Ես նրան հանգստացրի, ապա բժշկին մի կողմ տարա ու հարցրի.

- Կապրի՞ ծերուկը:

- Զարմանալի է,- ասաց նա,- որքան նման են իրար բոլոր հիվանդատերերը: Վտանգն անցած է, երիտասա՛րդ:

Ես դրամապանակիցս մի քանի խոշոր թղթադրամ հանեցի ու խոթեցի նրա խալաթի գրպանը՝ մտածելով, թե որքան նման են իրար բոլոր բժիշկները:

- Կարող եք հանգիստ լինել,- ասաց նա ,- մի քանի օրից նա առողջ կվերադառնա տուն: Դուք նրա որդի՞ն եք:

- Ոչ, բարեկամը:

- Իսկ տիկի՞նը:

- Նրա կինն է:

- Տո՛ւն տարեք նրան, մնալու հարկ չկա: Առավոտյան կգաք:

Ինչո՞ւ մենք չգիտենք կյանքի արժեքը, քանի դեռ չենք բախվել նրա կորստյան դռներին:

Սովորական կյանք՝ գավառական լրագրողի անշուք գոյություն, սպորտային մեկնաբանի չնչին հոնորար, գրավի ոսկեղեն, անհատույց փոխառություն, պարտամուրհակ...

Ինչո՞ւ մենք չենք հասկանում, որ կյանքը միակն է ու անկրկնելին: Ինչո՞ւ մենք չենք տեսնում հրաշալի վայրկյանը՝ կյանքի թիթեռնիկը, ծաղկած մեղուն, քնքուշ ծաղկաթերթիկը: Ուրիշ ե՞րբ, այլեւս ե՞րբ:

Իսկ այս հիմար դռնապանն ասում է՝ տո՛ւն տարեք տիկնո-

ջը: Ոչ՛, նրա տունը հիմա այստեղ է՝ վերակենդանացման այս հարկաբաժնում, ուր վերակենդանանում է իր սորտի մենաբանը, սորտային այդ խարբերան:

- Ձեր դայակում շրջանակ չկա՞,- հարցրի ես սորտային խարբերայի կնոջը:

- Ես դայակս չեմ վերցրել... Քեզ շրջանա՛կ է պետք... Ես, ախր, գլուխս կորցրել էի... Գուցե բուժքույրերից խնդրեմ: Ես...

- Ոչ, ոչ, կարիք չկա, պարզապես մտովի մի բան անցավ,- հանգստացրի տիկնոջը:

Հետո նրա համար մի ազատ սենյակ հաջողացրի ու վազեցի դեպի վերելակը: Պարզվեց՝ հիվանդանոցը մեր շենքից հազիվ երկու կանգառ էր հեռու: Որոշեցի ոտքով վերադառնալ, քանի տանն անհամբեր ինձ էր սպասում Վիկան: Չգիտեմ՝ որքան դա տևեց: Գուցե կես ժամ կամ մի քիչ պակաս: Ուշադրություն չդարձրի: Կարծես թե միևնույնն էր: Կարծես թե չէի շտապում: Կարծես թե շտապելու տեղ չունեի: Այլևս անտարբեր՝ քարշ էի տալիս ոտքերս անձայն փողոցով՝ չիմանալով ուր եմ գնում, ինչպես սիրուց հետո՝ դատարկված, անճյութ ու անհույզ:

Բայցևայնպես, հայացքս, ինձնից անկախ, փնտրեց ու գտավ մի հեռախոսախցիկ: Վիկան անմիջապես վերցրեց լսափողը:

- Ծերուկը դեռ երկար կապրի,- ասացի ես ու լսեցի, թե ինչպես նա խորը շունչ քաշեց,- նա քեզ բարևում է:

- Աստված իմ, դու դեռ կասկածո՞ւմ էլ ես:

- Իսկ ինչո՞ւ չպետք է կասկածեմ, երբ մանավանդ չեմ կատակում: Եւ մանավանդ միշտել եմ ուզում:

- Խելագա՛ր...

- Դու դեռ ինձ սիրո՞ւմ ես:

- Տո՛ւն արի...



Իմ առաջին գործարքից ստացված եկամուտը բավականաչափ շատ էր, որպեսզի մենք շաբաթվա ընթացքում ծախսեի՝ չնայած ես համարյա այդպես էլ արել էի, և բավականաչափ քիչ էր, որպեսզի կարողանայի փակել պարտքերս:

Ինչևէ, երբ «Արշին» գործարանի փոխտնօրենը մի առավոտ զանգահարեց ինձ և հրավիրեց իր մոտ, ես հասկացա, որ շուտով պարտք չեմ ունենա: Եթե, իհարկե, դարձյալ հացի փոխ չառաջարկեն «մեր ապրանքի» դիմաց: Ու նաև կարողանանք «մեր ապրանքը», որը դեռ պարզ չէ, թե ինչ է լինելու, ձեռք բերել համար գնով:

Վիկտոր Լվովիչն ինձ ընդունեց ինչպես հարազատի: Նա քարտուղարուհուն պատվիրեց մեզ համար թեյ բերել և միանգամից անցավ գործի:

- Դուք մի անգամ արդեն մեզ օգնել եք, և ես հույս եմ, որ այս անգամ էլ մենք կարող ենք համաձայնության գալ:

Ես ժպտացի, սակայն փորձեցի անտարբեր ձևանալ:

- Մանավանդ, որ,- շարունակեց փոխտնօրենը,- այս անգամ մենք ձեզ համար շահավետ պայմաններ ենք առաջարկելու. գործարանը հիմա արդեն փող ունի:

Այստեղ ես չկարողացա թաքցնել ուրախությունս:

- Իսկապե՞ս:

- Այո, և անկեղծորեն պետք է ասեմ,որ ամեն ինչ եղավ ձեր ներկերը բերելուց հետո: Մենք սկսեցինք հաջողությամբ իրացնել մեր արտադրանքը:

- Ես շատ ուրախ եմ,- ասացի:

- Այդ իսկ պատճառով,- շարունակեց նա,- ես որոշեցի կրկին դիմել ձեզ: Գործարանին վաղուց արդեն մեծ քանակությամբ բանվորական արտահագուստ էր անհրաժեշտ: Բայց քանի որ մենք փող չունեինք, ինքներդ եք հասկանում... Հիմա մենք կարող ենք գնել այդ արտահագուստը ցանկացած կազմակերպությունից, գործարանի տնօրինության համար տար-

թերություն չկա: Բայց ես գերադասեցի կրկին ձեզ հետ գործ բռնել, եթե իհարկե դեմ չեք լինի: Տարիքավոր մարդիկ, գիտեք, որոշ նախապատվություններ ունեն... Ռիսկը երիտասարդների համար է: Եվ, չեմ թաքցնում, նաև վերաբերմունքի հարց կա: Հուսով եմ՝ դուք ինձ հասկանում եք:

- Իհարկե, Վի՛կտոր Լվովիչ, հրաշալի հասկանում եմ և շնորհակալ եմ ձեր վստահության համար:

Ներս մտավ քարտուղարուհին և սառը ըմպելիքներով բաժակները դրեց մեր առջև:

Փոխտնօրենը կում արեց թեյից և գզրոցից մի թուղթ հանեց:

- Ուրեմն, մեզ հարկավոր է հազար հատ բանվորական բամբակե արտահագուստ և տասը հազար զույգ բամբակե ձեռնոց: Եթե դուք խելքին մոտ գներ առաջարկեք և մեկ շաբաթվա ընթացքում մեզ հանձնեք ապրանքը, մենք ձեզ կանխիկ փող կտանք և շատ շնորհակալ կլինենք:

Ուրախությունից, քիչ էր մնում, վեր կենայի ու գրկեի ծերուկին: Դա այն ապրանքն էր, որը մենք կարող էինք շատ հեշտությամբ և աննշան գներով ճարել, որովհետև այն բերվում էր Հայաստանից:

Մի կերպ զսպեցի հրճվանքս և խոստացա, որ մի օրվա ընթացքում ամեն ինչ կճշտեմ ու վաղը պատասխան կտամ:

Ապրիլը կիսվել էր արդեն, և օրերն այնքան էին տաքացել, որ ամբողջությամբ հալվել էր գետի սառույցը, և կարելի էր այլևս միայն պիջակով շրջել:

Իսկ իմ հայրենիքում հավանաբար ծառերն արդեն ծաղկել են: Հավանաբար... Մանկավարժական ինստիտուտի բակի ծիրանի երկու ծառը, Վարդանանց փողոցի մայթեզրի



բալենիները, օղակաձև զբոսայգու հացենիները: Իսկ մեր շենքի շրջակայքում մնացել է ընդամենը երկու բարդի, մի ակացիա և մի թթենի, եթե, իհարկե, այս ձմեռ դրանք էլ չեն կտրել՝ բնակարանները տաքացնելու:

Իսկ եթե ոչ մի ծառ էլ չի՞ մնացել: Ոչ, մի՞թե դա հնարավոր է: Ես վաղուց ոչ մի լուր չունեմ, թե ինչ է այնտեղ տեղի ունենում: Խուսափում եմ զանգահարել: Ի՞նչ միտք ունի: Որ ամեն ինչ բարեհաջո՞ղ է, որ շուտով վերադառնալու եմ ու փրկելու Հայաստա՞նը: Որ շուտով գազն ու մազութը կհասնեն Հայաստան, և ոչ մի ծառ կտրելու հարկ չի՞ լինի...

Կացիններով ու սղոցներով զինված՝ մի հոծ բազմություն, ահա, խռնվել է օղակաձև զբոսայգում և անհամբերությամբ սպասում է վերջին ծառի կտրման հանդիսությանը: Ավելի մեծ մի բազմություն հավաքվել է Ազատության հրապարակում՝ նույնպես զինված կացիններով ու սղոցներով: Տեսարանը ահեղազդու է ու սահմռկեցուցիչ: «Ինչո՞ւ ոչ մի պլակատ չկա»,- զայրանում է ռեժիսորը և իր ուղղաթիռից բարձրախոսով մի լավ շշպռում խեղճ պրոդյուսերին, որը Թումանյանի արձանի պատվանդանին կանգնած՝ պատրաստվում է բանաստեղծի հայտնի պոեմից մի հատված արտասանել հարգելի հայրենակիցների համար, որպեսզի ձանձրույթից հանկարծ չթուլանա սպասման դինամիզմը, ինչպես կասեր ռեժիսորը:

«Սիրելի հայրենակիցներ, մի քանի րոպեից մեզ կմիանան հանրապետության մարզերի և շրջանների պատվիրակները, որոնք, իրենց կացիններն ու սղոցները առած, այստեղ են շտապում՝ իրենց «ո՛չ»-ը ասելու վերջին ծառին: Չմոռանաք, որ այնտեղ՝ օղակաձև զբոսայգում, մեզ են սպասում հանրապետության մտավորականությունն ու ուսանողությունը, որոնք վերջապես իրենց մեջ ուժ ու կամք գտան՝ միանալու հիրավի համազգային մեր այս շարժմանը»: Ռեժիսորի վերջին

բառերը խլանում են «պայքար, պայքար՝ մինչեւ վերջ» բացականչություններով, եւ միանգամից վեր են բարձրանում անհամար կացիններն ու աղեղները, որոնց փայլատակումից շլացած օդաչուն, ինչ է մնում, ուղղաթիռը խփի օպերայի շենքին: Բայց հենց այդ պահին ռեժիսորը սխալմամբ ծխախոտը վառած կողմից է մոտեցնում շրթունքներին եւ, վայնասուն բարձրացնելով, սթափեցնում օդաչուին: Իհարկե, կարելի էր նաեւ այլ կերպ կանխել դժբախտությունը, բայց ժամանակը չէր ներում: Դժվար էր ասել, թե որքան կտեւեր ուսանողության ու մտավորականության համբերությունը:

Մի խոսքով, կարծես թե նկարահանումը հաջող էր ընթանում եւ հաջողությամբ էլ կավարտվեր, եթե չհնչեր անտանելի, աներեւակայելի, անպատկերացնելի այդ հեռախոսազանգը:

Ուրեմն, իմ հայրենիքում հավանաբար արդեն ծաղկել էր հրաշքով փրկված միակ այդ ծառը...

Անպայման պետք էր այցելել Վիտալի Մաքսիմովիչին: Վիկան անմիջապես համաձայնվեց եւ խորհուրդ տվեց նարինջներ տանել:

Այն գիշեր ամենեւին ուշադրություն չէի դարձրել հիվանդանոցի շենքին: Շատ անշուք քառահարկ շենք էր, որն, ինչպես երեւում էր, վերջերս էին նորոգել՝ դատելով հատակի վրայի թարմ գաջի ու յուղաներկի հետքերից, եւ ավելի շատ տիպային դպրոց էր հիշեցնում, որպիսիք կարելի է հանդիպել բոլոր նախկին խորհրդային շրջկենտրոններում: Բայց բավական եղավ մի քանի րոպե սպասել ընդունարանում, որպեսզի իսկույն մոռանայի ճարտարապետական սույն դա-



տողություններս եւ ավելի շատ մտածեի դրամապանակիս պարունակության մասին...

Հիվանդանոցներն ամենուր նույնն են:

- Ճիշտը չհիվանդանալն է,- ասացի Վիկային ու աչքով արի վերելակավար պառավին:

Մեզ տեսնելով՝ Վիտալի Մաքսիմովիչն այնպես աշխուժացավ, կարծես ամենեւին էլ կաթված չէր տարել մի քանի օր առաջ: Նա ամուր սեղմեց ձեռքս եւ այնպիսի լուրջ ու մի տեսակ երախտապարտ հայացքով նայեց ինձ, որ ես ամաչեցի: Հետո նա երկար ուսումնասիրեց Վիկային ու ասաց.

- Դուք շատ ճիշտ եք, օրիո՛րդ:

Ես սեղանին դրեցի տոպրակով նարինջները: Վիտալի Մաքսիմովիչի տիկինը սառնարանից թխվածք ու միրգ հանեց.

- Եթե այն դաժան օրը դուք չլինեիք, ես չգիտեմ, թե ինչ էի անելու:

- Ես, միեւնույն է, չէի մեռնելու,- ասաց ծերուկը,- երկու ամսից սկսվում է ֆուտբոլի Եվրոպայի առաջնությունը, ինչպե՞ս կարելի է մեռնել: Դու ի՞նչ ես կարծում,- դիմեց նա ինձ,- ո՞վ կդառնա չեմպիոն:

Ես չասացի՝ Ֆրանսիան, որովհետեւ վախեցա, որ նախկին սպորտային մեկնաբանը տեղում երկրորդ կաթվածը կստանա:

- Եթե ռուսները լավ խաղան, մի բան դուրս կգա,- ասացի:

- Եթե լա՞վ խաղան,- հառաչեց ծերուկը,- ա՛յ, եթե լիներ վաթսուն թվի մեր հավաքականը կամ գոնե՝ ութսունութի. ի՜նչ տղաներ էին: Իսկ սրանց ես չեմ հավատում, բայց, ինչ արած, պետք է հաղթեն:

Տիկինը մեզ ստիպեց մեկական կտոր թխվածք ուտել: Բարեբախտաբար նոր այցելուներ եկան, այլապես նա այդքա-

ნով չէր բավարարի: Ես ըսպասում էի «Արզէն» գործարան, եւ շուտով մենք վեր կացանք: Հրաժեշտ տալիս ծերունին ա- սաց, որ ինքը դեռ մի քանի օր էլ կմնա հիվանդանոցում, եւ եթե ես ժամանակ ունենամ, լավ կանեմ, որ գամ այստեղ՝ շախմատ խաղալու:

Վիկային ճանապարհեցի տուն եւ շտապեցի գործարան:

Այս նոր գործը դեռ մտքիս էր, որ ուշացել էր: Լավ փողի հոտ էր գա- լիս:

Բանկային հաշիվներն մեզ տալիս էին մեկ հաշվ՝ հիսունհինգ, իսկ ծեռնոցները՝ զույգը երեք հազարով: Դրանց հանձնելու մոտավոր գինը, համապատասխանա- բար, հարյուր եւ վեց հազար էր, այնպես որ մենք համարյա մեկինմեկ փող էինք աշխատում:

Ես պայմանավորված ժամից մի քիչ ուշացել էի, սակայն դա չխանգարեց, որ Վիկտոր Լվովիչը կրկին ջերմորեն ընդու- նի ինձ:

- Դուք հոգնած տեսք ունեք,- ասաց նա:

- Այո, գիշերը համարյա չեմ քնել:

- Իսկ՞ րկե,- փոխնօրենը բազմանշանակ ծոյսաց,- ձեր տարիքում դա կարելի է: Զվարճացե՛ք եւ գիշերները մի՛ քնեք, որովհետ հետո կուզի, բայց մի՛ մոռացեք նաեւ գործի մասին, որովհետեւ այս դժվար ժամանակներում ոչ ոք ձեր փոխարեն փող չի աշխատի եւ ձեզ չի կերակրի:

- Ես բոլորովին էլ չեմ մոռացել գործի մասին, ավելին, նույնիսկ կարող եմ ասել, որ մեր գործն հինգունինը տոկոսով եղած համարեք:

- Իսկապե՞ս, երիտասա՛րդ, դա ինձ ուրախացնում է, միայն թե զարմանում եմ, որ դուք չեք հրավիրում ինձ ճաշե- լու:

Հասկացա, որ կատակում է:

- Համոզված կլինեի ձեզ դեռ անհնանակզրում,- ասա- ցի,- միայն թե չէի մտածում, որ դուք անեն տասն օր մեկ թոռ եք ամուսնացնում: Չէ՞ որ դուք սովորություն ունեք տանը ճաշելու եւ այն խախտում եք միայն հարսանիքի նախա- պատրաստվելիս:

Փոխնօրենը ծիծաղեց:

- Ես շատ կուզեի այնքան թոռներ ունենալ, որ ամեն շա- բաթ նրանցից մեկի հարսանիքը լիներ, բայց, ցավոք, միայն երկուսն ունեմ: Իսկ հիմա անցնենք գործի, երիտասա՛րդ:

Ես հանեցի ծոցատետրս:

- Վի՛կտոր Լվովիչ, կարծեմ մի անգամ դուք ասացիք, որ մանր առեւտրական խաղերը այսթիսի գործերում տեղ չպետք է ունենան, այդ իսկ պատճառով ես ուզում եմ ձեզ հետ ան- կեղծ լինել:

- Իհարկե, իհարկե,- ծերուկը գրիչով երկրաչափական մարմիններ էր գծում թղթին՝ խնամքով բաճարցնելով գծե- րը:

Ես ասացի, որ արտահաշվարկները մեզ վրա նստել են ութ- սուն, իսկ ձեռնոցները՝ չորս ու կես հազար: Դա, իհարկե, չստեղծված սուտ էր, բայց արդարացվում էր նրանով, որ դրանք շատ հավանական թվեր էին, եւ ցանկացած ուրիշ կազմա- կերպություն ավելի էժան գնով բանկային արտահա- զուստ չէր կարող ճարել: Ու, բացի այդ, ես չէ՞ի կարող ասել փոխնօրենին, որ մենք հարյուր տոկոս վրադիր ենք դնում մեր ապրանքին:

- Իսկ ձեր վճարելիք գինը դուք որոշեք: Համոզված եմ, որ դուք, խոհեմաբար, միանգամից մի այնպիսի թիվ կասեք, որ մենք, առանց ժամանակ կորցնելու, կկնքենք պայմանագի- րը,- եզրափակեցի ես:

Ծերուկը ցած դրեց գրիչը եւ վեր կացավ տեղից:

- Ես փորձում եմ ձեր անկեղծությունը չկասկածել, երիտասա՛րդ,- խոսեց նա,- կարեւոր չէ: Միայն թե առեւտուրն առեւտուր է. վաճառողն ասում է իր գինը, գնորդը համաձայնվում է կամ՝ ոչ: Բայց սա, կարելի է ասել, բացառիկ դեպք է, մանավանդ, որ ես ինքս առեւտրական չեմ եւ գնալով համոզվում եմ, որ դուք՝ նույնպես, չնայած դա ձեզ չի խանգարում փող աշխատել,- նա մի պահ մտածեց, հետո շարունակեց,- ես էլ անկեղծորեն կասեմ, որ մենք նախատեսել էինք արտահագուստը գնել հարյուր, իսկ ձեռնոցները՝ վեց հազարով: Կարծում եմ դա ձեզ ձեռնտու է, եւ մենք կանգ կառնենք այս թվերի վրա: Միայն թե, ինքներդ եք հասկանում, որ արձանը պետք է ոսկյա լինի:

Վիկան ինձ արդեն ասել էր, որ առավոտյան Մոսկվայից իրեն զանգահարել է Ֆրանսիայի դեսպանատան մշակույթի ատաշեն՝ պարոն Լեոժինին եւ ասել, որ ցուցահանդեսի հետ կապված բոլոր հարցերը լուծված են, այն բացվելու է հուլիսին, Փարիզյան մի ցուցասրահում, եւ իրեն մնում է միայն մեկնել Մոսկվա՝ փաստաթղթերը ձեւակերպելու:

Ես սկսում եմ հասկանալ, որ ինձանից արդեն ոչինչ կախված չէ: Եւ սարսափում եմ դրանից: Սարսափում եմ ճշմարտությունից, որը շուտով ստիպված եմ լինելու խոստովանել ինքս ինձ: Բայց եթե նախասահմանումը իր սիրելին ունի, ապա ինչո՞ւ ողբերգությունն դարձնել ուրիշի երջանկությունը, որը թյուրիմացաբար էր ինձ տրվել, եւ դու պարտավոր էիր դա իմանալ: Եւ գիտեիր էլ: Ուրեմն, ինչի՞ համար է այս ինքնախաբեությունը: Ինչ լինելու է, միեւնույն է, կլինի:

Ես փորձում եմ այլեւս չմտածել այդ մասին եւ ամուր սեղմում եմ ձեռքը, որ թրթռում է ափիս մեջ:

Զբոսայգին դարձյալ մանուկներին է վերադարձել նրանց կարուսելները: Ի՜նչ ուրախություն: Եւ ի՜նչ փույթ, որ մի օր էլի ձմեռ է գալու, եւ ոսկեբաց այս ձիուկներն ու առյուծները, եղջերուներն ու արջերը կրկին փակվելու են իրենց ցուրտ վանդակներում, եւ այգին ամայանալու է:

Ինչո՞ւ, ուրեմն, ձմեռը դեռ չեկած, տխրել դրա համար:...

Բայց ո՞ւմ եմ խաբում: Այս ինչ տխրություն է նվում ներսումս, եւ ինչ ցավ է սողոսկում ձախ կրծքիս տակ, ուր դեռ այրում է իմ սերը:

- Ինչ ես առավոտս շուտ քիթդ կախել,- ասում է Վիկան:

Բայց չկա հարցական նշանը: Մենք գնում ենք բացվող օրվան ընդառաջ, արեւի շողերի, մանուկների ծլվլյունի ու ծաղիկների բուրմունքի միջով, եւ նա ամբողջովին ինձ է տվել իր սերը, որն իմ սիրո հետ արդեն դարձել է մեր արյունը եւ հոսում է սրտից սիրտ:

Չկա հարցական նշանը: Նա ուզում է ասել՝ իզուր քիթդ մի՛ կախիր, եթե չես ուզում, ոչ մի ցուցահանդես էլ չի լինի, ոչ մի Փարիզ էլ չի լինի: Դու ես իմ ցուցահանդեսն ու իմ Փարիզը, հասկացա՞ր:

Մութն ընկել էր արդեն, երբ Վիկային ճանապարհեցի տուն ու վերեւ չբարձրացա՝ պատճառաբանելով, որ պետք է հեռախոսազանգի սպասեմ:

Ուզում էի մենակ մնալ:

Մտա առաջին պատահած բարը, մի ամբողջ շիշ կոնյակ վերցրի ու նստեցի անկյունում: Խմում էի ագահաբար, արագ-արագ ու փորձում ոչ մի բանի մասին չմտածել:

Համարյա դատարկ սրահում հնչում էր ինձ անծանոթ մի

մեղեդի: Բարմենը, կանգնասեղանին հենված, ամսագիր էր թերթում, իսկ մատուցողուհին ձանձրույթից դռան կողքին էր չրթում՝ հայացքը դռանը հառած:

«Հետո ո՞ւմ ձեռքերն են շոյելու քո մազերը»,- չգիտեմ՝ ինչու մտածեցի ես, նորից լցրեցի դատարկված բաժակս ու շիշը շխկացրի սեղանին:

Հիմա նոր նկատեցի, որ սրահի մյուս անկյունում էլի մարդիկ կան նստած. ձայնից նրանք շրջվեցին իմ կողմը:

Ավելին նկատել չէի կարող: Ավելի ճիշտ՝ չէի ուզում:

Առհասարակ, ամեն ինչ և ամեն ոք ամենուրեք արժանանում են իմ ուշադրությանը: Իմ անտարբերությունը թվացյալ է, որովհետև ես իրականում տեսնում ու լսում եմ այն ամենը, ինչ արժանի է տեղավորվելու տեսողության ու լսողության մեջ: Իմ անտարբերությունը միայն քող է, որը ծածկում է իմ վերաբերմունքը: Ես պե՛տք է անտարբեր թվամ, որովհետև ես պարտավոր եմ ուշադիր լինել, պարտավոր եմ տեսնել ու լսել: Գուցե դա իմ առավելությունն է, գուցե դա իմ մեղքն է, գուցե դա իմ հիմարությունն է, գուցե դա բոլորովին էլ այդպես չէ, այլ միայն ինձ է թվում: Չգիտեմ, համենայնդեպս, ես կարող եմ միաժամանակ վիճել ավտոտեսուչի հետ, լսել ճնճղուկի երգն ու շտապ օգնության ազդանշանը, տեսնել մայր մտնող արևը, նրա արտացոլանքը փողոցի ջրափոսում ու հակառակ մայթով քայլող մի գեղեցկուհու:

Բայց դա ուրիշ դեպքում, ոչ հիմա: Հիմա ես տեսնում ու լսում ու շոյում ու կարոտում ու սիրում եմ Վիկային: Հիմա ես չեմ: Հիմա անկյունի այս սեղանի մոտ նստած է իմ կարոտը: Հիմա ես խմում եմ: Թո՛ւյլ տվեք խմել: Թո՛ւյլ տվեք շիշն ավելի ուժեղ շխկացնել սեղանին: Թո՛ւյլ տվեք շխկացնել, ջարդել, փշրել...

- Կամա՛ց այստեղ,- լսվեց մյուս անկյունից տղամարդու մի կակազոց:



Ես շուռ եկա ու տեսա սարսափազդու մի դեմք՝ նման անբնականորեն ահարկու դիմակի՝ չափազանցված մի տիպով, որը այդտեղից թեքությամբ իջնում էր մինչև կզակը՝ այլանդակելով հաստ շրթունքները: Կարծես ինչ-որ մեկը վրձնի ջղային մի հարվածով փորձել էր ջնջել Աստծո անհաջող այդ ստեղծագործությունը: Դիմակն ինձ էր նայում արհամարհալից, բայց զզվող հայացքով, ինչպես բակապահ ահեղ գամփռը կնայեր իր տիրույթում անսպասելի հայտնված թափառական շնիկին, որն անիմաստ իր գռմռոցով խանգարել էր նրա հանգիստը: Բայց դա տևեց շատ կարճ: Հետո դիմակը շրջվեց, և մնաց միայն նոր ռուսի հարաճուն մի վիզ, որը սպառնում էր լցնել ամբողջ էկրանը:

Գուցե պահի ազդեցության տակ կռիվ սարքեի՝ զոհ գնալով ջարդել-փշրելու տրամադրությանս, սակայն բարեբախտաբար կադրը փոխվեց: Էկրանին հայտնվեց տղամարդու առջև նստած գեղեցկուհին: Նրա կարմրաբիբ աչքերը՝ ինչպես նռնահատիկները ճաք տված կեղևի տակից, փայլում էին գայթակղիչ անտարբերությամբ:

Եվ անմիջապես կրկին փոխվեց կադրը: Բար էր մտել բարձրահասակ, նիհար մի երիտասարդ ու կասկածանքով զննում էր ներկաներին:

- Համեցե՛ք, խնդրեմ,- նրան նկատելով ասաց դիմակը,- մենք քեզ ենք սպասում:

Երիտասարդի դեմքը վախից այլայլվեց, ու նա հետ-հետ գնաց, հետո շուռ եկավ, որ փախչեր, բայց դիմակն անսպասելի ցատկեց տեղից ու հուժկու մի հարվածով ծեփեց դռանը: Հետո օձիքից բռնած՝ քարշ տվեց իր գեղեցկուհու մոտ, որը սարսափից կուչ էր եկել անկյունում ու աղերսագին նայում էր շուրջը:

- Դու պառկե՞լ ես սրա հետ,- ասաց դիմակը՝ երիտասարդին դիմելով:

Այդ մի քանի բառն արտասանելը նրանից բավականին երկար ժամանակ խլեց, քանի որ զայրույթից ավելի էր կակազում:

- Կո՛ւսյա, վերջացրո՛ւ, խնդրում եմ,- ասաց աղջիկը:

Բայց Կուսյան դեռ նոր էր սկսում: Նա նախ գլխով անսպասելի հարվածեց տղայի ճակատին ու տապալեց հատակին: Հետո սկսեց դաժանորեն ծեծել:

Այնուհետեւ անցավ աղջկան, որը բարձրաձայն լաց էր լինում: Բռնեց մազերից ու սկսեց ապտակներ տեղալ՝ չթողնելով, որ վայր ընկնի:

Բոլորը ոտքի կանգնած դիտում էին՝ չհամարձակվելով միջամտել: Ես նկատեցի, թե ինչպես բարմենը վերցրեց հեռախոսը: Մտածում էի, որ դիմակը հիմա կդադարեցնի ծեծը, բայց նա գնալով, ավելի էր կատաղում եւ արդեն անցել էր բռունցքների:

Ես մոտեցա ու փորձեցի բռնել նրա ձեռքը: Բայց նա ինձ վրա ուշադրություն չդարձրեց, հեշտությամբ ազատեց ձեռքն ու շարունակեց հարվածել:

Աղջիկը միայն հեկեկում էր:

Ես գրկեցի Կուսյայի մեջքը եւ տիտանական ուժ գործադրեցի, որ նրան մի կողմ տանեմ:

- Կո՛ւսյա, խնդրում եմ,- լացի միջից արտասանեց աղջիկը:

-Կայարանային պոռնի՛կ,- կակազեց Կուսյան:

Ես արդեն նրան մի փոքր հեռացրել էի:

- Հանգստացի՛ր,- ասացի,- դու նրան կսպանես:

Կուսյան վերջապես շրջվեց դեպի ինձ ու մի կողմ հրեց, ինչպես գամփռը շնիկին: Ապա մի պահ խելագարի նման նայեց դեմքիս եւ անսպասելիորեն շուռ գալով՝ արագ քայլեց դեպի ելքը:

Աղջիկը փորձեց հասնել նրա հետեւից, բայց բախվեց սեղանի ոտքին ու ընկավ: Ես մոտեցա, որ բարձրացնեմ նրան:



- Թո՛ղ ինձ,- ասաց նա,- հասի՛ր Կուսյայի հետեւից, կանգնեցրո՛ւ նրան, խնդրում եմ:

Ես մի վայրկյան տատանվեցի, բայց հետո, անկախ ինձնից, դուրս շտապեցի: Փողոցի եզրին շարված մեքենաների մեջ նկատեցի լույսերը վառած մի «ԲՄՎ»: Կուսյան արդեն միացրել էր շարժիչը: Մոտեցա ու բացեցի կողքի դուռը:

- Ի՞նչ ես ուզում,- գոռաց դիմակը,- փակի՛ր դուռը:

- Աղջիկը խնդրեց, որ քեզ կանգնեցնեմ:

Նա մի հայհոյանք տվեց աղջկա հասցեին ու կրկին ասաց.

- Փակի՛ր դուռը:

- Ինչպես կուզես,- շխկացրի դուռն ու մի կողմ քաշվեցի:

Մեքենան հիստերիկ ճռռոցով պոկվեց տեղից՝ հետեւից թողնելով փոշու մի շերտ: Ապա շնչակտուր ու հուսահատ կողքիս կանգնեց աղջիկը եւ հեգնախառն արհամարհանքով դիմեց ինձ.

- Դու չկարողացար նրան պահել: Դու...

Քիչ էր մնում՝ արդարանայի, երբ հանկարծ նկատեցի, թե ինչպես հեռվում «ԲՄՎ»-ն շրջադարձ կատարեց ու վերադարձավ: Կուսյան բացեց կողքի դուռը եւ աղջկան հրամայեց նստել: Աղջիկը հնազանդորեն խցկվեց կիսաբաց դռնից՝ դուրս թողնելով շրջազգեստի փեշը...

«Վերջ: Նկարահանումն ավարտված է: Հանգցնել լուսարձակները»,- հայտարարեց ռեժիսորն ու գնաց բար՝ թոթափելու հոգնությունն ու զայրույթը: Բայց ներս մտնելով՝ իսկույն հասկացավ, որ շարունակությունը հետեւելու է: Նախ պետք էր վճարել բարմենին, ապա զուտ մարդասիրաբար հոգալ, որ արյունաշաղախ երիտասարդի համար շտապ օգնություն կանչեն: Չէր խանգարի նաեւ մի բաժակ բան խմելը, ինչը նա արեց առաջին հերթին:

Երբ դուրս եկա փողոց, տեսա, թե ինչպես երկու ոստիկա-

նակաև մեքենա աղմուկով արգելակեցին բարի մուտքի մոտ: «ԲՄՎ»- ն դեռեւս իր տեղում էր: Բայց ոստիկաններն մոտեցան ինձ: Նրանցից մեկը բռնեց թեւերս, իսկ մյուսը հանեց ձեռնակապերը: Մնացածները մտան ներս:

-Ի՞նչ եք անում,- հանգիստ հարցրի ես:

- Ձա՛յնդ,- գոռաց ոստիկանը:

- Ձեր փնտրած մարդը գնացել է,- ասացի ես:

- Ձա՛յնդ,- նորից գոռաց ոստիկանը:

Քիչ անց հայտնվեց բարմենը՝ մինչ այդ ներս մտած քաղաքացիական համազգեստով մի ոստիկանի հետ:

- Սա նա չէ, սա, հակառակը, հաւտեցնում էր…

«Հաւտեցնել» բառը նա հնչեցրեց շատ ավելի լայն իմաստով, ասես այն վերաբերում էր ազգամիջյան բախումներին, մանավանդ, երբ մի փոքր ընդմիջումից հետո ավելացրեց.

- Չեմ հասկանում՝ ինչ են ուզում իրարից: Սարսափելի է…

Աղա խոսեց քաղաքացիական համազգեստովը՝ ըեշտակի նայելով աչքերիս.

- Նրանք ե՞րբ գնացին:

- Կարծեմ, քիչ առաջ:

- Մեքենայո՞վ էին:

- Չգիտեմ:

- Լավ, քա՛ց թողեք դրան,- ասաց նա արհամարհալից:

Իմ ձեռնակապերն արձակեցին: Ճիշտ այդ պահին եկավ շտապօգնության մեքենան, եւ ես, առիթից օգտվելով, հեռացա, ավելի ճիշտ՝ «գլորվեցի»՝ մի հայացք նետելով «ԲՄՎ»-ի կողմը:

Կոստյան հասցրել էր լույսերն անջատել, իսկ ապակիները մուգ էին, եւ դրսից ոչինչ չէր երեւում:

Ոստիկանական մեքենաներից մեկը, կապույտ փարփլեր միացրած, անցավ կողքովս: Ես արագացրի քայլերս եւ ա-





ռաջին իսկ խաչմերուկից թեքվեցի աջ: Չէի հավատում, որ ձեռնակապերը հանել են: Ռուս ոստիկանի ճանկերից հեշտ չէ ազատվելը, մանավանդ, երբ դու հարավցի ես՝ անկախ նրանից՝ մեղավոր ես, թե ոչ: Գնալով ավելի ու ավելի էի արագացնում քայլերս՝ հուսալով, որ շուտով կգտնեմ: Արդեն հաջորդ փողոցին էի հասնում, երբ կողքիս կրկին արգելակեց ծանոթ «ԲՄՎ»-ն:
- Նստի՛ր, եղբայր,- կրկին կանչեց Կոստյան:
- Դու՛ք, ավելի լավ է, հեռացե՛ք այստեղից, ես մի շուտով կգտնեմ:
- Նստի՛ր,- կրկնեց Կոստյան,- մի քիչ ման կգանք:
Ես այլևս չառարկեցի:
- Ուզում եմ քեզ շնորհակալություն հայտնել,- շարունակեց նա, երբ արդեն տեղավորվել էի հետևի նստատեղին,- եթե դու ինձ չղահեիր, չգիտեմ՝ բանն ինչի կհասներ: Ու, բացի դրանից, ոչինչ չասացիր շներին, նույնիսկ երբ քեզ ձեռնակապ էին հագցրել, չնայած գիտեիր, որ ես մեղավոր եմ:
- Դասարկ բան է,- համեստորեն ասացի ես:
- Այս կեղտոտ ժամանակներում նման բանը դատարկ չի լինում:
- Չի լինում,- հաստատեցի ես:
Կոստյան այլևս չխոսեց: Ես խնդրեցի ինձ իջեցնել Մայակովսկու խաչմերուկում: Հրաժեշտ տալիս՝ նա ասաց, որ կարող է շատ բանով ինձ օգտակար լինել: Աղջիկը, որի ներկայության մասին գրեթե մոռացել էի, ղարզվեց, որ նույնպես կարող է օգտակար լինել:

Բանվորական արտահագուստի գործից մենք տահեցինք գրեթե յոթանասուն միլիոն ռուբլի: Եւ առաջին անգամվա նման եղբայրաբար կիսեցինք: Եթե, իհարկե, ֆինանսական հարաբերություններում այդպիսի հասկացողություն գոյություն ունի:

Թերեւս գոյություն ունի, որովհետեւ մենք Ռուսաստանում ենք: Կամ էլ գոյություն չունի, որովհետեւ մենք Ռուսաստանում ենք:

Թերեւս միայն մեկ Ռուսաստան կա աշխարհում, ուր ամեն ինչ կարելի է եւ չի կարելի: Իսկ գուցե՝ ե՛ւ կարելի է, ե՛ւ չի կարելի: Այդպես եղել է միշտ, սկսած Պետրոս Առաջինից մինչեւ Գորբաչով վերջինը, մինչեւ կեղծ ժողովրդավարական Ռուսաստանը՝ կամազուրկ, պոռնկացող, անգիտակ ու սիրահոժար...

Դա անիշխանությունը չէ: Բայց կա նաեւ մյուս Ռուսաստանը՝ բնազդական, մերկ ու անպաշտպան, ինչպես կնոջ մարմինը, որի պաշտոնը տրվելն է՝ առանց հաշվի ու խտրականության: Ինչպես հողը՝ գութանին, անծայրածիր ու անսպառ: Հերկի՛ր, որքան ուզում ես, սերմանի՛ր, որքան ուզում ես, միեւնույն է, ծլելու է այն, ինչ պիտի ծլի, ծնվելու է այն, ինչ պիտի ծնվի: Իսկ ռուսական հզոր արգանդը ծնում է միայն ցարեր ու հպատակներ: Կարեւոր չէ՝ ինչ գույնի ու հավատքի: Ռուսաստանը միայն մի գույն ու միայն մի դավանանք ունի: Դա ճերմակ երկգլխանի արծիվն է, որին թշնամիները թյուրիմացաբար գցել են արքունիքներում, գլխատել ու փետրել կամ զուգել՝ իբրեւ ձեռնածու մի թութակ՝ երբեք չհասկանալով, որ իրենց փնտրածը ոգի է՝ անորսալի ու անպարտելի, որ թեւածում է պետության երկնքում՝ տափաստանների ու անտառների, գետերի ու լճերի, խրճիթների ու պալատների վրա: Ռուսական ոգին, որը թռիչքի պահին անգամ, թվում է, նիրհում է՝ չնկատելով իր տերությունը թալանող մկ-



ների ու առնետների, աղվեսների ու շնագայլերին... Բայց դա հենց այն է կամ այնքանը, ինչը սահման չունի լրումի եւ երբեք չի դառնում ճակատագրորեն անթույլատրելի: Չկա համբերության վերջին կաթիլ ասածը: Կա համբերության բաժակը, որից հերթով են խմում տերերն ու մուժիկները՝ չթողնելով, որ այն լցվի... Հետո թթու դրած մի վարունգ կրծում՝ հանուն գալիք սերունդների, որոնք նույնպես, անկախ տերության հզորությունից, անկախ ժամանակի ներողամտությունից կամ քմահաճույքից, միեւնույն է, ի վերջո իրենք էլ են նույնը անելու՝ խմելու միեւնույն բաժակից ու կրծելու միեւնույն վարունգը. եւ դարձյալ՝ հանուն հաջորդների:

Հետո հարավից, հարավ-արեւելքից ու հարավ-արեւմուտքից սկսվելու է սերմնացուների հերթական արշավանքը, եւ նիրհած, անհերկ հողը կրկին կանաչելու է ու ծաղկելու՝ ի հեճուկս տերության թշնամիների ու բարեկամների, որոնք իրենց սիրով ու ատելությամբ ակամա պարարտեցնում են Ռուսաստանի համբերությունն ու վարունգի դաշտերը:

Հետո՝ հեղափոխությունների ու պատերազմների արանքում, մի կարճ ժամանակով տերությունը իրեն թույլ է տալու հանգստանալ: Հանգստանալ խառնակություններից, հրեաներից ու իր սեփական հայրենասերներից՝ բոլորին անխտիր խոստանալով ազատություն ու անկախություն, եթե, իհարկե, ուզում են, իսկ եթե ոչ՝ ապա հավասարություն ու արդարություն:

Այդպես եղավ նաեւ վերջին հեղափոխությունից հետո: Նորությունը միայն ինքնորոշման իրավունքն էր: Անհերքելի մի բան, մանավանդ Ռուսաստանի պարագայում եւ մանավանդ քաներորդ դարավերջին:

Ես մամուլին չէի հետեւում, հեռուստացույց չէի միացնում, խաղախական իմ զիստիլիններն առանձնանալու մի բան չէին, որտեղզի հասկանայի, թե ինչ է տեղի ունենում Մոսկվայում, կամ ինչի վրա է հույս դրել Վաշինգտոնը, եթե Արեւմուտքի նպատակը միայն «Չարի կայսրության» կործանումը չէ:

Ռուսաստանը կար, աղոթում էր ու համբերում: Եւ կարծես թե դարձյալ ամեն ինչ կարելի էր... Ռուսաստանը աղոթում էր հաւուսս ու շնեղ, որովհետեւ ամեն ինչ կարելի էր: Ռուսաստանը ուտում էր կարտոֆիլ, աղխսած ձուկ, քքու դրած վարունգ եւ աղասում անցյալ տարվա աշխատավարձի մի մասին, որը խոստացել էր անձամբ մրեզիդենտը: Ռուսաստանը արեւածաղիկ էր չրթում... Ուրեմն ծաղկում էր արեւածաղկի առեւտուրը: Պոռնսկանում էր... Ուրեմն ծաղկում էր մարմնավաճառությունը: Մուրում էր... Ուրեմն կար մուրացողների «համքարությունը»: Գողանում էր, բռնաբարում ու սպանում... Ուրեմն կար զողերի «եղբայրությունը»: Ռուսաստանը թալանում էր ինքն իրեն: Թալանողները միայն զողեր չէին, այլեւ ղեսական այրեր, բարձրաստիճան չինովնիկներ, զինվորականներ... Ռուսաստանը տուոզ, հաստավիզ, անուղեղ ցլիկներ ու բուլդոգներ էր բուծում, այսպես ասած` դրամատիրության մարտիկներ ու կոմանդորներ, որոնք երկիրը բաժանել էին սեփական զոտիների, երկրամասերի ու մարզերի, սեփական խաղաքների ու շրջանների, սեփական թաղերի ու փողոցների, ուր միայն իրենք են իշխում ու հրամայում:

Այս ամենը ես հրաշալի գիտեի, սակայն երբեք չէի մտածի, որ կարող եմ ինքս առնչվել դրան:



«Արղշին» գործարանի հաշվապահությունից փողը ստանալուց անցել էր երեք օր:

Գիշերը Վիկան մեկնելու էր Մոսկվա: Պիտի գնայի նրա մոտ, որ միասին անցկացնեինք երեկոն, ապա նրան ճանապարհեի օդանավակայան: Արդեն տնից դուրս էի գալիս, երբ հնչեց հեռախոսազանգը:

Հնչեղ ձայնով մեկը ներկայացավ որպես Վիկտոր Լվովիչի ծանոթ եւ առաջարկեց հանդիպել մի կարեւոր գործով: Պայմանավորվեցինք կես ժամից հանդիպել իմ տան մոտակայքում գտնվող հանրախանութի առջեւ:

Վիկտոր Լվովիչն ինձ մի քանի անգամ ասել էր, որ ուրիշ գործարանների ղեկավարների մեջ բազմաթիվ ծանոթներ ունի, եւ, եթե նրանց անհրաժեշտ լինեն ինչ-որ ապրանքներ, ինձ լավության կարգով տեղյակ կպահի: Եվ հիմա ես մտածում էի, որ հենց այդպիսի մի գործ է պատահել, միայն չէի կարողանում հասկանալ, թե ինչու այդ գործը չէր կարող սպասել վաղվան:

Ինչեւէ, հազա լավագույն միջակս ու դուրս եկա տնից: Զանգած մեր պայմանավորված տեղը բավականին մոտ էր, այնուամենայնիվ, մի մեքենա կանգնեցրի եւ պասվիրեցի ինձ հասցնել հանրախանութի մոտ ու սպասել:

Ես վաղուց արդեն համոզվել էի, որ Կոտը ճիշտ էր ասում` պնդելով, թե գործնական հանդիպումների ժամանակ ինչ-որ բանի տեր լինելու տպավորություն թողնելը միշտ օգնում է գործին, որովհետեւ երբ դու այդպիսի հանդիպման ես գնում տրամվայով, ու հագիդ էլ մաշված ջինս է, բնականաբար այլ տպավորություն ես թողնելու:

Հանրախանութը վաղուց արդեն փակ էր: Երկար չսպասեցի, քիչ անց մի սպիտակ ամերիկյան «Ջիպ» մոտեցավ մայթին: Մեքենայից իջան երկու իրար չափազանց նման, բարձրահասակ, լայնաթիկունք տղամարդիկ` հաստ վզերով եւ

կարճ խուզած մազերով: Նրանցից մեկը մոտեցավ ինձ, տվեց անունս եւ մեկնեց ահռելի ձեռքը:

- Վաղիմ:

Մյուսը ձեռքերը խաչաձեւեց կրծքին ու մնաց մեքենայի մոտ կանգնած:

Հիմա արդեն ես հասկացա, թե ովքեր են Վիկտոր Լվովիչի այս ծանոթները. հասկացա անմիջապես, չգիտեմ՝ հաստ վզերի՞ց, մեքենայի՞ց, թե՞ վարվելակերպից: Գիտեի, որ այսպիսի դեմքերում ամենակարեւորը չխառնվելն է, սակայն որեւէ մարտավարություն ընտրելու համար արդեն չափազանց ուշ էր:

- Մենք Տասանց Գոշայի տղաներից ենք,- ասաց Վաղիմը:

- Ո՞ւմ,- հարցրի ես:

- Գոշայի, չե՞ս լսել,- Վաղիմը չափազանց բարձր էր խոսում,- «Արդշին» գործարանը նրանն է, փող է մուծում, կարճ ասած, մենք չենք ուզում քեզ նեղացնել, հակառակը, ուզում ենք օգնել, որ ոչ ոք քեզ չնեղացնի: Կարճ ասած, հասկացար, ծառայություն ծառայության դիմաց:

Այդ նախաբանի կարիքը չկար: Կարեւոր չէր՝ Տասանց Գո՞շան էր ինձանից ծառայություն պահանջում ծառայության դիմաց, թե՞ Հարյուրանոց Լյոշան: Կարեւորն այն էր, որ ինձանից ծառայություն էին պահանջում, ավելի ճիշտ՝ փող, եւ պահանջողները հասարակ փողոցային խուլիգաններ չէին: Մի խոսքով, բռնցքի հարվածներով այս հարցը չէր լուծվի, եթե նույնիսկ իմ բռունցքներն այնքան ուժեղ լինեին, որ կարողանային նախշել սրանց մռութները: Պետք էր խաղալ եւ ժամանակ շահել... Ես դա հրաշալի հասկանում էի ու, մի սիգարետ վառելով, ձեռքս դրեցի Վաղիմի ուսին:

- Ես չէի կարծում, որ նման խոսակցություններն այսպես են տարվում,- ասացի:



- Ինչպե՞ս՝ այսինքն,- զարմացավ Վաղիմը:

- Այսպես, միանգամից, հանրախանութի մոտ,- բացատրեցի ես:

- Կարճ ասած՝ ժամանակ չենք կորցնում,- ասաց նա՝ մի պահ մտածելուց հետո,- մենք տեղյակ ենք քո ներկերի գործից էլ, ձեռնոցների գործից էլ: Այդպես ճիշտ չէ, փող ես աշխատում մեր շրջանում, մեր աչքի առաջ, ու մոռանում ես «եղբայրության» մասին: Մենք հո հենց այնպես չենք ուզում. եթե վաղը ամեն մի խուլիգան գա ու սկսի ռողեն մեկ քեզանից փող պահանջել, ի՞նչ ես անելու: Իսկ այսպես մենք քո թիկունքին ենք, կարող ես ուզածդ գործն անել, եւ ոչ ոք մազիդ չի դիպչի: Մի՛ կարծիր, որ եթե դու մեզ փող ես տալիս, դա ամոթ է: Կարճ ասած՝ սա լավության դիմաց լավություն է: Գործարանների տերերն են մեզ փող տալիս, որ մենք նրանց թիկունքին կանգնենք: Կարճ ասած՝ լավ կլինի, որ վաղը երեկոյան փողը պատրաստ լինի: Այս կարգի եկամտաբեր գործեր անելու համար մեզ վճարում են քսան տոկոս, բայց մենք զիջենք, որ դու նոր ես սկսում, եւ պատրաստ ենք բավարարվել տասնհինգ միլիոնով:

Տեսնես քանի հոգու էր դիմել Վաղիմն իր այս ճառով: Համենայնդեպս, նրա խոսքը համոզիչ էր: Ժամանակն էր պատասխան ճառի: Ես փորձեցի ինձ հավաքել եւ ցույց չտալ անհանգստությունս:

- Վաղի՛մ, ես պատահական չասացի, որ նման խոսակցություններն այսպես միանգամից չեն տարվում: Ավելի ճիշտ կլիներ, որ մենք նստեինք որեւէ տեղ ու, մի բան խմելով, զրուցեինք: Բայց քանի որ այսպես է ստացվել, ոչինչ, յոլա կգնանք: Երեւի, դուք սովոր եք ուրիշների հետ կարճ ու կոնկրետ խոսել, միայն թե բանն այն է, որ ես, զուգե, մի քիչ տարբերվում եմ ուրիշներից: Դու խոսում ես՝ առանց ինձ հերթ տալու եւ քո պայմաններն ես առաջադրում՝ առանց ինձ

ճանաչելու...

- Կարճ ասած...

Նա ուզում էր ինձ ընդհատել, բայց ես արագ շարունակեցի.

- Չէ՞ nr, եթե վաղը դարզվի, nr Գnշան եւ ես շաs հարգարժան ընդհանուr ծանոթներ ունենf, դու ինfդ fեզ վաs կզգաս, nr միանգամից այսպիսի խոսակցություն ունեցար ինձ հեs, կարծես ես չգիsես ով եմ: Այնպես nr, արի՛ այսօr առանց nrեւէ բան դայմանավnrվելու բաժանվենf, եւ երկու օrվա ընթացfում իմ ծանոթները կկապվեն Գnշայի հեs, ու բոլոr հարցերն առանց մեզ կկարգավnrվեն:

Վադիմը կասկածանfով ինձ նայեց եւ մի դահ մsածելուց հեsո հարցrեց.

- Ովfե՞r են fn ծանոթները:

Ես սդասում էի այդ հարցին:

- Դեsf չէ, nr հիմա անուններ sամ,- ասացի,- չէ՞ nr կարելի է երկու օr սդասել, եւ եթե nrեւէ բան չփոխվի, hn ես ձեզ չխաբեցի՞ ու փախա:

- Լավ,- նեsեց Վադիմը,- խաբելը՝ մեզ ոչ nf չի կարող խաբել, փախչել՝ առավել եւս: Կարճ ասած, մենf երկու օr կսդասենf: Վաղը չէ մյուս օrը երեկոյան sա՛նը եղիr, ես fեզ կզանգահարեմ:

Նա սեղմեց ձեռfս եւ նsեց մեfենան, իսկ ես կանգնած մնացի sեղումս: «Ջիփը» անմիջապես դոկվեց sեղից, եւ ես ինձ մի fիչ թեթեւացած զգացի:



Օդանավակայանի կիսադատարկ սպասասրահի նիրհը երբեմն խանգարում էին թռչող ու վայրէջք կատարող ինքնաթիռների մասին հայտարարությունները: Օդը ծանրացած էր, ճնշող ու ինչ-որ տհաճ հոտ կար:

Աշխույժ էին միայն գնչուները: Նրանք ոստիկանի հայացքով նայում էին այս ու այն կողմ, միայն թե նրանց փնտրածը հիմար էր, և ոչ թե գրպանահատ:

Ես բռնեցի Վիկայի ձեռքը և նրան սպասասրահից դուրս տարա: Մենք մի քիչ շուտ էինք եկել, և տոմսերի հաշվառումը դեռ չէր սկսվել:

Թեև սա մի կարճատև բաժանում էր ընդամենը, բայց ինձ թվում էր, որ այլևս չեմ տեսնելու նրան: Թվում էր, թե դա այնքան հաստատ է, որ գլուխս պտտվում էր երկինք բարձրացող ինքնաթիռներին նայելիս: Աչքերս շաղվում էին, և երբ հայացքս վերադառնում էր երկիր, մի պահ ոչինչ չէի տեսնում:

Հետաքրքիր է՝ ո՞ւր էր չքվել ձեռնոցների վաճառականը: Վաղուց արդեն նա ինձ գրեթե չէր անհանգստացնում: Եվ, պետք է ասել, հոյակապ առիթներ էր բաց թողնում՝ ինձ խայթելու:

Դրամաշորթների հետ հանդիպումից հետո ես վստահ էի, որ նա կհայտնվի ու կասի. «Միանգամից շատ չէ՞ր լինի քեզ համար, եղբա՛յր»: Կամ կառաջարկի իր ծառայությունները՝ մի կապոց կեղծ թղթադրամ, կամ մի խաղալիք ատրճանակ, կամ պարզապես ինքնաթիռի տոմս, մեկ ուղղությամբ՝ այնտեղ, որտեղից եկել էինք, նա՝ շալակած իր ձեռնոցները, ես՝ իմ սիրտը:

Եվ կամ կհայտնվի հիմա՝ օղու մի շիշ թևի տակ և կառաջարկի միասին խմել Վիկայի հրաժեշտ տալուց հետո:

Սակայն ինչո՞ւ հրաժեշտ: Ինչո՞ւ, անգամ, ցտեսություն: Շնորհակալ եմ քեզանից, «եղբա՛յր», դու ինձ մի փայլուն միտք հուշեցիր: Եվ ինչպե՞ս ես շուտ չէի մտածել:

- Վի՛կա, դու ճանաչո՞ւմ ես ծեռնցների վաճառականին:

Վիկան զարմացած ինձ նայեց:

- Դա կարեւոր չէ,- շտապեցի ասել,- դա բոլորովին կարեւոր չէ: Գնանք, ինձ համար մի տոմս գնենք: Թռչում ենք Մոսկվա:

Իմ ինքնաթիռն օդում էր արդեն, երբ հիշեցի, որ Վադիմին խոստացել էի սպասել երկու օրից շուտ լինել ու սպասել նրա զանգին: Ինձ թվաց, թե իմ վիճակը նման է այն տնային տնտեսուհու վիճակին, որը մեկնում է ծովափ հանգստանալու եւ ճանապարհին հիշում է, որ տանը արդուկը միացրած է թողել:

Բանն այն է, որ, երբ ես Վադիմին ասում էի, որ այստեղ ինչ-որ ազդեցիկ ծանոթներ ունեմ, որոնք կարող են իմ հարցերը լուծել, դա ինընում տոկոսով սուտ էր. ես ինքս այստեղ ոչ մի այդպիսի ծանոթ չունեի: Սակայն Կոսն ինձ մի անգամ ասել էր, որ ինքը շատ լավ հարաբերությունների մեջ է իր բաղաքում բնակվող մի «հեղինակության» հետ, որը դեռ մանկուց մեծ ազդեցություն ունի: Չգուշացրել էր, որ, եթե նման կարգի հարցեր առաջանան, ես ինքս ոչինչ չձեռնարկեմ եւ անմիջապես իրեն տեղյակ պահեմ: Նա, երեւի, գիտեր, որ դա անխուսափելի է:

Մտածեցի, որ Մոսկվայից կզանգահարեմ Կոսին ու նրան ամեն ինչ կպատմեմ, միայն թե չգիտեի, թե ինչպես բացատրեմ իմ՝ Մոսկվայում գտնվելը: Ես հիմա էլ չէի ուզում Կոսին որեւէ բան ասել Վիկայի մասին:



Ամեն անգամ, երբ ինքնաթիռը վայրէջքի է գնում դեպի Մոսկվայի օդանավակայան, եւ լուսամուտից սկսում են երեւալ սոճու անտառակները, կամ երբ գնացքը մոտենում է Մոսկվայի մատույցներին, ու վազքն է թափանցում նույն անտառակների բուրմունքը, ամեն անգամ ինձ թվում է, թե տուսով մենսվելու եմ վարար գետը:

Կամ գուցե ավելի ճիշտ կլինի ասել՝ ճահի՞ճը: Ո՞րն է ավելի սարսափելի: Ո՞րն է դակաս վտանգավոր: Ո՞րն է ավելի հասկանալական Մոսկվային:

Չգիտեմ, ես այստեղ չափազանց շատ բան եմ տեսել, եւ բաղաքն ինձ շատ բան է սովորեցրել:

Տաքսին սլանում էր մեծածանոթ խճուղով, եւ գնալով ինկա բաղաքի շունչն ավելի լսելի էր դառնում:

Լույսը նոր-նոր էր բացվել, եւ ճանապարհի լապտերները դեռ չէին հասցրել մարել: Խճուղին դատարկ էր ու չոր, բայց ամպամած երկինքը սպառնում էր անձրեւով:

Բոլոր դեմքերում, մենք միասին էինք:

- Ինչ տարօրինակ է ամեն ինչ, այնպես չէ՞,- ասաց Վիկան:

- Դու դեռեւս չե՞ս հավատում...

- Արդեն հավատում եմ,- Վիկան ոգեւորված բռնեց ձեռքս,- գիտես, ես քեզ կտանեմ այն տեղերը, որ ուսանողական տարիներին սիրում էի գնալ:

- Ես էլ քեզ մի քանի տեղ ունեմ տանելու,- ասացի,- չէ՞ որ մենք հիմա քո քաղաքում չենք, եւ դժվար է ասել՝ ով է ում հյուրը:

- Ես հինգ տարի սովորել եմ այստեղ եւ կարծում եմ՝ սա էլ է իմ հարազատ քաղաքը: Սակայն մենք այդքան ժամանակ

չենք ունենա, որ և՛ դու ինձ ման ես, և՛ ես՝ քեզ, չէ՞ որ մենք երեք օրից վերադառնում ենք:
- Իսկ մեզ ինչ կա,- ես գրկեցի նրա պարանոցը,- եթե խնդրենք փչի, կարող ենք ավելի երկար մնալ:
- Եթե զաղցնիք չէ, դուք որտեղի՞ց եք եկել,- հարավցու առողջանությամբ հարցրեց վարորդը:
Նա բռնցքամարտիկի կոտրված քթով հարյուր տոկոսանոց մի ադրբեջանցի էր, և նրա մռութը հենց սկզբից ինձ դուր չէր եկել: Թե՝ քո ինչ գործն է՝ մենք որտեղից ենք եկել:
- Ջակարտայից,- պատասխանեցի ես:
- Ջակարտա, Ջակարտա, դա երևի Ղազախստանում է, հա՞:
Ես նայեցի Վիկային, և մենք ծիծաղեցինք:
Վարորդը լռեց:

Հյուրանոցի մեր համարն ընդարձակ էր և ամբողջովին սպիտակ: Պատերը, կահույքը, վարագույրները, ծածկոցները, ամեն ինչ, բացի հատակից: Այն բավականաչափ թանկ արժեր, բայց ես ուրախ էի, որ Վիկան երեք օր իրեն լավ է զգալու:
- Արի՛ ինձ մոտ,- ասաց նա,- տե՛ս, դրսում անձրև է սկսվել:
Հետո Վիկան քնեց, և, պատուհանի գոգին հենված, ես երկար նայում էի նրան: Երբեմն քնի մեջ նա ինչ-որ բան էր երգում՝ կարճ ու առանց բառերի, և հազիվ ընկալելի էր միայն եղանակը:
Ժամը ութին վերցրի հեռախոսափողը և զանգեցի Կոչին: Փորձում էի շատ ցածր խոսել, որ Վիկան չարթնանա, բայց գիծը մաքուր չէր, և լավ չէր լսվում: Երբեմն սպիտակ էի լինում ձայնս բարձրացնել: Երբ ամեն ինչ պատմեցի,



Կոչն ասաց, որ ճիշտ եմ վարվել և անհանգստանալու բան չունենք: Նա կտեսնի իր ծանոթին, և վերջինս ամեն ինչ կկարգավորի:
- Բայց դու ի՞նչ ես անում Մոսկվայում,- հարցրեց նա:
- Պատրաստվում եմ ցուցահանդեսի...
Առավոտյան անձրևը միշտ էլ տրամադրում է քնելու: Երբ անգամ նոր ես արթնացել խորը քնից ու նույնիսկ անհետաձգելի գործ ունես, ուր մնաց, երբ ամբողջ գիշերն աչք չես կպցրել:

Երբ արթնացա, արդեն ժամը երկուսն էր: Վիկան նոր էր դուրս եկել լոգասենյակից, և համարում օճառի նուրբ բուրմունք էր տարածվել:
- Դու վաղո՞ց ես արթնացել,- հարցրի ես:
- Ոչ, քիչ առաջ: Ես ահավոր քաղցած եմ, ուզում էի հեռախոսով մի բան պատվիրել, բայց ռեստորանի համարը չի պատասխանում:
Քիչ անց մենք իջանք ռեստորան ու տեղը տեղին ճաշեցինք:
Հետո ես Վիկային տարա ֆրանսիական դեսպանատուն և սպիտված էի մի ամբողջ ժամ մուտքի մոտ սպասել, մինչև նա դուրս կգար:
- Դե, ի՞նչ եղավ,- հարցրի ես:
- Ամեն ինչ նորմալ է,- մի քիչ անտարբեր ասաց նա,- հուլիսի սկզբին ես պետք է մեկնեմ Փարիզ:
Ես մի կերպ ինձ ստիպեցի ժպտալ:
- Ուրեմն ամեն ինչ կարգի՞ն է:
- Բեռնարը երեկոյան մեզ հրավիրեց ընթրիքի,- Վիկան խորամանկորեն նայեց աչքերիս,- ես գիտեմ՝ դա քո սրտով չէ, բայց ես չէի կարող մերժել: Նա ինձ համար չափազանց

շատ բան է արել:
Ես նորից ժպտացի, բռնեցի նրա ձեռքը, եւ մենք սկսեցինք քայլել:
- Նա իսկապե՞ս քեզ համար շատ բան է արել:
- Այո, շատ բան: Դու երեւի չգիտես, բայց Փարիզում ցուցադրվելու համար բավական չէ լավ նկարել իմանալը:
- Հասկանում եմ,- ասացի,- գիտես, Վի՛կա, երեւի ավելի ճիշտ կլինի, որ դու մենակ գնաս, հուսով եմ, որ այդ քո Բեռնարը մի կերպ կդիմանա դրան:
Նա ամուր սեղմեց ձեռքս:
- Դա ինձ չի հետաքրքրում, ուզում եմ, որ իմ կողքին լինես:

Չգիտեմ, թե ինչու գնացինք հենց Գորկու անվան զբոսայգի: Վիկան ասում էր, որ ուսանող ժամանակ դա իր ամենասիրած վայրն է եղել, ուր կարելի էր առանձնանալ մոլբերտի հետ եւ նկարել՝ ոչնչի մասին չմտածելով: Սակայն դա չէր պատճառը: Ես ինքս էլ շատ անգամ էի եղել այստեղ:
Տասնինը տարեկան էի, երբ առաջին անգամ եկա Մոսկվա՝ այն «գրավելու» հաստատ որոշմամբ: «Մարտական գործողությունները» տեւեցին երկու օր: Հետո ծանոթացա մի ուսանողուհու հետ, որն ամառվա արձակուրդներին կարուսելի տոմսեր էր վաճառում Գորկու անվան զբոսայգում, եւ մնացած մի ամիսն անցկացրի այստեղ: Մի անգամ փողերս վերջացան, եւ ուսանողուհի-տոմսավաճառուհին, ձախ այտիս հրաժեշտի մի համբույր դրոշմելով, քաղաքավարի ցույց տվեց այգու ելքը:
Հիմա զբոսայգին անճանաչելիորեն փոխվել էր: Ճանապարհը՝ մերթ բետոնապատ, մերթ սալահատակ, մերթ կարմիր ավազով ծածկված, թվում էր, սկսվել է ուրիշ այգուց, ուրիշ քաղաքից, ուրիշ աշխարհից: Թվում էր, թե այն մեզ տանում է այնտեղ, ուր չկա բաժանում, չկա կարոտ, չկա թախիծ:
Հին կարուսելներից գրեթե ոչ մեկը չէր մնացել: Կանաչ լճակում կարապների փոխարեն նավակներ էին: Այնտեղ, ուր առաջ հսկա ցանցապատ պարահարթակն էր՝ փայտե, մաշված բեմով ու ահռելի ձայնարկիչներով, հիմա մի սովորական սրճարան էր:
Վիկային հուզել էր հատկապես այն, որ վերացրել էին ծիծաղի սենյակը: Բայց ես գոհ էի:
Ո՞ւմ էի տեսնելու, եթե մտնեի այնտեղ: Ո՞վ էր նայելու ինձ ծուռ հայելիներից: Ես հիմա էլ ծիծաղում եմ ինձ վրա:
Գուցե իսկապե՞ս մենք հոգով մանուկներ ենք: Կամ առնվազն՝ ես: Չէ՞ որ, երբ ես ուրախ եմ, ուզում եմ թռչկոտել, իսկ երբ տխուր եմ, հազիվ եմ պահում արցունքներս: Ես կարուսել եմ սիրում, կատուներ ու ձիեր: Երբ տարածվում է մայիսյան արեւի բուրմունքը, ինձ թվում է, թե շուտով սկսվելու են դպրոցական ամառային արձակուրդները, եւ ես գյուղ եմ գնալու, ուր ինձ սպասում են իմ մանկության լեռներն ու ընկերները:

Բեռնար Լենժիենի քառասունն անց բարձրահասակ, նիհարակազմ տղամարդ էր՝ սեւ, գանգուր մազերով, երկար այտամորուսներով ու ահռելի քթով:
Ռեստորանի ճաշացուցակը նայելիս՝ նա պիջակի գրպանից հանեց ոսկեջրած նրբագեղ ակնոցները:
- Այստեղ չափազանց համեղ օձաձուկ են մատուցում,- հայտարարեց նա,- ես ձեզ խորհուրդ կտայի փորձել:
Մենք երկուսս էլ հրաժարվեցինք օձաձկից:

- Երևի Դո՞ւք էլ եք նկարիչ,- Լեոնիդին դիմեց ինձ:

Ես մի կում արեցի գինու բաժակից ու տարուբերեցի գլուխս:

- Բայց, վստահ եմ՝ մի բան հասկանում եք նկարչությունից, այնպես չէ՞,- շարունակեց նա իր ենթադրությունները մի ռուսերենով, որը մի այլ պարագայում հատուկ վերաբերմունքի էր արժանի:

- Մի քիչ:

- Ես համոզված եմ, որ Վիկայի ցուցահանդեսը մեծ հաջողություն կունենա Փարիզում: Դուք, անշուշտ, հավանում եք Վիկայի նկարները:

- Անշուշտ:

Նա բարձրացրեց բաժակը.

- Խմենք Վիկայի հաջողության կենացը:

Մենք խփեցինք բաժակները, եւ ես մի շնչով դատարկեցի իմը, մինչդեռ Լեոնիդին ընդամենը մի փոքր կում արեց՝ բաժակի վրայից նայելով Վիկային:

- Վիկայի հաջողության գրավականը նրա գույներն են:

Ես մտքումս ծիծաղեցի. արդյո՞ք սա էլ էր ենթադրություն:

- Դուք հաճա՞խ եք ցուցահանդեսներ կազմակերպում Փարիզում,- հարցրի ատաշեին:

- Ոչ միայն ցուցահանդեսներ եւ ոչ միայն Փարիզում,- նա դադարեցրեց ուտելը եւ ցած դրեց պատառաքաղը,- դա իմ աշխատանքն է. ես պարտավոր եմ կապել Ռուսաստանի եւ Ֆրանսիայի մշակույթները իրար: Դեսպանատան օգնությամբ դասական երաժշտության տասնյակ համերգներ են կազմակերպվել երկու երկրներում, տպագրվել են մի շարք գրքեր, բացվել են ցուցահանդեսներ...

Լեոնիդին երկար խոսեց: Ըստ էության, իմ տված հարցն էր պատճառը, որի շնորհիվ նա կարող էր առանց անհամեստության պատմել իր արածների մասին: Ատաշեն նման էր պարծենկոտ որսորդի, որը հենց նոր էր վերադարձել որսից եւ հաճույքով պատմում էր իր սխրագործությունների մասին:



- Աշխարհը կառուցված է մշակույթի վրա,- շարունակեց նա,- դա, վստահաբար, այդպես է, քանի որ չի կարելի պատկերացնել կյանքն առանց նկարների կամ առանց երաժշտության: Անհնար է: Այդ իսկ պատճառով ես կարծում եմ, որ իմ աշխատանքն ավելի կարեւոր է, քան հենց իր՝ դեսպանի աշխատանքը: Դուք այդպես չե՞ք կարծում:

Ես գլխով արեցի: Ձեռքս իջեցրել էի սեղանի տակ ու դրել Վիկայի ծնկին: Սփռոցը փակում էր տեսարանը, եւ ես կամաց-կամաց վեր էի բարձրացնում շրջազգեստը ու շոյում նրա ծունկը: Վիկան հազիվ էր զսպում ծիծաղն ու ձեւացնում, թե ուշադիր լսում է ֆրանսիացուն:

- Ո՞ւմ համար է քաղաքականությունը: Մարդկանց, ովքեր զբաղվում են դրանով,- շարունակեց ատաշեն՝ վստահ, որ մենք լիովին տարված ենք իր դատողություններով,- իսկ արվեստը համաժողովրդական է: Մարդ կարող է չհետաքրքրվել քաղաքականությամբ, բայց չի կարող չշփվել արվեստի հետ: Օրինակ՝ մեր դեսպանի կինը: Նա երբեք տեղյակ չէ ամուսնու գործերից, մինչդեռ միշտ հաճույքով օգնում է ինձ՝ իմ ծրագրերն իրականացնելիս: Կամ՝ մեր դեսպանի աշխատասենյակում կախված է Ֆրանսիայի նախագահի դիմանկարը, իսկ ես նախընտրել եմ Բալզակի կիսանդրին: Մի քանի տարի հետո նախագահը կփոխվի, եւ նրա նկարը կհանեն, իսկ Բալզակը կմնա ընդմիշտ: Արվեստն աշխարհի հոգին է, եւ ոչ մի քաղաքականություն չի կարող պղտորել այն: Դուք համաձա՞յն եք ինձ հետ:

Վիկան սեղանի տակ ճիշտ ժամանակին կանգնեցրեց ձեռքիս ընթացքը:

- Իհարկե, իհարկե,- ասացի ես:

- Իսկ դուք ինչ կասեք, գեղեցի՛կ օրիորդ:

Գեղեցիկ օրիորդը ժպտաց եւ ոչինչ չպատասխանեց:

Ընթրիքից հետո Լեոնիդինն մեզ հրավիրեց մեկ այլ տեղ՝ ուրախանալու, բայց ես պատճառաբանեցի, որ մենք պայմանավորվածություն ունենք և հրաժարվեցի: Դա գրեթե իրականություն էր, պարզապես պայմանավորվածությունն էր պակասում: Համենայնդեպս, ֆրանսիացին այլևս այն չէր, ինչ պատկերացնում էի: Ընդհակառակը, նույնիսկ խղճահարության պես մի բան էր առաջանում:

Մոսկվայում ես մի հրաշալի ընկեր ունեի՝ Նիկոլայ Զվյագին անունով մի լրագրող, Ռուսաստանի լավագույն ռազմական թղթակիցներից մեկը, որի հետ ծանոթացել էի տարիներ առաջ՝ Ղարաբաղում:

Նա լրագրողի այն տեսակից էր, որը մի հարցազրույցի կամ ռեպորտաժի համար պատրաստ է նորից ներս խցկվել դռնից, երբ դուրս է շպրտվել անգամ ծխնելույզից: Մենք նրա հետ ոտքի տակ էինք տվել գրեթե ողջ Ղարաբաղը և ստեղծագործաբար յուրացրել հայ-ռուսական կամ ռուս-հայկական մի խմելաձև, որին պայմանականորեն ղարաբաղյան անունը տվեցինք: Կոլյան սկզբում կռվել էր, թե՝ եթե ուզում եմ ինչ-որ բանով իրեն օգտակար լինել, ապա ավելի լավ է օգնեմ նյութեր հավաքել: Սակայն վերջում ես կարողացա նրան համոզել, որ գործուղման ժամանակ կարևորը նոթատետրում նշումներ անելը չէ, ավելի լավ է նշումներ անել ստամոքսում, ուղեղում ու սրտում, և եթե կարգին լրագրող ես, նյութը, միևնույն է, վերջում ստացվելու է: Հետո՝ մի տարի անց, նրան հանդիպեցի Մոսկվայում և ինձ համար պարզեցի, որ ռուս լրագրողները նաև ձեռքը գրպանը տանել գիտեն ընկերոջը հյուրասիրելու համար և նույնիսկ այն դատարկել, եթե դրա անհրաժեշտությունը կա: Բայց ես չթողեցի, որ դա Կոլյայի համար դառնա սովորություն, որովհետև հաճախ էի լինում Մոսկվայում, և եթե նա շարունակեր ինձ այդ տեմպերով հյուրասիրել, ապա անպայման կսնանկանար:



Իմ ընկեր Նիկոլայ Զվյագինը, հեռախոսի մեջ ձայնս լսելով, ուրախության մի ռռնոց բարձրացրեց, որն ի զորու է համախմբելու աշխարհի բոլոր արու գայլերին, որոնք երբևէ զբաղվել են ժուռնալիստիկայով և, մանավանդ, բախտ են ունեցել լինելու թեժ կետերում:

- Պատրաստվի՛ր ստամոքսդ,- ասացի ես,- այսօր մենք խմելու ենք մինչև ինքնամոռացություն:

Կոլյան չհամաձայնվեց որևէ տեղ գնալ և հրավիրեց մեզ իրենց տուն: Պարզվեց, որ նա ամուսնացել է: Իմ ընկերը երեսունհինգ տարեկան էր և ամուսնանում էր երրորդ անգամ:

Ոսկերչական խանութից մենք թանկարժեք մի նվեր գնեցինք ու գնացինք Կոլյայենց տուն: Ճանապարհին ես մանրամասն պատմեցի Վիկային իմ ընկերոջ մասին և, անշուշտ, չմոռացա նրա հասցեին ծաղիկներ գնել:

Կոնյակի կիսադատարկ շիշը սեղանի կենտրոնում էր, և նրա պարունակությունը փայլում էր, ինչպես խաղողի ողկույզը երեկոյան արևի տակ:

Կոլյան րոպեն մեկ լցնում էր բաժակս՝ կարծես դեռևս չհավատալով ներկայությանս: Նրա կինը՝ Իրան հեռուստատեսային հաղորդավարուհի էր, և չնայած առաջին անգամ նրան տեսել էի մի ժամ առաջ, ինձ թվում էր, թե ճանաչում եմ հարյուր տարի: Նա խմում էր գրեթե մեզ հավասար և ստիպում էր Վիկային էլ խմել: Ես երբեք դեռ չէի տեսել Վիկային այդքան ոգևորված: Մթնոլորտն իսկապես տրամադրում էր անկեղծության ու անմիջականության:

- Հիշո՞ւմ ես, թե ինչպես մենք սուրճ եփեցինք գնդակների տարափի տակ՝ չոր ճյուղերը վառելով,- ասաց Կոլյան:

Եվ չնայած մենք հարյուր անգամ միասին հիշել էինք դա-

ռաքայան այդ պատմությունները՝ մեզ համար հաճելի էր դրանք նորից կրկնել, մանավանդ հիմա՝ Իրայի և Վիկայի համար:
- Պատկերացնո՞ւմ եք, մեր մեքենան կանգնել էր ճանապարհը պատսպարող մի բլրակի կողքին, և մենք չէինք համարձակվում առաջ գնալ, որովհետև բլրակից այն կողմ տեսադաշտը բաց էր, իսկ թշնամին մեզ արդեն նկատել էր և կրակում էր: Մինչև մութն ընկնելը այդպես մնացինք կանգնած: Մեզ հետ էլի յոթ-ութ լրագրողներ կային՝ տարբեր երկրներից: Նրանց թուքը չորացել էր, և ոչ ոք չէր համարձակվում մեքենայից դուրս գալ: Իսկ մենք սկսեցինք ցախ հավաքել և մի տասնյակ զարմացած հայացքների ներքո կրակ վառեցինք սուրճի համար: Սուրճը քիչ էր, և մենք դիտմամբ դրսում խմեցինք, որ ոչ մեկի հետ չկիսենք, սակայն մի անգլիացի լուսանկարիչ չդիմացավ և իջավ մեքենայից: Նա չգիտեր, որ մենք վերջում, այնուամենայնիվ, բոլորին էլ բաժին ենք հանելու:
- Իսկ ինչպե՞ս մեքենան թաղվեց ցեխերի մեջ,- հիշեցրի ես:
Կոլյան ավելի ոգևորվեց և այս անգամ դարձավ Վիկայի կողմը:
- Հազիվ էինք դուրս եկել այդ չարաբաստիկ հատվածից, երբ մեր «Իվեկոն» թաղվեց: Այս անգամ բոլորն իջան ու սկսեցին հրել մեքենան: Ցեխը հասնում էր մինչև ծնկները: Երբ տուն վերադարձանք, պետք էր տեսնել տանտիրուհու հայացքը... Եվ ավելորդ է ասել, թե ինչպես խմեցինք այդ գիշեր: Պատկերացնո՞ւմ եք, այդպիսի օրվանից հետո մեզ հատկացված սենյակում գտնել ղարաբաղյան կոնյակի հինգ լիտրը շշեր: Մտածեցինք, որ եթե դրանցից մեկը դատարկենք, տանտիրուհին չի նեղանա: Բայց մեզ միացավ անգլիացի լուսանկարիչը, ու հետո, որտեղից որտեղ, հայտնվեցին երկու



ֆրանսուհիներ, և հաջորդ օրը մենք ստիպված եղանք ամբողջ քաղաքը ոտքի տակ տալ, որպեսզի կոնյակ ճարենք և դնենք տեղը: Դա շատ դժվար էր, որովհետև ոչ մի խանութ չէր աշխատում: Ու չեք պատկերացնի, թե ինչ հրաշալի եղավ, որ մենք, այնուամենայնիվ, կարողացանք ճարել, քանի որ վերջին օրը տանտիրուհին հրաժեշտի ընթրիք էր կազմակերպել: Սեղանի վրա շարված էին տապակած կարտոֆիլ, թթու, խաշած միսեր, օգնության կարգով ստացված երեք պահածո, ու դա դեռ քիչ է, տանտիրուհին հայտարարեց, որ մեզ համար անակնկալ է պատրաստել և գնաց, բերեց շշերը: Մենք՝ նախորդ օրվա խնջույքի հերոսներս, նայեցինք իրար ու ծիծաղեցինք. մեզանից յուրաքանչյուրը պատկերացրեց, թե ինչ կլիներ տանտիրուհու վիճակը, եթե նա բացեր պահարանը և այն տեսներ դատարկ:
Կոլյան մի փոքր դադար տվեց, հետո բարձրացրեց բաժակն ու ասաց.
- Բայց, համենայնդեպս, եկեք խմենք հանուն նրա, որ աշխարհում պատերազմներ չլինեն:
- Խմենք,- ասացի ես,- չնայած՝ դա անհնար է:
- Եթե աշխարհում պատերազմներ չլինեն,- Իրան գրկեց ամուսնու ուսերը,- դու կմնաս անգործ, սիրելի՛ս:
Կոլյան ծիծաղեց.
- Ոչինչ, հանուն խաղաղության ես պատրաստ եմ զոհաբերել իմ շահավետ աշխատանքը:
- Դու երբևէ հաշվե՞լ ես քո ռեպորտաժները,- հարցրի ես:
- Այո, հինգ տարում ուղիղ չորս հարյուր տասը հատ. մի՞թե դա բավական չէ, որ եթե աշխարհում դադարեն պատերազմները, ռուսական մամուլը մեկընդմիշտ սպառած համարի պատերազմի թեման:
Մենք խմեցինք մինչև ուշ գիշեր,ապա դուրս եկանք զբոսնելու:

Լույս ու խավարում... Գիշերային Մոսկվա, սարսուռ եր-
գում է երակներումս, բայց ցոփության մեջ էլ անմեղ ու
դյուրիմաց մի բան կա, որ ներշնչում է բանաստեղծիդ ու հո-
գևորականիդ, գողիդ ու անօթևանիդ, որոնք դեռ ապրում
են քո սիրով և հավատում են, որ մի օր դարձյալ քեզ են վե-
րադարձնելու ձյունածին քո գեղեցկությունն ու եկեղեցինե-
րիդ զմբեթների ճառագումը: Դու լայնահուն գետ ես, որ հո-
սում է անծայրածիր մի աշխարհում, ձկնորսի, ակորդեոնի,
կեղտից կոշտացած ձեռքերի, մեղքի, համբերության, կարիքի
ու հրաշքի աշխարհում... Բայց ո՛չ ակունքներդ գիտես, ո՛չ
էլ խառնարանդ: Քո սիրակարոտ աղջիկները հիմա ո՞ւր են
լողում: Գիշերվա այս ժամին, երբ չկա ո՛չ իմաստ, ո՛չ ցան-
կություն, ո՛չ, հասկացեք, հեռանկար:

Մի՞թե ողջ քաղաքը ցերեկը քնում է, որտեղից հիմա զվար-
ճանա: Մի՞թե կարկանդակ ու նրբերշիկ վաճառող այս կա-
նանց ցավերը նույնը չեն: Տաքսիստների, շվեյցարների,
մարմնավաճառների ու ոստիկանների ցավերը քոնը չեն այ-
լևս:

Մոսկվա, որ այդպես անփութորեն տալիս ես ու տալիս, ո՞վ
է վճարելու փոխարժեքն այդ ամենի:

Հյուրանոցի մեր սենյակը մտնելուն պես Վիկան անմիջա-
պես պառկեց քնելու:

Պետք էր զանգել Կոտին: Բայց տատանվում էի: Զարմանա-
լիորեն, սիրտս վկայում էր, որ ինձ վատ լուր է սպասվում:

- Ոչինչ չստացվեց,- ասաց Կոտը,- Զուրաբը՝ այն մարդը, ո-
րի մասին քեզ ասում էի, չի կարողացել պարզել, թե ովքեր են
եղել քեզ մոտեցողները, և ով է այդ Տաաանց Գոշան: Այդ
անտեր քաղաքում շունը տիրոջը չի ճանաչում: Ոչ ոք ոչ ոքի չի



ընդունում ու չի լսում, ուր մնաց՝ ենթարկվի: Ուրիշ ճար չկա,
կամ պետք է վճարել, կամ պետք է այդ կողմերում այլևս չե-
րևալ: Ես գիտեմ, որ դու վճարող չես, ու, բարսի պես, բոլոր
գործարաններն ու հիմնարկները, բոլոր փողի աղբյուրները
քաղաքի այդ մասում են: Մի խոսքով, կգաս, մի բան կմտա-
ծենք: Առայժմ ոչ մի քայլի չդիմես:

Ես կախեցի լսափողը ու մոտեցա բաց պատուհանին: Մի
սիգարետ վառեցի ու փորձեցի որոշել իմ անելիքը:

Վճարել ինչ-որ մարդկանց՝ այն բանի համար, որ նրանք
քեզ չնեղացնեն: Վճարել այն փողից, որն աշխատելու հա-
մար չարչարվել ես, ստիպված ես եղել սուտ խոսել, հեռացել
ես հայրենիքից ու եկել գրողի ծոցը:

Եվ այլընտրանք չկա, կա՛մ պետք է վճարես, կա՛մ պետք է
փախչես, որովհետև դիմակայելն անիմաստ է, մանավանդ,
մեն-մենակ:

Տրամաբանորեն, ավելի ճիշտ է վճարելը, քանի որ փախ-
չելով՝ փախչում ես մի այնպիսի տեղից, ուր կարելի է լավ
փող աշխատել: Բայց ինչո՞ւ վճարել, եթե նույնիսկ քեզանից
ուզեն քո աշխատածի մեկ տոկոսը: Որտեղ ի՞նչ: Ո՞ւմ վճա-
րել, և ի՞նչ է նշանակում՝ քեզ չնեղացնեն:

Նույնիսկ մեկ կոպեկ տալը բացառվում է: Եթե հնարավոր
չէ ուժի դեմ ուժով պայքարելը, մի՞թե ուրիշ միջոցներ չկան:

Համենայնդեպս, առայժմ պետք է վայելել երջանկությու-
նը: Հետո, ինչպես ասում են, կապրենք կտեսնենք:

Հետո, ինչպես ասում են, Աստծունը՝ Աստծուն, Կեսարինը՝
Կեսարին: Բայց այս դեպքում դժվար էր ասել, թե ով՝ ով էր:
Համենայնդեպս, Պուշկինի անվան կերպարվեստի թանգա-
րանում, ուր ես և Վիկան անցկացրինք հաջորդ գրեթե ողջ

օրը, ես համոզվեցի, որ նրանք երկուսն էլ, թե՛ Աստված, և թե՛ Կեսարը գուցե և ի սկզբանե հրաժարվել են իրենց կեսերից՝ ամբողջը թողնելով հասարակ մահկանացուներիս: Եվ թողել են հենց Մոսկվա գետի ափին՝ Ցարսկոյե Սելոյում, այս թանգարանում, այս սրահում, ուր ցուցադրվում են իմպրեսիոնիստները: Դեգայի պարուհիները, լողացող կանայք, Ռենուարի սևազգեստ կինը, Սեզանի Արլեքինը, Մատիսի թռաշուշանները, որոնց արտատպությունները ողջ մանկությանս ընթացքում փակցված էին մահճակալիս վերևում: Ի՞նչ էին մտածել ծնողներս: Ո՞ւմ դեմ էր արդյոք նրանց ըմբոստությունը, Աստծո՞, թե՞ Կեսարի: Համենայնդեպս, ես հիմա էլ մերկ մարմնի գեղեցկությունը տեսնում եմ օրորոցի ճաղաշարի հետևից:

Մենք շրջեցինք թանգարանում՝ մինչև նրա փակվելը:

Հետո գնացինք նավահանգիստ ու նստեցինք մոսկովյան հայտնի մոտորանավերից մեկը:

Ժամանակին Մոսկվա գետով վեր ու վար անող այս մոտորանավերում զբոսաշրջիկները երազում էին մի շիշ գարեջրի կամ կոկա-կոլայի մասին: Իսկ հիմա բարի մոտ նստած է մի ռուս ընտանիք, և հայրը շամպայն է լցնում տասնչորս-տասնհինգ տարեկան աղջկա բաժակը: Կիրակի օրն իր ընտանիքին զբոսանքի հանած ընտրագույն պիջակով, այս տղամարդը, դեռ մի հինգ-վեց տարի առաջ տրամվայի «մշտականին» կուսակցական տոմսից ավելի խնամքով էր վերաբերվում: Իսկ հիմա սեղանին՝ նրա առջև, ցուցադրաբար նետված են իր, անկասկած, թանկարժեք մեքենայի բանալիները, որը նա թողել է նավահանգստում:

Տեսնես այս մա՞րդն էլ խնդիրներ ունի դրամաշորթների հետ: Ասենք, ինչպես կարող է չունենալ: Այս երկրում ո՞ր փող աշխատող մարդն այդպիսի խնդիր չունի: Եվ, հավանաբար, նա ամսեկան մի կլորիկ գումար է վճարում, որպեսզի



կարողանա ամեն Աստծո կիրակի իր ընտանիքին հանգիստ ու ապահով զբոսանքի տանել :

Եվ արդյո՞ք ճիշտ չի անում: Ով կարող է նրան մեղադրել կամ նրա արածը վախկոտություն համարել՝ չնայած, վճարելը, վերջիվերջո, դա է փաստում: Բայց չէ՞ որ նա ուրիշ ելք չունի: Նրան հաճելի է շրջել վերջին «Մերսեդեսով», կնոջը ծննդյան օրերին մեկ կարատանոց ադամանդե քարով մատանի նվիրել, դստերը շամպայն հյուրասիրել... Եվ ինչո՞ւ պետք է նա այս ամենից հրաժարվի միայն նրա համար, որ տղամարդկության զգացում ունի: Դա հիմարություն կլինի, և նա, բնականաբար, գերադասում է վախկոտ կամ զգույշ լինել, քան՝ հիմար: Այս մարդը հրաշալի գիտակցում է, որ մի մասից զրկվելն ավելի լավ է, քան ամբողջից, և վճարում է մի մասը:

Վիկան մի կողմ էր տարել վանդակավոր վարագույրը և նայում էր ափին, ծառերի միջից վեր խոյացած զանգակատանը, որի ոսկեզօծ գմբեթը փայլում էր մայր մտնող արևի տակ և մոտորանավի ընթացքի հետ աստիճանաբար փոքրանում ու ավելի պայծառանում:

Մենք բարձրացանք վերնահարկ, նստեցինք բաց սրճարանում, և ես սուրճ պատվիրեցի:

Օրը սառն էր ու հաճելի, և մոտորանավը գրեթե անձայն սահում էր շագանակագույն ջրերի վրայով:

- Ինչի՞ մասին ես մտածում,- հարցրեց Վիկան:

- Ոչ մի որոշակի բանի, ամեն ինչից մի քիչ:

- Դու երբևէ մտածե՞լ ես սեփական զբոսանավ ունենալու մասին:

- Ոչ...

- Իսկ ես նոր միայն սկսեցի երազել,- նա բռնեց ձեռքս,- ապա մտածի՛ր: Դա ամբողջությամբ քո տիրապետությունն է: Դա ուրիշ մի կյանք է... Դա մի ապագա է՝ փոթորկոտ, անխ-

նա եւ զարմանալիորեն ճշմարիտ: Հասկանո՞ւմ ես... Ես ծովը նկարի ունեմ, որը չի կարող համընդհանուր չունենալ, որովհետեւ անցյալ չէ, որովհետեւ ապագա է, հասկանո՞ւմ ես:

-Հասկանում եմ: Իսկ ես կա՞մ քո զբոսանավում:

- Ժամանակ առ ժամանակ: Դու կհայտնվես, մի քիչ կմնաս ու կգնաս: Հետո էլի կհայտնվես: Թե չէ, դու կփչացնես ամբողջը...

Մայիսի Մեկը: Կա մի լուսանկար: Կամ՝ կար մի լուսանկար: Ես վստահ չեմ, որ այն ազնվականության խայխայումից հետո բաժին է հասել ցեղիս արժանավոր զավակներից մեկին եւ շարունակում է գոյություն ունենալ: Ինչեւէ, այն հիմա էլ աչքերիս առջեւ է: «Կեցցե Մայիսի 1-ը՝ աշխատավորության համերաշխության միջազգային օրը», «Կեցցե ԽՍՀՄ-ը», «Կեցցե ԽՄԿԿ քաղբյուրոն»... Եւ անգամ՝ Լ. Ի. Բրեժնեւը: Լուսանկարում այդ բոլորը կա: Բայց դա չէ կարեւորը: Կարեւորը, ինչպես միշտ, կադրից դուրս է, որը մի բառով կոչվում է կաղկանձ: Այո՛, կաղկանձ, միայն կաղկանձ, որովհետեւ, փառք Աստծո, երկրիս մեջ հիմա մի այլ արշալույս է, մի այլ Մայիս-1: Լուսանկարը այլ խորհուրդ էլ ունի: Ես, երեւի հինգ-վեց տարեկան, նստած եմ պապիս ուսերին: Պապս քայլում է Երեւանի ալյումինի գործարանի ղեկավարության հետ, գործարանի աշխատավորության առջեւից: Նա ինքն էլ չգիտի՝ ինքը աշխատավո՞ր է, թե՞ ղեկավար: Չգիտի նաեւ, թե ինչ կապ ունի գործարանի հետ, թեեւ ղեկավարում է գործարանի բակային տնտեսությունը: Չգիտի նաեւ, թե ինչ համերաշխության մասին է խոսքը եւ հանուն ինչի: Եւ ես էլ հիմա չգիտեմ, թե ինչու այդպես չէր կարելի ապրել այդուհետեւ էլ:



Չնայած վստահ չէի՝ շերտ լինելու է, թե՝ ոչ, այնուհանդերձ հաստատապես որոշել էի ինքս էլ գնալ Կարմիր հրապարակ, բայց առավոտյան զանգահարեց Կոլյան եւ իմ ծրագրերը խախտեց:

Մի ժամից եղե՛ք հյուրանոցի մուտքի մոտ,- ասաց նա,- մենք գնում ենք ամառանոց:

- Ի՞նչ ամառանոց,- զարմացա ես,- ես չգիտեի, որ դու ամառանոց ունես:

- Ես ամառանոց չունեմ,- ասաց Կոլյան,- ես ունեմ մի հրաշալի աներ, որն ունի մի հրաշալի ամառանոց: Պարզ է՞, ծերո՛ւկ: Ես խոստանում եմ փառահեղ օր եւ փոքր տրամաչափի ցանկությունների իրականացում:

Ամառանոցի անունը լսելով՝ Վիկան ոգեւորությունից փայլեց: Նա դուրս եկավ համարից եւ քիչ անց վերադարձավ՝ ձեռքին ինչ-որ կապոցներ: Պարզվեց, որ նա երկուսիս համար համապատասխան հագուստ է գնել:

Ես ձկնորսական կարթը նետել էի հնարավորին չափ հեռու՝ ամառանոցի կողքով հոսող փոքր գետակի մեջ, ու նստել ափին՝ մի քարի: Վիկան արմունկները դրել էր ուսերիս եւ այդպես՝ ինձ հենված, հետեւում էր լողակին, որի ամեն մի թեթեւ շարժման հետ վեր էր թռչում՝ պարտադիր արմունկով խփելով գլխիս: Ես արագ քաշում, հանում էի կարթը, բայց ամեն անգամ մեզ հուսահատեցնում էր դատարկ կեռիկը: Մինչդեռ Կոլյան արդեն յոթ բավականին պատկառելի ձկներ էր բռնել:

- Շարա՛շ,- ասաց նա՝ ութերորդը քաշելով,- բավական է, այսքանը, միեւնույն է, չենք կարողանա ուտել: Դու դարդ մի՛ արա, եղբա՛յր, ձուկ բռնելու համար ամուր նյարդեր է պետք

ունենալ, իսկ դու ռոդեն մեկ շարժում ես կարթը, կարծես սուսերամարտի ես ելել:

Ես գրկեցի դատարկ դույլս ու լուռ քայլեցի դեպի տուն:

Մենք մտադրվել էինք մնալ մինչեւ երեկո, որովհետեւ հաջորդ օրվա համար վերադառնալու տոմսեր էինք գնել եւ կեսօրին պետք է լինեինք օդանավակայանում: Սակայն Կոլյան հեշտությամբ համոզեց մեզ գիշերը մնալ՝ խոստանալով, որ առավոտյան ինքը կտանի հյուրանոց, ապա՝ օդանավակայան:

Մինչ կանայք եփում էին ձկները, մենք հասցրինք երկուական շիշ գարեջուր կոնծել: Չնայած առանձնապես ցուրտ չէր, բայց, ամեն դեպքում, հաճելի մթնոլորտ ստեղծելու համար վառել էինք հյուրատնակի բուխարին:

- Մարդ ոչ մի գործ չունենար ու շաբաթներով մնար այստեղ,- բարձրաձայն մտածեցի ես:

- Իսկ դու մի կո՛ղմ դիր գործերդ ու այդպես էլ արա՛,- ասաց Կոլյան,- միայն թե, այստեղ շուտ կձանձրանաս: Լսի՛ր, թե ինչ եմ ասում, ծերո՛ւկ. մենք միշտ ունենք արձակուրդ վերցնել ու գնալ մի տեղ, եկե՛ք միացե՛ք մեզ, կբռնենք ծովափ ու երազային հանգիստ կանցկացնենք:

Ես մտածեցի ինձ սպասող պրոբլեմների մասին, հետո մոտավորապես հաշվեցի, թե որքան փող է մնացել մոտս եւ հառաչեցի:

- Ես դեռ կզարգացնեմ այդ թեման սեղանի շուրջ,- շարունակեց նա:

- Պետք չէ, Կոլյա, միեւնույն է, ոչինչ դուրս չի գա: Ես բազմաթիվ գործեր ունեմ: Վիկան՝ նույնպես. նրա ցուցահանդեսը...

Ես մի կողմ հրեցի գարեջրի գավաթը եւ ինձ համար կոնյակ լցրեցի:

- Դու ճիշտ ես որոշել, եղբա՛յր, արի՛ խմենք, Աստված գի-



տի՝ մեկ էլ երբ կհանդիպենք:

Մենք դատարկեցինք բաժակները:

- Ինքդ էլ գիտես, որ կյանքը բարդ բան է,- Կոլյան խառնեց բուխարու կրակը,- փնտրածդ շատ դժվար ես գտնում ու շատ հեշտ կորցնում: Հարկավոր է պարզապես դիմանալ: Ամբողջովին մի՛ տրվիր զգացմունքներին, որպեսզի հետո կարողանաս հաղթահարել ինքդ քեզ:

- Այո՛,- հաստատեցի ես:

- Համենայնդեպս, խմելով հարցերի մի մասը ժամանակավորապես լուծվում է,- ասաց Կոլյան՝ դատարկ բաժակը ցած դնելով:

Մենք խմեցինք ամբողջ շիշը եւ երբ ուզում էինք երկրորդը բացել, Իրան հայտարարեց, որ ընթրիքը պատրաստ է:

Այդ օրը մենք բոլորս տրամադրված էինք խմելու եւ չնայած, այստեղ գալիս, ես Վիկայի համար գնել էի իր կամպարին, բայց մի բաժակ խմելուց հետո նա հրաժարվեց ու անցավ կոնյակին:

Լավ է, գոնե, որ մենք խմում էինք կենացներ ասելով՝ չնայած դրանք հիմնականում վերացական կենացներ էին: Կոլյան նույնիսկ խմեց երկրի ձգողական ուժի կենացը, երբ Իրան ձեռքից գցեց բաժակը, որովհետեւ, ըստ նրա, եթե չլիներ այդ ձգողականության ուժը, բաժակը կմնար օդում, իսկ լիքը բաժակը, մանավանդ՝ կոնյակով, վտանգավոր է օդում, ջրում, թե ցամաքում:

- Իսկ ի՞նչ կարծիքի եք, եթե մենք պարենք,- Իրան միացրեց նվագարկիչը եւ դրեց «Օտարականները գիշերվա մեջ» երգը:

Գիշերվա մեջ պատասխանի սպասող օտարականներ՝ կարծես թե այդպես էին երգի բառերը: Ես գիտե՞մ, թե որն է պատասխանը: Իսկ որեւէ հարց տվե՞լ եմ, արդյոք: Քանի՞ հարց ունեմ ես: Ո՞ր պատասխանն է ինձ համար ավելի

կարևոր: Որքան անտանելի գարուն էր այս գարունը: Սիրո գարունը:

Առավոտյան Կոլյան մեզ տարավ հյուրանոց, ապա՝ այնտեղ իրերն հավաքելուց հետո, օդանավակայան: Հետո հրաժեշտ, ինքնաթիռ, թռիչք, ամպեր, և վայրէջքից հետո ես ինձ զգացի դասերից փախած դպրոցականի պես, որը տուն մտնելիս դեռ չգիտի՝ բռնվե՞լ է, թե՞ ոչ:

Վիկայի հետ պայմանավորվեցի հանդիպել երեկոյան և շտապեցի տուն:

Քաղաքում արդեն եղանակն այնքան էր տաքացել, որ շատերը շրջում էին կարճ թևերով: Երիտասարդ աղջիկները, ժամանակից առաջ ընկնելով, մերկացրել էին ուսերը, ու փողոցներում հայտնվել էին կվասի շարժական բաքերը: Թվում էր՝ երեք օրվա բացակայության ընթացքում քաղաքն ամբողջովին փոխվել է:

Խանութից որոշ գնումներ արեցի ու քայլեցի տուն: Մուտքի մոտ ժպտացի համայնքի և, մասնավորապես, շենքի պառավներին ու ներս մտա: Բնակարանիս դռան մոտ ձեռքիս տոպրակը դրեցի ցած, հանեցի բանալին և երբ ուզում էի այն մտցնել անցքը, զգացի, որ ինչ-որ բան այն չէ: Ձեռքս չկպցրած՝ դուռը բացվեց: Տեսա, որ փակը ջարդված էր, ու անմիջապես հասկացա, թե ինչ էր կատարվել:

Առանձնապես ոչինչ, պարզապես միացրած թողած արդուկը հրդեհ էր սարքել:

Իմ արևային ակնոցներն ընկած էին գետնին ու ջարդված: Զգեստապահարանի դռները բաց էին, և շորերս՝ շպրտված այս ու այն կողմ: Ճամպրուկս տակնուվրա էր արված, աստառը՝ պատռված: Գրապահարանի գրքերը թափված էին



գետնին: Գոլսուորդիի հատորներից մեկը բացվել էր առաջին էջի վրա, և մեծ անգլիացին իր լուսանկարից զարմացած նայում էր շուրջը:

Գրասեղանին, էլեկտրական լամպը գրկած, նստել էր ձեռնոցների վաճառականը: Լուռ էր, և ուրիշ մեկին կթվար, թե հայացքում կարեկցանք կար: Գուցե դա այդպես էր՝ հաղթողի կարեկցանքը պարտվողի նկատմամբ: Եթե խոսեր, պետք է ասեր՝ դու թքեցիր ինձ վրա, մեր ձեռնոցների վրա, բայց ես փրկեցի քո լամպը:

Բայց նա չէր փրկել ավելի կարևոր բաներ: Գրասեղանի գզրոցը, ուր պահում էի փաստաթղթերը, արտասահմանյան անձնագիրս, վարորդական իրավունքս ու մեր կլոր կնիքը, դատարկ էր: Դատարկ էր, եթե չհաշվենք թութակով այն խելառ ծերուկի նվիրած «Փարքերը», որ մնացել էր այնտեղ՝ որպես ապացույց իմ բանաստեղծական անփութության:

Ես վերցրի այն ու այդ պահին ավելի հարմար բան չգտա, քան գրասեղանին ընկած գովազդային թերթի վրա մայրենի լեզվով մի հայհոյանք խզբզել:

Դրսում երեխաները պահմտոցի էին խաղում: Երկար, շեկ մազերով մի աղջնակ թաքնվել էր ուղիղ իմ լուսամուտի դիմացի սոճու ետևում:

Ես վաղուց արդեն հենված էի բաց պատուհանի գոգին ու ինքս էլ չգիտեի, թե ինչի եմ սպասում: Կատարվածի մասին մտածել անգամ չէի ուզում: Նույնիսկ զայրացած էլ չէի: Կրկին այն զգացումն ունեի, որ դպրոցական եմ ու տուն եմ մտել՝ դասերից փախած: Միայն թե հիմա վստահ էի, որ բռնվել եմ:

Թաքնվածներին փնտրող տղան զգուշորեն մոտենում էր սո-

ճուն: Երկար մազերով աղջնակը ցրվեց ու մեջքով ամուր հենվեց ծառի բնին: Ապա, նկատելով ինձ, զգաստացավ ու մատը տարավ շուրթերին: Ես հայացքս հեռացրի, որ չմատնեմ նրա տեղը: Փնտրող տղան ուրիշին գտավ ու հեռացավ սոճուց:
Աղջնակը ժպտաց ինձ: Նրա խոշոր, կանաչ աչքերը շողշողում էին ուրախությունից: Ես ուզում էի հաճելի մի բան ասել նրան, բայց այդ պահին զանգեց հեռախոսը: Այն դրված էր զրասենյակի պատուհանի մոտ:
Վերցրի լսափողը ու անմիջապես ճանաչեցի Վադիմի խռպոտ ձայնը:
-Դու տա՞նն ես:
-Ի՞նչ կա զարմանալու:
-Զարմանալու շատ բան կա: Դու մեզ խաբեցիր, ձկնո՛րս:
Նա ապարդյուն սպասեց պատասխանի, ապա հարցրեց.
-Դե ինչ, գուցե հանդիպե՞նք, խոսե՞նք:
-Խոսելու բան միշտ էլ կգտնվի:
Պարզ զգացվում էր, որ գծի հակառակ ծայրում իմ զրուցակիցը մենակ չէր: Կողքից ուրիշ ձայներ էին լսվում: Հավանաբար ինչ-որ բան էին քննարկում:
-Կարճ ասած՝ լավ կանես՝ փողը վերցնես հետդ,- վերջապես խոսեց Վադիմը:- Դարձել է քսանհինգ միլիոն՝ ուշացնելու եւ մեզ խաբելու համար:
Սոճու հետեւում թաքնված աղջնակն ուշադիր նայում էր ինձ: Ես փորձեցի ժպտալ նրան: Նա էլ ժպտաց ու անմիջապես փախցրեց հայացքը:
-Դե ի՞նչ,- նորից խոսեց Վադիմը,- մի ժամից կգաս «Ոսկե օղակ», մենք կլինենք բարում: Տեղը գիտե՞ս:
-Լավ,- ասացի,- գիտեմ: Եւ չմոռանաք վերցնել փաստաթղթերն ու կնիքը, որպեսզի մեկ անգամ էլ հանդիպելու կարիք չլինի:
-Դա արդեն լուրջ խոսակցություն է:



Ես կախեցի լսափողը եւ շտապեցի՝ ժպտալու աղջնակին, բայց նա արդեն այնտեղ չէր: Փնտրեցի նրան խաղացող երեխաների մեջ ու չգտա: Հետո ինձ համար սուրճ եփեցի ու, անշտապ խմելով, սկսեցի հաշվել փողերը: Մնացել էր մոտ քսաներեք միլիոն: Այս մի քանի օրվա ընթացքում չափազանց շատ էի ծախսել: Փորձեցի հիշել. դե իհարկե, ինքնաթիռի տոմսեր, շքեղ հյուրանոց, ռեստորաններ, ոսկյա շղթա... Ինչեւէ, մոտս մնացել էր ավելի քիչ, քան պահանջում էին: Չնայած գիտեի, որ եթե նրանք ստանեին կանխիկ փողը, ու ես էլ մի քիչ լեզու թափեի, կհամաձայնեին քսանին, գուցե եւ նույնիսկ տասնհինգին: Բայց մի՞թե ես պատրաստվում էի նրանց որեւէ բան տալ: Չնայած որոշակիորեն չգիտեի, թե ինչ եմ անելու, բայց մի բան գիտեի հաստատ. փող ոչ մի դեպքում չեմ տալու:
Համենայնդեպս, հավաքեցի իրերս ու դրամի հետ տեղավորեցի ճամպրուկում: Հետո գնացի կայարան ու ճամպրուկը հանձնեցի պահասենյակ: Իհարկե, կարող էի թողնել Վիկայի մոտ, բայց չէի ուզում, որ նա որեւէ բան կասկածի ու անհանգստանա:
Մտածում էի, որ եթե չկարողանամ ընդհանուր լեզու գտնել հետները, ծլկել միշտ էլ կարող եմ: Փաստաթղթերի վրա թքած, հայտարարություն կտամ, որ կորել են: Ես համոզված էի, որ Վադիմը Վիկայի մասին ոչինչ չգիտի, հակառակ դեպքում վաղուց արդեն ակնարկած կլիներ:
Կայարանի մոտից մի տաքսի վերցրի ու բացատրեցի «Ոսկե օղակի» տեղը: Դա մի կլոր, եռահարկ շինություն էր իմ վարձած տան մոտակայքում՝ ռեստորանով, բարերով, սաունայով, խաղասենյակներով: Այն, ըստ երեւույթին, եթե չէր էլ պատկանում, ապա ենթարկվում էր ինձ ծանոթ հանցագործ խմբին:

Վաղինն ինձ սպասում էր ոչ թե բարում, ինչպես պայմանավորվել էինք, այլ մուտքի մոտ: Երևի ուզում էր տեսնել՝ մենա՞կ եմ, թե՞ ոչ:

Ես մոտեցա նրան, և սպասեցի, որ առաջինը ինքը ձեռք մեկնի: Բայց Վաղինն ընդամենը գլխով ցույց տվեց մուտքն ու ասաց.

- Մտնենք ներս, այստեղ կանգնելու հարկ չկա:

Մենք անցանք բար, ու երկուսով նստեցինք մի ազատ սեղանի մոտ: Ընդայած սրահը մութ էր, և ծուխը ոչ ոք չէր երևում, ես համոզված էի, որ Վաղինը մենակ չէր:

Զզվելի էր այս ամենը: Ու ես էլ, քարսի պես, սկսել էի դողալ: Այդպես ինձ հետ հաճախ է պատահում: Անտրամալի սկսում եմ դողալ: Գիտեմ, որ բոլորովին չեմ վախենում, բայց, անկախ ինձանից, դողը մտնում է մարմինս ու ինձ հիմար դրության մեջ գցում: Գիտեմ, որ դա նյարդերից է: Իսկ նյարդայնությունը՝ անարդարությունից: Այսինքն՝ վճռը կամ կռիվը անարդար է ու անազնիվ, և դիմացս տղամարդկություն չկա: Այլապես զզվելի այդ դողը չի լինի:

Փաստորեն, այն պահին, երբ ես երջանկությունից նվաղում էի Վիկայի հետ, այս սրիկան մտել էր իմ բնակարանն ու պատկանողվա արել իրերս: Եվ այդքանից հետո ես ինքս եմ պարտավոր բացատրություն տալ, թե ինչ իրավունքով եմ երջանիկ եղել:

Վաղինը երևի սպասում էր, որ ես սկսեմ խոսակցությունը: Կամ դեռ ավելին՝ սպասում էր, որ հիմա իրեն եմ մեկնելու փողերի կապոցը:

- Լսում եմ,- չոր ասացի ես փոխարենը:

- Քո արածը լավ բան չէր,- մռնչաց Վաղինը,- ուզում էիր փախչել:

- Մի՞թե պարզ չէ, որ եթե ես ուզենայի փախչել, իրերս չէի բողնի տանը:



Նա ուսուղիր նայեց դեմքիս: Հաստատվից այդ պահից երևի խղճալ չէր մտածել դրա մասին:

- Կարճ ասած՝ փողը բերե՞լ ես,- կարճ կապեց նա՝ թերևս ուղեղը հարկ եղածից շատ չծանրաբեռնելու համար:

Ես չհասցրի որևէ բան ասել, որովհետև մոտեցավ մատուցողը և հարցրեց, թե ինչ ենք պատվիրելու:

- Գարեջո՛ւր բեր,- զայրացկոտ նետեց Վաղինը:

- Որևէ կարգին բան չկա՞նք,- ես փորձեցի ծեղել նրան:

- Անեն ինչ իր ժամանակին ուներ,- ասաց նա, հետո մի պահ մտածեց, ես կանչեց մատուցողին և ինձ հարցրեց, թե ինչ կխմեմ:

- Կոնյակ:

Նա ինձ համար կոնյակ պատվիրեց՝ թերևս հյուրասիրության կանոնները չխախտելու համար, իսկ ինքը բավարարվեց գարեջրով:

Մենք լռեցինք, մինչև մատուցողը բերեց խմիչքները: Ես մի մեծ կում արեցի բաժակից, հետո այն ցած դրեցի ու հարցրի.

- Ի՞նչ խնդիր ունեիր իմ տանն այդպես ավերելը:

Նա ոչինչ չպատասխանեց, նստել էր ու նայում էր առաստաղին: Ես հասկացա, որ սպասում է իր տված հարցի պատասխանին՝ փողը բերե՞լ եմ, թե՞ ոչ: Ու դեռևս կողքի խայլերի չի դիմում, որովհետև մտածում է, թե գուցե այնուամենայնիվ, առանց ավելորդ գլխացավանքի, հնարավոր է պահանջածը ստանալ: Ես նաև հասկացա, որ դրա հետ լեզու գտնել չի լինի ու մինչև իմ մտածածին անցնելը, որոշեցի փորձել մի վերջին միջոց ևս: Փորձել անձամբ հանդիպել այդ Տատանոց Գոշա կոչվածի հետ:

- Վաղի՛կ, ես չեմ փախել ու ոչ էլ միտք եմ ունեցել ձեզ խաբել: Ես գնացել էի Մոսկվա, որտեղ տեսնեմ իմ մի ծանոթին, բայց նրան բռնել են, նա իր պորտֆելներն ունի և առայժմ չի կարող մարդ ուղարկել ձեր Գոշայի մոտ: Դրա հա-

մար ես ինքս պետք է հանդիպեմ Գոշայի հետ ու խոսեմ իմ այդ ծանոթի անունից: Բանն այն է, որ եթե հիմա ես ձեզ փող տամ, զուցե մի շատ հարգարժան մարդու նեղացնենք, հասկանո՞ւմ ես, և, բացի այդ, եթե Գոշան իմանա, թե ով է իմ ծանոթը, նա ինքը ինձանից ոչինչ չի ուզի:

Վաղիմը նույն կասկածամիտ հայացքով նայում էր ինձ: Այժմ արդեն նա ստիպված էր ծանրաբեռնել ուղեղիկը: Եվ նա տեղի տվեց՝ եզրակացնելով, որ իմ ասածի մեջ ճշմարտություն կա: Իրականում, նա ընդամենը վախեցավ, որ իմ ասածի մեջ կարո՛ղ է ճշմարտություն լինել, ու ինձանից փող վերցնելու դեպքում Գոշան իրեն կպատժի: Այլ կերպ ասած՝ խուսափեց պատասխանատվությունից և, գրպանից հանելով հեռախոսը, զանգահարեց Գոշային:

- Լավ, նա այստեղ է,- մրթմրթաց նա՝ խոսակցությունը վերջացնելով,- բարձրանանք մոտը: Քո տուն ես չեմ մտել, մեր տղերքն են մտել: Նրանք վայրենի են: Կարճ ասած՝ դա կարևոր չէ:

Վաղիմը վեր կացավ և, առանց ինձ սպասելու, քայլեց դեպի ելքը: Ես հետևեցի նրան և տեսա, թե ինչպես տեղներից վեր կացան երկու ուրիշ հաստավզեր:

Բարձրացանք երկրորդ հարկ ու մտանք ռեստորան: Ապա քայլեցինք մինչև հսկա սրահի վերջը և երկար մի միջանցքով գնացինք ու կանգնեցինք կաշեպատ մի դռան առջև: Վաղիմն ինձ հասկացրեց, որ սպասեմ ու մտավ ներս:

Ես մտածեցի, թե ինչ տարիքի կլինի այդ Գոշա կոչվածը: Այս պարագայում ինձ համար ավելի գերադասելի էր գործ ունենալ տարիքով մարդու հետ: Նրան խաբելը դժվար կլիներ, բայց կարելի էր ինչ-որ բան հասկացնել:

Կաշեպատ դուռը կիսաբաց եղավ, և ես լսեցի, թե ինչպես կակազելով մեկն ասաց.

- Դե լավ, Գո՛շա, ուրեմն պայմանավորվեցինք:



Ես չհավատացի լսածիս:

Հետո դուռը լայն բացվեց, և միջանցքի կիսախավարում ես տեսա ինձ ծանոթ սպիապատ դեմքը: Ավելի ճիշտ՝ դիմակը: Կոսյայի դիմակը...

Նա մի պահ կանգնեց և զարմացած նայեց ինձ: Ես վախեցա, որ հանկարծ չհիշի՝ և մեքենաբար ժպտացի: Կոսյան մի անհասկանալի ձայն հանեց, սեղմեց ձեռքս ու, չգիտեմ ինչու, փաթաթվեց: Ես թեթևացած շունչ քաշեցի ու նրա ուսի վրայից տեսա, թե ինչպես Վաղիմի աչքերը թռան ճակատին, և այդ պահին անմիջապես հասկացա, որ իմ բոլոր պրոբլեմները լուծված են, որ ինձ այլևս ոչ ոք չի անհանգստացնի:

- Դու ի՞նչ ես անում այստեղ,- հարցրեց Կոսյան:- Սպասի՛ր, չլինի՞ քիչ առաջ քո մասին էին խոսում:

Նա նայեց Վաղիմին, վերջինս գլխով արեց: Կոսյան ձեռքը դրեց ուսիս և ինձ հրեց դեպի առանձնասենյակի բաց դուռը, և ես վերջապես տեսա այդ Գոշա կոչվածին: Դռան մոտ կանգնած էր ճերմակ, թանկարժեք կոստյումով կենդանակերպ մեկը՝ հավանաբար նախկին ծանրորդ կամ ըմբշամարտիկ, ճմռթված, լայն դեմքին զարմանքի, թե տարակուսանքի պես մի բան:

Կոսյան դիմեց նրան.

- Սա ինձ մոտիկ մարդ է, Գո՛շա, դու ի՞նչ հարց ունես հետը:

- Ես ի՞նչ իմանայի, որ քո մոտիկն է, հո ճակատին չի գրած,- Գոշան, առանց վրաս նայելու, ձեռքը մեկնեց ինձ,- այստեղ գործ էր անում, «Արդշին»-ի հետ... Բայց հիմա արդեն խնդիր չկա:

- Ուրեմն նա իմ տարածքում գործ է անում,- կակազեց Կոսյան,- ես չգիտեմ, դու գիտես: Հետաքրքիր է ստացվում:

- Սա քո տարածքը չէ, Կոսյա:

Ես զգացի, թե ինչպես Կոսյան ցնցվեց ամբողջ մարմնով, և ինչպես կարմրատակեց դեմքի սպին: Բայց Գոշան կանխեց վեճը:

- Հանգստացի՛ր, Կոսյա՛, ես քեզ վիրավորող բան չասացի: Պարզապես ասում եմ, որ ես էլ այստեղ կարկանդակ չեմ ծախում:

- Երևում է, քո լակոտների ականջները մի անգամ էլ պետք է քաշել տամ, նրանց շնորհիվ է, որ դու այդքան վստահ ես քո վրա,- կատաղությունից հազիվ կարողացավ արտաբերել Կոսյան՝ ավելի կակազելով:

- Իմ տղաները քեզ համար էլ են շատ բան արել, Կո՛սյա, արի՛ վերջացնենք, դու զուր ես տաքանում:

Կոսյայի դեմքի արտահայտությունը մի քիչ մեղմացավ, և նա, ինձ ցույց տալով, ասաց.

- Իմ մոտիկին...

- Քո մոտիկին այլևս ոչ ոք չի նեղացնի,- ընդհատեց նրան Գոշան,- եղածը եղել է, մենք ի՞նչ իմանայինք:

Հետո դիմեց Վաղիկին.

- Ինչ-որ փաստաթուղթ, բան էիք վերցրել...

- Տղերքի մոտ է,- կմկմաց Վաղիկը,- ես կվերցնեմ, կտամ:

- Հիմա՛,- զոռաց Գոշան՝ այլևս չկարողանալով թաքցնել զայրույթը:

Երբ դուրս եկանք շենքից, Կոսյան ինձ հարցրեց, թե ուր եմ գնում և ասաց, որ ինքն ինձ կտանի: Նա գլխով ցույց տվեց պատի տակ կանգնած մեքենան: Բոլորովին նոր, սպիտակ «Լեքսուս» էր, որը, չգիտեմ ինչու, մի պահ թվաց, թե իմն է:

- Դու փոխե՞լ ես մեքենադ,- հարցրի:



- Փոխե՞լ, ինչո՞ւ պետք է փոխեի:

- Այն ժամանակ ուրիշն էր:

Կոսյան ծիծաղեց.

- Հիմա էլ՝ ուրիշը:

Երբ շքեղ մեքենան սկսեց սլանալ կենտրոն տանող խճուղով, կրկին այն տպավորությունն ունեի, թե այն իմն է: Նույնիսկ ինձ թվում էր, թե ինքս եմ ղեկին:

Այդպես լինում է, երբ կողքիդ շատ ամուր ու շատ ապահոված մարդ է, որը քո նկատմամբ հարգանք է տածում: Նման դեպքերում թվում է, թե ինքդ էլ ես այդպիսին, և այն ամենը, ինչ նա ունի, այդ պահին քոնն էլ է: Բաժանվելուց հետո տպավորությունը մի քիչ մեղմանում է, և ընդամենը սկսում ես մտածել, որ անպայմանորեն շուտով ինքդ էլ կհասնես դրան: Իրականության հետ բախվում ես քիչ ավելի ուշ:

- Դու ինչո՞վ ես հիմա զբաղվում,- հարցրեց Կոսյան՝ անտեղյակ իմ մտքերին,- այդ գործարան-մործարաններից բացի:

- Միայն դրանով:

- Սուտ բաներ են, ի՞նչ կասես մի կարգին գործի մասին:

- Դու արդեն ինձ համար շատ բան ես արել, Կոսյա:

- Շատ բա՞ն,- նա ծիծաղեց,- դա մանրուք է: Դու քեզ կարող ես բոլորովին էլ պարտավորված չզգալ, որովհետև ինքդ էլ ես ինձ լավություն արել: Եվ բացի այդ, ինձ բան էր պետք Գոշայի դեմ: Նրան վերացնելու եմ այս խաղից կամ՝ ընդհանրապես: Այդ մասին մոռացի՛ր: Գոշան լակոտ է: Մի քանի տարի առաջ նա սիգարետ էր վաճառում:

Կոսյան նայեց ինձ, բայց ես ոչինչ չասացի: Ճիշտն ասած, չհասկացա, թե սիգարետ վաճառելն ինչ կապ ուներ:

- Մեկը կա,- շարունակեց նա,- ուզում է «Հաղթանակի» փողոցի վրա շինանյութի մեծածախ խանութ բացել. լավ գործ է, եկել էր մոտս: Ամեն ինչ ինքն է դնում, միայն տանիք է ուզում: Ասացի, որ իմ մարդը պետք է լինի հետը: Արի՛, դու արա այդ գործը:

Դե ինչ, ամեն դեպքում, սեփական «Լեքսուսն» ավելի ռեալ էր, քան ես պատկերացնում էի: Իսկ ի՞նչ կասեր ձեռնոցների վաճառականը: Բայց պետք էր մերժելու ճիգս ձեւ գտնել: Ես փորձեցի արագ կողմնորոշվել, բայց Կոստյան շարունակեց:

- Թող բացի խանութը, սկզբում մի քիչ միասին կաշխատենք, հետո նրան ուր որ պետք է կուղարկենք: Ի՞նչ կասես:

Ես մի սիգարետ վառեցի:

- Կո՛ստյա, ես այդ կարգի գործերից գլուխ չեմ հանում եւ հետո էլ, չեմ ուզում երկար մնալ այս քաղաքում:

Նա ինձ նայեց զարմացած:

- Մի՛ շտապիր պատասխանել, մտածի՛ր՝ նոր:

- Լավ, կմտածեմ,- ասացի ես, չնայած վստահ էի, որ մտածելու բան չունեմ:

Հետո հարցրի Կոստյային, թե ինչպես կարող եմ նրան օգտակար լինել:

- Մտքիցդ հանի՛ր դա: Դու գիտե՞ս՝ ինձ ինչպես գտնել հարկ եղած ժամանակ:

Ես գլխով արի, չնայած բոլորովին էլ չգիտեի: Պարզապես չէի ուզում այլեւս գործ ունենալ նրա հետ: Նույնիսկ չէի ուզում, որ նա ինձ նորից օգնի: Որովհետեւ չէի գտնելու փոխհատուցելու ձեւը:

Բայց Կոստյան տեղի չտվեց: Նա գրպանից հանեց ծոցատետրը, մեկնեց ինձ եւ պահանջեց, որ իմ անվան սկզբնատառի տակ գրեմ հեռախոսիս համարը: Ես ենթարկվեցի:

Երբ նրան էի վերադարձնում ծոցատետրը, մի մեքենա կտրուկ արգելակեց առջեւում, եւ «Լեքսուսը» հազիվ խուսափեց նրա հետ բախվելուց: Կոստյան գլուխը հանեց պատուհանից ու սկսեց կակազելով հայհոյել: Դիմացի մեքենայի վարորդն էլ հանեց գլուխը եւ այն է, ուզում էր պատասխանել, երբ բառերը սառեցին շրթունքներին: Նրան սարսափեցրեց Կոստյայի ոչ մարդկային դեմքը:





Մայիսյան սաֆ երեկոն վերջապես լուսավորել ու աշխուժացրել էր մեր զբոսայգին ու թվում էր, թե այստեղ էր բերել քաղաքի բոլոր զույգերին:

Սոճիների դուրակում՝ «Սասանայի օդակի» սակ, բաց արձարանում նստած՝ ես զարմանքով նայում էի թևանցուկ քայլող ծեր զույգին: Նրանք արդեն երրորդ դտույտն էին անում արձարանի շուրջը::

Վիկան հիմա գնում էր ֆրանսերենի դասերի, և ես ամեն երեկո նրան տանում էի մասնավոր դարադողի տուն՝ զբոսայգու կողքին ու մինչև դարադմունքի վերջանալը՝ ամբողջ երկու ժամ անցկացնում այստեղ:

Արդեն հռաշալի զիստեի կարուսելների տեղերը, զները, բոլոր թիկնակավոր նստարանները, բոլոր ծառուղիները, կրդակները, արձարանները: Անգամ գիտեի՝ թե որ արձարանում ինչ են տալիս օրվա այդ ժամին, որն է ամենամարդաշատ ու ամենախաղաղ ծառուղին: Արդեն դեմքով ճանաչում էի թափառող երաժիշտներին, կարկանդակ, խմորեղեն, բուտերբրոդներ վաճառող կանանց, բախտ զուշակող գնչուներին, էժանագին մարմնավաճառներին, որոնք իրենց գործն անում էին այգու խորքում՝ ծառերի սակ:

Կյանքից այդպես էլ նշանակալից ոչինչ չստացած այդ մարդիկ իրենց մի կտոր հացը վաստակելու համար իրենց բախտը փորձում էին ամենուրեք:

Իսկ մյուսները, որոնք դուրս էին եկել երեկոյան զբոսանքի ու զվարճանալու, դեռ է իրենց ուզածի պես ծախսեին արդեն վաստակածը: Նրանք անցնում էին կարուսելների, արձարանների, քաղցրավենիքներով ծանրաբեռնված սեղանների ու զանազան ատրակցիոնների մոտով և մտածում, թե այդ բոլոր հաճույքներից ո՞րն է ընտրել:

Փոքր երեխաները, յուրաքանչյուր նոր բան տեսնելիս, կանգնում էին, մի լավ ուսումնասիրում ու հետո մտրուկների

նման վազում իրենց մայրերի հետևից:

Ծերերը քայլում ու բարձրաձայն մտածում էին, թե ինչ զարմանալիորեն արագ է թռչում ժամանակը, իրենց երբևէ տրված երջանկության պես...

Համենայնդեպս, ես էլ նայեցի ժամացույցիս. տասը րոպեից ավարտվում էր Վիկայի պարապմունքը: Մենք պետք է գնայինք դասական երաժշտության համերգի:

Համերգի տոմսերը Վիկան էր գնել՝ վստահ, նկատի ունենալով իմ առանձնահատուկ վերաբերմունքը դասական երաժշտության հանդեպ: Մենք նստած էինք լեփ-լեցուն դահլիճի առջևի կարգերից մեկում:

Բոլոր դեմքերում, ճիշտը նրանք են, ովքեր պարբերաբար համերգների են գնում: Ավելի ճիշտ, նրանք, ովքեր լսում, հասկանում ու գնահատում են դասական երաժշտությունը:

Ի՞նչ է երաժշտությունը: Կղզի, եթե փախչելու, առանձնանալու տեղ ես փնտրում: Անդրադարձ, արձագանք, երբ շրթունքները շրթունքներ են փնտրում: Անդրադարձ, արձագանք՝ մեր նախորդ և հաջորդ կյանքերի: Մենք լսում ենք հնչյուններ ո՞ր աշխարհից: Գուցե պարզապես մեր սրտերի բաբախյո՞ւնն ենք լսում: Բայց ես նաև տեսնում եմ իմ սայթաքումը և այնքան իրական, որ կողոսկրիս ցավից քիչ է մնում ճչամ: Եթե ինձ չպիտի ների լեփ-լեցուն այս դահլիճը, ապա ես առհասարակ ոչինչ չեմ հասկանում երաժշտությունից, դասակա՞ն թե՞ ժամանակակից: Ինչպիսի հիմարություն, եթե կա նույնիսկ մի ականջ, մի աչք, մի շշափուկ... Մի՞թե նույնը չէ նաև գեղանկարչության կամ պոեզիայի հարցում:

Չգիտեմ ու հիմա էլ, այս լեփ-լեցուն դահլիճում նստած,



ավելի հարմար զբաղմունք չգտա, քան՝ հաշվել հանդիսատեսներին: Դա դժվար չէ:

Ստացվեց մոտ հազար հինգ հարյուր մարդ: Ես արձակեցի վերնաշապիկիս կոճակը: Տեսնես՝ նրանցից քանի՞սն են եկել իսկապես երաժշտություն լսելու:

Այնուհետև սկսեցի հաշվել նվագողներին, ապա՝ թե որ գործիքից քանի հատ կա, մինչև որ վերջապես ընդմիջում հայտարարեցին:

Մեր կողքին նստած էր շագանակագույն մազերով, չափազանց զուգված մի տարեց կին, որը հավանաբար ամուսնուն թողել էր գերեզմանոցում ու մոռացել:

- Դուք ներկա՞ էիք Իսակովի նախորդ շաբաթվա համերգին,- հարցրեց նա ինձ ընդմիջմանը:

- Իսկ դա ո՞ր օրն էր:

- Հենց շաբաթ օրը:

- Ոչ,- ասացի,- այդ օրը, հակառակի պես, զբաղված էի կարևոր գործով:

- Այսի՞նքն,- զարմացավ նա,- մի՞թե դրանից ավելի կարևոր գործ կա:

- Իհարկե կա, տիկին: Ես գարեջուր էի հո՛ւպ տալիս խեցգետնով: Իսկական Ժիգուլևյան գարեջուր: Դուք գարեջուր սիրո՞ւմ եք...

Վիկան սեղմեց ոտքս: Տիկնոջ դեմքից անմիջապես չքվեց ժպիտը, և նա ցուցադրաբար շրջեց դեմքը:

Հետո մենք դուրս եկանք ճեմասրահ:

- Դե ինչ, դու բավարարեցի՞ր քո հոգեկան պահանջները,- հարցրի Վիկային:

- Կիսով չափ միայն, դեռ համերգը չի ավարտվել: Իսկ դու դահլիճում նստածներից քանիսի դեմքը մտապահեցիր: Դու պարահանդես կամ առնվազն ձիարշավարան եկած մարդու տպավորություն էիր թողնում: Եթե ձանձրալի է, մենք

կարող ենք գնալ:
Ես ծիծաղեցի:
- Իսկ դու չե՞ս նեղանա:
- Իսկ ես չեմ նեղանա:

Իմ գործը, եթե կարելի է դա գործ անվանել, գրեթե ամբողջությամբ կանգնած էր: Կոսը պարբերաբար զանգում էր եւ հարցնում, թե նոր առաջարկություններ չկա՞ն արդյոք, եւ ես պարբերաբար բացասական պատասխան էի տալիս: Ես նրան պատմել էի Կոսյայի հետ պատահաբար հանդիպման մասին, եւ նա մի տեսակ թերահավատորեն էր դա ընդունել, թեեւ անկեղծորեն ուրախացավ, որ դրամաշորթների հետ խնդիրը լուծվել է՝ միաժամանակ զգուշացնելով, որ հույս դրա վրա չդնեմ:

Այդ մտավախությունը ես առանձնապես չէի կարեւորում, բայց գործի մասին, անշուշտ մտածում էի: Ամեն օր առավոտյան ժամը ութից մինչեւ ճաշի ժամը, որովհետեւ միայն այդ ընթացքում կարելի էր բռնացնել ղեկավար աշխատողներին, գնում էի մի գործարանից մյուսը եւ փորձում լեզու գտնել նրանց հետ: Մի քանիսը ինձ ինչ-որ բաներ խոստացել էին, միայն թե անընդհատ հետաձգում էին:

Կեսօրից մինչեւ երեկո ընկած ժամանակը ես սպանում էի տանը՝ թերթ կարդալով եւ անհամբեր սպասում ժամը յոթին՝ Վիկայի պարապմունքի ավարտին:

Կոսի վերջին այցելությունն այնքան էլ չուրախացրեց նրան: Ոստիկաններն այստեղ երեք ամսով զրկեցին նրան վարելու իրավունքից: Կոսն ինձ հանձնեց մեքենայի բանալիները եւ հայհոյելով նստեց ավտոբուս: Ես, իհարկե, շնորհակալ էի ոստիկաններից, չնայած ամեն անգամ, երբ կանգ-



նեցնում էին, ստիպված էի կաշառք տալ՝ հավասարմագիր չունենալու համար: Բայց փոխարենը, հիմա մենք կարող էինք Վիկայի հետ գնալ քաղաքից դուրս եւ երեկոն անցկացնել գետի ափին:

Կարող էինք լողալ, թեպետ ջուրը դեռեւս սառն էր, կարող էինք խարույկ վառել, սունկ խորովել, կարող էինք բացել կոնյակի շիշն ու միացնել մեքենայի նվագարկիչը, կարող էինք պարզապես վայելել գետի երգն ու անտառի բուրմունքը:

Ռեստորանի երգչուհին հոգնած ձայնով երգում էր ռուսական մի ռոմանս, իսկ Վիտալի Մախինովիչը՝ նույնքան հոգնած, լսում էր նրան:

Մենք որոշել էինք իմ հարեւանին ու նրա տիկնոջը հրավիրել ռեստորան՝ միասին մի երեկո անցկացնելու: Տիկինը, իմ առաջարկը լսելով, չափազանց ուրախացել էր, մինչդեռ ծերուկը փնթփնթում էր, որ իզուր տեղը փողերս քամուն պիտի տամ: Հիմա նա մի հին, բայց լավ պահպանված կոստյում էր հագել՝ կրծքին ժուռնալիստների միության կրծքանշանով: Իսկ տիկինն ուղղակի գեղազարդվել էր իրենց իրեն:

Ես միայն շամպայն էի պատվիրել: Վիտալի Մախինովիչին ինֆարկտից հետո թունդ խմիչքներն արգելել էին: Բայց ծերուկն առանց խմելու էլ ուրախ էր: Նա անընդհատ պատմություններ էր պատմում՝ հայացքը Վիկային ուղղած եւ առիթը բաց չէր թողնում նրան հաճոյախոսություններ անելու:

Մենք դուրս եկանք ուշ երեկոյան: Ես նախ ճանապարհեցի Վիկային, առա տուն ուղեկցեցի հարեւաններիս:

Հետո մեքենան տարա ավտոկանգառ ու քայլելով վերադարձա տուն:

Բացեցի ծոցատետրս ու թերթեցի գործնական նշումների է-

ջերը: Մի քանի ոչ շահավետ առաջարկներ՝ կապված ապրանքափոխանակության հետ, մի քանի անորոշ խոստումներ... Մի կողմ դրեցի ծոցատետրս ու միացրի հեռուստացույցը: Քնելու ցանկություն չունեի, սովորել էի ուշ պառկել: Ոչ մի հետաքրքիր հաղորդում... Անցա ռադիոընդունիչին եւ միանգամից գտա Բեննոնին: Բայց հանկարծ զանգեց հեռախոսը: Ես վերցրի լսափողը: Անծանոթ կանացի մի ձայն տվեց անունս ու հարցրեց ողջությանս մասին:

- Լավ եմ,- ասացի ես ու մտածեցի, թե ով կարող է լինել: Ո՞ւմ էի ես ճանաչում այստեղ, Վիկայից բացի: Միայն տանտիրուհու ու Վիտալի Մաքսիմովիչի տիկնոջը: Բայց ձայնը վստահաբար նրանցից որեւէ մեկինը չէր:

- Իսկ ո՞վ է խոսում,- չդիմացա ես:

- Իսկ դու փորձի՛ր կռահել:

- Բրունեյի սուլթանի գլխավոր տիկինը, որին անհնազանդության համար վռնդել են հարեմից:

- Նմանություն կա, բայց ճիշտ չէ,- ասաց նա,- ես քեզ հուշող բան կասեմ. մենք միայն մի անգամ ենք հանդիպել:

- Այդ դեպքում ես հիասթափված եմ, ինձ զանգում են միայն Բրունեյի սուլթանի նախկին կանայք:

Ես կախեցի լսափողը՝ ենթադրելով, որ շենքի կանանցից կամ աղջիկներից մեկն է: Բայց հեռախոսը կրկին զանգեց:

- Կներես, որ քեզ ձանձրացրի, ես Կոստյայի ծոցատետրում գտա քո համարը եւ որոշեցի զանգահարել: Ես Էլյան եմ, դու հիշեցի՞ր ինձ:

Հիշեցի: Ճապոնուհու աչքերով այն գեղեցկուհին, որին Կոստյան ծեծեց բարում: Ես շատ էլ չէի սխալվել. սուլթանի անհնազանդ կինը: Բայց ի՞նչ էր նա ուզում ինձանից:



Թերեւս, կրկին բացատրության կարիք է առաջանում՝ չնայած հիմա էլ դա ինձ համար հաճելի չէ, ու ոչինչ էլ չի փոխվել:

Ինչեւէ: Գոհարները, որ բերել էի հյուսիսային գեղեցկուհիների համար, վաղուց արդեն սպառվել են: Ու թեեւ ես ինձ համար հիմնավորապես ընտրեցի բանաստեղծի կեղեւը՝ դրանով իսկ ձեռք բերելով մի երդվյալ թշնամի՝ հանձին ձեռնոցների վաճառականի, գոհարների կարիքն այդպես էլ չզգացվեց: Ուրեմն ինչպե՞ս դրանք սպառվեցին:

Բայց մի՞թե պարզ չէ. ավելին՝ մի՞թե հարցը պատասխան ունի:

Ինչպես պատասխան չունի հաջորդ տրամաբանական հարցը. իսկ ի՞նչ է ուզում ինձանից այս գեղեցկուհին գիշերվա կեսին եւ ինչո՞ւ է այսպես համառորեն համոզում հանդիպել:

Ես բարդույթներ չունեմ եւ երբեք ինձ վատ չեմ զգացել այն բանից, որ իմ արտաքինի մեջ առանձնահատուկ ոչինչ չկա: Թերեւս, մի գորտնուկ՝ ձախ ունքիս տակ: Սակայն դա էլ, եթե առանձնահատկություն համարենք, այնքան փոքր է ու աննշան, որ հազիվ թե հմայեր Էլյային:

Նա ասում է, որ խոսելու բան կա, բայց ես չեմ հավատում: Այսինքն՝ գուցե եւ կա խոսելու բան, բայց գիշերային այս հեռախոսազանգի պատճառը դա չէ:

Անկեղծ ասած, ես երբեք չեմ խուսափել արկածներից: Նույնիսկ հաճախ ինքս եմ հորինել դրանք: Բայց հիմա՝ ոչ մի ցանկություն, անտարբեր եմ այնքան, որ քիչ է մնում ինքս ինձ չհավատամ: Իսկ գուցե մեծացե՞լ եմ, էլ նախկինը չե՞մ:

Մենք պայմանավորվեցինք հանդիպել քաղաքի կենտրոնում՝ մի կինոթատրոնի մոտ, և ստիպված նորից հանեցի մեքենան ավտոկանգառից:

Ես շատ բան չգիտեմ կանանց մասին: Բայց ինձ թույլ եմ տալիս մտածել, որ մենք նրանց պարտամուրհակներն ենք մարում մեր ողջ կյանքում: Նույնիսկ ինձ թույլ եմ տալիս համոզված լինել: Եթե ուրիշների օրինակը մեզ միայն մխիթարում է, որովհետև անհնարին է այդ ուրիշների չափ գերի լինել կրքերի, իսկ մերը, ինչ խոսք, թեթև հրապուրանք է, գրեթե ոչնչի չպարտավորեցնող ժամանց, այնպես որ, միշտ էլ կարելի է հետ վազել տուն, ապա՝ ո՞ւմ համար, ո՞ւմ ինչ ենք ապացուցում: Որ ոչ ոքի պարտք չե՞նք: Միայն այդքա՞նը: Եւ կաթկթող անձրևը... Մեքենայի դիմապակու մաքրիչները չեն գործում: Կարմիր լույսի տակ կարմիր շորի մի կտորով մաքրում եմ անձրևի կարմիր կաթիլները... Թվում է՝ այլևս չի մարելու այդ կարմիրը: Հիշում եմ միջադեպը բարում: Ո՞վ էր այն տղան, որին դաժանորեն ծեծեց Կոսյան: Կամ էլ կարմիր լույսի տակ արյան կաթիլը: Հավանաբար, Էլյայի հետ պառկած դիակ:

Իսկ ո՞վ էր Կոսյան: Ես վստահ էի, որ նրանք ամուսիններ չէին: Կոսյան իսկական տղամարդ էր, և միամտություն կլիներ մտածելը, թե նա Էլյայի պես կին կպահեր: Էլյայի պես սիրուհի՝ գո՛ւցե: Բայց Կոսյան նաև հեղինակություն էր հանցագործ աշխարհում, ում համար կինն ու սիրուհին շատ էլ չեն տարբերվում՝ պարտավորությունների իմաստով: Դավաճանությունը այստեղ կարող է հանգեցնել նույնիսկ մարդասպանության:

Կինոթատրոնում վերջին սեանսը վաղուց արդեն վերջացել էր, և վառվում էին միայն աֆիշների լույսերը: Ես կանգնեցրի մեքենան մայթի մոտ ու անձրևի կաթիլների միջից կարդացի ֆիլմի՝ ինձ անծանոթ վերնագիրը: Հետո սկսեցի



մտածել, թե ինչու համաձայնեցի հանդիպել ու չկարողացա գտնել ճիշտ բացատրությունը:

Էլյան եկավ քսան րոպե ուշացումով: Ձեռքին մեծ, գունավոր անձրևանոց էր, իսկ հագին կարճ, երկնագույն շրջազգեստ ու դեղին թավշե բաճկոն:

Մտանք սրճարան, ու ես նրա համար կոկտեյլ պատվիրեցի: Ինքս չէի ուզում խմել, որ ավելորդ բարեհոգություն չցուցաբերեմ:

- Դու ռուս չես, այնպես չէ՞, դատելով անունիցդ,- հարցրեց Էլյան:

- Ոչ,- ասացի,- դու նույնպես՝ դատելով աչքերից:

Նա ծիծաղեց.

- Ես թաթարուհի եմ: Հրաշալի է, չէ՞, ռուս չլինելը:

- Ինչո՞ւ է հրաշալի:

- Ուզում էի ասել գայթակղիչ:

- Դուք հաշտվե՞լ եք Կոսյայի հետ,- հարցրի:

- Կո՞սյայի, նա շատ խանդոտ է: Բայց դա կարևոր չէ: Դու ինչո՞ւ չես խմում:

- Ես ղեկի վրա եմ:

Նա խորամանկորեն ժպտաց.

- Դա պատճառ չէ:

Հետո տեսավ իմ զարմացած հայացքն ու շարունակեց.

- Որովհետև քո տիպի մարդիկ այդպիսի բաներին ուշադրություն չեն դարձնում:

- Ես սովորական մարդ եմ, Էլյա՛, բայց դու, կարծեմ, ավելի կարևոր բան ունեիր ասելու:

Նա ոչինչ չասաց: Ծխախոտ վառեց և սկսեց կում անել կոկտեյլի բաժակից: Միառժամանակ լռություն տիրեց, ու ես զգացի, որ հազիվ եմ ինձ զսպում՝ նրան չնայել: Հիմար վիճակ էր: Գիտեի, որ ինձ խաբում էր կամ արդեն խաբել էր, ինչպես մանչուկին են խաբում՝ երկու քաղցր խոսքով կամ

պատվախնդրության մղելով:

Ինչևէ, հիմա ուզում էի հնարավորին չափ շուտ ավարտել այս հանդիպումն ու տուն գնալ:

Բայց հանկարծ նկատեցի, որ նա լաց է լինում: Մի պահ չհավատացի տեսածիս, բայց նրա աչքերից իսկապես արցունքներ էին հոսում: Բռնեցի ձեռքն ու փորձեցի հանգստացնել: Դա երկար տևեց:

- Ես այլևս այսպես չեմ կարող,- վերջապես արցունքների միջից խոսեց նա,- այլևս չգիտեմ՝ ինչ անել, այդ անասունն ինձ հանգիստ չի թողնում, չի թողնում՝ շնչեմ: Ամեն օր ինձ ծեծում է, սպառնում է, թե կսպանի: Ամբողջ մարմնիս կապտուկներ են: Ես ինձ մարդ չեմ զգում: Ես ոչ ոք չունեմ: Ես նրա սեփականությունն եմ:

Էլյան գնալով ավելի էր հուզվում ու՝ բարձրացնում ձայնը: Բառերը հազիվ էին հասկացվում հեկեկոցների միջից:

- Ես նրան ատում եմ: Ես ոչ մի իրավունք չունեմ: Նրան թվում է, թե ես ստրուկ եմ: Չեմ ուզում այլևս նրան տեսնել: Չեմ ուզում անունը լսել: Ես վախենում եմ, հասկանո՞ւմ ես, վախենում եմ: Նա ամեն ինչի ընդունակ է:

Ես ավելի ամուր սեղմեցի Էլյայի ձեռքը և գրպանիցս հանեցի թաշկինակը: Չգիտեի՝ ինչպես նրան հանգստացնել: Կանչեցի մատուցողին ու երկու կրկնակի կոնյակ պատվիրեցի: Հետո աթոռս մոտեցրի նրան ու ասացի.

- Դու լաց ես լինում, և ես ոչինչ չեմ հասկանում: Փորձի՛ր հանգստանալ, Էլյա՛, և ինձ համար ավելի հեշտ կլինի քեզ օգնել:

Նա պայուսակից հանեց թաշկինակը, իսկ իմը վերադարձրեց ինձ:

- Ես հոգնել եմ: Ինձ ոչ ոք չի կարող օգնել: Ինչպե՞ս կարող ես դու ինձ օգնել:

Ես ոչինչ չասացի, թեպետ պետք է հարցնեի, թե այդ դեպ-



քում ի՞նչ է նա ինձանից ուզում:

Մատուցողը բերեց կոնյակը, դրեց սեղանին ու մի պահ հապաղեց հեռանալ՝ լացակումած աղջկան նայելով:

- Ի՞նչ ես կանգնել,- գոռաց Էլյան:

Մատուցողը վախեցած շրջվեց ու գնաց: Էլյան դարձավ ինձ.

- Ես արդեն հանգիստ եմ, արդեն լաց չեմ լինում:

- Դե լավ, ուրեմն մաքրի՛ր աչքերդ ու կոնյա՛կ խմիր:

Նա պայուսակից հանեց հայելին...

Էլյան մի ումպով խմեց կոնյակը և սկսեց պատմել իր և Կոստյայի հարաբերությունների մասին:

Պարզվեց, որ վերջինս նրա համար բնակարան է գնել, «մի զգեստապահարան շորեր, և մի քանի կիլոգրամ զարդեղեն:» Սկզբում Էլյային թվացել է, թե իրեն ուրիշ ոչինչ պետք չէ: Մտածել է, թե ինչքան ուզում է, թող Կոստյան իրեն սիրի, ինքը պարտավոր չէ փոխադարձել: Բայց հետո այդ «կակազ հրեշը» սկսել է նրա առջև պահանջներ դնել: Ոչ մի տղամարդու հետ չհանդիպել և այլն: Բայց Էլյան չէր կարող նստել տանը: «Ես հո նրա կատուն չե՞մ»: Եվ Էլյան չի նստել տանը: «Դու ինձ ճի՛շտ հասկացիր, ես սիրտ ունեմ, եթե մեկին սիրեմ, անպայման հնազանդ կլինեմ, բայց ես նրան չեմ սիրում: Ես նրան տալիս եմ այն ամենը, ինչ կարող եմ, ավելին տալ չեմ կարող»:

Մի խոսքով, արտասովոր ոչինչ: Սովորական պատմություն, պարզապես սովորականից ավելի գեղեցիկ հերոուհի և սովորականից ավելի ուժեղ հերոս: Եվ ժապավենը պտտվում է: Ինձ անծանոթ վերնագիրը կարծես թե մի աշնանային թորշոմած ծաղկի մասին էր: Կամ աղջիկը վերա-

դարձնում է լուսանկարների ալբոմը:

Բայց այժմ իմ հերթն է: Ես ստանձնել եմ օգնելու պարտականությունը: Միայն թե, ինչպե՞ս կարող եմ օգնել, ի՞նչ պետք է անեմ: Այս աղջկան ես ընդամենը խղճում եմ, իսկ Կոստյայի հանդեպ հարգանքի ու պարտավորվածության զգացում ունեմ:

Ինչեւէ, պետք է անեմ Էլյային, որ նախեւառաջ Կոստյան իսկական տղամարդ է, որ շատ բաներով տարբերվում է ուրիշ ռուս տղամարդկանցից: Եթե նա սիրում է մեկին, ապա չի կարող թույլ տալ, որ իր սիրո առարկան իրեն դավաճանի: Եթե սերը փոխադարձ լիներ, այս հարցը կլուծվեր ինքնըստինքյան: Բայց այս պարագայում, երբ սերը, փաստորեն, զոհված է, նա ստիպված է Էլյային պահել վախի մեջ : Կոստյան նրան շռայլորեն տալիս է ամեն ինչ եւ փոխարենը, բնականաբար, ուզում է, որ նա միայն իրենը լինի: Դա շատ պարզ է, եւ աղջիկն իրավունք չունի նրան մեղադրելու, քանի դեռ ընդունում է նրա տվածները: Իհարկե, նա կարող է խաբել, բայց բռնվելու դեպքում պետք է առանց բողոքելու ընդունի իր վաստակած պատիժը: Եւ մի՞թե Էլյան շատ բան չի ուզում կյանքից: Ուզում է ապրել մեկի հաշվին եւ միաժամանակ թքել նրա վրա: Համենայնդեպս, եթե նա ուզում է, որ ես իրեն օգնեմ, ապա ես կարող եմ միայն խորհուրդ տալ. կամ ենթարկվել Կոստյային եւ վայելել հարուստ կյանքը, կամ հեռանալ նրանից: Որովհետեւ միջինը լինել չի կարող: Միայն այդպես: Քանզի բանաստեղծի իմ կեղեւի տակ արդեն խլրտում էր որդը: Հանդիսականի խոսքը ե՞րբ քարոզ չէ: Երբ հանդիսականը չի խոստովանում իր պարտությունը, երբ իր առաքելությունը կինոսրահից սեր ու թրթիռ տանելը չէ:



Էլյան ուշադիր լսեց ինձ: Նա նստել էր արձանի պես եւ միայն երբեմն թարթում էր աչքերը: Ես կանչեցի մատուցողին եւ սուրճ պատվիրեցի:

- Դու քեզ լա՞վ ես զգում,- հարցրի Էլյային:
- Այո... Ուղղակի մի քիչ ազդվեցի... Դու շատ դաժան ես:

Այսքան մտածել, այսքան զգույշ խոսել, որպեսզի քեզ վերջում դաժան անվանեն: Ի՞նչիս էր պետք այս ամենը:

- Իսկ դու աղջիկ ունե՛ս,- հանկարծ հարցրեց Էլյան՝ ցրելով իմ մտքերը:

Ես գլխով արի:

- Իսկ նա գեղեցի՞կ է, իսկ դու նրան սիրո՞ւմ ես...

Ես ծիծաղեցի ու բարձրացրի բաժակս:

- Արի՛ խմենք, Է՛լյա, իսկ հետո ես քեզ տուն կտանեմ:
- Բայց դու սո՛ւրճ պատվիրեցիր:
- Սուրճից հետո:
- Արի՛ մի քիչ նստենք, խնդրում եմ: Չեմ ուզում տուն գնալ, ես գժվում եմ մենակությունից:

Երբ հաջորդ օրը զբոսայգու մոտ սպասում էի Վիկային, երկար-բարակ մտածում էի՝ թե արժե՞ արդյոք նրան պատմել իմ երեկվա հանդիպման մասին: Բայց, որպեսզի դա նրա համար հասկանալի լիներ, նախ պետք է ներկայացնեի բարում տեղի ունեցած միջադեպը, ապա բացատրեի, թե ով է Կոստյան...

Մի խոսքով, որոշեցի ոչինչ չասել: Մանավանդ, որ մեզ խոստումնալից շաբաթավերջ էր սպասվում, եւ ես չէի ուզում, որ ինչ-որ բան, թեկուզ աննշան, այն խամրեցնի:

Վիկան սովորականի պես պետք է վերջացներ ֆրանսերենի դասը, եւ մենք սովորականի պես պետք է գնայինք քաղա-

քից դուրս: Իսկ նշանակալիցն այն էր, որ մենք վրան էինք գնել եւ որոշել շաբաթվա վերջին օրերն անցկացնել գետի ափին: Վերցրել էինք այնքան դաշար, որ կբավարարեր մի քանի ընտանիքի: Ես նույնիսկ Վիկայից թաքուն խոզի միս էի գնել եւ որոշել՝ անտառում խորոված անել: Կոտի մեքենայում դրանից առաջ հայտնաբերել էի շամփուրներ:

Արշավների սեզոնը դեռ չէր սկսվել, եւ հարմար տեղ գտնելու համար հարկ չեղավ երկար փնտրել:

Գետն այստեղ չափազանց լայն էր, իսկ ափին, ասես գետի՛ց վեր խոյացած ծառերն այնքան բարձր էին, որ չէին թողնում՝ երեկոյան մայր մտնող արեւն արտացոլվի ջրում: Երբ կարմիր արեգակը մերթընդմերթ հայտնվում էր ամպերի հետեւից, խամրած ճառագայթները բախվում էին ծառերի կատարներին ու փշրվում մանկության երազանքների պես:

Հետո ամպերը խտացան, ու արեգակը կորավ: Գետի մյուս ափից, ուր սկսվում էր իսկական անտառը, հնչեց երեկոյան մեղեդին՝ խորհրդավոր ու ներշնչող:

- Ի՞նչ ես կարծում, խենթություն չէ՞ մեր արածը,- հարցրի Վիկային, երբ նա ինձ օգնում էր տեղադրել վրանը:

- Ոչ, պարզապես մենք որոշել ենք հանգստանալ գետափին:

- Ես էլ հենց այդ եմ ասում, ուրիշ որեւէ մեկի խելքին չէր փչի այդ բանն անել մայիսին, երբ գետինը դեռ սառած է, պատկերացնո՞ւմ ես՝ գիշերն ինչքան ցուրտ է լինելու:

- Դրա համար գոյություն ունեն վրանը եւ ծածկոցները,- Վիկան ձեռքիցս վերցրեց ձողերն ու ամրացրեց իրար, որովհետեւ ինձ դա ոչ մի կերպ չէր հաջողվում:

- Հապա արջե՞րը, վարազնե՞րը...





- Այստեղ ոչ մի արջ ու վարազ չկա, բայց եթե դու անդայմանն ուզում ես, որ մեր արածը խենթություն կոչվի, թող քո ուզածը լինի:

Երբ վրանն արդեն ամրացրել էինք, որոշեցի ժամանակ չկորցնել ու, մինչեւ անձրեւի սկսվելը, կրակ վառել: Միայն թե չոր ճյուղեր գրեթե չկային, եւ ես բավականին չարչարվեցի: Թղթերը վառվում, մոխրանում էին, իսկ ճյուղերը չէին կպչում: Վերջում միայն բենզինի օգնությամբ կարողացա գործը գլուխ բերել: Իսկ հետո, երբ Վիկան նստեց խարույկի մոտ իր սիրած դիրքով՝ ծնկները գրկած, ու ավելի ուշ տարածվեց խորոված մսի ախորժալի բուրմունքը, հասկացա, որ իզուր չեմ չարչարվել:

Անձրեւն ուշանում էր, եւ մենք հանգզնեցինք ծալովի սեղանն ու աթոռները դնել խոտերին:

Ես բացեցի օղու շիշը:

- Դու ոչ մի ուտեստ չես սիրում, - ասացի Վիկային, - որովհետեւ ես պետք է ինձ հետ խմես սա:

- Իսկ չի՞ կարելի ուրիշ բան:

- Ոչ մի ուրիշ:

«Ընթրիքը խոտերի վրա» հրաշալի ստացվեց:

Վիկան միացրել էր մեքենայի ձայնագրիչը: Զայնասկավառակի մեղեդին շատ ձայնակցում էր գետը, իսկ ավելի հեռվից՝ անտառի խշշոցը: Հայացքս սառել էր քիչ այն կողմ մոխրացող կրակին:

Գիշերն անձրեւ եկավ: Վրանում, բրդյա ծածկոցների տակ պառկած, մենք մի քիչ զրուցեցինք, մի քիչ տխրեցինք, մի քիչ ծիծաղեցինք, մի քիչ լռեցինք, եւ Վիկան քնեց:

Ես հազա անձրեւանոցն ու դուրս եկա վրանից: Անթա-

փանց մթության միջով քայլեցի դեպի գետը՝ ականջ դրած ջրի շառաչին, հետո կանգնեցի ափին ու սիգարետ վառեցի: Այս ամենն իրականությո՞ւն էր, թե՞ երազ: Թե՞ պարզապես գիշեր՝ խորհրդավոր ու անմեկնելի: Հանկարծ աչքերդ բացում ես ու հասկանում ես, որ երազ ես տեսել: Հանկարծ շիշը բարձրացնում ես, եւ այն դատարկ է: Հանկարծ շրջվում ես, եւ աղջիկը չկա: Հանկարծ ուշքի ես գալիս, եւ ամեն ինչ վերջացել է: Գիշերը ցնդել է, ինչպես առավոտյան արեւի հետ ցնդում է իմ գյուղի դաշտերին իջած եղյամը:

Ո՞ւր մնացին գյուղի անկյուն իմ գիշերները: Մի ոստյուն, եւ առուն բաժանում էր անցած գիշերվանից, որը դեռ շարունակվում էր գյուղի իշխանությունից դուրս մի այլ բնաշխարհում՝ հսկա ժայռերի հանդիման, որոնք արձագանքում էին չոջիկների ծվոցներին:

Առավոտյան արթնացա ագռավների ձայնից: Դուրս եկա վրանից ու տեսա, թե ինչպես է Վիկան, ափին կանգնած, ձեռքով անում գետի ուղղությամբ: Այնտեղ դանդաղ սահում էր գերաններով բեռնված մի մեծ շոգենավ՝ օդում թողնելով ծխի քուլաներ: Գերաններին թառած երկու տղամարդ ոգեւորված պատասխանում էին Վիկայի ողջույնին:

Ես մոտեցա ու լուռ գրկեցի նրան: Այդպես, այդպես կանգնած, հետեւեցինք բեռնանավի ընթացքին, մինչեւ այն կորավ գետի շրջադարձում:

Չափազանց արագ, գրեթե անկանգառ, անցավ մայիսի առաջին կեսն էլ: Առավոտները ես խելագարի նման քշում էի մեքենան մի գործարանից մյուսը, որպեսզի հասցնեմ տեսնել ինձ պետք եղած մարդկանց: Ճանապարհային ոստիկանները արդեն հոգնել էին իմ մեքենան կանգնեցնելուց:



Բայց, միեւնույն է, ոչինչ չէր ստացվում:

Հաճախ լինում էր այնպես, որ շատ ձեռնտու պայմաններով ինձանից որեւէ ապրանք էին ուզում: Ես ոգեւորվում էի, դես ու դեն ընկնում, ճարում ապրանքը, բայց վերջում միշտ մի բան պակասում էր: Եթե ապրանքը թանկացած չէր լինում, ուրեմն ուզողներն էին փոշմանում, կամ տեղափոխման հարցը չէր լուծվում: Իսկ իմ դրամապանակի պարունակությունն այդ ընթացքում արագորեն նվազում էր:

Կոտի վիճակն էլ նախանձելի չէր: Ամեն անգամ զանգելիս նա դժգոհում էր կանխիկ դրամ չունեցող Ռուսաստանից:

Մի խոսքով, գործերը լավ չէին: Հարկավոր էր շտապ ինչ-որ բան ձեռնարկել, միայն թե չգիտեի՝ ինչ:

Երբեմն նույնիսկ մտածում էի Կոստյայի արած առաջարկի մասին եւ մի կերպ ինձ զսպում՝ չվերցնել հեռախոսն ու հավաքել Էլյայի համարը՝ նրա միջոցով Կոստյայի հետ կապվելու համար:

Էլյան ինքը հաճախ էր ինձ զանգում: Նա երկար-բարակ պատմում էր իր պրոբլեմների մասին, կարծես ես նրա ընկերուհին լինեի, եւ ինձ բոլորովին խոսելու հերթ չէր տալիս: Երբեմն միջանկյալ լաց էր լինում, միջանկյալ անեկդոտներ էր պատմում, միջանկյալ խոսում քաղաքականությունից ու վերջում միշտ գալիս էր այն եզրակացության, որ կյանքն, այնուամենայնիվ, հրաշալի է:

Ու մի օր էլ նա զանգեց գիշերվա ժամը երկուսին: Ձայնը չափազանց հուզված էր, այն աստիճանի, որ մտածեցի, թե այդ պահին Կոստյան ատրճանակը պահել է նրա քունքին:

- Մենք պետք է շատ շտապ հանդիպենք,- ասաց նա:

- Ի՞նչ է պատահել,- հետեւեց իմ տրամաբանական հարցը:
Նա չպատասխանեց, ասաց, որ հեռախոսով հնարավոր չէ բացատրել: Բայց ես պնդեցի՝ խնդրելով գոնե մոտավորապես ասել:
- Լավ,- տեղի տվեց նա,- դու պոկեր խաղալ գիտե՞ս:
- Ի՞նչ:
- Եթե չգիտես, ես չեմ կարողանա բացատրել:
- Գիտեմ:
Ու նա բացատրեց: Այսինքն՝ այն, ինչ կարողացա հասկանալ նրա կցկտուր, իրար հազիվ կապակցված բառերից, հետեւյալն էր: Էլյան հաճախ այցելում է ինչ-որ ծանոթի տուն, ուր հավաքվում են պոկեր խաղացողներ: Այս պահին խաղացողներից մեկի ձեռքին լավ խաղաթուղթ կա, երեւի «Ռոյալ», բայց նա քայլ անելու փող չունի: Սեղանի վրա մեծ գումար է կուտակված՝ մոտ հարյուր քսան միլիոն: Նրան մեկ ժամ են տվել՝ փող ճարելու համար, եւ նա չնչին գնով վաճառում է իր մեքենան՝ ընդամենը քայլ անելու համար: Խաղացողներից ոչ մեկը չի գնում, Էլյայից բացի բոլորը խաղի մեջ են: Նրանք վստահ են, որ իրենց խաղաթղթերն ավելի ուժեղ են, եւ չեն ուզում, որ այն մեկը փող դնի եւ բացի իրենը: Նա հիմա զանգահարում է գնորդ ճարելու համար:
Ես փորձեցի արագ կողմնորոշվել:
- Լավ,- ասացի,- ի՞նչ մեքենա է եւ ի՞նչ արժե:
- Քսանհինգ միլիոն, բայց ավելի պակասով էլ կտա: Մեքենան «Պեժո» է եւ իրականում արժե հիսուն-վաթսուն միլիոն:
- Բայց ինձ մոտ այդքան չկա:
- Ինչքա՞ն կա,- անհանգստացավ Էլյան:
- Ամենաշատը տասնհինգ:
- Հրաշալի է, մնացածը ես ունեմ, միայն թե դու արա՛գ արի:



Ես մի պահ տարակուսեցի: Վստահ էի, որ Էլյան ճիշտ էր ասում, պարզապես չէի ուզում մտնել այդ պատմության մեջ: Սակայն կարելի էր կլորիկ գումար շահել: Ամեն դեպքում, որոշեցի գնալ եւ տեղում որոշել անելիքս:
- Դե ի՞նչ,- հարցրեց Էլյան:
- Լավ,- ասացի,- գալիս եմ, միայն թե ես դեռ ոչինչ չեմ որոշել:
- Կորոշես, ամեն ինչ կարգին է: Ես քեզ սպասում եմ կինոթատրոնի մոտ: Բայց արա՛գ արի, որովհետեւ մնացել է ընդամենը կես ժամ: Ես հիմա գնում եմ, նրան ասեմ, որ գնորդ ճարել եմ, թող այլեւս ինքը չփնտրի:
- Պետք չէ դա ասել:
- Պե՛տք է:
Էլյան կախեց լսափողը: Ես սիգարետ վառեցի: Ուրեմն նա Կոստյայի տված փողերն օգտագործում է այս կարգի հաճույքների համար: Հետաքրքիր է, ինչո՞ւ նա մինչեւ հիմա ինձ այդ մասին որեւէ բան չի ասել: Հնարավո՞ր է, որ նա ինձ խաբի: Ինչո՞ւ է նա հենց ինձ զանգել: Կոստյային, անշուշտ, չէր կարող ասել, որովհետեւ նախ պետք է բացատրություն տար, թե ի՞նչ գործ ունի խաղատանը: Եւ ուրիշ ինձանից ավելի մոտիկ մեկը նա կարծես չուներ: Ամեն դեպքում, խաբելը բացառվում էր:
Արագ հագնվեցի եւ դուրս եկա տնից: Ավտոկանգառի պահակը դժգոհությամբ բացեց դարպասները, ես հանեցի մեքենան ու սլացա կենտրոն:
Այս անգամ Էլյան ինձանից շուտ էր եկել: Հեռվից տեսա, որ նա մենակ չէ: Հետո, երբ մեքենան մոտեցրի մայթին, լույսերն ընկան մի երկդռնանի կարմիր «Պեժոյի» վրա: Ես չհավատացի աչքերիս: Իջա մեքենայից ու, կինոթատրոնի ազդագրերի աղոտ լույսի տակ տեսա Իլյայի տագնապած դեմքը: Ինձ ճանաչելով՝ նա այնպես շփոթվեց, որ ոչինչ

չկարողացավ արտաբերել, անհասկանալի կմկմոցից բացի:

- Չէի սպասում քեզ այստեղ հանդիպել,- ասացի:

- Ճիշտն ասած, ես՝ նույնպես,- շարունակեց կմկմալ նա՝ հազիվ սեղմելով ձեռքս:

- Դե, ինչպե՞ս ես:

Նա թոթվեց ուսերը:

Էլյան զարմացած նայում էր մեկ ինձ, մեկ նրան:

- Իլյան իմ բարեկամն է,- ասացի ես,- չգիտեի, որ խոսքը նրա մասին է:

- Ավելի լավ,- Էլյան ժպտաց,- ես մի քիչ մրսում եմ, կնստեմ մեքենայում, իսկ դուք զրուցեք:

Նա քայլեց դեպի իմ մեքենան:

Ես ձեռքս դրեցի Իլյայի ուսին:

- Դե ի՞նչ, եղբա՛յր, ես արդեն ամեն ինչ գիտեմ: Քեզ որքա՞ն ժամանակ է մնացել:

- Տասնհինգ րոպեից պակաս: Ինչպե՞ս է Վիկան:

- Լավ: Բայց հիմա դրա ժամանակը չէ:

- Դե լավ, արի՛ քայլենք,- նա գրպանից հանեց ծխախոտի տուփը,- ի՞նչ ասեմ, ամեն ինչից անկախ՝ ես ուրախ եմ, որ դու ես գնելու մեքենան: Քանի որ դու ամեն ինչ գիտես, ինձ հարկավոր է քսան միլիոն, քայլն այդքան է: Հետո դու այդ մեքենան կարող ես վաճառել տասներկու հազար դոլարով, ես ինքս քեզ համար գնորդ կգտնեմ:

- Պետք չէ, Իլյա,- նորից ձեռքս դրեցի նրա ուսին,- ես քեզ կտամ այդ փողը, միայն թե, վստա՞հ ես, որ չես պարտվի:

- Ինձ մոտ «Քառե» է՝ սրտերից:

- Իսկ վստա՞հ ես, որ խաբեություն չի լինի:

- Բացառվում է: Այնտեղ ազնիվ մարդիկ են: Խաղն օրենքով է: Մենք պարզապես կազինո չենք գնում, որ ավելորդ փողեր չտանք: Միշտ խաղում ենք միասին: Եւ ուզում եմ քեզ մի բան ասել. ես քեզ կվերադարձնեմ քո տվածի կրկնակին:



Դու նույնիսկ կարող ես գալ ինձ հետ: Կտամ անմիջապես: Ինձ մնում է միայն դնել փողը եւ բացել խաղաքարտերը:

Ես ասացի, որ ինձ ոչինչ պետք չէ, բայց բացատրեցի, որ ինքս ունեմ ընդամենը տասնհինգ միլիոն եւ մնացածը վերցնելու եմ Էլյայից, նրան էլ կարող է վերադարձնել կրկնակին:

Էլյան, առանց մի վայրկյան տատանվելու, տվեց պակասող գումարը: Մենք մտանք մոտակա շենքի բակը: Ես չհամաձայնեցի վերեւ բարձրանալ եւ հարմար գտա սպասել մեքենայում: Մի քիչ շփոթված էի կատարվածից, բայց նաեւ մի տեսակ թեթեւություն էի զգում: Ուրախ էի, որ կարողացա օգնել Իլյային: Ամեն անգամ նրան հիշելիս՝ ես մտածում էի, որ նա ինձ պարտքի տակ է թողել: Չգիտեմ՝ ինչու էր դա այդպես: Եւ, բացի դրանից, ես համոզված էի, որ Իլյան լավ տղա է: Վիկան էլ նրա մասին միշտ հարգանքով էր խոսել: Ու, ամեն ինչից զատ, չէ՞ որ Վիկային ճանաչելու համար ես պարտական էի հենց նրան:

Շատ չանցած՝ հայտնվեց Էլյան:

- Գնացինք,- հայտարարեց նա հատուկ շեշտադրմամբ:

- Իլյան չի՞ գալու,- հարցրի:

- Ոչ, նա ամբողջ հարյուր երեսուն միլիոն շահեց ու մնաց խաղալու: Եթե ուզենար էլ, չէր կարող գալ: Ճիշտ չէր լինի:

Երբ մենք դուրս եկանք փողոց, Էլյան վառեց սրահի լույսը եւ պայուսակից հանեց փողի կապոցները:

- Սա՝ քո տասնհինգը, սա՝ իմ հինգը,- ասաց նա ու առանձնացրեց փողերը,- այստեղ կա եւս երեսուն: Իլյան խնդրեց, որ դու այն բաժանես, բայց ինձ ոչինչ պետք չէ: Ամբողջը վերցրու, միայն թե հիմա ինձ հրավիրի՛ր մի լավ տեղ:

Այդպիսի բանի ես սպասում էի: Հիշեցի Իլյայի հետ մեր առաջին հանդիպումը՝ «Հոլիվուդի մատույցներում», հիշեցի հյուրանոցի գիշերային սրճարանը, խմելու մեր մրցամար-

տը, նրա շռայլությունը...

Ինչեւէ, լավ չստացվեց: Ես կրկին պարտքի տակ էի: Խնդրեցի Էլյային, որ նա գումարի մի մասն, այնուամենայնիվ, վերցնի, իսկ մնացածը վերադարձնի Իլյային, բայց նա կտրականապես հրաժարվեց:

- Չեմ հասկանում, ի՞նչ ես քիթդ կախել, եթե ուզում ես իմանալ, նա քո շնորհիվ շահեց այդ գումարի գրեթե եռակին:

- Չգիտեմ, Էլյա, գուցե դու ճիշտ ես, ամեն դեպքում գնացինք...

Մենք գնացինք բարձրակարգ մի ռեստորան ու բավական երկար նստեցինք:

Հետո ես Էլյային տուն տարա եւ բաժանվելիս ուղղակի ստիպեցի վերցնել գոնե տասը միլիոն:

Յուրաքանչյուր բարեխիղճ քաղաքացու պարտականությունն է հարգել ոստիկանի աշխատանքը այն պարզ պատճառով, որ ոստիկանն օրենքի պաշտպանն է...

Ինչպիսի՞ն է այսօր պատկերը Ռուսաստանում: Բարեխիղճ քաղաքացիների քանի՞ տոկոսն է հարգում օրենքի պաշտպանի աշխատանքը կամ հենց օրենքի պաշտպանին, եւ քանիսը՝ ոչ: Գուցե այս հարցին պատասխանելու համար պետք է սոցիոլոգիական հարցո՞ւմ անցկացնել: Իհարկե, նախապես ճշտելով, թե ինչ նկատի ունենք՝ բարեխիղճ քաղաքացի ասելով:

Համենայնդեպս... Գուցե եւ կարելի է չհարգել այսօրվա ռուս ոստիկանին: Կարելի է նրան չսիրել, կարելի է չվախենալ նրանից, կարելի է նրան հայհոյել, բայց չի կարելի նրան չհավատալ: Որովհետեւ այսօրվա ռուս ոստիկանը միշտ ճիշտ է: Ճիշտ է, երբ նույնիսկ հակադրվում է քրեական օրենսգրքին, սահմանադրությանը, ինքն իրեն ու ամբողջ աշխարհին:



Այս ամենի մասին ես մտածում էի քաղաքի ոստիկանական բաժանմունքներից մեկի խցում նստած: Ինձ բռնել էին Միլիցիայի հատուկ օժանդակ ջոկատի աշխատակիցները եւ բերել այստեղ:

Կեսգիշերին, երբ բաժանվել էի Վիկայից եւ, չգերազանցելով սահմանված արագությունը, որեւէ խախտում թույլ չտալով, տուն էի գնում, մի կամրջի վրա ոստիկանները կանգնեցրին մեքենան: Պետավտոտեսուչներին միացել էին ՄՀՕՋ-ականները: Նրանք ստուգեցին մեքենան ու սրահի առջեւի դարակում գտան մի լուսանկար, որի վրա Կոտն էր՝ իր երկու ծանոթների հետ: Նրանցից մեկին ցույց տալով՝ բարձրահասակ, բեղավոր մի ոստիկան հարցրեց:

- Սա ո՞վ է:

- Ծանոթ տղա,- առանց որեւէ բան կասկածելու՝ պատասխանեցի ես:

Ու հանկարծ նա գոռաց.

- Ձեռքերդ հենի՛ր մեքենային, ոտքերդ լա՛յն բաց արա ու կանգնի՛ր: Արա՛գ:

- Քեզ ի՞նչ պատահեց,- զարմացա ես:

Բայց նա ոչինչ չպատասխանեց, ձեռքի փայտով հարվածեց կողքիս ու հրեց դեպի մեքենան:

Ես հնազանդվեցի ու կանգնեցի նրա ասած դիրքով, որովհետեւ գիտեի, որ հակառակվելու դեպքում կստանամ երկրորդ հարվածն էլ:

Հետո լսեցի, թե ինչպես իմ հետեւում բեղավորը, որ երեւի պետն էր, ցածրաձայն ինչ-որ բան ասաց ու կարգադրեց ինձ տանել բաժանմունք:

Մեկը նստեց մեքենայիս ղեկի մոտ, մեկն էլ տեղավորվեց կողքիս՝ հետեւի նստարանին՝ բաց չթողնելով թեւս:

Երբ մեքենան շարժվեց, ես հարցրի.
- Գուցե, այսուհանդերձ, կասե՞ք, թե ինչ է պատահել:
- Տեղում կիմանաս,- բարեհաճեց խոսել կողքիս նստածը:
- Տղե՛րք,- ասացի,- եկե՛ք, ավելի լավ է, մի կրպակի մոտ կանգնենք, ես ձեզ կհյուրասիրեմ՝ ինչով կամենաք, և կբաժանվենք բարեկամաբար:
Ղեկին նստածը ծիծաղեց:
- Տե՛ս, սա ուզում է մեզ կաշառել:
Հետո ինձ կարգադրեցին այլևս չխոսել, իսկ կողքիս նստած սրիկան արմունկով հասցրեց փորիս:
Ես փորձեցի կռահել, թե ինձանից ինչ են ուզում: Կամ ամեն ինչ կապված էր Կոսի այն ծանոթի հետ, կամ էլ պարզապես ուզում էին կլղել: Հաջորդ տոկոսով զիջեի, որ բաժանմունքում ինձ ծեծելու են, և սկսեցի տրամադրվել դրան: Միակ բանը, որ ինձ մխիթարում էր, այն էր, որ ունեցածս ամբողջ փողը թողել էի Վիկայի մոտ, և գրպանումս պահել մի երեք միլիոնի չափ:
Բաժանմունքի հերթապահ մասում նախ ինձ սնուցեցին, մոտիցս վերցրին փաստաթղթերս ու փողը, հետո տարան մի սենյակ ու կարգադրեցին կանգնել ինձ արդեն ծանոթ դիրքով: Սենյակում միայն մի հսկող կար, բայց ես զիջեի, որ եթե համարձակ որևէ շարժում անեմ, նա, առանց տատանվելու, կկրակի... Այդպես կանգնած մնացի բավականին երկար և արդեն զգում էի, որ ուր որ է, ընկնելու եմ, երբ սենյակ մտան երեք հոգի և ինձ ասացին, որ կարող եմ նստել գրասեղանի մոտ դրված աթոռին: Միլիցիայի կապիտանի ուսադիրներով լրար մեկը տեղավորվեց առջևումս և գրպանից հանեց լուսանկարը:
- Այս մարդը հետախուզման մեջ է,- նա ցույց տվեց Կոսի ծանոթին,- դու որտեղի՞ց ես ճանաչում նրան:
- Ես նրան չեմ ճանաչում,- ասացի ես, և դա իրոք այդպես էր:
Կապիտանի աչքերը փայլեցին: Նա դիմացս շարժեց ճկարն ու ասաց.
- Դու նրան ճանաչում ես:
Այսինքն՝ այլևս առարկել չէր կարելի: Նա որոշել էր այդպես, նշանակում էր, որ այդպես է:
- Պարո՛ն կապիտան, կարո՞ղ եմ ձեզ հետ առանձին խոսել,- հարցրի ես
- Առանձին հետո կխոսենք, իսկ հիմա ասա, թե ովքեր են այս մարդիկ:
Պետք էր արագ որոշել անելիքս: Բանն այն է, որ ես խիստ կասկածում էի, թե Կոսի այդ ծանոթն իսկապես հետախուզման մեջ էր: Նա պարզապես շատ կասկածելի արտաքին ուներ: Ոստիկանները երևի մի հարմար պատրվակ էին գտել ինձանից փող պոկելու: Եթե դա այդպես էր, ես կարող էի հանգիստ ամեն ինչ ասել: Բայց եթե իսկապես այդ մարդը գտնվում էր հետախուզման մեջ...
- Ես պատասխանի եմ սպասում,- լսեցի կապիտանի ձայնը:
- Այս մարդիկ բնակվում են Հայաստանում,- բացատրեցի ես,- նրանցից մեկն իմ ընկերն է, մյուս երկուսին չեմ ճանաչում: Լուսանկարն արվել է մեր հայրենիքում, և նրանք այստեղ նույնիսկ չեն էլ եղել: Դուք երևի խառնում եք ուրիշի հետ:
- Դե լավ,- ասաց կապիտանը:
Հետո վեր կացավ և, առանց որևէ բան ավելացնելու, դուրս եկավ սենյակից: Մնացին ինձ հսկողն ու էլի երկու հարցաքննող սպաներ:
- Երիկամները ինչպե՞ս են,- հարցրեց նրանցից մեկը:
Ես ոչինչ չպատասխանեցի: Նա մոտեցավ ինձ, և ես վեր կացա, որովհետև զիջեի, որ ստկիցս խփելու է աթոռը: Հետո

ուժեղ ցավ զգացի գոտկատեղիս, ապա մեջքիս ու դիտմամբ ընկա՝ չնայած գուցե մի երկու հարվածի էլ կարողանայի դիմանալ: Գիտեի, որ ընկածներին շատ ուժեղ չեն խփում, որ հանկարծ չսպանեն:

Գլուխս առա ձեռքերիս մեջ, որպեսզի պաշտպանեմ այն:

Բայց ինձ այլեւս չխփեցին եւ, երբ ընկածս տեղից բարձրացրին ու տարան մի խուց, ես չափազանց զարմացել էի, որ այդքան հեշտ պրծա:

Ավելի ճիշտ՝ դա խուց չէր, այլ հերթապահ բաժնին կից ճաղապատված մի տարածություն, ուր պատերից մեկի երկայնքով դրված նստարանից բացի ուրիշ բան չկար: Նստարանին ննջում էին մի քանի թորշոմած մարմնավաճառ կանայք, մի քանի մանր խուլիգաններ ու թափառաշրջիկներ, իսկ հատակին կարտոֆիլի պարկերի պես ընկած էին անտուն հարբեցողները, որոնց վրայից նողկալի հոտ էր փչում:

Ավելի հարմար բան չգտա, քան հայերենով մի բարձրաձայն հայհոյանք տալ, չգիտեմ՝ ավելի շատ նկատի ունենալով ոստիկաններին՞ն, թե՞ սույն հարգարժան հասարակությանը, որի մի ներկայացուցիչն արդեն հասցրել էր թրջել հատակը:

Սակայն մյուս կողմից էլ՝ ես ուրախ էի, որ ինձ բերել էին այստեղ: Դա նշանակում էր, որ ինձ վրա լուրջ հանցանք չեն բարդելու, այլապես կտանեին նախնական կալանքի խուց:

Սենյակի ժամանակավոր բնակիչները զարմացած նայում էին ինձ եւ, պետք է ասել, որ նրանց զարմանքը չափազանց բնական էր: Բանն այն է, որ այդ օրը մենք Վիկայի հետ գնացել էինք թատրոն, եւ հագիս իմ ունեցած լավագույն կոստյումն էր: Իսկ օձիքիս վրայից դեռ չէր անցել «Ազարոյի» սուր բուրմունքը:



Ես մոտեցա նստած տղաներից նրան, որի՝ ամորձատվածի դեմքն ինձ հատկապես դուր չեկավ: Նրա ծակոտկեն սպորտային գլխարկի տակից փայլում էր լպրծուն քաչալը:

- Ես ահավոր հոգնած եմ, եղբա՛յր,- ասացի,- եթե քեզ համար դժվար չէ, տեղդ ի՛նձ զիջիր:

Նա աչքերը չռեց վրաս եւ ծնկների արանքից թքեց գետնին:

- Սխա՞լ ենք նստած:

- Ես հազիվ եմ ոտքերիս վրա կանգնում:

- Ոչինչ, կդիմանաս,- հեգնախառն նետեց նա:

Նստարանի մյուս ծայրից վեր կացավ կանանցից մեկը.

- Նստի՛ր այստեղ, կհանգստանաս, վեր կկենաս:

Ես ուշադրություն չդարձրի կնոջ ասածին, անսպասելի բռնեցի ամորձատվածի օձիքից ու ամբողջ ուժով քաշեցի՝ փորձելով նստած տեղից պոկել: Վերնաշապիկը պատռվեց: Նա փորձեց դիմադրել, բայց ես ափս դրեցի դնչին ու պատին սեղմեցի գլուխը:

- Չշարունակե՛ս,- գոռացի:

- Լավ, լավ,- խեղճացավ նա եւ զիջեց տեղը:

- Հանգի՛ստ այդտեղ,- դրսից գոռաց հերթապահը:

Ես նստեցի ազատված տեղում, գրպանիցս հանեցի սիգարետի տուփն ու հյուրասիրեցի կողքիններիս, հետո ցանկացողներին: Համարյա ոչ ոք չհրաժարվեց: Վերցրեց նաեւ ամորձատվածի դեմքովը:

- Քեզ ինչո՞ւ են բռնել,- վրացու առոգանությամբ հարցրեց մի երիտասարդ:

Ես ժարգոնով մի արտահայտություն արեցի, որը մոտավորապես նշանակում էր՝ չգիտեմ:

- Ծեծե՞լ են,- շարունակեց նա:

Ձեռքս դրեցի նրա ուսին եւ ասացի.

- Կհավատա՞ս, եղբա՛յր, հիմա ես այնքան հոգնած եմ, որ խոսելու չի գալիս:

- Հանգի՛ստ թողէք մարդուն,- պաշտպանեց ինձ կանանցից մեկը,- չէ՞ք տեսնում՝ հոգնած է:

Շաս չանցած՝ բոլորը քնեցին: Նստարանին տեղավորված երջանիկները հենվել էին իրար ու միմյանց ուսերին դրել գլուխները, իսկ նրանք, ովքեր նստելու տեղ չունեին, հիմա պարզապես պառկած էին բետոնե հատակին: Սենյակում տարածված զարշահոտությանը ավելացել էր անտանելի խռմփոցը: Ոչ մի կերպ չէի կարողանում ինձ ստիպել, որ քնեմ, ու նյարդայնությունից կրծում էի շրթունքներս: Իսկ ամենաահավորն այն էր, որ ծխախոտ չունեի: Ես համոզված էի, որ եթե նույնիսկ գլուխս պատին էլ տայի, հերթապահ ոստիկանից ոչինչ ստանալ չէի կարող, դրա համար էլ շտապով նանկեցի խելոք նստած մնալ տեղումս:

Արդեն զգեցի, թե ինձ ինչ է սպասվում: Դրա համար բավական էր կալանքի այն մի նախազգուշությունը, թե՝ առանձին հետո կխոսենք: Դա նշանակում էր, որ ինձ առանց կլելու բաց չեն թողնելու:

Հիմա ես հարյուր տոկոսով զգում եմ, որ Կոսի ծանոթը ոչ մի հետախուզման մեջ էլ չէր: ՄՀՕՁ-ականները զուցե իսկապես ինչ-որ բան կասկածել էին, իսկ այստեղի ոստիկաններին ընդամենը պետք էր ինձանից փող պոկել:

Լուսադեմին միայն, անկախ ինձանից, աչքս կպավ, և քնեցի մոտավորապես երկու ժամ: Երբ արթնացա, ժամը ութն էր: Հերթապահին ինձ տարավ այն սենյակը, որ զիշերը հարցաքննել էին: Սպիտեցին մի ժամ սպասել, հետո ներս մտավ կալանավորը: Նա նստեց իր տեղը, զզրոցից թուղթ հանեց, գրպանից՝ գրիչ և դրանք մեկնեց ինձ:

- Գրի՛ր,- ասաց:

Ես սառնասառնով նրան նայեցի:

Նա ուշադրություն չդարձրեց վրաս ու ձևացրեց, թե քնած է:





- Ես,- սկսեց նա,- ազգանուն, անուն, հայրանուն, փաստում եմ, որ ճանաչում եմ Գուրիեւ Ռուսլան Մուսթաֆաեւիչին, որը գտնվում է հետախուզման մեջ սույն թվականի մարտի տասից՝ առանձնապես մեծ չափերի գողություն կատարելու համար...- նա կանգ առավ ու իբրեւ թե զարմացած նայեց վրաս,- դու չե՞ս գրում:

- Ոչ,- ասացի,- բայց կարող եմ ավելի լավ բան առաջարկել ձեզ:

Նա ծիծաղեց.

- Ի՞նչ կարող ես դու ինձ առաջարկել:

- Լավություն՝ լավության դիմաց: Դուք ինձ լավության կարգով ազատ եք արձակում, իբրեւ թե ոչ մի բան էլ չի եղել, որովհետեւ իրոք ոչ մի բան չի եղել, իսկ ես ձեր լավությունը չեմ մոռանում:

- Ինչպե՞ս չես մոռանում:

- Դա արդեն դուք պետք է ասեք:

Կապիտանը վեր կացավ տեղից ու սկսեց քայլել սենյակում:

- Ես ուզում եմ քեզ օգնած լինել,- ասաց նա՝ թեթեւակի կռանալով ականջիս,- բայց դա հեշտ չէ, ամենեւին էլ հեշտ չէ: Կա հանցագործությանը մասնակից լինելու վարկածը, հասկանո՞ւմ ես: Եթե միայն ինձանից կախված լիներ, ես քեզ բաց կթողնեի առանց երկմտելու, բայց գործն անցել է ուրիշ մարդկանց ձեռքով: Նրանց բերանը փակել է պետք: Բոլորն էլ ուզում են փող աշխատել:

- Որքա՞ն,- հարցրի ես:

- Դե, ասենք մի հինգ միլիոն:

Ես մի սուլոց արձակեցի:

- Հինգ միլիոն այս մանրուքի համա՞ր: Չէ՞ որ ինքներդ էլ գիտեք, որ այդ գումարը շատ է չեղած բանի համար: Դուք վերցրել եք իմ ողջ ունեցածը: Ես կարող եմ տալ երկու մի-

լինի:

Կաթիսանը վերադարձավ իր տեղը, նստեց ու ձեռքը դրեց ինչ-որ բաց գրքի վրա:

- Երեւում է` դու լավությունը ճիշտ չես հասկանում,- հառաչեց նա,- ուրեմն կգրես: Ես հիմա կկանչեմ տղաներին, որ քեզ օգնեն:

- Իզուր ես կարծում, թե ես լավությունը չեմ հասկանում,- ասացի,- դարձյալ դրանք խնդրում եմ վերջին փողերն են: Բայց եթե ուրիշ ճար չկա, կարող եք վերցնել ամբողջը: Ավելին չունեմ, եթե նույնիսկ ամբողջ բաժանմունքի տղաներին կանչեք:

- Եթե չլիներ քեզ օգնած լինելու իմ ցանկությունը,- բառերը երկարացնելով ասաց կաթիսանը,- բայց դու խաղախավարի տղա ես, եւ մենք քեզ չենք դատի:

Նա չիրկիզվող դահլիճանից հանեց փաստաթղթերս, մեքենայի բանալիները եւ դրանք մեկնեց ինձ: Ապա մի թուղթ պահեց ստորագրելու, որում նշված էր, որ իրերս ու դրամը վերադարձվել են ամբողջությամբ: Ես ստորագրեցի:

- Ազատ ես,- ասաց նա,- կարող ես գնալ: Մյուս անգամ, եթե ընկնես այստեղ, կարող ես դիմել ինձ: Ես քեզ նորից կօգնեմ:

Բայց դա դեռ ամբողջը չէր: Ինձ սպասվում էր նոր անակնկալ:

Արկղները տարել էին մեքենայի նկազարկիչը եւ բոլոր լազերային սկավառակները, այդ թվում նաեւ Վիկայի նվիրածը: Ո՞ւմ կեղտոտ ձեռքն է հիմա դրան դիպչում:

Ես զայրույթից, ինչ էր մնում, ջարդեի դեկը: Հետո ինձնից անկախ սկսեցի բռունցքով հարվածել դրան առակին:



Այն փշրվեց ու արյունոտեց ձեռքս:

Մուտքի մոտ կանգնած ոստիկանը արագ քայլեց դեպի մեքենան եւ գլուխը մոտեցրեց պատուհանին:

- Սա ի՞նչ խուլիգանություն է,- ասաց նա:

Ինքս էլ չհասկացա, թե ինչ կատարվեց ինձ հետ, ամբողջ ուժով այնպես խփեցի ծնոտին, ասես դիմացս ոչ թե շարքային մի ոստիկանի դեմք էր, այլ զզվելի մի այլանդակության, որը պատասխանում էր դրժել իմ բոլոր հիշատակները: Նա հետ-հետ գնաց ու ընկավ: Առանց մի վայրկյան հապաղելու միացրի մեքենայի շարժիչն ու խելակորույս արագությամբ պոկվեցի տեղից: Միայն խաչմերուկում փորձեցի ինձ տիրապետել, որ հանկարծ որեւէ մեքենայի կամ, առավել եւս, մարդու չխփեմ:

Երբ հասա տուն, առաջին հերթին լոգարանը տաք ջուր լցրեցի ու մտա մեջը: Երկար մնացի այդպես պառկած, հետո սկսեցի մտածել Վիկայի մասին եւ անմիջապես հանգստացա:

Անտոն եւ Արա Գորշկովների հյուրասրահն իր ճոխությամբ հիշեցնում էր Էրմիտաժի Դահլիճանի դահլիճը: Թվում էր պատահաբար հայտնվել եմ թագուհու պալատում եւ ուր որ է, հետույքիս խացով տալով, դուրս են շպրտելու:

Մինչ այդ սկսեցի ուսումնասիրել զննել արահը: Պատերին ուսկեբել զարդապաստառներ էին` շրջանակված ծաղկաշղթաներով ու դրդրանախշերի ծեփվածքներով: Զարդապաստառներից մեկը կրկնակի էր շրջանակված, հավանաբար պարոն համանախագահի մտահղացմամբ` ընդգծելու պաստառին պատկերված որսորդական դրվագը, ուր որսորդն ինքն էր գնացել իր որսին:

Հետո սկսեցի հաշվել ջահի մոմերը: Հետո՝ բուխարու վրայի ճենապակե արձանիկները: Հետո ձանձրացա, թե զայրացա այդ ամենից եւ պատահաբար շրջեցի մոխրամանը: Բարեբախտաբար, այն չջարդվեց: Ես այն տեղը դրի եւ հատակին թափված պարունակությունը ոտքով հրեցի բազմոցի տակ: Արդեն սկսել էի չդիմանալ եւ պատրաստվում էի ձայն տալ Վիկային, որը կողքի սենյակում զրուցում էր տանտիրուհու հետ, երբ հանկարծ սրահում հայտնվեց տարօրինակ մի կենդանի, ոչ այն է՝ շուն, ոչ այն է՝ կատու, ոչ այն է՝ կապիկ: Ավելի ճիշտ, թերեւս այդ բոլորի խառնուրդը: Ինձ ուշադիր ուսումնասիրելուց հետո կենդանին պառկեց գետնին ու փակեց աչքերը:

Հետո լսվեց դռան զանգը:

Բարեհամբ էր Անտոնը: Երբ նա բարեւեց ինձ, ես զարմանքով նկատեցի, որ նա առնվազն կլիներ հիսուն տարեկան: Պարոն համանախագահը ներողություն խնդրեց ուշանալու համար: Մենք անցանք ճաշասենյակ ու սեղան նստեցինք:

Ընթրիքը բոլորովին էլ սովորական չէր: Կարելի է ասել՝ ամեն օր չէ, որ ինձ հաջողվում է այսպիսի ընթրիքի սեղանին մոտ նստել: Առանց Աղայի ասելու էլ կարելի էր հասկանալ, որ ծովային կենդանիները հատուկ իրենց խոհանոցի համար պարբերաբար բերվում են ուղիղ Ֆրանսիայից:

Իսկ բեղավոր, հաղթանդամ խոհարարը՝ ծովային կենդանիների հայրենակիցը, ամեն մի նոր կերակրատեսակի հետ հայտնվում էր պարոն Անտոնի թիկունքում:

- Մեր առաջին հանդիպման ժամանակ ես չհասցրի ձեզ հետ ինչպես հարկն է ծանոթանալ,- բաժակը բարձրացրեց տանտերը:

Բացահայտորեն զգացվում էր, որ նա ինձ հանդուրժում էր միայն հանուն Վիկայի:



- Դա կարող եք անել հիմա,- ժպտացի ես ու դատարկեցի բաժակս:

Կենդանին փռվել էր աթոռիս կողքին եւ հետեւում էր, պատառաքաղիս շարժումներին: Նա չափազանց նման էր տիրոջը, եւ երկուսին նայելիս էլ ախորժակս փակվում էր:

Սուրճը խմելուց հետո Անտոնն ինձ առաջարկեց շախմատ խաղալ եւ հրավիրեց իր աշխատասենյակը: Մենք խաղացինք երեք պարտիա, եւ երեքում էլ ես պարտվեցի:

Երբ վերջացրինք խաղալը, արծաթյա խաղաքարերը հավաքելով՝ նա հարցրեց.

- Վիկայի հետ կապված ձեր մտադրությունները լո՞ւրջ են, թե՞...

Այդ հարցին ես բոլորովին չէի սպասում: Հանկարծակիի եկա եւ նույնիսկ չգիտեի՝ ինչ պատասխանել: Ավելի ճիշտ՝ չգիտեի ինչպես պատասխանել՝ ժպտո՞վ, արհամարհակի՞ց, թե՞ կոպտորեն: Ո՞վ էր հարցնողը: Ինչո՞ւ էր հարցնում եւ ի՞նչ իրավունքով ուներ հարցնելու: Ամեն դեպքում, չհասցրի պատասխանել, նա չխկոցով փակեց շախմատն ու շարունակեց:

- Գուցե դա իմ գործը չէ, բայց Վիկան Աղայի ընկերուհին է, հասկանո՞ւմ եք, եւ ես չեմ կարող նրա մասին չմտածել: Վիկային անհրաժեշտ է ապահովված կավալեր, որը հետագայում կդառնա նրա ամուսինը: Իսկ այդպիսին կան, հավատացնում եմ: Ի՞նչ կարող եք դուք նրան տալ, բացի ինչ-որ ռոմանտիկ հանդիպումներից:

- Դուք շատ կոպիտ մարդ եք,- հանգիստ ասացի ես,- բոլորովին չի երեւում, որ աշխատում եք ֆրանսիացիների հետ:

Նա մի քիչ զգաստացավ:

- Ես չէի ուզում ձեզ վիրավորել, բայց հուսով եմ, որ դուք Վիկայի հետեւից չեք գնա Փարիզ, ինչպես գնացիք Մոսկվա:

Ես սեղմեցի ասածներս ու մի կերպ ստիպեցի ինձ լռել: Ահավոր հուզված էի, որովհետև... Որովհետև գիտեի, որ Անտոնը ճիշտ էր:

Պարզվեց, որ մայիսյան իմ անգործ օրերը լռությունն էին փոթորկից առաջ: Ներկերի և բանվորական արտահագուստի գործերը կարելի էր համեմատել ֆուտբոլային այն ընկերական հանդիպումների հետ, որ թիմն անց է կացնում խոշոր մրցումներից, ասենք՝ Եվրոպայի առաջնությունից առաջ: Միայն թե, անկեղծ ասած, այդքան բարձր թռիչքի ես բոլորովին չէի սպասում:

Բայցևայնպես, ամեն ինչ եղավ շատ հանկարծակի, և երբ իմ ծանոթ գլխավոր ինժեները հայտնեց, որ մի ձեռնարկության մեծ քանակությամբ ապրանք է անհրաժեշտ ու տվեց փոխտնօրենի այցետոմսը, ես մտածեցի, որ դարձյալ գործը գլուխ չի գալու: Սակայն, երբ այցետոմսի վրա կարդացի՝ «Տրանսգազվերանորոգում», մի փոքր հույս արթնացավ մեջս, որովհետև ես գիտեի, որ այդ կարգի ձեռնարկությունները փող ունենում են: Մի առիթով նույնիսկ Կոտն ասել էր, որ եթե հիմնարկության անվանման մեջ տեսնեմ նավթ կամ գազ բառերը, առանց հապաղելու, կառչեմ ցուցանակից:

Ինչևէ, գնացի այցետոմսի հասցեով և իմ վարձած տան մոտակայքում գտա մի հսկա շենք, ուր վերանորոգման աշխատանքներ էին ընթանում, ու նույնիսկ կիսատ վիճակում երևում էր, որ առողջ գումարներ են ծախսվում:

Փոխտնօրենը բավականին երիտասարդ էր և ավելի շատ նման էր բանկիրի: Ներայանալիս նա չտվեց հայրանունը:

- Իգոր,- պարզապես ասաց նա:

- Շատ հաճելի է,- ես սեղմեցի նրա ձեռքը,- ինձ ձեզ մոտ է



ուղարկել մեքենաշինական գործարանի գլխավոր ինժեները:

- Ես տեղյակ եմ, նա ինձ քիչ առաջ զանգահարեց: Մենք ընկերներ ենք: Ասում է, որ ձեզ հետ կարելի է աշխատել:

Իգորն ինձ հրավիրեց նստել, հետո մոտեցավ հսկա, սև գրասեղանին ու կանգ առավ դրա մի ծայրին դրված արբապատկերի մոտ: Բարձրացրեց այն ու պահեց պատուհանից ընկնող լույսի տակ:

- Անցյալ դարասկզբի գործ է, դուք հասկանո՞ւմ եք նման բաներից:

- Մի քիչ,- պատասխանեցի ես ու մոտեցա նրան:

- Սրա համար ես վճարեցի հազար դոլար,- ասաց Իգորը,- բայց այն անհամեմատ թանկ արժե:

Նա արբապատկերը մեկնեց ինձ: Ես ավելի ուշադիր նայեցի: Այն, իրոք, բացառիկ գործ էր:

- Այո,- ասացի,- անհամեմատ թանկ արժե... Իսկ մի քանի տարի առաջ կարելի էր մի շիշ օղով այդպիսի բան ձեռք բերել գյուղերից:

- Իսկապես,- Իգորը նստեց իր կաշվե բազկաթոռին,- և որտեղ էր այդ ժամանակ մեր խելքը: Ես արբապատկերների պատկառելի հավաքածու ունեմ, բայց ընդամենը երկու տարի է, ինչ սկսել եմ հավաքել:

- Եթե ինձ երբևէ մի այդպիսի բան պատահի, ուրախ կլինեմ համալրել ձեր հավաքածուն,- ես արբապատկերը դրեցի գրասեղանին ու նստեցի:

Իգորը ծիծաղեց:

- Դա մեծ շռայլություն կլինի ձեր կողմից: Բայց եկե՛ք խոսենք գործի մասին: Ընկերս ասաց, որ ձեզ հետ կարելի է աշխատել, դուք զերծ եք որոշ բարդություններից:

Ես հասկացա՝ ինչ բարդությունների մասին էր խոսքը: Իգորի պես մարդիկ շատ շուտ են իրենց մատնում: Ի տարբերություն

«Արշին» գործարանի փոխտնօրենի, այս մարդը նախևառաջ մտածում էր գործարքից իր ստանալիք շահի, ապա՝ հիմնարկության մասին:

- Ես իսկապես զերծ եմ ձեր նկատի ունեցած բարդույթներից,- ասացի,- և եթե ձեր ձեռնարկությանը ինչ-որ ապրանք է հարկավոր, և մենք կարողանանք ճարել, իսկ մենք, համոզված եղեք, ոսկյա էլեկտրոդներ էլ կարող ենք ճարել, ապա դուք ոչ մի դեպքում դժգոհ չեք մնա:

«Ոսկյա էլեկտրոդները» ես սովորել էի Կոտից:

- Ոսկյա էլեկտրոդնե՞ր,- կրկնեց Իգորը,- լավ է մտածված: Սակայն մեզ առայժմ ուրիշ բան է հարկավոր:

- Ի՞նչ:

- Մեկուսիչ նյութեր: Մեզ օդի պես անհրաժեշտ է ՄԿՌ-Ֆ 100 տեսակի մեկուսիչ նյութ: Այն օգտագործվում է ձմռանը գազատար խողովակները փաթաթելու համար: Ձեզ ծանո՞թ է այդ անունը:

- Այո,- ասացի ես՝ չնայած առաջին անգամ էի լսում դրա մասին:

- Դուք ունեցե՞լ եք այդ ապրանքից:

- Ոչ,- ասացի,- եթե պետք է, կճարենք:

- Դե, ճարելը ոչ մի պրոբլեմի հետ կապված չէ, ես ինքս կարող եմ ձեզ ասել, թե որտեղ է այն արտադրվում,- Իգորը գզրոցից մի թուղթ հանեց, բայց չտվեց ինձ,- այդ գործարանի հետ մենք աշխատել ենք մի քանի տարի, բայց վերջին գործարքից հետո պարտք ենք մնացել բավականին խոշոր գումար: Փողի փոխարեն մենք նրանց առաջարկում ենք ավտոմեքենաներ կամ մուրհակներ, բայց նրանք չեն համաձայնվում, իսկ ամենաուշը սեպտեմբերից պետք է խողովակները փաթաթել:

- Այսինքն՝ դուք մե՞զ էլ փող չեք տալու,- ընդհատեցի ես:

- Ոչ, բայց մի՞թե ավտոմեքենան կամ մուրհակը փող չէ:



- Այդ դեպքում ինչո՞ւ նրանք չեն վերցնում:

- Դա շատ պարզ է, մուրհակները մեր քաղաքի հիմնարկ-ձեռնարկություններինն են և այնտեղ չեն կարող իրացվել, իսկ ավտոմեքենաներ երևի այնքան շատ ունեն, որ իրենք են դրանցով ապրանքափոխանակություն անում:

- Լավ,- ասացի,- իսկ որքա՞ն է ձեզ հարկավոր:

- Հարյուր տոննա:

Ես չհավատացի լսածիս: Նույնիսկ չկարողացա թաքցնել շփոթմունքս: Իգորը քթի տակ ծիծաղեց և ինձ մեկնեց գզրոցից հանած թուղթը:

- Եթե սա ձեզ համար չափազանց մանր գործ չէք համարում,- ասաց նա,- ապա այստեղ այդ գործարանի գնացուցակներն են ու ռեկվիզիտները: ՄԿՌ-Ֆ 100-ը նրանք վաճառում են մեկ տոննան վեց միլիոն ռուբլով: Դուք կարող եք դնել ձեզ ձեռնտու վրադիր: Մեր ձեռնարկությունն անմիջապես կփոխհատուցի մուրհակներով, կամ ավտոմեքենաներով: Ձեր ասացած շահույթի քսան տոկոսն իմն է:

- Քսան տոկո՞սը,- զարմացա ես:

- Իսկ ի՞նչ էիք կարծում: Եթե ուրիշներն աշխատում են հինգ տոկոսով, դա դեռ ոչինչ չի նշանակում: Ես ձեզ առաջարկում եմ չլսված պայմաններ: Կրկնում եմ, դուք կարող եք դնել ձեզ ձեռնտու վրադիրը...

Ձեռնոցների վաճառականը ոչինչ չասաց: Նույնիսկ ոտքս չտրորեց, ինչպես անում էր երբեմն, նույնիսկ վայնասուն չարձակեց, ինչպես անում էր սովորաբար: Եվ ես ինձ իրավունք վերապահեցի մտածել, որ նա կաթվածահար եղավ: Թերևս՝ «հարյուր տոննան» կամ «ձեռնտու վրադիրը» լսելիս: Բայց հավասարապես, նա իրեն իրավունք չէր վերա-

պահի ինձ չհիասթափեցնել, որովհետեւ գործարքը կարող էր ձախողվել, շատ հնարավոր էր, որ ձախողվեր, եւ նա արդեն կարող էր իր կաթվածահար սրտի ուզածի չափ հռհռալ, ինչպես անում էր ավելի հաճախ:

Բայցեւայնպես, որքան էլ հավանական լիներ գործարքի ձախողումը, դա արդեն հինգ պարկ ձեռնոց չէր: Եւ, եթե նույնիսկ գործարքը ձախողվեր, ես արդեն գործ կունենայի մեկուսիչ նյութերի վաճառականի հետ, այն էլ՝ ՄԿՌՖ 100 տեսակի: Սա արդեն առաջընթաց էր:

Բայց ինչու հատկապես պետք է ձախողվեր գործարքը: Ես Իգորից մեկ օր էի խնդրել մտածելու համար, եւ, հրաժեշտ տալիս, նա ասել էր, որ չի կասկածում իմ հնարավորություններին: Ավելին, ես ինքս էլ հիմքեր ունեի չկասկածելու իմ հնարավորություններին: Գործի հաջողության նախադրյալները մեծ մասամբ կային. կար ապրանքը, կար գնորդը եւ կար «մեզ ձեռնտու վրադիրը»: Բայց հարյուր տոննա ապրանքը գործարանից գնելու համար անհրաժեշտ էր վեց հարյուր միլիոն: Մոտ հարյուր քսան հազար դոլար: Ես գիտեի, որ Կոտը չունի այդ գումարի նույնիսկ մեկ քառորդը: Ինչեւէ, հարկավոր էր շտապ գտնել նրան:

Կոտին գտա իր բնակարանում՝ մի աղջկա հետ ընթրելիս: Մեկնել էի անհապաղ, առանց զգուշացնելու: Ամբողջ ճանապարհին մտածում էի, թե ինչ առանձնահատուկ ձեւով մատուցեմ ընկերոջս այս անակընկալը, բայց նրան տեսնելով՝ անկախ ինձանից գոռացի.

- Մեզանից հարյուր տոննա մեկուսիչ նյութ են ուզել:
- Չի կարելի նման կատակներ անել,- ասաց Կոտը:
- Ով կատակում է, թող մեկուսիչ նյութ դառնա:



Հետո աղջիկն ինձ համար սուրճ եփեց: Նա ջրահարսի պես երկար, շեկ մազեր ուներ եւ գրեթե նույնքան երկար քիթ, իսկ ես փչացրել էի նրա երեկոն: Կոտը սկսեց ինձ հարցաքննել: Նրան հետաքրքրում էր ամեն բան: Պահանջեց, որ ես նկարագրեմ ձեռնարկության շենքը, նախամուտքը, ներքին հարդարանքը, ապա անցավ Իգորին եւ հարցրեց նրա արտաքինից, սանրվածքից, շարժուձեւից, եւ վստահ եմ, եթե դույզն իսկ կասկած ունենար, որ հնարավոր է, որ դա էլ գիտենամ, կհարցներ, թե ինչ տեսակի էր փոխտնօրենի վարտիքը:

Ապա մենք սկսեցինք հաշվարկներ անել: Ամեն ինչ չափազանց հարթ էր ու սահուն: Պարզվեց, որ մենք շահելու ենք երեք հարյուր քսան միլիոն:

- Միայն թե փոխտնօրենին վճարելիք ինչ-որ տոկոսների մասին խոսք լինել չի կարող,- նկատեց Կոտը,- դա կաշառք տալ է, հասկանու՞մ ես: Մենք ինքներս նրան ոչինչ չենք տալու: Ասելու ենք մեր գինը, իսկ նա կարող է գրել, որքան ուզում է: Այդ մանրուքները շատ կարեւոր են, որպեսզի հետո փաստի առաջ չկանգնենք:

Բայց ես այլեւս չէի լսում: Երեք հարյուր քսան միլիոն: Այդ փողով կարելի էր Երեւանում բնակարաններ գնել իմ բոլոր զարմիկների ու զարմուհիների համար, որոնք անտուն-անտեր թափառում են աշխարհով մեկ: Կարելի էր աշխատանքով ապահովել իմ բոլոր գործազուրկ բարեկամներին: Կարելի էր հինգ անուն թերթ ու ամսագիր հրատարակել, հենց թեկուզ ի հեճուկս նրանց, ովքեր հրդեհեցին մեր շաբաթաթերթի խմբագրատունը... Մի խոսքով, կարելի էր հանգիստ խղճով վերադառնալ տուն, եթե...

Կոտը որոշեց ինձ հետ գալ եւ հաջորդ առավոտյան «Տրանսգազվերանորոգման» հետ պայմանագիր կնքել: Այնպես, թե այնպես, մենք շատ բան չէինք կորցնի չնայած այդ դեպքում, եթե չկարողանայինք ապրանքը ճարել, եւ զոր-

ծառը չկայանար մեր մեղքով, ստիպված էինք լինելու տու-զանքներ վճարել: Իսկ եթե ուշացնեինք պայմանագիր կնքե-լը, հնարավոր է, որ մեր փոխարեն դա աներ ուրիշը:

Արդեն սկսել էր չափազանց ուշ մթնել... Շուրջս ամեն ինչ ինձ այնքան հարազատ էր դարձել, որ երբեմն թվում էր՝ ողջ կյանքս այստեղ եմ ապրել: Յուրաքանչյուր փողոցի, պուրա-կի, զբոսայգու ու սրճարանի հետ կապված էին հիշողու-թյուններ, հիշողություններ, որոնք գլխապտույտ էին առա-ջացնում կենտրոնախույս կարուսելի պես:

Թվում էր, թե ամեն ինչ և ամեն ոք այստեղ է, մի փողոց կամ մի թաղամաս այն կողմ: Երբեմն էլ թվում էր, թե ոչինչ ու ոչ ոք չունեմ, ոչինչ ու ոչ ոք, որ կարող է անցկացնել գլ-խապտույտս:

Եվ նույնիսկ իմ հայրենիքի երկնակապույտ ջրերը, երկնա-ձիգ լեռները, վանքերն ու մատուռները, խաչքարերն ու գայ-տաղբյուրները, իմ երկրի հիշատակներն ու ցավերը, ցավերը, երգերն ու վերքերը, ցավոտ հույզերն ու հույսերը, թվում էր՝ տեսնում էի մայրամուտից հետո էլ: Ես տեսնում եմ, քանի դեռ բաց են աչքերս, քանի դեռ պտտվում է կարուսելը՝ դանդաղ, արագ, ավելի արագ, ու նորից գլխապտույտ, գլխապտույտ...

Էլյայի գիշերային զանգերն ինձ համար այլևս սովոր-կան էին դարձել: Այդ տարօրինակ աղջիկը տարօրինակ կեր-պով մտել էր իմ տարօրինակ օրերի մեջ: Նա միշտ շտապում էր, միշտ նրան պետք էր ինձ անմիջապես տեսնել, միշտ ինչ-որ անհետաձգելի գործ ուներ, և միշտ նոր զգեստով ու սանր-



վածքով էր:

Հիմա էլ այս ուշ ժամին, ես նրան սպասում էի կինոթատ-րոնի մոտ, որը դարձել էր մեր մշտական ժամադրավայրը, և արդեն ինձ տրամադրել էի մի անհավանական լուր լսելու կամ մասնակիցը լինելու ինչ-որ արկածի:

Ազդագրին պատկերված էր «Մեծ զբոսանք» ֆիլմից մի պատկեր, որ Բուրվիլը վիճում էր Ֆյունեսի հետ: Ես հարյուր անգամ տեսել էի այդ ֆիլմը, բայց եթե կինոթատրոնը բաց լիներ, տոմս կգնեի ու հաճույքով կդիտեի մեկ անգամ ևս: Բարությամբ ու հումորով հարուստ այդ կինոնկարը, իմ կար-ծիքով, ավելին արժե, քան շատ «Օսկար» ստացած ֆիլ-մեր միասին վերցրած: Իմ հակակրանքը հատկապես ֆիլմե-րին չի վերաբերում, պարզապես ես ասում եմ բոլոր տեսակի օսկարները, չնայած հազիվ թե կարողանամ բացատրել, թե ինչու:

Նկարահանումները ես վաղուց արդեն դադարեցրել եմ: Պակասում էր շատ կարևոր մի բան, չգիտեմ՝ հատկապես ինչ... Կամ էլ կարելի է ասել՝ ստեղծագործական ճգնաժամ: Կարելի է ասել նաև փակուղային իրավիճակ: Ֆիլմի հերո-սը հիմա աշխատում է գիշերային սրճարանում: Չի հերիքում լույսը, լո՛ւյսը... Սցենարը պետք է փոխել: Ծայրեիծայր: Ո՛չ, նույնը գրելու անհրաժեշտություն չկա:

Կեսգիշեր: «Մեծ զբոսանք» ֆիլմի ազդագրի դիմաց կանգնած է ծխախոտ ուտող մեկը՝ մոլորված մի պոետ, մոլոր-ված մի խելառ՝ անհայրենիք ու անտուն: Հիմա սա պարզ պատմություն չէ, պարզապես պատմություն չէ թափառական շան մասին: Հիմա սա ինտելեկտուալ պոեզիա է: Ազդագրից պատռված թղթի մի կտոր խաղում է քամու հետ: Դը Ֆյունե-սի ականջն է՝ առանց բլթակի: Բլթակը մնացել է տեղում:

Մոտեցավ Էլյան:

- Կոսյայի գործերը լավ չեն,- ասաց:

- Արի՛ քայլենք:
- Նա մի տեսակ է դարձել, արդեն մի քանի օր է՝ տուն չի գնում, գիշերները մնում է ինձ մոտ: Իսկ առավոտյան փող ուզեց, ասաց՝ պարտքով: Պետք է տեսնեիր նրա դեմքը:
- Ինչքա՞ն,- հարցրեցի ես:
- Հարյուր հազար:
Ես ծիծաղեցի.
- Դա դեռ չի նշանակում, որ նրա գործերը վատ են, Էլյա: Նա քեզանից սիգարետի կամ բենզինի փող է ուզել, որովհետեւ այդ պահին մոտը չի եղել:
- Դե ոչ,- համառեց նա,- մի բան գիտեմ, որ ասում եմ: Հարցը փողը չէ: Նա անընդհատ ինչ-որ մարդկանց է զանգահարում: Հիմնականում՝ ուրիշ քաղաքներ: Խոսակցություններից ես քիչ բան եմ հասկանում, բայց պարզ է, որ օգնություն է հայցում, պարզ է, որ հետեւից ընկած են, եւ նա թաքնվում է:
- Ինչի՞ց է պարզ, ի՞նչ է նա ասում այդ մարդկանց:
- Դե, չգիտեմ, ես լսում եմ միայն առանձին բառեր, հիմնականում՝ հայհոյանքներ:
Աստիճանաբար սկսեցի հասկանալ, որ Էլյայի մտավախությունն անհիմն չէր: Մեծ խելք պետք չէր՝ հասկանալու համար, որ Կոստյային իսկապես ինչ-որ բան էր սպառնում:
- Իսկ դու ինչո՞ւ ես անհանգիստ,- միամտորեն հարցրեցի ես:
Նա թոթվեց ուսերը.
- Ինչպես բացատրեմ, ես վախենում եմ, որ նրա հետեւից կգան ոստիկանները եւ ինձ էլ հետը կտանեն: Ես գիտեմ, որ նա բոլորովին էլ օրինական ճանապարհով չի փող աշխատում: Ուզում էի, որ ինձ խորհուրդ տաս:
Աղջիկը վախենում էր ոչ թե ոստիկաններից, այլ մտածում էր, որ Կոստյան այլեւս չի կարող ապահովել իր նախկին բա-



րեկեցությունը, քանի որ սկսել է իրենից փող ուզել: Սա էր Էլյային անհանգստացնում եւ նրա համար այլեւս անիմաստ էր դառնում Կոստյայի սիրուհին լինելը: Այստեղ արդեն նրա «մեծ» խելքը չէր բավարարում՝ հասկանալու, թե ինչ է տեղի ունենում, եւ արդյո՞ք այդպես էլ շարունակվելու է:
Իսկ ես գիտեի, որ Կոստյայի պրոբլեմները կապված են բոլորովին էլ ոչ ֆինանսների կամ ոստիկանների հետ: Անկասկած, դա ընդամենը սովորական պայքար էր հանցագործ խմբավորումների միջեւ, որոնք չէին կարողանում կիսել ինչ-որ տիրույթներ:
Եւ հանկարծ մտածեցի, որ դա ինձ համար էլ էր վատ: Ի՞նչ կլիներ, եթե Կոստյան կորցներ իր հեղինակությունը: Չէ՞ որ ինձ առայժմ չէին անհանգստացնում միայն նրա շնորհիվ: Բոլոր դեպքերում հարկավոր էր արագացնել այս նոր գործը: Իսկ Կոստյային օգնել, ցավոք, ես չէի կարող: Եւ գուցե նաեւ չէի էլ ուզում: Եթե միայն նրան փող առաջարկեի: Ասենք՝ հարյուր հազար ռուբլի՝ սիգարետի կամ բենզինի համար:
- Հիմա նա ի՞նչ մեքենա ունի,- հարցրեցի ես:
- Ես մեքենաները չեմ տարբերում: Ինչ որ մեծ ու շքեղ մեքենա է:
- Սպիտա՞կ:
- Ոչ, երկնագույն: Գիտես, հիմա նա ինձ առաջվա պես չի խանդում: Երկու օր առաջ ես շատ ուշ վերադարձա տուն, իսկ նա նույնիսկ չհարցրեց, թե որտեղ եմ եղել: Միայն պատռեց զգեստս, որովհետեւ բացվածքը շատ մեծ էր:
- Հիմա նա որտե՞ղ է:
- Չգիտեմ: Չեմ էլ ուզում իմանալ: Գուցե իմ տանը: Ես սպասում եմ, որ նա մի անգամ էլ ինձ մատով դիպչի:
- Իզուր... Ես քեզ ավելի խելացի բան կառաջարկեմ: Հիմա պետք է նրան լավ վերաբերվել:
- Ի՞նչ,- Էլյան կանգ առավ ու աչքերը չռեց վրաս:

- Պետք է ուշադիր լինել նրա նկատմամբ,- անվրդով շարունակեցի ես:- Պետք է ամեն ինչ անել նրա ուզածով: Այդպես հետո ավելի լավ կլինի հենց քեզ համար: Կոսյայի մոտ հիմա դժվար շրջան է, որը, ավելի հավանական է, որ անցնի: Ոչ մի ոստիկան նրա հետեւից չի գա: Նրա պրոբլեմները ոստիկանների հետ չեն կապված, այլ իր նմանների: Նա ուզում է իրեն ամեն ինչի տեր դառնալ, եւ, նրան ճանաչելով, ես վստահ եմ, որ նա կարող է դրան հասնել, եթե...

Էլյան հասկանում էր: Շարունակեցինք քայլել:

Արդեն բավականաչափ հեռացել էինք կինոթատրոնից, եւ ես պետք է անհանգստանայի այնտեղ թողած մեքենայի համար, որի ջարդված ապակին դեռ չէի փոխել: Բայց ուրիշ բան էր սկսում ինձ լրջորեն անհանգստացնել: Իմ կինոբարեկամները, հուսով եմ, չեն նեղանա... Կարծես թե կենացները թանկանում են: Պետք էր իջնել հրապարակ: Ես մտահոգվելու լուրջ պատճառներ ունեի:

Կոսը հիմա այստեղ էր՝ իմ վարձած բնակարանում, եւ մենք առավոտյան պետք է պայմանագիր կնքեինք «Տրանսգազվերանորոգում» ձեռնարկության հետ: Եթե ամեն ինչ բարեհաջող ընթանար, եւ Կոսին հաջողվեր գումար հայթայթել, ապա գործարքը կկայանար մեկ ամսից էլ շուտ: Մեկ ամիսը մեծ ժամանակ չէր նման գործարքի համար, բայց բավական էր, որ Կոսյան հասցներ պարտվել, եթե պարտվելու էր: Եւ, եթե նույնիսկ մենք այդ ընթացքում հասցրած լինեինք ապրանքը հանձնել, ապա նոր ժամանակ էր անհրաժեշտ լինելու՝ ապրանքի փոխարեն ստացված մեքենաները իրացնելու համար: Իսկ դրանք մեկը կամ երկուսը չէին լինելու, այլ երեսունը, եւ այս քաղաքում, որ ամեն ինչ հսկվում էր հանցագործ խմբավորումների կողմից, հեշտ չէր լինի առանց անախորժությունների այդքանն իրացնելը՝ թիկունքում չունենալով Կոսյայի պես մեկի հեղինակությունը: Ու, եթե Կոսյայի



դիրքերն այդ ընթացքում թուլացած լինեին, ապա անհնար կլիներ վերոհիշյալ անախորժությունների դեպքում նրան դիմելը: Ավելին, արդեն դրամաշորթներին որոշակի գումար մուծելով էլ հարցը չէր լուծվի, քանի որ նրանք վաղուց ատամ ունեին ինձ վրա:

-Ես չեմ կարող նրան լավ վերաբերել,- հանկարծ ասաց Էլյան՝ կրկին կանգ առնելով,- դու կարող ե՞ս համոզել սարդոստայնն ընկած թիթեռին, որ նա լավ վերաբերվի սարդին:

- Դրանք տարբեր բաներ են. թիթեռը սարդից ոչինչ չի ստանում:

- Իսկ ես ստանո՞ւմ եմ: Ի՞նչ է իմ ստացածը: Զզվել եմ ամեն ինչից: Ես ուզում եմ սիրել, ինձ ուրիշ ոչինչ պետք չէ: Ես միայն ուզում եմ սիրել:

Մենք դեռ երկար քայլեցինք: Էլյան ասում էր, որ տուն չի գնալու, իսկ ես չէի ուզում նրան մենակ թողնել: Նա ինձ մի քանի անգամ հարցրեց, թե ինչ բան է սերը, եւ ես չկարողացա պատասխանել: Եթե հարցներ, թե ինչ է անհանգստությունը կամ վախը, հաստատ կկարողանայի:

««Տրանսգազվերանորոգում» ձեռնարկությունը՝ ի դեմս փոխտնօրեն Միրոնչիչենկո Ի. Մ.-ի, գործող ձեռնարկության կանոնադրության հիման վրա, որը հետագայում կանվանվի գնորդ, մի կողմից, եւ «Արեւածագ» ՍՊԸ-ն, ի դեմս՝ Պաղայան Ա. Ա.-ի՝ գործող ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, որը հետագայում կանվանվի մատակարարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետեւյալի մասին.

մատակարարողը պարտավորվում է քսան բանկային օրվա ընթացքում՝ սկսած պայմանագրի ստորագրման ժամկետից,

տեղ հասցնել հարյուր տոննա ՄԿՌ-Ֆ-100 տեսակի մեկուսիչ ճյութեր՝ մեկ տոննան սամանեկ միլիոն ռուբլի արժողությամբ, չհաշված ավելացված արժեքի հարկը:

Գնորդը պարտավորվում է ապրանքը տեղ հասնելու պահին՝ որպես փոխհատուցում, տալ ավտոմեքենաներ՝ մեկ հատը երեսունյոթ միլիոն ռուբլի հաշվարկով:

Տրանսպորտային ծախսերը կատարվում են գնորդի հաշվին:

Պայմանագրի ընդհանուր գումարը կազմում է մեկ միլիարդ երեք հարյուր յոթանասուն միլիոն ռուբլի, որի մեջ մտնում է՝ մեկ միլիարդ հարյուր միլիոն ռուբլի՝ ապրանքի գինը, երկու հարյուր բսան միլիոն ռուբլի՝ ավելացրած արժեքի հարկը և հիսուն միլիոն ռուբլի ճանապարհածախսը:

Տվյալ պայմանագրի հետ կապված բոլոր վեճերն ու տարաձայնությունները կարգավորվում են բանակցությունների միջոցով: Այն դեպքում, եթե բանակցությունները չօգնեն, վեճերը հարթում է արբիտրաժը:»

Փոխտնօրենը զզրոցից հանեց կնիքը և կնքեց պայմանագիրը: Մենք արդեն կնքել էինք: Մինչ այդ, երբ դեռ նոր ոգեւոր է մտնեինք փոխտնօրենի մոտ, ես փորձում էի հասկանալ Կոսին, որ սամանեկ միլիոնը չափազանց շատ է, բայց նա պնդում էր, որ եթե նույնիսկ սամներկու էլ ասենք, Իգորը համաձայնվելու է: Այդ խորամանկը հիմա անուշ փաստաթղթերի մեջ կգրի, որ մեկուսիչ ճյութերի դիմաց վճարել է հենց այդքան և ամեն տոննայի մեջ կշահի մեկ միլիոն, այսինքն՝ հարյուր միլիոն: Բայց դա մեզ չէր վերաբերում: Մենք նրա հետ պայմանավորվել էինք, որ նա իր բաժն տոկոսն այդ կերպ է վերցնելու:

Փաստորեն, մենք ինքներս ոչ մի հակաօրինական բան չէինք անում, չնայած կարող էինք: Կարող էինք գործարքը կատարել կեղծ կնիքով, կեղծ կազմակերպության անունից





եւ այդ կերպ խուսափեինք հարկերը մուծելուց: Այսինքն՝ կարող էինք շահել եւս երկու հարյուր քսան միլիոն ռուբլի: Սակայն որոշեցինք բավարարվել քչով, մանավանդ, որ այն այնքան էլ քիչ չէր:

Ուրեմն ի՞նչ էր ստացվում: Եթե ամեն ինչ բարեհաջող ընթանար, եւ մենք կարողանայինք վեց հարյուր միլիոնով գնել ապրանքը, ապա «Տրանսգազվերանորոգումը» մեզ դրա դիմաց պետք է տար երեսուն հատ ավտոմեքենա: Կոտն ասում էր, որ դրանք մենք կարող ենք վաճառել՝ մեկ հատը երեսուներկու միլիոնով: Ուստի՝ կստացվեր ինը հարյուր վաթսուն միլիոն ռուբլի: Հանած վեց հարյուր միլիոն՝ ապրանքի գինը, փաստորեն, մենք շահում էինք ուղիղ երեք հարյուր վաթսուն միլիոն ռուբլի:

- Եթե ամեն ինչ լավ լինի,- ասաց Կոտը, երբ մենք արդեն դուրս էինք եկել հիմնարկությունից,- եթե ամեն ինչ լավ լինի, վերջին երկու մեքենաները չենք վաճառի, այլ կպահենք մեզ:

Եթե ամեն ինչ լավ լինի... Բայց ես վստահ էի Կոտի վրա: Նա ասել էր, որ գործարանից ապրանքը դուրս բերելու ձեւը կգտնի, նշանակում է, հենց այդպես էլ կլինի: Մենք պարզապես իրավունք չունեինք այս գործը ձեռքներիցս բաց թողնել:

- Ի՞նչ պետք է հիմա անենք,- հարցրի Կոտին, մեքենայի դուռը բացելով:

- Ամեն ինչ կմնա առաջվա պես,- պատասխանեց նա՝ նստատեղին հարմարվելով,- դու կմնաս այստեղ եւ ամեն օր կզանգահարես Իգորին. կհարցնես, թե ինչպես է նա, մեզ համար թանկագին, առողջությունը եւ այլն: Այնպես, միջանկյալ, երբեմն կխոսես գործի մասին:

- Արդյո՞ք դրա կարիքը կա, չէ՞ որ պայմանագիրը կնքված է,- միամտորեն հետաքրքրվեցի ես,- այդպես մենք նրան կզզվեցնենք:

- Ես հենց դա էլ ուզում եմ, որ դու անես: Ժամանակն է, որ հասկանաս՝ մենք այստեղ օտար ենք, և այդ պայմանագիրը մեզ ոչինչ չի տալիս: Մենք հետո, հարկ եղած դեպքում, չենք կարող այն մտցնել փոխանորդի աչքը, և նա դա հրաշալի գիտի: Եթե մենք մի որոշ ժամանակ կորչենք և այդ ընթացքում հայտնվի ինչ-որ մեկը և նույն մեր մեկուսիչ նյութերն ավելի ձեռնտու պայմաններով առաջարկի փոխանորդին, այդ շան որդին անմիջապես կմոռանա մեզ, և, առանց մի վայրկյան տատանվելու, նոր պայմանագիր կկնքի: Իսկ եթե, ինչպես դու ես ասում, մենք անընդհատ նրան զզվեցնենք, նա կհասկանա, որ մեզանից պրծում չկա, և մենք շատ ամուր ենք կպել այս գործին:

- Այլ կերպ ասած, ես պետք է լինեմ աչառու ու խանդոտ սիրեկանի դերում, որը ստիպված է հսկել իր մի քիչ թռիվռի սիրուհուն:

- Ճիշտ այդպես,- հաստատեց Կոտը,- և ամենագլխավորը, ոչ մեկին ոչինչ մի՛ ասա այս գործի մասին, լինի դա ծանոթ, հարևան, կրպակի աշխատող, թե մեկ օրվա աղջիկ:

Ես ոչինչ չպատասխանեցի: Հիմարություն էր այդ ամենը, չնայած գիտեի, որ նա ճիշտ էր ասում:

Մենք հասել էինք իմ շենքի մոտ, բայց Կոտը չուզեցավ տուն մտնել:

- Ավելի լավ է՝ ինձ միանգամից տանես ավտոկայան,- ասաց նա,- մնացած բաների մասին կխոսենք ճանապարհին:

- Ինչո՞ւ ես այդքան շտապում:

- Քսան բանկային օրն անում է քսանութ սովորական օր,- բացատրեց Կոտը,- դա շատ քիչ է այդպիսի գործի համար, ինչպե՞ս չշտապեմ:

- Այդ դեպքում ինչո՞ւ չգրեցինք քառասուն օր:

Կոտը զարմացած նայեց ինձ.



- Դու իսկապե՞ս գլուխ չես հանում նման բաներից, թե միայն ձևացնում ես:

- Նոր-նոր սկսում եմ գլուխ հանել:

- Ուրեմն իմացի՛ր, եթե մենք պայմանագրի մեջ գրեինք քառասուն օր, Իգորը կպատռեր այն և կտորները կլցներ մեր ծոցը: Այդ քսան օրը քիչ է մեզ համար, որովհետև մենք չենք ճարել ամենագլխավորը՝ փողը, մինչդեռ նրանց համար դա չափազանց շատ է, որովհետև ամռան վերջին պետք է փաթաթել գազատար խողովակները:

- Իգորն ասաց սեպտեմբերին:

- Թեկուզ,- Կոտը նայեց ժամացույցին,- մի քիչ արա՛գ քշիր, որ հասցնենք ավտոբուսին:

Մենք մի որոշ ժամանակ լռեցինք, հետո ես տվեցի ինձ ամենաշատ հուզող հարցը:

- Դու չե՞ս ուզում ասել, թե ինչպես ես պատրաստվում գնել ապրանքը:

- Ես ինքս էլ դեռ չգիտեմ,- մի տեսակ տարօրինակ ձայնով պատասխանեց Կոտը,- պատկերացում չունեմ: Բայց գործի այդ մասն ինձ վրա է: Մնացած ամենն ինչը դու ես արել ու անելու ես:

Ավտոկայան հասնելով՝ չնայած արգելող նշանին, ես մտա այն հրապարակն, ուր ավտոբուսներն էին: Մեկնման ժամն էր, և Կոտը կուշանար: Ճիշտ է, դրա համար ստիպված եղա քսան հազար ռուբլի տալ ասես գետնի տակից բուսած ավտոտեսուչներին, բայց, ինչ արած, մենք ունեինք ընդամենը քսան բանկային, այսինքն՝ քսանութ Աստծո օր:

Մինչ զբոսայգում նստած սպասում էի Վիկային, փորձեցի մի բանաստեղծություն գրել: Նրա ծննդյան օրն էր՝ խոնավ, ամպամած, քամոտ, սառը, ու զբոսայգին դատարկ էր, ու բանաստեղծությունը չէր ստացվում: Ի՞նչ էր պետք գրել: Արևի մասին, կամ ինչպես աղավնի, կամ ծովի ալիքների պես, չէ՞ որ ես նրա ամենասիրած բանաստեղծն էի: Չէ՞ որ Վիկան սիրում էր բանաստեղծին, և ոչ թե ձեռնոցների կամ մեկուսիչ նյութերի վաճառականին: Չէի՞ մատնի արդյոք իմ մտքի աղքատությունն ու չէի՞ հիասթափեցնի արդյոք նրան, եթե ծննդյան օրվա առթիվ մի բանաստեղծություն նվիրեի: Ծովի ալիքների պես. Ինչո՞ւ իմ միտքն ավելի խորը չի գնում: Ինչո՞ւ իմ երևակայությունն ինձ չի տանում այնտեղ, ուր չկա մորմոք, թախիծ ու բաժանում, այլ կա արև ու աղավնիներ:

Բայց ահա, գալիս էր իմ աղավնին: Ճերմակ, անգոյության հասնող ճերմակ և, կարծես հենց նոր էր ծալել թևերը երկար թռիչքից հետո:

- Ես ուզում էի քեզ մի բանաստեղծություն նվիրել արևի ու աղավնիների մասին, բայց վախեցա քեզ հիասթափեցնել:
- Ուրեմն նվիրի՛ր, բայց ուրիշ բանի մասին:
- Մյուս անգամ:

Զբոսայգու հսկա ծառերը կանգնած էին զգաստ ու սպասում էին անձրևին: Խորքում, ինչ-որ տեղ պտտվում էր սատանայի օղակը՝ մարդկանց մերթ պարգևելով երջանկություն, մերթ թողնելով դրա պատրանքը: Սատանայի օղակը՝ իր կանոնավոր ու անկանոն շարժմամբ: Ավելի հեռվում գետն էր... Մինչև ծովին հասնելը:

Ավելի ճիշտ՝ մինչև նավ-սրճարանին, որտեղից սկիզբ էր առել իմ բանաստեղծական տանջալից հոգևարքը:

Մոտեցավ մատուցողը: Նա աղվեսի աչքեր ուներ, բայց չտեսավ, որ Վիկան բռնել էր իմ ձեռքը: Իհարկե՛ կոնյակ... Ոսկեգույն, փայլուն զգեստով մի կին միայնակ պարում էր





հարթակում, ուր սպիտակ մարմարով խճանկարված շեփո-րահարը նվագակցում էր սևամորթ դաշնակահարին: Երբ կինը նստեց, ես մոտեցա մաեստրոյին և, մի թղթադրամ մեկ-նելով, պատվիրեցի մեր սիրած երգը: Նա հետ հրեց ձեռքս.

- Կլինի:

Իհարկե, կլինի: Ներքև, ներքև գետի եզրով: Երաժշտու-թյունը նույնն էր, հնչյունները նույնը: Բառերը չկային, բայց ես դրանք գիտեի: Ներքև՝ մինչև վերջը: Վերջը մոտ էր, և ես դա էլ գիտեի:

Հետո տաքսին սլացավ Մոսկովյան խճուղով: Անձրևը սկսվել էր և այնքան հորդառատ էր, որ ես ամուր գրկել էի Վիկային՝ վախենալով, որ կքշի կտանի նրան: Բայց ո՞վ կա-րող էր նրան տանել ինձանից:

Մենք մտանք տուն ու, ինչպես առաջին անգամ, լույսը չվառեցինք: Ու, ինչպես առաջին անգամ, շրջեցինք փետրա-վելը, ծաղկամանը, լուսամփոփը: Ու, ինչպես առաջին ան-գամ, դրսում անձրև էր:

Վիկան քնեց: Ես ծրարեցի ու նրա բարձի տակ դրեցի օրը: Շուտով լույսը կբացվեր:

Ես թուղթ ու գրիչ վերցրի և բազկաթոռը մոտեցրի սեղա-նին:

Սա արդեն բանաստեղծություն է:

Մարտ, սառնամանիք: Բոլորովին օտար քաղաք, դատարկ գրպաններ: Իմպրեսարիո: Նկարչուհի, ճակատին կախված վարսերի փունջ: Կոտ, հույսեր: Շախմատ ու գարեջուր սիրող հարևան-բարեկամ: «Աղջին», ներկեր: Գետ, գետի եզր: Գարուն, անձրև: Առաջին գործարք, փող: Առաջին գիշեր, սիրո թևեր: Կաթված, հիվանդանոց, դու դեռ ինձ սիրո՞ւմ

ես: Բանվորական արտահագուստ, դրամաշորթներ: Մոսկվա, հին ընկեր, զբոսայգի, կարոտած արահետներ, կերպարվեստի թանգարան, Ռենուար, մշակույթի ատաշե: Վառ թողած արդուկ, հրդեհ, սպիավոր: Շատախոս գեղեցկուհի, պոկեր, ոստիկաններ: Մայիս, ծառեր, վրան: Մեկուսիչ նյութեր, ֆանտաստիկ գումարներ, պայմանագիր: Վիկա, Վիկա, Վիկա...

- Բանաստեղծական բոլորովին նոր մոտեցում,- ասաց ձեռնոցների վաճառականը, որը պառկած էր Վիկայի կողքին՝ հագին միայն իմ զոլավոր վարտիքը:

Ես ձեռքս տարա կոնյակի շշին, բայց նա անմիջապես չքվեց: Ստիպված լցրեցի մի բաժակ ու խմեցի:

Մի քանի օր անց Կոսը զանգահարեց եւ ասաց, որ, չնայած ինչ-որ լուսավոր կետեր երեւում են, բայց առայժմ ոչ մի որոշակի բան չկա: Միակ մխիթարականն այն է, որ ինքը կապվել է մեկուսիչ նյութեր արտադրող գործարանի հետ եւ պարզել, որ այդ նյութերն ահռելի քանակությամբ լցված են պահեստներում ու սպասում են գնորդի: Եւ գործարանի տնօրինությունը համաձայն է, կանխիկ փող ստանալու դեպքում, ապրանքը տրամադրել տոննան ոչ թե՝ վեց, այլ՝ հինգ ու կես միլիոն ռուբլով:

Հնարավոր է նաեւ ապրանքափոխանակության տարբերակը, միայն թե այդ գործարանին անհրաժեշտ սոսինձը շատ դժվար է ճարել: Իրենց արտադրանքը բանվորական արտահագուստի հետ փոխանակելը գործարանի տնօրինությանը կարծես թե չի ոգեւորել՝ չնայած նրանք վերջնականապես չեն մերժել մեր այդ առաջարկը:

Ապա Կոսն ասաց, որ հիմա ինքը սպասում է մի քանիսի



պատասխանին, ովքեր հնարավոր է որոշակի տոկոսներով տրամադրեն մեզ անհրաժեշտ գումարը: Եթե դա չհաջողվի, նա պետք է մեկնի այն քաղաքը, ուր գտնվում է գործարանը, եւ աշխատի ամեն գնով համոզել տնօրինությանը՝ իրենց արտադրանքը փոխանակել բանվորական արտահագուստի հետ, ինչը մենք կարող էինք վերցնել ամենաչնչին գներով, վճարման ցանկացած ժամկետով եւ ցանկացած քանակությամբ:

Իսկ առայժմ հարկավոր է սպասել: Ես պետք է պարբերաբար հանդիպեմ Իգորին եւ ամեն կերպ փորձեմ մտերմական հարաբերություններ հաստատել նրա հետ:

Առանց այդ էլ, ես ամեն օր եթե նույնիսկ չէի հանդիպում, ապա գոնե զանգահարում էի Իգորին: Չեմ կարող ասել, թե դա մեծ բավականություն էր պատճառում ինձ կամ, առավել եւս, նրան, բայց, բոլոր դեպքերում, մեր հարաբերությունները դեռեւս, գոնե արտաքուստ, մտերմիկ էին:

Սակայն Կոսի վերջին զանգից հետո, երբ նա ասաց, որ հարկավոր է սպասել, ես սկսեցի մի քիչ անհանգստանալ: Այդ ընթացքում Իգորը կարող էր իսկապես ավելի ձեռնտու առաջարկ ստանալ:

Մասամբ էլ դա էր պատճառը, որ ես որոշեցի երիտասարդ փոխտնօրենին մի այնպիսի անակնկալ մատուցել, ինչը նրան պարզապես փաստի առաջ կկանգնեցներ:

Մի անգամ իմ հարեւան Վիտալի Մաքսիմովիչն ասել էր, որ տանը մի սրբապատկեր ունի, որից դեմ չի լինի բաժանվել, եթե դրա դիմաց պատշաճ գումար տան: Նա ասում էր, որ իր խնայողությունները վաղուց արդեն վերջացել են, եւ, քանի որ թոշակով ապրելն անհնար է, ստիպված է աստիճանաբար

վաճառել տան իրերը:

Երբ մտա հարեւանիս բնակարանը, նրան գտա մաշիսը ձեռքին՝ սեղանին փռած մի հսկայական աղյուսակի վրա կքված:

Ծերուկն ագաս ձեռքով ցույց տվեց կողքի աթոռը եւ նույնիսկ չբարձրացրեց գլուխը: Ես նստեցի ու նայեցի աղյուսակին: Դա հաջորդ օրը սկսվելիք ֆուտբոլի Եվրոպայի առաջնության այն ենթախմբի աղյուսակն էր, որում ընդգրկված էր Ռուսաստանի հավաքականը: Բաց քառակուսիների մեջ ծերուկը գրում էր հնարավոր բոլոր հաշիվները:

- Այս երկու հավաքականներից միայն մեկին կարել է պարտվել,- ասաց նա,- իսկ չեխերին հարկավոր է ամեն գնով հաղթել: Միայն այդ դեպքում մեր հավաքականը դուրս կգա հաջորդ փուլ:

- Ռոմանցեւը սկզբունքորեն լավ մարզիչ է, միայն թե, ինձ թվում է, նա չարաչափում է արտասահմանում խաղացող ֆուտբոլիստներին:

Ծերուկը չարտահայտվեց: Նա վեր կացավ ու պահարանից հանեց շախմատը: Բայց ես նրան ասացի, որ ուրիշ բանի համար եմ եկել:

- Ուրիշ բանի՞,- զարմացավ նա,-ի՞նչ ուրիշ բան:

- Ուզում եմ տեսնել ձեր այն արքապասկերը:

Նա տեղը դրեց շախմատը եւ զարմացած նայեց ինձ:

- Արքապասկե՞րը, ինչի՞դ է այն պետք:

- Կարծում եմ, ես նրա համար գնորդ եմ ճարել:

Տեսա, թե ինչպես իմ բարեկամի աչքերը փայլեցին: Բայց նա մի պահ տատանվեց:

- Այդ գնորդը քեզ մոտիկ մա՞րդ է:

Ես հասկացա, թե ինչու էր նա այդ հարցը տալիս:

- Ոչ, բոլորովին:

Նա գնաց եւ քիչ անց վերադարձավ արքապասկերը ձեռ-



քին:

Ես վերցրի այն ու տեսա, թե ինչպես խունացած փայտի վրա փայլեց Աստվածամոր լուսապսակը: Արքապասկերը բավականին լավ էր պահպանված եւ, իմ կարճ խելքով, պետք է, որ շատ հին լիներ:

- Ես սա երբեք չեմ կախել պատից,- այնպես ասաց Վիտալի Մախինովիչը, կարծես դրանից արքապասկերի արժեքն ավելանում էր:

- Չե՞ք կախել,- ես նայեցի նրան:

- Ոչ, չեմ հավատում նման բաներին:

Ոչ մի դեպքում չէի ուզում իմ բարեկամի հետ առեւտուր անել, դրա համար էլ չգիտեի, թե ինչպես հարցնել՝ որքան է նա ուզում արքապասկերի դիմաց: Բայց Վիտալի Մախինովիչն ինքը, անկախ իրենից, ինձ օգնության հասավ:

- Ես ստույգ գիտեմ,- ասաց նա,- որ սրա արժեքը երեք-չորս միլիոնից պակաս չի լինի, բայց եթե դու այդ ծանոթը երկուսն էլ տա, ոչինչ, համաձայնի՛ր:

Ես արքապասկերը դրեցի սեղանին, նստեցի ու գրպանիցս հանեցի սիգարետի տուփը: Բայց հիշեցի, որ ծերուկի մոտ ծխել չէր կարելի, չնայած նա ոչինչ չէր ասում:

- Վիտալի Մախինովիչ,- ես փորձեցի անկեղծ ձեւանալ,- ես մի քիչ հասկանում եմ այսպիսի բաներից եւ կարող եմ վստահեցնել ձեզ, որ արքապասկերն իսկապես արժե ամենապակասը չորս միլիոն: Իսկ իմ ծանոթը, որը պատրաստվում է գնել այն, բավականին հարուստ մարդ է, եւ մի ավելորդ միլիոնը նրա գրպանը չի ծակի: Ես համոզված եմ, որ նա հենց այդքան էլ կվճարի, այսինքն առեւտուր չի անի,- ես գրպանիցս մեքենաբար հանեցի վառիչը ու էլի խոթեցի տեղը,- այնպես որ, եկեք ես հիմա ձեզ տամ այդ գումարը եւ արքապասկերը վերցնեմ:

Ինձ թվում էր, թե ծերուկը հիմա ուրախությունից կխա-

թափվի ինձ, բայց փոխարենը նա խոժոռեց դեմքն ու զայրացած ասաց.

- Դու ինչո՞ւ պետք է վճարես ուրիշի փոխարեն, կամ ինչ է՝ կարծում ես, ես քեզ չե՞մ վստահում: Վերցրո՛ւ, տա՛ր, եւ երբ կվճարես, այն ժամանակ էլ կտաս փողը:

Ես վեր կացա:

- Սակայն ի՞նչ տարբերություն...

- Ինչպես ասում եմ, այնպես էլ արա,- ծերունին ինձ տվեց սրբապատկերն ու զոռով հրեց դեպի դուռը,- ինձ երկու միլիոնն էլ հերիք է, լսո՞ւմ ես, այդքան փող կբերես ու մնացածը կպահես քեզ:

- Այդ մեկը բացառվում է, Վիտալի Մախսիմովիչ,- ասացի ես, երբ նա արդեն բացում էր դուռը:

- Բացառվո՞ւմ է, բացառվո՛ւմ է,- կրկնեց ծերունին ու ինձ դուրս հրեց բնակարանից,- ոչինչ էլ չի բացառվում, երկու միլիոնը փողոցում թափված չէ, կպահես քեզ:

Նա շրխկացրեց դուռը: Ես նայեցի Աստվածամորն ու փորձեցի հասկանալ, թե ինչպես իմ բարեկամը չէր հավատում նրան:

Երբ զանգահարեցի Իգորին, նրա ձայնից անմիջապես հասկացա, որ տրամադրությունը լավ չէր:

- Կարո՞ղ եմ ձեզ մոտ գալ,- հարցրի սովորական ձեւականություններից հետո:

- Բանն այն է, որ պլանները փոխվել են,- մի քիչ զայրացած սկսեց նա, բայց հետո անմիջապես փափկեց եւ շարունակեց ավելի մեղմ տոնով,- հենց որ Մոսկվայի հետ կապված գործ է լինում, Իգո՛ր, հասի՛ր: Բայց դա ձեզ հետ կապ չունի, եկե՛ք՝ խոսենք, որովհետեւ ես մի քանի օր կբացակայեմ: Ձեզ կասեմ, թե ում հետ գործ ունենաք այդ ընթացքում:

Ես կախեցի լսափողն ու սկսեցի հարմար թուղթ փնտրել՝ սրբապատկերը փաթաթելու համար: Բայց կարգին ոչինչ չգտա եւ ստիպված փաթաթեցի սովորական թերթով:

Իգորն ինձ դիմավորեց միջանցքում:

- Լավ է, որ շուտ եկաք,- ասաց նա,- մեկ րոպե անգամ ժամանակ չունեմ: Գնանք մատակարարման բաժին, ձեզ կծանոթացնեմ պետի հետ: Իմ բացակայության ընթացքում նրա հետ գործ կունենաք:

Մատակարարման բաժնի պետը մեզ էր նայում՝ ասես լավ չերեւակված լուսանկարից իր զորշ աչքերով:

- Սերգե՛յ Սերգեյեւիչ,- ասաց փոխնօրենը,- երիտասարդը մեզ հետ աշխատում է մեկուսիչ նյութերի գործով, հիշո՞ւմ եք, ձեզ ասել եմ:

- Ա՜,- ռնգաց Սերգեյ Սերգեյիչը,- այն ֆանտաստիկ գները:

Ես նկատեցի, թե ինչպես Իգորը խեթ նայեց նրան, բայց ընդամենը ասաց.

- Հնարավոր է, որ նրանց ապրանքը շուտով տեղ հասնի: Ես այստեղ չեմ լինի, ընդունե՛ք, ստացակա՛ն տվեք, պահեստավորե՛ք, մնացածը ես կգամ ու կկարգավորեմ:

- Իսկ վճարո՞ւմը,- Սերգեյ Սերգեյիչը համառորեն իմ կողմը չէր նայում:

- Վճարումը մտնում է մնացածի մեջ, Սերգե՛յ Սերգեյեւիչ,- ասաց փոխնօրենը:

- Ա՛, մնում է մնացածը:

Երբ մենք դուրս եկանք մատակարարման բաժնից, Իգորն ինձ թեւանցուկ արեց ու ասաց.

- Այդ շան որդին աշխատանքի ընդունվածս օրից ինձ վրա ատամ ունի: Երբ ես այստեղ չլինեմ, նա կարող է պոչ խաղացնել, բայց դու ուշադրություն չդարձնես:

- Կարծում եմ՝ նա արդեն սկսել է պոչ խաղացնել:

Երբ մենք մտանք նրա աշխատասենյակը, ես բացեցի ձեռքիս փաթեթը, հանեցի սրբապատկերն ու անտարբեր ձեւանալով՝ դրեցի փոխտնօրենի սեղանին:

Իգորն այնպես թռավ սեղանի կողմը, կարծես հետեւից մեկը քացի էր տվել:

- Սա,- նա բարձրացրեց սրբապատկերն ու կմկմաց,- սա քո՞նն է:

- Ոչ,- հանգիստ ասացի ես:

- Հապա, հապա ո՞ւմն է:

Ես ծիծաղեցի:

- Ձերն է, թանկագի՛ն Իգոր, ձերը:

Նա որոշ ժամանակ մնաց այդպես կանգնած, հետո մոտեցավ ինձ ու ձեռքը դրեց ուսիս:

- Անկեղծ ասած, նման բանի չէի սպասում: Ամեն դեպքում, ուզում եմ, որ իմանաս՝ ես ձեզ պարտք եմ:

- Դատարկ բան է, Իգո՛ր, մենք միասին աշխատում ենք:

- Այո, բայց,- նա մի քիչ շշմած էր,- գործուղումից կվերադառնամ, ավելի մոտիկից կծանոթանանք:

- Բարի ճանապարհ, Իգո՛ր, հուսով եմ՝ ամեն ինչ լավ կլինի:

Ես սեղմեցի նրա ձեռքը եւ ուզում էի սենյակից դուրս գալ, բայց նա կանգնեցրեց ինձ:

- Մի վայրկյան սպասե՛ք: Այդ Սերգեյիչը, հնարավոր է, որ իրոք համը հանի: Ես ձեզ կտամ կնոջս հեռախոսահամարը, նա «Տրանսգազի»՝ մեր մայր ձեռնարկության գլխավոր ինժեներն է: Ես նրան այս գործի մասին տեղյակ եմ պահել: Ուրիշները թիկունք ունեն՝ հանձինս ընկեր-բարեկամների, իմ թիկունքը կինս է: Եթե որեւէ բարդություն առաջանա, անմիջապես դիմե՛ք նրան:

Իգորն ինձ մեկնեց կնոջ այցետոմսը: Վորոնցովա Լիդիա Մատվեեւնա՝ կարդացի ես: Հետո վերստին բարի ճանապարհ մաղթեցի Իգորին ու դուրս եկա:



Գետի այն կողմում մայր էր մտնում արեգակը, իսկ նրա արտացոլանքը՝ ինչպես ոսկե կամուրջ, ձգվում մի ափից մյուսը: Կառամատույցի մոտ շարված ճերմակ զբոսանավերը սպասում էին զբոսնելու իրենց հերթին ու շարժվում՝ երբեմն լեփ-լեցուն, երբեմն էլ՝ կիսադատարկ, աղմկելով բարձրանում գետն ի վեր, ու վերադառնում անջատած շարժիչներով, որպեսզի կրկին զբաղեցնեն իրենց տեղը՝ հերթի պոչին:

Նավահանգստի շենքից դուրս եկավ գնչուհիների մի խումբ ու խռնվեց բացօթյա սրճարանի առջեւ: Հետո բազմագույն շրջազգեստները ցրվեցին տարբեր ուղղություններով, իսկ նրանցից երկուսը շարժվեցին ուղիղ դեպի մեր կողմը: Ես մեքենան կանգնեցրել էի բարձունքին:

- Արի՛ գնանք,- ասացի Վիկային՝ միացնելով շարժիչը,- թե չէ հիմա մեզ կամուսնացնեն:

Բայց արդեն ուշ էր, գնչուհին բացում էր մեքենայի դուռը: Ես դիտմամբ դուրս եկա ու քայլեցի դեպի պաղպաղակի տաղավարը: Կառամատույցի մոտից մի զբոսանավ բարձրացրեց կամրջակը, շարժվեց ու քիչ անց ասես ոսկեզօծվեց մայր մտնող արեւի ոսկով:

- Արեւահամ պաղպաղակ չունե՞ք,- հարցրի վաճառողուհուն:

- Ոչ, միայն «Էսկիմո»:

Երբ վերադարձա մեքենայի մոտ, գնչուհիներից մեկը բռնել էր Վիկայի ձեռքը: Տեսնես՝ ի՞նչ էր ասում: Որ Փարիզը Ֆրանսիայի մայրաքաղա՞քն է, որ Հաղթական կամարը Փարիզո՞ւմ է:

Խորամանկ աչքերը վրաս հառած՝ ինձ մոտեցավ երկրորդ գնչուհին:

- Քո աղջկան մեծ հաջողություն է սպասվում, իսկ քեզ,- նա փորձեց բռնել ձեռքս, բայց ես կոպտորեն հետ քաշեցի,- քեզ վատ բաներ են սպասվում, երիտասա՛րդ:

Երբ նրանք հեռացան, Վիկան դիմեց ինձ.
- Ինչո՞ւ չթողեցիր, որ բախտդ նայեն:
- Չեմ ուզում ժամանակից շուտ չխրել:
- Ուրեմն դու հավատո՞ւմ ես նրանց:
- Ոչ, պարզապես զերադասում եմ ապրել ներկայով:
- Ես էլ չեմ հավատում, արի՛ ապրենք ներկայով:

Վեց տարեկան էի, երբ հայրս առաջին անգամ տարավ ինձ մարզադաշտ՝ ֆուտբոլ դիտելու: Չեմ հիշում՝ ովքեր էին խաղում, չեմ հիշում՝ խաղն ինչպես ավարտվեց, միայն հիշում եմ, որ չափազանց շատ լիմոնադ էի խմել, և հայրս ստիպված էր շուտ-շուտ ինձ զուգարան տանել: Ավելի ուշ, երբ արդեն դպրոցական էի, հեռուստացույցով Ֆրանսիայի և Անգլիայի խաղը դիտելիս, հորս հարցրի, թե ո՞րն է մեր թիմը: Նա ասաց, որ ֆրանսիացիք մեր բարեկամներն են, և ինքը նրանց է պաշտպանում: Այդքանը բավական էր: Իմ համակրանքը շուտով վերածվեց պաշտամունքի, և սենյակիս պատերը ծածկվեցին Պլատինիի, Ժիրեսի ու սեւամորթ Տիգանայի լուսանկարներով:

Բայց սոսկ իմ ժողովրդի ու ֆրանսիացիների բարեկամությունը չէր պատճառը, որ ես սիրեցի այդ ֆուտբոլիստներին: Իմ համոզմամբ, չի եղել ու մինչև հիմա էլ չկա նման հանճարեղ կիսապաշտպանական եռյակ:

Ինչևէ, վերջապես սկսվել էր Վիտալի Մախսիմովիչի ու միլիոնավոր ուրիշ երկրպագուների՝ այդքան սպասած ֆուտբոլի Եվրոպայի առաջնությունը:

Սառը գարեջրի փրփրոտ բաժակը ձեռքիս, իմ տան միակ ողորմելի բազկաթոռին թիկնած՝ ես դիտում էի Ֆրանսիա-Ռումինիա հանդիպումը: Այնքան էի տարված խաղով, որ





երբ զանգեց հեռախոսը, նույնիսկ չէի ուզում վերցնել լսա-փողը: Ի՞նչ իմանայի, որ դա երբևէ իմ ամենափողոտ հեռա-խոսազանգն էր լինելու, եթե կարելի է այդպես ասել:

- Ցնծա՛, երիտասա՛րդ,- լսեցի Կոտի ձայնը,- շուտով մենք լողալու ենք միլիոնների մեջ:

- Ի՞նչ է եղել:

- Երկրաշարժ, ջրհեղեղ, մրրիկ, հրաբուխ... Ինչ անուն ու-զում ես՝ տո՛ւր:

- Իսկ ավելի կոնկրե՞տ,- ես զգում էի, թե ինչպես էին թու-լանում ոտքերս:

- Ավելի կոնկրետ,- լրջացավ Կոտը,- յոթ օրից հարյուր տոն-նա մեկուսիչ նյութերը կլինեն այդտեղ:

- Դու փո՞ղ ես ճարել,- ես վերջին ուժերս էի լարում, որ մանրամասներն իմանալու համար հարցեր տամ՝ մինչև հա-տակին փուլ գալս:

- Դա կարևոր չէ,- անփույթ ասաց Կոտը,- նման մանրուք-ները քեզ չպետք է հուզեն: Գլխավորը ես արդեն ասացի: Քեզ մնում է միայն իմանալ նրանց երկաթուղային ռեկվի-զիտները և վաղը չէ մյուս օրը երեկոյան սպասել իմ զան-գին:

- Այնուամենայնիվ, ինչպե՞ս ես ապրանքը գործարանից հանելու,- ես դեռևս անհանգիստ էի և ուզում էի ամեն ինչ ստույգ իմանալ:

- Դա կարևոր չէ,- իրենը պնդեց Կոտը,- երկար պատմու-թյուն է, կգամ, կպատմեմ: Դու քո անելիքն իմացա՞ր:

- Իմացա, իմացա:

Լսափողը կախելուց հետո ես մի պահ շշմած՝ մնացի կանգնած: Մեքենաբար վերցրի կոնյակի շիշը, մեքենաբար լցրեցի ու խմեցի: Թունդ հեղուկը վառեց կոկորդս ու անմի-ջապես սթափեցրեց ինձ:

Տեսնես որտեղի՞ց էր Կոտը փող ճարել: Արդյո՞ք այդքան ե-

կամտաբեր գործը կարող էր այդքան հեշտ գլուխ գալ: Ասենք, ես երբեք էլ չէի կասկածել ընկերոջս մտքին ու ճարպկությանը: Արդեն ոչ մեքենաբար լցրեցի մի բաժակ էլ: Կոտի կենացը՝ ասացի ինքս ինձ ու խմեցի: Դեռ չէի հասցրել բաժակը ցած դնել, երբ ֆրանսիացիները գոլ խփեցին: Ես կրկնակի ուրախությունից պարզապես գլխկոնծի տվեցի հատակին:

Ավելորդ է ասել, որ նոր բացածս շիշն այդ գիշեր դատարկեցի եւ առավոտյան արթնացա շատ ուշ, որովհետեւ մոռացել էի լարել զարթուցիչը:

Երբ մտա «Տրանսգազվերանորոգում» ձեռնարկության մատակարարման բաժին, Սերգեյ Սերգեյեւիչին գտա մի կնոջ հետ զրուցելիս: Նա ինձ տեսավ, բայց չնկատելու տվեց: Ես սպասեցի մինչեւ նրանց զրույցը կվերջանար, ապա մոտեցա բաժնի պետին ու անփույթ մեկնեցի ձեռքս:

- Ա՜, երիտասա՛րդ բիզնեսմեն,- կվկվաց նա,- ինձ թվում էր՝ դուք այլեւս չեք գա:

- Ինչո՞ւ էր ձեզ այդպես թվում,- հետաքրքրվեցի ես:

- Փուչիկ է այս ամենը:

Նա բացեց գզրոցը, մտավ մեջը եւ սկսեց ինչ-որ բան փնտրել այնտեղ: Ես, առանց հրավերի սպասելու, նստեցի կողքի աթոռին:

- Ահա,- ասաց Սերգեյ Սերգեյեւիչը՝ գլուխն ու ինչ-որ թղթեր գզրոցից հանելով,- այստեղ մեկուսիչ նյութերի գներն են՝ մարտ ամսվա տվյալներով: Ձեր ասած գինը կրկնակի թանկ է:

Փաստորեն, Իգորը ճիշտ էր ասում, որ այս քթի մազը զզվեցնելու է՝ չնայած դժվար չէր դա հասկանալ նրա մռութին նայելով:



- Հարգելի՛ Սերգեյ Սերգեյեւիչ,- հանգիստ ասացի ես,- ապրանքի գնի, քանակության, տեղափոխման, վճարման ձեւի հետ կապված հարցերը մենք վաղուց արդեն քննարկել ենք փոխտնօրենի հետ, եկել ենք ընդհանուր հայտարարի եւ, դրա հիման վրա, պայմանագիր ենք կնքել: Ձեզ մնում է միայն բարի լինել եւ ասել ձեռնարկության երկաթուղային ռեկվիզիտները, որովհետեւ ապրանքն արդեն պետք է տեղափոխվի:

Նա կրկին բացեց գզրոցը եւ նոր թղթեր հանեց:

- Դե, այդ ռեկվիզիտները դուք առանց իմ ասելու էլ կարող եք իմանալ: Սակայն խորհուրդ չեմ տա շտապել ու ապրանքը ճամփա հանել: Ես պետք է հենց հիմա խոսեմ տնօրենի հետ: Կարծեմ, նա տեղյակ չէ այս գործին: Ուզում եմ, որ ծանոթանա մանրամասների հետ:

Շան որդին ճիշտ թիրախին կպավ: Անկեղծ ասած, ես մի քիչ վախեցա եւ ստիպված էի փոխել արհամարհական տոնս:

- Չեմ հասկանում, ինչո՞ւ եք ամեն ինչ այդքան բարդացնում: Ի՞նչ տարբերություն, փոխտնօրե՞նն է կանգնած գործի գլուխ, թե՞ տնօրենը:

Բայց նա տեղի չտվեց.

- Դե, ես արդեն ասացի: Հիմա ձեզ հետ վիճելու տրամադրություն չունեմ: Եթե այդքան ուզում եք, կարող եք իմանալ ռեկվիզիտները քարտուղարուհուց, բայց կրկին ձեզ խորհուրդ եմ տալիս չշտապել:

Նա թափով վեր կացավ, սեղանի վրայից վերցրեց թղթերն ու դուրս եկավ սենյակից:

Ես մի պահ մնացի շվարած, հետո, անկախ ինձնից, ձեռքս տարա գրպանս ու կառչեցի Իգորի տիկնոջ այցետոմսից: Հարկավոր էր շտապ զանգահարել նրան, քանի դեռ այդ գորտը տնօրենի գլուխը չէր տարել իր կվկվոցով: Ես փորձեցի

կռահել, թե ում պաշտոնն էր ավելի բարձր՝ «Տրանսգազվե-
րանորոգման» տնօրենի՞, թե՞ «Տրանսգազի» գլխավոր ին-
ժեների: Իհարկե՝ վերջինի՝ մխիթարեցի ինքս ինձ:

Հետո դուրս եկա շենքից, սակայն տուն չգնացի: Մեքենան կանգնեցրի մոտակա ավտոմատ հեռախոսի մոտ ու հավաքեցի այցետոմսի համարը:

- Լիդյա Մասլեննիկովան տեղում չէ,- ասաց մի աղջկա ձայն,- կլինի մեկ ժամից:

- Բարի՛ եղեք ասել ձեր հասցեն:

Ես հանեցի ծոցատետրս և գրեցի այն: Ապա այդ մեկ ժամն անցկացրի քարտուղարուհու ասած հասցեն փնտրելով:

«Տրանսգազը» գտնվում էր քաղաքի հակառակ ծայրում՝ մի լաբիրինթոս շրջանում, «Ափային» կոչվող փողոցի վրա: Այդ կողմերով գետը չէր հոսում, և ես չէի հասկանում, թե ինչու էին փողոցն անվանել՝ Ափային:

Ինձ չթողեցին շենք մտնել և ասացին, որ անցակետի հեռախոսից զանգահարեմ մի եռանիշ համարով:

Երբ Լիդյա Մասլեննիկովային տվեցի իմ անունը, այն նրան ոչինչ չասաց:

- Դուք ի՞նչ գործով եք:

- Մեկուսիչ նյութերի, ես պայմանագիր եմ կնքել ձեր ամուսնու ձեռնարկության հետ:

Հիմա նոր նա գլխի ընկավ:

- Դուք այն հա՞յն եք:

- Ճիշտ այդպես:

- Կարող եք բարձրանալ, ես կզգուշացնեմ պահակներին:

Չեմ կարող ասել, թե գլխավոր ինժեների աշխատասենյակում սպասում էի հանդիպել մի գեղեցկուհու: Բայցեւայնպես...

Լիդյա Մասլեննիկովան անպայմանորեն հիսունն անց էր: Եթե մեկը որոշեր նրան հաճոյախոսել, պետք է ասեր՝ դուք նման եք մի հրաշալի փղիկի:

Ես նայեցի գրասեղանին ընկած նրա ահռելի կրծքերին, որոնց հիմքերը երևում էին անձուկ վերնաշապիկի տակից, ապա հիշեցի Իգորի բարետես արտաքինը, նրա տարիքը և, ճիշտն ասած, մի քիչ զարմացա: Բայց Իգորն ասել էր, որ իր թիկունքն իր կինն է:

- Նստե՛ք,- Լիդյա Մասլեննիկովան ուշադիր նայում էր ինձ,- ես, ճիշտն ասած, ձեզ ուրիշ կերպ էի պատկերացնում:

Ես էլ ձեզ՝ մտածեցի ես:

- Դուք նման չեք հայի, այն էլ գործարար հայի,- շարունակեց նա:

- Երևի շփվե՞լ եք նրանց հետ:

- Այո՛,- նա բազմանշանակ ժպտաց:- Մի անգամ ձեր հայրենակիցներն ինձ այնպես խաբեցին, որ ստիպված էի որոշ ժամանակ ինձ շատ բաներից զրկել, որպեսզի կարողանամ դուրս գալ պարտքերի տակից:

- Իմ հայրենիքում ասում են՝ չկա գյուղ, որ շուն չլինի,- արդարացա ես:

- Գուցե: Ի՞նչ ունեիք ինձ ասելու: Երևի մատակարարման բաժնի պետն է բարդություններ ստեղծել:

Ես գլխով արի:

- Ի՞նչ է ասում:

- Որ մեր ասած գինը թանկ է և, որ տնօրենին պետք է ծանոթացնի գործարանի գների հետ:

- Դե, տնօրենի հետ ես կխոսեմ, իսկ գործի՞ց ինչ կա:

Այդքան հե՞շտ՝ մտածեցի ես:

- Յոթ-ութ օրից ապրանքը կլինի այստեղ: Ես գնացել էի երկաթուղային ռեկվիզիտներն իմանալու, բայց Սերգեյ Սերգեյեվիչն ասաց, որ չշտապեմ ապրանքը տեղափոխել:

- Իմացա՞ք ռեկվիզիտները:

- Ոչ:

- Ես հիմա ձեզ կտամ: Ուրիշ ի՞նչ ունեք ինձ ասելու:
- Ուրիշ ոչինչ: Ե՞րբ կգա Իգորը:
- Երեք օրից:

Ես շնորհակալություն հայտնեցի և պատրաստվում էի դուրս գալ, բայց նա ինձ կանգնեցրեց:

- Մի րոպե, երիտասա՛րդ, ես ուզում եմ մի բան խնդրել ձեզանից:

- Սիրով:

- Այն հայերի մասին, որ ձեզ ասացի,- Լիդյա Մատվեևնայի դեմքը ծամածռվեց,- նրանք հիմա կրկին այստեղ են: Ես նրանց հաճույքով դատի կտայի, բայց չեմ կարող: Ահա ուզում էի, որ դուք ինքներդ նման բան անեիք: Երբ ծանոթանաք նրանց հետ, այդ սրիկաները ձեզ անպայման մի օր կխաբեն...

- Լիդյա Մատվեևնա,- ես ընդհատեցի նրան,- շատ եմ ցավում, բայց դա անհնար է: Ես նույնիսկ իմ թշնամուն դատի չեմ տա այս երկրում: Խոսքը սկզբունքի մասին է: Իսկ եթե նրանք հայեր չլինեին, ես կարող էի ուրիշ կերպ...

- Եթե նրանք հայեր չլինեին,- այս անգամ նա ինձ ընդհատեց,- ես ձեզ չէի ասի: Դե լավ, դա այնքան էլ կարևոր չէ, զբաղվեք գործով: Իմիջիայլոց, դուք, կարծեմ, սիրում եք թանկարժեք նվերներ անել, դա գովելի է:

Երեկոյան՝ քաղաքում Վիկայի հետ շրջելիս, պատահաբար հանդիպեցինք Կոստյային: Ինձ ապշեցրեց նրա տեսքը: Մռայլվել էր, կնճռոտվել, նույնիսկ՝ նիհարել: Առաջվա սարսափազդու կերպարանքից մնացել էր միայն սաղին: Նա ասաց, որ Էլյայի հետ պատրաստվում են ընթրել և առաջարկեց միանալ իրենց: Թերևս ճիշտ կլիներ մերժելը, բայց չստաց-



վեց: Մայթի մոտ կանգնած էր Կոստյայի նոր մեքենան՝ երկնագույն «Կադիլլակը», ու նրա միջից ձեռքով էր անում Էլյան:

Նստեցինք մեքենան, և Վիկային ներկայացրի իմ հին ծանոթներին: Ամբողջ ճանապարհին ասես փշերի վրա լինեի: Ինձ թվում էր, թե Էլյան կարող է անզգուշաբար մատնել մեր գաղտնիքը: Նույնիսկ վախենում էի, որ նա դա կանի գիտակցաբար: Բայց սխալվում էի: Նա միայն անեկդոտներ էր պատմում:

Կոստյան մեզ տարավ «Գերասիմի մոտ» ռեստորանը, այնտեղ, ուր ես գնացել էի «Արշին» գործարանի փոխտնօրենի՝ Վիկտոր Լվովիչի հետ: Ես այդպես էլ չէի հասկացել, թե դրամատուրգները, որ սկզբում ներկայացել էին որպես Վիկտոր Լվովիչի ծանոթներ, որտեղից էին իմացել իմ հասցեն ու հեռախոսը: Ոչ մի դեպքում չէի ուզում մտածել, որ ծերուկն էր ասել: Դա պարզապես բացառվում էր:

Ընթրիքը չտեսնված ճոխ ստացվեց: Կոստյան մի քանի տեսակ տաք ուտեստներ էր պատվիրել, միայն թե դրանք մեծ մասամբ մնացին սեղանին: Շատ կաշկանդված մթնոլորտ էր, որին մի քիչ շունչ էին տալիս միայն Էլյայի անսպառ անեկդոտները: Ես ծիծաղում էի, Վիկան՝ ժպտում, իսկ Կոստյայի դեմքին ոչ մի մկան չէր շարժվում:

Սրահը գրեթե դատարկ էր, և երաժիշտները մի երկու անգամ նվագելուց հետո բավական երկար ընդմիջում տվեցին: Երբ կրկին վերադարձան, Կոստյան հրավիրեց նրանց ուշադրությունը և ձեռքերով ջութակ նվագելու շարժումներ արեց: Հնչեց տխուր երաժշտություն, և սրահն ավելի մռայլվեց:

- Ամեն ինչ սխալ է, ամեն ինչ,- հանկարծ կակազեց Կոստյան:

Ես զարմացած նայեցի նրան:

- Ոչինչ, դա հենց այնպես ասացի,- նորից կակազեց

Կոսյան, եւ ես հասկացա, որ նա միայն ֆիզիկապես էր այստեղ:

Արդեն վստահ էի, որ նա լուրջ խնդիրներ ուներ: Կրկին մտածեցի ողեւէ կերպ օգնելու մասին, եւ եթե նա այդ պահին ինձանից մի անհնար բան էլ խնդրեր, թերեւս անեի: Դժվար էր տեսնել, թե ինչպես էր այդ աղջիկը աչքի առաջ ատամնե-րը թափում:

Երբ մատուցողը բերեց հաշիվը, փորձեցի կռահել, թե այն որքան կլինի: Այստեղի գներին ծանոթ էի եւ վստահ էի, որ թղ-թի կտորի վրա աստղաբաշխական թիվ է: Կոսյան մի թղու-ցիկ հայացք նետեց դրան ու հանեց դրամապանակը:

Դուրս եկանք ռեստորանից ու հայտնվեցինք անձրեւի տակ: Կոսյան մեզ տարավ մինչեւ զբոսայգի, որի մոտ թողել էի մե-քենան: Ամբողջ ճանապարհին ես ինչ-որ ձեւ էի փնտրում նրան ողեւէ լավ բան ասելու համար, բայց ոչ մի կերպ չէր ստացվում: Չէի ուզում, որ Վիկային թվար, թե շողոքորթում եմ: Եւ հետո էլ այդ մարդն ինձ մի տեսակ կաշկանդում էր խոսելու մեջ եւ առհասարակ:

Երբ մենք բաժանվեցինք, Վիկան հարցրեց.

- Ովքե՞ր էին այդ մարդիկ:

Ես ծիծաղեցի.

- Նրանք քեզ դուր չեկա՞ն:

- Այդ տղիավորը հարյուր տոկոսանոց հանցագործ էր: Որ-տեղի՞ց ես դու նրան ճանաչում:

- Նա լավ մարդ է, եւ ինձ համար մեծ բան է արել: Այդքա-նը բավական է, որ դու իմանաս:

- Լավ,- ասաց նա,- բայց ամեն դեպքում նա վախենալու էր:







Ես կրկին ծիծաղեցի.

- Դու նրան չես տեսել այն ժամանակ, երբ սարսափելի էր: Անձրեւը սաստկացել էր, եւ ես ցաս դանդաղ էի վարում մեքենան, որովհետեւ ապակու մաքրիչները դեռեւս չէին աշխատում:

- Դու դեմ չե՞ս լինի, եթե ես այսօր քեզ մոտ մնամ,- հարցրի Վիկային:

Նա հառաչեց:

- Իսկ ես մտածում էի, որ մենք քեզ մոտ կգնանք, չէ՞ որ այսօր անձրեւ է: Դու չես նեղանում, չէ՞: Արի՛ այդպես անենք: Արի՛ չխախտենք ավանդույթը, չնեղացնենք անձրեւին:

Ես այլեւս չասացի, որ հենց անձրեւն էր ինձ նեղացնում, եւ հիմնականում դա էր պատճառը, որ ես ուզում էի մնալ նրա մոտ, որտեղից չբեմ ու հասնեմ աշխարհի ծայրն իմ այս չմաքրվող ապակիներով:

Ավանդույթը չխախտվեց մի այլ առումով եւս: Վիտալի Մախինովիչը նորից կարված էր ասացել: Ես այդ մասին իմացա շեֆի մոտ հավաքված պառավներից՝ դեռ տուն չմտած: Իմ հարեւանը հեռուստացույցով դիտել էր Ռուսաստանի հավաքականի խաղը, եւ կարվածը հասել էր այն պահին, երբ ռուսների դարպասը խփել էին վճռական գնդակը:

Կեսգիշեր էր: Վիկային թողեցի տանը եւ ցսատղեցի հիվանդանոց: Ինձ ծանոթ բժիշկն այս անգամ մխիթարող ոչինչ չասաց ու պարզապես թոթվեց ուսերը:

- Ես նրան զգուշացրել էի, որ իրեն որոշ բաներից զրկի. ծխախոտից, խմիչքից...

- Կարվածի պատճառն ուրիշ է,- բացատրեցի ես,- նա ֆուտբոլ է դիտել:

- Ֆուտբո՞լ, դա ի՞նչ կապ ունի:
- Վիտալի Մախինովիչը երկար տարիներ սպորտային մեկնաբան է աշխատել, դուք երևի չգիտեք: Նա ֆուտբոլի մոլի երկրպագու է: Ձեր հավաքականի պարտությունն ահա այսպիսի ազդեցություն ունեցավ նրա վրա:
- Ոչինչ չեմ հասկանում,- ասաց բժիշկը,- մենք նրա կնոջը հանգստացնող դեղ ներարկեցինք, և նա էլ հիմա մեկ այլ պալատում է: Դուք չգիտե՞ք, նրանք ուրիշ հարազատներ չունե՞ն:

Ես հասկացա, թե նա ինչ նկատի ուներ և դրամապանակիս միջից փող հանեցի: Սակայն բժիշկը համաձայնեց վերցնել ընդամենը մի փոքր մասը:
- Սա՝ դեղերի համար և բուժքույրերի,- ասաց նա,- հիվանդի վիճակը ծանր է, և ես ոչինչ չեմ կարող երաշխավորել:
- Նա չի՞ ապրի:
- Ես արդեն ասացի, նրա վիճակը ծանր է: Լավ կանենք՝ հոգ տանենք տիկնոջ մասին: Ես այդպես էլ չհասկացա, դուք նրա բարեկա՞մն եք:
- Ոչ, հարևանը:
- Հարևա՞նը,- զարմացավ նա, մի պահ լռեց, ապա ասաց,- լավ կանենք՝ տեղեկացնենք հարազատներին, թող տիկնոջ կողքին լինեն:
- Ցավոք, ես ոչ ոքի չեմ ճանաչում:
- Չե՞ք ճանաչում,- ավելի զարմացավ նա,- չեմ հասկանում, ինչ հարևան եք դուք: Լավ, ես հիմա շտապում եմ, ինքս մի բան կմտածեմ:

Ես մի քիչ էլ կանգնեցի սառը միջանցքում՝ ինքս էլ չիմանալով, թե ինչի եմ սպասում: Որ կրկին ծերունին իր կամքից անկախ անհանգստացրած լինի մեզ, որ կրկին վերակենդանացման բաժնից դուրս գա բժիշկը և, խորը հազով մաքրելով կոկորդը, ավետի, որ կաթվածը բոլորովին էլ կաթված



չէ՞ր, որ այդպես պատահում է բոլոր հիվանդ սիրտ, ազնիվ հոգի, ֆուտբոլային թուլություն և հայրենիք ունեցող մարդկանց հե՞տ, որ կրկին Վիտալի Մախինովիչի կինն ուրախության արցունքնե՞ր թափի՝ մի քիչ բարկացած իր սպորտային խաբեբայի վրա:

Ու հանկարծ ես պատկերացրի, թե որքան կտխրեմ, եթե մահանա ծերունը: Վերջին անգամ նրան տեսել էի սրբապատկերի փողը տալիս: Նա համառորեն չէր ուզում վերցնել ամբողջ գումարը, և ես ստիպված էի փողը թողնել սեղանին ու դուրս գալ առանց հրաժեշտ տալու: Հիմա, եթե ծերունը վախճանվի, այդ փողը պետք է օգտագործվի նրա թաղման ծախսերը հոգալու համար:

Չնայած Իգորի կինը խոստացել էր մատակարարման բաժնի պետի հետ կապված խնդիրները լուծել, բայց ես այնուամենայնիվ որոշեցի վերջինիս հետ կարգավորել հարաբերությունները, ու առավոտյան գնացի ձեռնարկություն: Բայց գորշի աչքը տեղում չէր, և՝ ստիպված եղա սպասել: Սեղանի վրայից վերցրի գովազդային թարմ թերթերն ու սկսեցի աչքի անցկացնել:

Այն ինչ տեղեկացա դրանցից, բացահայտորեն Սերգեյ Սերգեյևիչի հետ կապ չուներ: Այնինքն, նա բոլորովին մեղավոր չէր, չնայած կարելի էր մտածել, որ չարագուշակությունը հենց նրանից էր գալիս: Ինչևէ, ավտոմեքենաների գները կտրուկ ընկել էին: Ամենուրեք նույն հայտարարություններն էին, իջեցումները տատանվում էին տասնհինգից մինչև քսան տոկոս:

Թքած Սերգեյիչի և հարաբերությունների վրա՝ մտածեցի ես ու դուրս եկա: Ինձ շտապ գցեցի տուն և, սենյակ մտնելով,

զրոցից հանեցի պայմանագիրն ու հաշվիչը:

- Ի՞նչ է պատահել,- անհանգստացավ Վիկան:

- Մեքենաների գներն ընկել են:

- Դու պատրաստվում ես մեքենա՞ գնել:

- Հետո կբացատրեմ,- ասացի ես,- ավելի լավ է՝ ինձ սուրճ տաս:

Պայմանագրում գրված էր, որ «Տրանսզազվերանորոգումը» ավտոմեքենաները մեզ տալիս է մեկ հատը երեսունյոթ միլիոն ռուբլու հաշվարկով: Մենք պլանավորել էինք դրանք վաճառել երեսուներկուսով: Թերթերում, ըստ ֆիրմաների հայտարարությունների, այդ մակնիշի ավտոմեքենաների գինը դարձել էր հենց այդքան՝ երեսուներկու միլիոն: Այսինքն՝ հիմա մենք դրանք կարող էինք հանձնել առավելագույնը քսանութով և յուրաքանչյուր ավտոմեքենայից կկորցնեինք չորս միլիոն: Քանի որ «Տրանսզազվերանորոգումը» մեզ տալիս էր երեսուն մեքենա, ստացվում էր, որ մենք կորցնելու էինք մոտավորապես հարյուր քսան միլիոն:

Հարկավոր էր մի բան մտածել, միայն թե ես չգիտեի՝ ինչ: Իգորը հազիվ թե համաձայներ պայմանագրի մեջ իջեցնել մեքենաների գները, իսկ հուսալ, որ այս ընթացքում դրանք նորից կբարձրանան, անիմաստ էր:

Վիկան սենյակ մտավ մատուցարանը ձեռքին ու սեղանին դրեց սուրճի բաժակները:

- Քեզ ինչ-որ մեկը զանգահարեց,- ասաց նա,- ինչ-որ Կոտ: Կարծեմ ուրիշ քաղաքից: Ասաց, որ երեկոյան անպայման տանը լինես:

- Նա իմ ընկերն է: Իսկ ուրիշ ոչինչ չասա՞ց:

- Հարցրեց, թե սիրուն ընկերուհիներ չունե՞մ:

Ապո՛ւշ՝ մտքումս ասացի ես: Հետո մոտեցա Վիկային ու գրկեցի նրան:

- Ինչ լավ է, որ դու այստեղ ես:



- Ի՞նչ ես կարծում,- հարցրեց նա,- ինձանից կարգին տնային տնտեսուհի դուրս կգա՞, թե՞ ոչ:

- Հազիվ թե: Լավ տնային տնտեսուհիները լինում են գեր և վառ ներկած մազերով: Ու նրանցից միշտ բոված սուրճի կամ սոխառածի հոտ է գալիս:

Երեկոյան, իրոք, զանգահարեց Կոտը: Ես նրան մանրամասն պատմեցի ու բացատրեցի ամեն ինչ:

- Ոչինչ,- ասաց նա,- ամեն ինչ այնքան հարթ ու սահուն էր ընթանում, որ մի տեղում անպայման պետք է լիներ: Բայց դու մի՛ հուսահատվիր, մենք կաշխատենք Իգորին համոզել, որ նա ավտոմեքենաների փոխարեն Մուրհակներ տա: Իմացա՞ր նրանց ռեկվիզիտները:

Ես թելադրեցի դրանք: Կոտը վստահեցրեց, որ արդեն կուղարկի ապրանքը և ինքը կգա այնպես, որ դրա ժամանելու հետ այստեղ լինի: Վերջում ասաց, որ Իգորի հետ խոսեմ մուրհակների մասին և իմանամ, թե որ հիմնարկ-ձեռնարկություններինն են դրանք:

Հետո ես Վիկային տարա տուն ու գնացի հիվանդանոց: Եկել էին Վիտալի Մաքսիմովիչի ինչ-որ բարեկամներ և նրա տիկնոջը տարել: Ինքը՝ ծերունին, պառկած էր առանց գիտակցության և շնչում էր շնորհիվ սարքերի:

Բժիշկն ինձ տեսնելով մոտեցավ: Մենք զրուցեցինք մի քանի րոպե ու, չնայած նա ոչ մի որոշակի բան չասաց, ես հասկացա, որ իմ բարեկամին մնացել են ապրելու հաշված օրեր, գուցե ժամեր:

Ամռան առաջին ամիսը գլորվեց, հասավ իր վերջին, և ես արդեն չէի կարող ինձանից հեռու վանել այն միտքը, որ արդեն շատ շուտով Վիկան մեկնելու էր:

Հունիսի քսանվեցն էր: Հաջորդ առավոտյան պետք է գար Կոտը, իսկ ապրանքը, բեռնատար գնացքով, ժամանելու էր կեսօրին:

Իգորն արդեն վերադարձել էր, և ինձ հաջողվել էր նրան համոզել ու պայմանագրի մեջ մի շատ կարևոր փոփոխություն մտցնել: Հիմա արդեն մենք ապրանքը փոխանակում էինք ոչ թե ավտոմեքենաների, այլ քաղաքի «Երկաթգծեր» ձեռնարկության մուրհակների հետ:

Թվում էր, թե ամեն ինչ չափազանց հաջող է ընթանում, միայն թե ես բոլորովին տրամադրություն չունեի, և օրն էլ շարունակվեց սոսկալի շոգ ու նյարդային:

Բենզինի լցակայանում հերթի էի կանգնած, երբ հանկարծ առջևի «Աուդիի» ղեկին նկատեցի Անտոնին՝ Աղայի ամուսնուն: Առաջին բանը, որ մտովս անցավ, մեքենան թափով տեղից պոկելն ու «Աուդիի» հետևին խփելն էր: Բայց զսպեցի ինձ՝ ավելին, որոշեցի ընդհանրապես նրան չտեսնելու տալ: Բայց Անտոնն ինքն էր ինձ նկատել, երևի հայելու միջից: Երբ դուրս եկա լցակայանի տարածքից, նա կանգնած էր փողոցի եզրին՝ մեքենայի մոտ և ձեռքով էր անում ինձ: Այլևս ոչինչ անել չէի կարող, ստիպված իջա և մոտեցա նրան:

Նա ձեռքը չմեկնեց, ոչ էլ բարևեց: Մի արհամարհական հայացք նետեց վրաս և հարցրեց.

- Դուք դեռ այստե՞ղ եք:

- Լսե՛ք, Անտո՛ն,- հանգիստ ասացի ես,- իզուր եք դուք ինձ այդպես վերաբերվում: Ես ձեզ ոչ մի վատություն չեմ արել:

- Դուք վատություն եք անում Վիկային՝ իմ կնոջ ընկերուհուն: Ես մտածում էի, որ այն, ինչ ասացի մեր տանը, ձեզ



վրա կազդի, և դուք կհեռանաք, բայց տեսնում եմ, որ շարունակում եք ապրել նրա հաշվին:

- Իսկ ինձ թվում էր, որ մեր վերջին խոսակցությունից հետո դուք կամաչեք և կհրաժարվեք աշխատել այդպիսի ինտելիգենտ մարդկանց հետ, ինչպիսիք ֆրանսիացիներն են:

Նրա շրթունքները սկսեցին դողալ:

- Եթե իմ տարիքն ինձ ներեր,- կմկմաց նա,- ես կբռնեի ձեր վիզը և...

- Քանի որ տարիքը ձեզ թույլ չի տալիս բռնել իմ վիզը, առաջարկում եմ բռնել ուրիշ բան և...

Ես ուզում էի հավասարակշռությունից հանել նրան, բայց այդ խաղերին, թվում էր, նյարդեր չուներ:

- Դու սրիկա ես,- ցածրաձայն ասաց նա,- դու ալֆոնս ես:

Իմ նյարդերը, ցավոք, շատ ավելի թույլ էին: Ես ամբողջ ուժով, ոտքով հարվածեցի մեքենային և ծռեցի դուռը: Ապա սպասեցի, որ նա որևէ կերպ պատասխանի, բայց Անտոնն ընդամենը կռացավ և շոշափեց փոս ընկած մետաղը:

- Ես ամեն ինչ կանեմ, որ Վիկային բաժանեմ քեզանից,- ասաց նա,- ամեն ինչ: Այս մեքենան ես նոր էի գնել:

Ես հաճույքով մի անգամ էլ կխփեի այդ նոր մեքենային, բայց դա ազնիվ չէր լինի՝ հաշվի առնելով այն, որ նա չպատասխանեց: Իսկ նրան խփել չէի կարող: Պարզապես չէի կարող: Գրպանիցս մի քանի խոշոր թղթադրամ հանեցի, դրեցի մեքենայի վրա ու հեռացա՝ նետելով.

- Վերանորոգե՛ք ձեր դուռը Վիկայի հաշվին:

Ամբողջ օրը շարունակվեց նույն նյարդային ակորդով: Նախ՝ ծակվեց մեքենայի անիվը, հետո մի քանի անգամ կանգնեցրին ոստիկանները, ապա, կարծես նրա համար, որ մեքենայի հետ կապված անհաջողությունների շարքն ամբողջական լինի, շուկայի մոտ բախվեցի մի գնչու կնոջ: Լավ է, որ նա գետաձիու կազմվածք ուներ և բոլորովին չվ-

նապվեց: Գնչուհին հառնեց մեհենայի առջեւից եւ սկսեց անիծել ինձ:

Սակայն այդ ամենն ընդամենը անհաջողություններ էին, գլխավորը դեռ առջեւում էր:

Երբ մտա Վիկայի մոտ՝ արվեստանոց, անմիջապես զգացի, որ այլեւս չկա այն տպավորությունը, թե հարազատ վայրում եմ: Հետո նոր նկատեցի, որ նկարները պատերին չէին: Վիկան իջեցրել էր դրանք եւ շարել վերնահարկ տանող աստիճանների մոտ, այլոց կողքին:

Հարցեր չտվեցի, եւ առհասարակ չխոսեցինք: Ամեն ինչ պարզ էր: Պարզից էլ պարզ: Վիկային մատնում էին աչքերը, շրթունքները, մատները՝ ինքնըստինքյան հասկանալի ու ներելի: Երազ էր՝ պիտի վաղ թե ուշ ավարտվեր: Արդեն ժամանակն է արթնանալու՝ ականջիս գոռում էր ձեռնոցների վաճառականը: Սթափվիր բարեկամս եւ, համենայնդեպս, նկատի ունեցիր, երբ կպատրաստվես հաջորդ ուղեւորությանը: Բայց ե՞րբ է այդպես լինում: Այդ ե՞րբ եմ ես ինչ-որ բանի պատրաստվել ու նախապատրաստվել: Բոլոր դեպքերում, պետք չէ մոռանալ, որ սովորաբար այդպես է լինում: Առհասարակ, ամեն բան եւ հատկապես ամեն լավ բան սկիզբ ու վերջ ունի: Ինչպես սկան դոշը, ինչպես հուլիս ամիսը, գետը, ծննդյան տոները, աշխարհի ամենալավ ֆիլմը...



Շրխկոցով բացվում է պատուհանը, ավելի ճիշտ՝ մի փեղկը, որն անցած զիշերվանից աղերսում է փակվել, եւ քամին անձայն է խուժում լուսնի հետ: Թղթերը թափվում են սեղանից՝ անզիր ճերմակ եւ ազնիվ... Եւ սառը՝ լուսնի լույսի ներքո: Կոնյակի կիսատ շիշը փայլում է այնպիսի մի ցոլքով, որ թվում է՝ ուր որ է ինքն իրեն կայրի ու կվերջանա: Ես մի տխուր սուտ եմ: Եւ ամեն ինչ՝ եթե այս թղթերը գցվելու են ոտքի տակ: Ո՞րն է ավելի լավ՝ ծակատագի՞րը, մարզարտաշար բանաստեղծությո՞ւնը, թե՞ կոշիկի ցեխոտ հետքերը: Եւ մի՞թե ի վերջո նույնը չէ:

Ի՞նչ է մտածում պատի այն կողմում դազգահի մեջ պտտըկած Վիտալի Մախինովիչը: Ես դեռ մնաս բարով չեմ ասել իմ բարեկամին: Դրա սիրտը կանգ է առել նախորդ երեկոյան, յոթանասուն եւ հինգ տարի ազնվորեն բաբախելուց հետո: Եւ ահա, նա պառկած է դազգաղում իր միակ տոնական կոստյումով, որը հագել էր, երբ միասին ռեստորան գնացինք: Կարծես երեկ էր:

Ես լուսնի հետ իմ կիսատ շշից մի բաժակ կոնյակ խմեցի եւ հանկարծ հիշեցի ամիսներ առաջ օդանավում ներս ստացած ինքնատունկային նկարը՝ սրտի պատկերով: Սիրտ՝ առհասարակ, որ բաբախում է՝ վառելով սերը: Ամեն օր, ամեն պահ, մի բան տալով եւ մի բան փոխառելով, վտանգվելով ու վառվելով: Մինչեւ վերջ, մինչեւ վերջ զեռեզրով... Քանի դեռ բաբախում է սիրտը:

Էլի մի բաժակ: Գիտեմ, որ լավ չէ, թող ինձ ների իմ բարեկամը, ուրիշ ոչինչ չեմ կարող ես հիմա անել նրա համար: Բայցեւայնպես, վառում եմ լույսը, պահարանի վրայից իջեցնում եմ շախմատը, փչում վրայի փոշին եւ դանդաղ շարում քարերը: Հիմա մենք խաղում ենք միասին: Ո՞ւմ դեմ ենք խաղում: Համենայնդեպս, մի քայլ: Մատ քեզ, մա՛հ:

Ու հանկարծ, առաջին անգամ իմ այստեղ եկած օրվա-

նից, ես մի սուր կարոտ զգացի: Մի անմեռժելի ցանկություն առաջացավ մոտս՝ թողնել ամեն ինչ ու վերադառնալ տուն: Փակեցի աչքերս ու տեսա սարերի մեջ կուչ եկած իմ գյուղն ու պապիս կիսաստվածային կերպարանքը:

Ապրանքն արդեն տեղ էր հասել եւ, Իգորի աշխատասենյակում անհրաժեշտ փաստաթղթերը ձեւակերպելուց հետո, մենք ստացել էինք քաղաքի «Երկաթգծեր» ձեռնարկության մեկ միլիարդ երեք հարյուր յոթանասուն միլիոն ռուբլու մուրհակներ:

Այդ մուրհակների իրացումը, այսինքն՝ փողի վերածելը ոչ մի բարդության հետ կապված չէր, որովհետեւ դրանք պատկանում էին լուրջ ձեռնարկության:

Սակայն կային մի քանի տարբերակներ. մենք կարող էինք մուրհակները հանձնել ու սպասել վեց ամիս՝ դրանց լրիվ արժեքը ստանալու համար, կարող էինք սպասել երեք ամիս եւ ստանալ արժեքի ութսուն տոկոսը եւ կարող էինք անմիջապես վերցնել փողը, սակայն այդ դեպքում այն կկազմեր մուրհակների արժեքի յոթանասուն տոկոսը միայն:

Ցավոք, սպասել մենք չէինք կարող, հենց միայն այն պատճառով, որ հարկավոր էր փակել այս գործի ընթացքում արված պարտքերը: Ուստի մենք կանգ առանք վերջին տարբերակի վրա եւ սկսեցինք փնտրել հարմար բանկ, ցավոք, չբավարարվելով միայն քաղաքի բանկերով... Երեկոյան Կոտը վերցրեց մուրհակները եւ մեկնեց ուրիշ քաղաք:





Ահա և, թվում է, այլևս անորոշ ոչինչ չկա, ամեն ինչ ընկավ իր տեղը: Միայն, դժվար է ասել՝ վերջին հաշվով ով հաղթեց՝ ե՞ս, թե՞ ձեռնոցների վաճառականը:

Վերջապես ես կարող եմ վերադառնալ տուն, որովհետև ինձ այս քաղաքում պահում էր երկու բան՝ Վիկան և փող աշխատելու հոյակապ հնարավորությունը: Շատ շուտով կքաղեմ իմ աշխատանքի պտուղներն ու նաև կբաժանվեմ Վիկայից: Ինչն էր պահում վաճառականին՝ չգիտեմ: Գուցե իր ձեռնոցները, որ բռնագրավեցին մաքսատանը: Համենայնդեպս, նա կարող է մնալ:

Իմ աշխատած գումարը լրիվ կբավականացնի պարտքերս վճարելու և հայրենիքում մի մասնագիտական գործ ձեռնարկելու: Վիկայի հետ ապրած իմ կյանքի այս կտորը լրիվ կբավականացնի մի պատմվածքի...

Բոլոր դեպքերում, այլևս չեմ զայրանում ձեռնոցների վաճառականի վրա:

Գերեզմանոցի մուտքից մի կաղ շուն միացավ թաղման թափորին ու եկավ մինչև վերջ: Շատ քիչ մարդ կար Վիտալի Մաքսիմովիչի հուղարկավորությանը: Գուցե անձրևոտ եղանակն էր պատճառը, գուցե՝ աշխատանքային օրը, գուցե՝ հենց ինքը՝ նախկին սպորտային մեկնաբանը՝ իր սկզբունքայնությամբ, շիտակությամբ ու անհանդուրժողականությամբ... Սովորաբար վերջինը չարաշահվում է: Դժբախտաբար միշտ չէ, որ դա հասկացվում է, առավել ևս՝ ներվում: Բայց, ինչ արած, դա էլ մի տեսակ է, որը չի տիրապետում կեղ-

ծավորության ու երևակայության նրբին արվեստին: Իմ բարեկամը Աստծուն չէր հավատում: Բայց դա ավելի շատ անպատասխանատվության ժխտում էր, քան՝ անհավատություն:

Անձրևն ուժեղացավ, և շունը, որ մինչ այդ կանգնած էր կողքիս, կաղալով վազեց դեպի մոտակա ծածկը: Ես մի վերջին հայացք նետեցի դագաղի կողմն ու անձկաս հեռացա՝ չկարողանալով զսպել արցունքներս:

Երբ նստեցի մեքենան, չգիտեի ուր գնալ: Կար մի տեղ, ուր ինձ սպասում էին, բայց հաստատապես այդտեղ գնալ չէի ուզում: Հաջորդ օրը Վիկան մեկնելու էր:

Ամբողջ օրը նստեցի տանը՝ իբրև թե Կոտի հեռախոսազանգին եմ սպասում: Բայց փոխարենը զանգեց Էլյան: Նրա ձայնը հազիվ ճանաչեցի:

- Ինչ լավ է, որ տանն ես,- ասաց նա,- մենք պետք է հանդիպենք:

- Չեմ կարող, Էլյա՛, ինձ լավ չեմ զգում:

- Մենք պետք է հանդիպենք, Կոսյային սպանել են:

- Ի՞նչ...

Բայց ես ճիշտ էի լսել, և այլևս պետք չէր, որ նա կրկներ: Ես ճիշտ էի լսել, Կոսյային սպանել էին: Նրա դիակը գտել էին մի քանի ժամ առաջ՝ իր մեքենայի մեջ: Էլյային այդ մասին քիչ առաջ տեղեկացրել էր Կոսյայի ծանոթներից մեկը, և աղջիկը գլուխը կորցրած փախել էր տնից:

Այսքա՛ն իմացա հեռախոսով: Այսինքն ավելին՝ Էլյան չգիտեր էլ, և երբ քիչ հետո հանդիպեցինք, նա ինքն էր ինձ հարցեր տալիս: Ուզում էր իմանալ, թե ինչպես վարվի, ուզում էր իմանալ, թե իր տուն կգա՞ն, թե ումից վախենա, ոստիկաններից, Կոսյայի թշնամիների՞ց, թե՞՝ նրա ընկերներից:



Բայց ի՞նչ կարող էի ես նրան ասել, ու մի՞թե ես ինքս վախենալու ոչինչ չունեի, ու մի՞թե իմ վիճակն ավելի մտահոգիչ չէր: Եվ ամենազավեշտականն այն էր, որ մեր մտահոգությունները երկուսիս էլ ստիպում էին Կոսյայի մահը որպես մարդկային կորուստ չընկալել: Այդ մահը մեզ կանգնեցնում էր փաստի առջև, և առաջին հերթին դա էր մեզ զբաղեցնում: Բայց դա առնվազն անարդար էր: Գոնե ինձ համար Կոսյան քիչ բան չէր արել, և ես պարտավոր էի ինչ-որ կերպ փոխհատուցել: Սակայն ի՞նչ կարող էի անել: Գնալ ոստիկանություն և պահանջել դիա՞կը: Գտնել սպանողներին և վրե՞ժ լուծել: Հիմարություն էր այդ ամենը, հարկավոր էր ընդամենը որևէ ձևով հանգստացնել Էլյային ու այդուհետև մտածել իմ մասին:

Պարզվեց, որ թե՛ մեկը, թե՛ մյուսը հավասարապես դժվար էին: Էլյայի դեմքը վախից տգեղացել էր, և նա շարունակում էր դողալ՝ չնայած մենք արդեն նստած էինք մոտակա տաք սրճարանում և, ինչպես առաջին անգամ, հիմա էլ ես նրան ստիպել էի մի բաժակ կոնյակ խմել:

Իսկ ի՞նչ կարող էի մտածել իմ մասին: Իհարկե, ճիշտ կլինեի վերադառնալ իմ վարձած բնակարանը, արագ հավաքել իրերս ու հեռանալ: Բայց այդպես վարվել չէր կարելի, որովհետև այդ դեպքում Կոտը չէր կարող ինձ գտնել: Իհարկե, կարող էի ինքս գնալ ու փնտրել նրան, բայց հաջորդ օրը Վիկան մեկնելու էր:

- Գնում եմ Կազան,- հանկարծ բացականչեց Էլյան,- գնում եմ իմ հայրենի քաղաքը՝ մորս մոտ:

Երբ նրան տանում էի երկաթուղային կայարան, ինձ թվում էր, թե ուսերիցս մի ծանր բեռ է ընկել: Ճանապարհին նա պայուսակից հանեց մի գազի ատրճանակ ու տվեց ինձ՝ ա-

սելով, որ գնացքում կարող են ստուգել: Նույնիսկ մտքովս չանցավ հարցնել, թե նրա ինչին էր պետք այն, ինչ գործ ուներ մոտը: Մի հրաժեշտի համբույր դրոշմեցի Էլյայի այտին ու աշտանակը խոթեցի գոտուս տակ:

Գնում էի հրաժեշտ տալու Վիկային: Ըստ էության, ես դա արդեն արել էի՝ հոգեբանորեն հաղթահարելով մի վիճակ, որից խուսափելը կնշանակեր փախուստ... Թեև հեռացողը ինքն էր, բայց հերիք էր իմ մի խոսքը, որպեսզի դա տեղի չունենար: Հերիք էր մի զզվանք, մի համբույր, և հօդս կցնդեին պարոն Անտոնի ծրագրերը... Բայց դա չէր լինելու, և Վիկան այդ հասկացել էր վաղուց:

Գնում էի հրաժեշտ տալու մեկընդմիշտ:

Մեր արվեստանոցն ինձ դիմավորեց չտեսնված սառը, այնպես, ինչպես լինում է, երբ վերջին անգամ մտնում ես չափազանց հարազատ մի տեղ: Անկյունում, նեղացած ու անփույթ, պատին էր հենվել դատարկ մոլբերտը:

Բայց մի՞թե չորս ամիս առաջ, երբ առաջին անգամ մտա այստեղ, չգիտեի, որ մի օր կանգնելու եմ դատարկ մոլբերտի առջև: Մի՞թե ես ինչ-որ կերպ պայքարել եմ, որ այդպես չլինի, և արդյո՞ք հենց ինքս չեմ մեղավորը: Կարո՞ղ եմ արդյոք ես բացատրել, թե ինչո՞ւ չեմ պայքարել, ինչո՞ւ չեմ փորձել փոխել դեպքերի ընթացքը, ինչո՞ւ եմ լուռ տառապել: Մի՞թե դրա կարիքը կա:

Եթե նույնիսկ կա բացատրության կարիքը, ապա այն ինձանից շատ ավելի լավ կտա Անտոնը, որ ահա ներս է մտել՝ մի



ձեռքում իր համանախագահի պորտֆելը, մյուսում՝ իր համոզմունքները, որ կարծես պատրաստվում է շպրտել երեսիս: Վիկային անհրաժեշտ է ապահովված կավալեր: Կարծես ես դա չգիտեմ: Որը հետագայում կդառնա նրա ամուսինը: Կարծես ես դա չեմ հասկանում:

Գիտեմ, հասկանում եմ, և Անտոնն էլ հավանաբար ազնիվ մարդ է: Համենայնդեպս, վաղը նա՛ է ճանապարհելու Վիկային, և առհասարակ, իմ գնալու ժամանակն է:

Միայն ուզում եմ վերցնել ու հետս տանել մոլբերտը՝ որպես հիշատակ իմ սրտի նկարչուհուց: Որպես հիշատակ գետից, անձրևից, սպորտային մեկնաբանից, ձեռնոցներից ու ձեռնոցների վաճառականից, որոնք օրերից մի օր կհավաքվեն իմ կտավում և կամրացվեն այդ մոլբերտին:

Բայց ի՞նչ է ասում իմ սրտի նկարչուհին: Վերադարձի՛ր՝ շշնջում է ականջիս: Ուզում է ասել, որ սա հրաժեշտ չէ, որ հրաժեշտն այսպես չի լինում, որ ինքը իսկական հրաժեշտ է ուզում:

Սակայն եթե նա ընդամենը իմ կտավի մի հերոսն է, ապա չափազանց շատ չէ՞ նրա ուզածը: Ծերունին ես արդեն հրաժեշտ եմ տվել, բայց դեռ հրաժեշտ պետք է տամ մյուսներին էլ:

Ես կրկին այստեղ եմ՝ հյուրանոցի գիշերային սրճարանում, ուր հայտնվեցի այս քաղաքը գալուս առաջին օրը, ու թվում է, թե ամեն ինչ նույնն է, թվում է թե, անկյունի սեղանից ձեռքով է անում Վիկան, իմպրեսարիոն ննջում է՝ գլուխն արմունկներին հենած, ձեռնոցների վաճառականը բեմի վրա պարում է իր կարկատած պարկերի հետ, և դաշնամուրից էլ հնչում է նույն մելամաղձոտ մեղեդին, որը, սակայն, հիմա ինչ-որ մեկի ազատությունը չի աղերսում, այլ

տարածում է հրաժեշտի ցավը:

Այս ամենը կրկնվում է անընդհատ՝ յուրաքանչյուր բաժակի հետ, փչացած կինոժապավենի նման, կրկնվում է՝ մինչեւ սրճարանի փակվելը:

Ժամը հինգն է: Ես դուրս եմ գալիս ու սկսում եմ ինձ ֆարշ տալ անմարդ փողոցներով: Անձրեւը դադարել է՝ չսպասելով իմ հրաժեշտին: Հին, աղյուսե շենքերից այն կողմ՝ զառիվերից ներքեւ, զբոսայգու ծառերի միջից լսվում է գետի աղմուկը, քիչ ավելի մոտիկից ոռնում է մի թափառական շուն: Ու սկսում է դանդաղ բացվել առավոտը՝ ինչպես հին՝ սեւ ու սպիտակ հեռուստացույցի էկրանը:

Ահա եւ զբոսայգու վաղորդյան պատկերը՝ սառը, անհրապույր, ահա եւ գետը, որ կարծես հոսում է հակառակ ուղղությամբ, ահա եւ ծովը, ուր խեղդվեց իմ երազը...

Թեեւ ինձ համար ֆիլմն արդեն ավարտվեց, բայց հանդիսատեսի համար, գուցե դեռ կիսատ բան կա:

Ուրեմն սա հետգրություն է, երբ ասելիքը սպառվել է, եւ գրում ես՝ միայն ուղղագրությանը ուշադրություն դարձնելով:

Բնակարանիս կողպեքը կրկին ջարդված էր, եւ ներսում ինձ էր սպասում Վադիմը՝ ուրիշ երկուսի հետ: Նրանք եկել էին՝ վերցնելու մուրհակների կեսը, ստիպված էին եղել ինձ սպասել ամբողջ գիշեր ու կերել էին սառնարանում եղած ամբողջ մթերքը: Բայց ձեռք չէին տվել կոնյակի շշին՝ եւ հենց դա էր նրանց սխալը: Այդ շիշը ես կոտրեցի Վադիմի գլխին, երբ նա, ստանալով իմ բացասական պատասխանը, բռնեց օձիքս: Հետո գոտուս տակից հանեցի Էլյայի տված ատրճանակն ու քաղաքավարի ուղեկցեցի անկոչ հյուրերին





մինչեւ բակում կանգնած նրանց մեքենան:

Քիչ անց եկավ ձեռնոցների վաճառականը եւ ասաց, որ ցինկե դագաղն ինձ է սպասում դրսում: Ասաց, որ օդաչուների հետ արդեն պայմանավորվել է եւ դագաղս հայրենիք տեղափոխելու համար ստիպված է եղել զոհել ուղիղ հազար զույգ ձեռնոց:

Ֆիլմի վերջը: Կամ ավելի ճիշտ՝ **конец фильма**, եւ ապա՝ դերերում - ձեռնոցների վաճառական... բանաստեղծ... գեղեցկուհի... Արցունք՝ ֆիլմի վերջից: Գրեթե դատարկ դահլիճ... Համբուրվող մի զույգ վերջին շարքում: Մեկը սուլելու անհաջող փորձեր է անում...

Ես դեմ չեմ, ֆիլմը կրկնվելու է:

Արել Միխայելյան
«Ճեղվածը», վեպ

Նկարիչ՝ Հարություն Ավետիսյան
Խմբագիր՝ Կարինե Հովակիմյան
Ձևավորող՝ Համլետ Հակոբյան

Տպագրված է Տիգրան Մեծ հրատարակչությունում
պատվեր 143, տպաքանակ 500, 60 x 84 1/16, 16 տպ.մ.